

ISSN 1829-183X

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԺՈՒՇԱՆԱԼԻՍԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԽՈՒՋԱԿԱՆԻԿԱ

(ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ)

ՊՐԱԿ ԺԲ

ԵՐԵՎԱՆ - 2012

Դրաչ Բայադյան
Ռազմիկ Խոստանեային ժուռնալիստիկայի
ամբիոնի ասիստենտ, ֆ-մ. գ. թ.

ԴՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԴՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

1984 թվականին ԵՊՀ-ում տեղի ունեցած մի հանդիպման ժամանակ Դ. Մաքրևյանը, անդրադառնալով որոշ գրողների՝ իրենց գրականությամբ մարդուն, աշխարհը փոխելու, կյանքի ընթացքը շուրջ տալու ցանկությանը, ավելացնում է. «Իմ ցանկությունները եղան ագրեսիվ չեն...»: Ապա պատմում է երիտասարդ տարիներին պատահած մի դեպք: Իրենց գյուղում կոլխոզը դարձրել է սովխոզ, իսկ դա նշանակում էր, որ ավելի էր պակասել գյուղացուն թույլատրված սեփական ունեցվածքի չափը, որ նա իրավունք ուներ պահել ավելի սահմանափակ թվով անասուն:

Նրա հայրը ստիպված վաճառել էր իրենց ծին, և վշտացած հորը սփոփելու համար նա ասում է. «Ես կգրեմ, և թույլ կտան դարձյալ ծի պահել»: Նկարագրում է հոր արծագանքը. «Էսպես, կասկածով նայեց, թե՝ ետ դու ետ ո՞վ ես, որ կանոնադրությունը փոխես, կոլխոզի օրինակելի կանոնադրությունը փոխես և ինձ ծի տաս...»: Ապա ամփոփում է. «Էսպես, ամենաագրեսիվ ցանկությունս, ամենասիրված ցանկությունս, ինչքան որ գրել եմ, ետ է եղել՝ որ հորս ծին վերադարձնեն: Դա դարձավ, իմ կարծիքով, սովորական մի ակնարկի հենք ու հիմք, և ինձանից ավելի վախկոտները ակնարկը նշանավոր դարձրին... Դա եղավ նշանավոր «Ամինիձոր» ակնարկը»:

Իհարկե, «Ամինիձոր»-ը ակնարկ է, որն ունի ակնհայտ հրապարակախոսական շեշտադրություններ, բայց կարո՞ղ ենք այն համարել հրապարակախոսություն: Մի կողմից՝ ծին վերադարձնելը իսկապես խիստ համեստ նպատակ է աշխարհը փոխելու-ուրիշ գրողների ցանկության համեմատությամբ, բայց մյուս կողմից՝ այն նաև անհամենատելի է խորհրդային հրապարակախոսության մասշտաբային խնդիրների հետ, թեև չպետք է մոռանալ նաև այն, որ ԽՄ-ի փլուզումից հետո մի հարցագրույցում, ափսոսալով կայսրության կործանման համար, Մաքրևյանը նկատում է, որ իրենց նպատակն էր «կայսրության սրբագրումը»: Չոր ծին վերադարձնելը և կայսրությունը սրբագրելը, համաձայնեք, որ միմյանցից միանգանայն տարբեր, իրարից շատ հեռու գտնվող հավակնություններ են:

Քանի որ խոսելու եմ Մաքեոսյանի խորհրդային և ետխորհրդային շղամների աշխատանքի մասին, ապա անխուսափելի է թվում մի պարզաբանում: Բազմաթիվ ուրիշ հասկացությունների ու եզրույթների նման՝ հրապարակախոսության կամ հրապարակագրության մեջ ծանոթ ինաստը ևս ժառանգվել է խորհրդային ժամանակից, և կարծում եմ՝ կարիք ունի վերաբնության, վերանայման, քանի որ համոզված եմ, որ նախկին ինաստները արդեն խանթել կամ ջնջվել են, ինչպես նաև անհասկանալի են ներկա սոցիալական իրականության մեջ, իսկ նորերը կամ չկան, կամ կարիք ունեն նկարագրության կամ սահմաննան:

Ուստեղն պուրիցիստիկա բառը հիմնված է Public բառի վրա, որը նշանակում է հանրային: Դայերեն եզրը՝ հրապարակախոսություն կամ հրապարակագրություն, կառուցված է հրապարակ բառից և խորհրդահայ բառարաններում բացատրվում է որպես գրականություն, գրություն հասարակական-քաղաքական թեմաներով: Բացի դրանից՝ հրապարակ բառը ենթադրում է խոսելու կամ գրելու տարածություն, բայց այնպես խոսելու, որ լսելի լինի շատերին, որ լինեն արձագանքողներ, և թերևս այդ խոսքը դառնա քննարկման, բանավեճի առարկա, գուցե Վերածի համատեղ հրապարակային խորհրդաժության և, որ նույնպես կարևոր է, ունենա այս կամ այն տեսակի գործնական հետևանքներ:

Ես չեմ փորձում քննարկել Արևմուտքում ընդունված «հանրային ոլորտ» հասկացությունը (որ այս դեպքում միանգամայն տեղին կլիմեր, բայց զեկուցման շրջանակը թույլ չի տալիս այդ բանն անել), ուստի պարզապես ցանկանում եմ մի քիչ էլ առաջ տանել իմ դիտարկումը: Դրապարակախոսությունը, ըստ ամենայնի, ենթադրում էր որոշակի ակտիվ քաղաքացիական կեցվածք, որը, իր հերթին, ենթադրում էր որոշակի հանճնառություն: Եվ այստեղ մենք մոտենում ենք կարևոր մի սահմանագծի՝ հրապարակախոսություն անունը կրող պրակտիկայի երկիմաստություններին և ծուլակներին:

Չենք մոռանում խորհրդային գրաքննության մասին՝ գրականության բովանդակության նկատմամբ 1960-ականներին թեև մեղմված, բայց բնավ չանհետացած գաղափարաբանական, կուսակցական պարտադրանքի մասին: Դանգամանքներ, որ վճռականորեն սահմանում էին ոչ միայն գրականության, այլև թերևս էլ ավելի մեծ չափով՝ հրապարակախոսության անելիքները. ինչ ասել, ինչպես ասել և այլն...

Ոչ բացահայտ սոցիալիստական ջատագովությունը, ոչ էլ բացահայտ այլախոհությունը չէին կարող կոչչվել հրապարակախոսություն: Կոպիտ ասած՝ հրապարակախոսը նա էր, ով ենթադրաբար ընդունում էր կուսակցական գաղափարախոսությունը, ով մեծ հավանականությամբ կոմունիստական կուսակցության անդամ էր: Դանգամանք, որ թույլ էր տալիս վայելելու իշխանությունների վատահությունը և անհրաժեշտ հավաստիություն էր հաղորդում նրա խոսքին, նրա քննադատու-

թյանը կամ վերապահումներին, որոնք, ըստ էության, արվում էին դարձյալ ի շահ սոցիալիստական կարգի, եթե նույնիսկ խորցում հետապնդում էին, ասենք, ազգային նպատակներ. ի վերջո, սոցիալական շատ խնդիրներ կարող էին ընկալվել որպես ազգային:

Այսինքն՝ հրապարակախոսությունը ավելի բացահայտ ծեռվ, քան գրականությունը, ողիքավորվում էր գաղափարաբանությունը և սոցիալիստական իրականությունը ընդունելու և քննադատելու միջև տարածվող վտանգավոր գոտում: Վտանգավոր՝ առաջին հերթին այն ինաստով, որ այստեղ գտնվողն ավելի մեծ չափով էր ենթակա այդ նույն գաղափարաբանության հետ նեխսակցությանը, քանի որ, օրինակ, հաճախ գուգակցվում էր հրապարակախոսի անձնական հաջող կարիերայի հետ: Իսկ մյուս կողմից՝ հրապարակախոսը ռիսկի էր դիմում՝ կորցնելու իշխանության բարեհածությունը:

Այսպիսով, հակառակ նրա, որ «Ահնիձոր» ակնարկն ուներ ակնհայտ հրապարակախոսական պարոս, և Սաթեոսյանի հետագա ինքնարբնութագրումները և պարզաբանումները՝ Ծմակուտի «ակնարկագիր» կամ «լուսանկարիչ» կամ, մյուս կողմից, կայսրություն սրբագրելու հավակնութ նտադրությունը նույնպես տալիս են որոշակի հիմք՝ քննարկելու հրապարակախոսության թեման՝ Սաթեոսյանի ընտրած ծևը չի տեղափորվում հրապարակագրության այս շրջանակում: Ավելին, գուցե նույնիսկ այն խնդրականացնում, հարցականի տակ է առնում այդպես հասկացված հրապարակագրությունը:

Սաթեոսյանը կուսակցության անդամ չի եղել. նրա տեքստերի տպագրությունը տարիներ շարունակ բախվել է դժվարությունների, բայցևայնպես, նրա գրություններում հաճախ կարելի է գտնել հրատապ սոցիալական խնդիրների հստակ արձագանքները, դրանց քննադատական մեկնաբանությունը: Սոցիալական հրատապություն ունեցող թեմաներ էին արդյունաբերացման և ուրբանացման ընթացքին գուգահեռ քայլայվող գյուղը, անհետացող գյուղացիությունը, սրա սոցիալական, մշակութային և բարոյական անդարձնելի հետևանքները:

Ասենք, խորապես բանաստեղծական և առերևույթ միայն գյուղական թեմա շոշափող «Գոմեշը» պատմվածքը արձանագրում է ժամանակի տագնապահորուց իրողություններ, ծևակերպում ոչ միայն խորհրդային կայսրության համար հրատապ, այլև համամոլորակային մասշտաբ ունեցող խնդիրներ: Ուրիշ բան, որ Սաթեոսյանի գրություններում այն, ինչ կարող ենք անվանել հրապարակախոսություն, ներկայացվում և օրինականացվում կամ ընդունելի է դարձվում ոչ թե իշխանության ուղղությամբ արվող ռևերանսներով, այլ գրության բազմաշերտ հյուսվածքի մեջ ներգրավելով, ոչ թե այն բանի հաշվին, ինչ անվանեցի «գաղափարաբանության հետ հավանական մեղսակցություն», այլ տեքստի բարդության, հարցադրումների մասշտաբի և խորության:

Մյուս պարզաբանող հանգամանքը, որ օգնում է պատասխանել՝ «ինչպես քննադատել, ինչպես արձագանքել իրատապ խնդիրներին՝ խոլոյ տալով իրապարակախոսության ասպարեզի ծուղակներից և անցանկալի պարտադրանքներից» հարցին, Մաքենսյանի գրականության մեկնակետի և գրողի ինքնանույնացման սոցիալական և աշխարհագրական որոշակիությունն է: Ինչպես թելադրում է խորհրդային մտավորականի կերպարի մասին պատկերացումը, իրապարակախոսը ստանձնում է հասարակության անունից խոսողի, շատերի կամ բոլորի կարծիքը, շահերը ներկայացնողի դերը:

Եվ այս միասնականության, համահասարակական հավակնությունների մեջ է, որ ճնշվում, դուրս է մզվում բոլոր լուսանցքային խավերի և խմբերի ծայնը: Մի բան, որ ընդունելի չեր Մաքենսյանի համար: Չոր ծին վերադարձնելու, Ծակուտի լուսանկարիչը լինելու, մունջ մշակի խոսքը ասելու գրողի հետևողականորեն կրկնվող ցանկության մեջ ամփոփված է խորին սոցիալական հաճճնառություն: Դակառակ հավակնությունների մասշտաբին՝ «սրբագրել կայսրությունը», նա իրեն նույնացնում էր ոչ թե կայսրության կամ նույնիսկ խորհրդային Դայաստանի, այլ առաջին հերթին անհետացող գյուղական համայնքի և արժեգրկվածանունված գյուղացու հետ:

Ետխորհրդային շրջանում, գրեթե չտպագրելով գրական ստեղծագործություններ, Մաքենսյանը իրապարակում է բազմաթիվ հոդվածներ, տալիս անհաշիվ հարցագրուցներ: Տպագրություն ունեն, թե Դայաստանում երբեւ ոչ ոք այդքան հարցագրուց չի տվել, որքան Մաքենսյանը: Այսինքն՝ թվում է, թե Ետխորհրդային շրջանում գործ ունենք գրեթե բացառապես իրապարակային խոսքի հետ:

Այս ծավալուն նյութի հետաքրքրական կողմերից մեկը կայսրության քննադատությունն է դրա կործանումից հետո: Այսպիսի քննադատությունը կենսական նշանակություն ուներ և այսօր էլ ունի, եթե, իհարկե, «արվում է պատշաճ մակարդակով, որ խիստ հազվադեպ էր պատահում: Ինչո՞ւ է կարևոր: Քանի որ կայսրությունը դեռ չի անհետացել, այլ անթիվ ծներով շարունակվում է և որոշադրում ներկա հրադրության ինչ-ինչ կողմեր:

Դետաքրքրական է և այն, որ իր հարցագրույցներում Մաքենսյանը հաճախ ի հայտ է բերում իր խորհրդային շրջանի գրությունների հակախորհրդային քննադատության շերտերը, մի տեսակ իրապարակախոսական մակարդակ տեղափոխում այն քննադատությունը, որ ոչ բացահայտ, նուրբ ծներով արդեն արված էր իր գրական տեքստերում:

Այդ հարցագրույցներից մեկում նա նկատում է. «Լավ, եթե նույնիսկ հարցերի պատասխանը գտնեմ, ես կարողանալո՞ւ եմ ասել՝ ահա, այդ հարցերի պատասխանը կա, ինարավո՞ր է ասել... պատմության հարցերը արժարժեմ, որ ի՞նչ: Եվ դժվար ես մտա այս նոր ժամանակի

մեջ: Դժվար հասկացա, որ իսկապես ոչ ոք ինձ իմ հարցերի պատասխանը չի տպարու...»:

Դրապարակախոսությունը ենթադրում է հասցեատեր՝ ոչ անպայման հզոր կայսրության, կուսակցության կամ տիրապետող գաղափարաբանության տեսքով, բայց ունկնդիր, ընդդիմախոս: Իսկ եթե լսող և արձագանքող չկա, եթե չի ակնկալվում բանավեճ, եթե չեն արգում եզրակացություններ, որոնք կարող են ունենալ գործնական հետևանքներ, ապա չի կարող լինել երկիրը սրբագրելու հավակնություն, չի կարող լինել հրապարակախոսություն բառի բուն իմաստով, այլ միայն հրապարակային մտորումներ ու կոչեր, հորդորելու, քաջալերելու, գոտեանդելու փորձեր:

Եթենց այդ պատճառով է՝ հաճախ խիստ հետաքրքրական այս մտորումները, վերլուծություններն ու պարզաբանումները անհնարի և անվանել հրապարակախոսություն՝ ոչ թե խոսքի, այլ հրապարակի բացակայության պատճառով: Դրապարակ, որ այսօր էլ բացակայում է:

Դակառակ իմ զեկուցման վերնագրին՝ «Դ. Մաթեոսյանի հրապարակախոսությունը», ստիպված եմ եզրակացնել, որ, իմ կարծիքով, Մաթեոսյանը բառիս ընդունված իմաստով հրապարակախոս չի եղել ոչ խորհրդային, ոչ ետխորհրդային շրջանում, թեև նրա գորությունները, նրա խոսքը երբեք զերծ չեն եղել հրապարակախոսական ընդգծված չափումից:

Նաղաշ Մարտիրոսյան
Ժուլիանալիստիկայի ֆակուլտետի դեկան,
դոցենտ

ԱՊՐԱԾ ԵՎ ՉԱՊՐԱԾ ՏԱՐԻՆԵՐԻ ԿԵՆՍԱԳԻՐԸ

Ձեկուցումը դժվարությամբ շարադրվեց, թեև վերնագիրը ծնվեց անմիջապես, ակամա, երբ մտովի թերթում էի Վարդգես Պետրոսյանի կենսագրությունը, երբ Հայաստանի ազգային գրադարանում որոնում էի նրա ժողովածուները: Վերընթերցեցի Կրկին՝ ներքին մի համոզումով, որ իմ ուսանողներից շատերին, ցավոք, անծանոթ են դրանք, ինչպես գրողի կյանքը, իր ապրած և չապրած տարիները...

Եվ տեղին համարեցի հիշեցնել, որ 1932 թվականին Աշտարակում ծնված Վարդգես Պետրոսյանը գրականություն մտավ բանաստեղծությամբ՝ «Բալլադ մարդու մասին» գրքույկով, հետո ծնվեցին «Վերջին գիշերը», «Անավարտ դիմանկարներ», «Քաղաքի կիսարաց պատուհանները», «Հայկական էսքիզներ», «Ապրած և չապրած տարիներ», «Հավասարում բազմաթիվ անհայտներով», «Վերջին ուսուցիչը», «Մենավոր ընկույզնի», «Կրակե շապիկ» գրքերը:

1967 թվականին հիմնադրեց և մինչև 1975 թվականը խմբագրեց «Գարուն» ամսագիրը, ապա գլխավորեց Հայաստանի գրողների միությունը, Սշակույթի ֆոնդը, 1994 թ. փետրվարին սկզբնավորեց «Երկիր Նահիդի» շաբաթաթերթը, որը խմբագրեց մինչև իր ողբերգական մահը՝ 1994 թ. ապրիլի 15-ը:

1998 թվականին «Երկիր Նահիդ» գրել է. «...Ժամանակի մեջ նրա հրապարակախոսությունը 1988 թվականին հնչած շեփորի պես էր... նրա բացակայությունն այս տարիներին շատ ավելին էր ոմանց ներկայությունից»:

Իր ստեղծագործությամբ Վարդգես Պետրոսյանը երիտասարդության պոռակումների, հոլովերի, ոգևորությունների, թոիչքների և լուսավոր երազների վավերագիրը դարձավ: 1959 թվականին լույս տեսած «Զնիալը հունիսին» վիպակը խորիրդանշական մեկնարկ էր նախանշում: Գրող-հրապարակախոսը գտել էր իր թեման, գրույց էր բացել երիտասարդ սերնդի հետ: «Մայրիկ, ես արդեն մեծացել եմ» վիպակն այդ գրույցի շարունակությունն էր: Բնարանում հեղինակը գրել է. «17 տարեկան այն պատանիների մասին, որոնք շտապում են 20 տարեկան դաշնալ»: Իր երկերի քննադատը նկատել է. «Պատանեկության, երիտասարդության կենսագրությունը դարձնելով վիպական հենք, հեղի-

նակն արծարծում է արդիական մի հարց. ինչի՞ համար է մարդն ապրում: Դարցադրումը պարզում է երիտասարդության և հասարակական իդեալների, անհատական հույզերի եռթյունն ու ոլորտները»: Այս առնչությամբ թերևս ճիշտ կլինի լսել հենց իրեն՝ գրող՝ հրապարակախոսին. «Մարդո նրա համար չի ծնվում, որ երկար ապրի: Եթե այդ լիներ ապրելու նպատակը, մարդը կարող էր երազել քար ծնվել, քանի որ աշխարհի ամեն մի քար ավելի երկար է ապրում հողի վրա...»: Ասել է, թե կյանքն իմաստավորելու համար մարդ անվերջ պետք է որոնի, արարի և չկորցնի գլխավոր կյանքում՝ գեղեցիկի երազանքը: Նա պետք է ապրի կյանքը հավատով և սիրով, լույս ունենա հոգում և հոգու լույսը տա աշխարհին: Վ. Պետրոսյանի երիտասարդ հերոսները՝ փիլիսոփայող, թախծոտ ու երազուն, կենսական այդ հայացքների կրողներն են: Այդպես՝ վիպակից վիպակ, հրապարակախոսական պատմվածքից պատմվածք, հոդվածից մինչև հեռուստաելույթ: «Վարդգես Պետրոսյանը խորաթափանց հայացքով է նայում իր շուրջը փոթորկվող կյանքին, գրում է դդուարդաս Մեժելայտիսը,- նայում և որոնում է այն խիստ կարևոր հարցի պատասխանը, թե ինչպես ապրել և գեղեցկացնել կյանքը, որպեսզի «առօրեական տենդի» մեջ մարդը կարողանա չկորցնել ինչոր թանկ, սուրբ ու կարևոր բան»: Գրողի ստեղծագործությունները գեղարվեստական ատաղձ ունենալուց զատ նաև հրապարակախոսական բնույթ ունեն, հրապարակախոսական հատու շեշտեր: Թերևս կլինեն գեղապաշտներ, ովքեր Վերապահումով կընդունեն «հրապարակախոսական» բնորոշումը գեղարվեստական երկի առնչությամբ: Դարավոր մեր ընդդիմախոսներին կառաջարկեի վերոնքերցել «Դայկական էսքիզները» էսսեն, որը գրող-հրապարակախոսի տաղանդի խոսուն դրսնորուն եղակ ժամանակի քննադատներից շատերի համոզմամբ:

«Եսքիզները» կարելի է կոչել նաև խճանկարներ, մանրաքանդակներ կամ քանդակներ, մանրանկարներ: Այս անավարտ նատյուրմորտ չէ, այլ իրականությանը մոտեցող, ֆիզիկական և հոգևոր հայրենիքի ճանաչման աստիճանաբար զարգացող ընթացք:

Վարդգես Պետրոսյանը զգացումների, խոհերի, մտորումների հզոր խաչաձևումներով՝ սիրո, կարոտի, թախիծի, վշտի, ողբերգության, ներշնչանքի և ոգևորության միմյանց հաջորդող ու մեկը նեկին լրացնող առկայժումների միջից վերակերտում է Դայաստան աշխարհի նվիրական պատկեր-կերպարը:

«Ի՞նչ անուն տալ այս գրքին, հարցում է հեղինակն ու պատասխանում, - ջգիտեմ, չեմ ուզում բանաձև հորինել: Դարկ կա...» Այս գիրքը ծնվել է սիրուց և ատելությունից: Ավելի շատ՝ սիրուց: Ամենից առաջ՝ սիրուց»:

Ո՞րն ես դու, Դայաստան

Ես քեզ որոնեցի երկար ու ցավագին:

Դազար անգամ գտա:

Չգտա:

Կորցրի:

Շփորեցի ու կասկածեցի,- բարձրաձայն խորհում է հրապարակախոս-գրողն ու շարունակում.

«Կգտնե՞մ արդյոք: Կգտնե՞ն ուրիշները, և մի՞թե դա է կարևորը: Մենք շատ բան ենք կորցրել կյանքում և կորցրած տարածությունը կրծատելու համար պիտի վազենք: Բայց մենք վազում ենք ետ նայելով: Այդպես չի անում ոչ մի իսկական վազող: Այդպես, շատ ուրիշներն ել, որ հիմա դեռ գալիս են հետևից, առաջ կանցնեն: Մեզ թվում է՝ բավական է ետ չնայել և կմոռանանք մեր պատմությունց, մեր պարանոցները շատ են ծրված: Դայաստան, ես քեզ որոնեցի այդ վազքի մեջ և ուզում եմ, որ դու վազես առաջ նայելով...»:

Խոր և անկեղծ ապրումների, հրապարակախոսական պաթոսի յուրօրինակ համաձուլվածք է «Դայկական էսքիզներ» եստեն: Այն գրվել է, ինչպես հեղինակն է վկայում, երկար ու տառապանքով՝ 1965-ից 1978 թվականներին: Դրապարակախոս-գրողը որոնել է Դայաստան աշխարհը, որոնել է հեռավոր ու մութ անցյալում, ներկայում, ապագայում, փնտրել այն կարևորը, որով մեր տեսակը անխաթար է մնացել և չի մոլորվել պատմության քառուղիներում:

Գրող-հրապարակախոսի գործը համարելով թոիչք, Վ. Պետրոսյանը գտնում է, որ նա պետք է ոչ միայն «կարողանա հաղթահարել տարածությունը, այլև շարժվել ժամանակի մեջ, թռչել-անցնել-թափանցել դարից դար, ճակատագրից ճակատագիր, ներկայից-անցյալ-ապագա, պիտի կարողանա իշենել և բարձրանալ, սխալվել և հավատալ, և այդ ուրախ ու տանջալի ճանապարհին երթեմն գուցե կարողանա նաև հայտնաբերել ճշմարիտի, գեղեցիկի և բարու ազնիվ հատիկները»:

Դարկ է փաստել, որ «Դայկական էսքիզները» Դայաստանի, հայոց պատմության, մեր ազգային էության, բնավորության սովորական արձանագրումը չէ: Այն երկար, բազում տարիներ տևած որոնումն է ամենաազլիսավորի՝ ինչպես պիտի ճանաչել, սիրել հայրենի հողն ու հարազատ ժողովրդին: «Դազիկ թե ժամանակակից խորհրդային արձակում գտնվի մի գիրք, որը իր քաղաքացիական շնչով, հրապարակախոսական կրօնվ և գգացմունքային լարումով կարողանա համեմատվել «Դայկական էսքիզների» հետ, որի հեղինակն այդքան համառորեն և ոգեշնչված հարցում է. «Ինչպիսի՞ն ես դու, Դայաստան», իսկ վերջաբանում երդվում.

«Փնտրել

Երկյուղել,

Գտնել,
Կորցնել,

Ապրել քեզ համար, Հայաստան» (էդ. Մեժելայիտա):

Տաղանդավոր հրապարակախոսն ու գրողը հյուսեց Հայաստան աշխարհի ամբողջական կերպարը՝ արժանավոր զավակի նվիրումով, սիրով և իրավունքով. «Հայաստան... այս «Էսքիզների» բարակ թելին ես գույնգգույն ուլունքներ չեմ, որ շարում եմ արդեն քանի տարի: Ես իմ ուրախություններն ու հույզերն եմ շարում, նաև արցունքները: Արցունքները, որ ինք չեն, իմ հեռու և նոտիկ նախնիներինն են: Ես ևս ժառանգել եմ ամեն ինչ, որ ունեմ, նաև քո իին արցունքները: Դրանք ես խտացնում, զնոսում եմ սրտիս մեջ, որ նույնպես քեզ է պատկանում՝ իր առաջին զարկից մինչև վերջինը:

Վերջակետից հետո ես նորից ճանապարհ կելնեմ:

Քեզ որոնելու:

Գտնելու,

Կորցնելու, կասկածելու, քեզ համար ապրելու:

Վ. Պետրոսյանի հրապարակախոսական բացառիկ տաղանդը դրսնորումներ ունի նաև հետագայում գրված գեղարվեստական երկերում, որոնք իիմնականում նվիրված են երիտասարդության առօրյայի, հոգսերի և ուրախությունների, երազների, հոգևոր-բարոյական նկարագրի, անպարագիծ ներաշխարհի բացահայտմանը:

«Ինձ իբրև գրողի, խոստովանել է հրապարակախոս-գրողը, - մտահոգում է, որ ցավալիորեն գոյացել է մարդու մի տեսակ, որը ոչինչ չի անում, իր վրա պատասխանատվություն չի վերցնում, իր ուսերին թեռ չի գգում»: Մեկ այլ առիթով նկատում է. «Մեզ սրափ ռոմանտիկներ են պետք, որոնք իդեալ ունեն և «լինել, թե չլինելու» երկրնտրանքի մեջ միշտ քվեարկում են բարոյականի, վեհի, ազնիվի կողմը»:

1977 թվականին լույս տեսավ «Հավասարում բազմաթիվ անհայտներով» գիրքը, որում անփոփկել էին գրողի բացառապես հրապարակախոսական երկերը: Դրանցից երկուսը այնքան էլ միանշանակ չընդունվեցին ժամանակին՝ նույնանուն հոդվածը և «Գաղոն, թե՝ անտառ»-ը: Հրապարակախոսն «ատում է» գաղոնի վրա աշխատող մկրատը. «Ես ավելի գերադասում եմ անտառի անկանոն նացաքները, անհավասար թվերի ու ծառերի խօսիվ շարքերը, որովհետև բնությունը դա է: Գաղոնն ավելի հարմար է ծովյ ուղեղի համար, համատարած հարբության վրա բավական է երևա մի խենք կանաչ, իսկույն աչքի կընկնի ու... խըր՝ կաշխատի մկրատը»:

Խսկապես, պետք են գաղոնի մկրատած ու հարթ թվերը, երբ խորիվ անտառի խշողի միջից են լսելի ինաստուն հեքիաթները: Այն հեքիաթները, որ «... հորինում են մարդիկ, կյանքի տիսրությունը ցրելու համար» (Վ. Պետրոսյան):

Այսպես շարունակում ես կարդալ, և քեզ ակամա թվում է, թե հրապարակախոսը՝ իբրև վերջին ուսուցիչ, դեռևս շարունակում է իր դասը՝ իմաստունի իր խորհուրդը հղելով գալիք սերնդին. «Մեր սրտի վրա ստացած վերքերով սովորենք ամենակարևոր բաները: Իսկ վերքերից սպիներ են մնում: Այդ սպիներով է, որ սիրտը դառնում է մեր ապրած ճակատագրի վկան և մեր ամենավերջին գրուցակիցը»:

Սի քանի օր առաջ ես նորից վերընթերցեցի Վ. Պետրոսյանի «Կրակե շապիկ» գիրքը, որն իսկական կրակե շապիկ դարձավ հեղինակի համար:

Եվ չգիտես ինչու, ինձ թվաց, թե Վարդես Պետրոսյանը կռահում էր իր մահը, կռահում էր այն ժամանակ, երբ գրում էր «Կրակե շապիկ» վեպը, մինչև այսօր դեռևս լավ շիասկացված, «չբացահայտված, ինչպես հեղինակի կյանքը: Ինչպես հեղինակի մահը: Ինչպես կյանքը և մահը ընդհանրապես»:

**Անահիտ Մենսմշյան
Սամուլի պատմության և
տեսության ամբիոնի ղոցենոտ, թ. գ. թ.**

ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԴԱՍՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԾԱՐԻ

«Այս աշխարհի ուժեղների վրա արվեստը չի ազդում՝ նրանք իրենց շահերն ունեն: ...Որքան է տանջվես, նրանք տեղից չեն շարժվելու, եթե շահերը չի անցնեն»,- ասել է Պ. Զեյթունցյանը ի պատասխան լրագրողի՝ Դայոց ցեղասպանության ճանաչմանն առնչվող հարցին (26-ը ապրիլի 2010 թ.):¹ Այդուհանդերձ, իր գրական և հրապարակախոսական գործունեության ընթացքում մշտապես անդրադարձել է ազգային գերակայություններին, գործել հանուն ազգային շահի:

Ազգային շահը տեսական գրականության մեջ սահմանվում է իբրև ազգային պետության օբյեկտիվորեն նշանակալի նպատակների ու խնդիրների ամբողջություն:² Զեյթունցյանի հրապարակախոսությունը թեմատիկ առումով քննելու դեպքում կհամոզվենք, որ չկա ազգային նշանակության նպատակ կամ խնդիր, որին գրող-հրապարակախոսն անդրադարձած չլինի. հայոց ցեղասպանություններ, արցախյան հիմնահարց, ինքնության և միասնության հարցեր, արտագաղթ, ազգային հիշողության և արժեքների կարևորություն, անկախ Դայաստանի պաշտամունք և դրա աղավաղված տարրերակի դեմ ընդվզում, հայրենիք-Սփյուռք, Դայաստան-գերտերություններ հարաբերություններ և այլն:

Դատկապես կարևոր է այն ոգին ու զգացմունքայնությունը, որ Զեյթունցյանն արտահայտում է ազգային խնդիրների մասին խոսելիս: Դուզական, իր խոսքերով՝ «տաք», «բաց նյարդով», միևնույն ժամանակ փաստարկված խոսքը, հայոց պատմության էժերից արված տեղին մեծքերումները հզոր ազդակներ են հաղորդում ընթերցողին, ստիպում դառնալ համախոհ, ինչը և հրապարակախոսական հոդվածի հիմնական նպատակն է:

Զեյթունցյանը ուշադրությամբ հետևում է մամուլին, նաև արտասահմանյան պարբերականների հրապարակումներին և անմիջապես արձագանքում Դայաստանին ու հայությանն առնչվող հոդվածներին:

¹ «Սիցին չափի թատրոական դահլիճը մեկ գորի տպաքանակն է», PanARMENIAN.Net, 26 ապրիլի 2010 - 13:33 AMT 08:33 GMT, <http://www.panarmenian.net/arm/culture/news/47816>

² Материал из Википедии — свободной энциклопедии.

Նրան հատկապես անտարբեր չեն թողնում թուրք-ադրբեջանական քարոզչամեքենայի՝ հայոց պատմությանն առնչվող մեքենայությունները: Դրանց Ձեյքունցյանն անդրադարձել է տարբեր ժամանակներում գրած հոդվածներում: Ընդ որում, անդրադարձերն իրենց բնույթով ևս տարբեր են: Մի դեպքում հեղինակը գրախոսում է նոր լույս տեսած պրոհայկական գիրքը¹ Վերիշելով առավել ազդեցիկ հատվածները, ներկայացնելով իր մտորումները թուրքական կողմի խեղաքյուրած փաստերի մասին, մյուս դեպքում ցավով արձանագրում «Ադրբեջանում լույս տեսած մի հերթական նենա ու ստախոս» գրքի հրատարակումը², մեկ այլ դեպքում ծավալուն հոդվածի նյութ է դառնում ադրբեջանցի գրողի արած հայտարարությունը ֆրանսիական հեղինակավոր պարբերականներից մեկում, թե «Դայ ժողովուրդը մազոխիստ է» և «Եթե Սուլմազյահթը գոյություն իսկ չունենար, միևնույն է, հայերը կինարեին այն»³: Ի պատասխան ադրբեջանական ցինիզմի՝ Ձեյքունցյանը նուրբ հումորով ներկայացնում է հանրագիտարանային տվյալներ օգտագործված տերմինի մասին, ցույց տալիս, որ հնչեցված նախադասությունը առավելապես հականադրեջանական է, քան հակահայկական. հապացուց այն բանի, որ թեև թունոտ, բայց և թույլ է ադրբեջանական քարոզչությունը: Ընդգծելու համար «Le Figaro»-ում արտահայտված մտքի ամբողջ ցինիզմը՝ հրապարակախոսը նկատում է, որ հայտարարություն անողը «մարդասիրական վիխրուն և «անպաշտպան» մասնագիտության տեր սովետական քաղաքացի է, սովետական գրողը, Ադրբեջանի գրողների միության վարչության քարտուղար, երևի շքանշաններ և կոչումներ էլ ունի, գուցե նաև՝ «ժողովուրդների բարեկամության»: Թուրք-ադրբեջանական մտավորականի կերպարը ավելի ամբողջական դարձնելու համար Ձեյքունցյանը հիշում է թուրք բանաստեղծի կոչը: «Յուրաքանչյուր զինվոր պետք է վերադառնա բարերարության օրերին, պապակի արյան, լինի անգութ մանուկներին ու կանանց սպանելիս... Ուրեմն՝ տառապանք, անադրարություն և սուզ սփռենք»:

Ձեյքունցյանը քաջ գիտակցում է տեղեկատվական հարձակումներին հակազելու կարևորությունը: Նրա հոդվածներում հաճախ են հանդիպում հայոց պատմության մասին մեջբերումներ, ծաղրպում և փաստարկված ընդդիմախոսվում է «պատմություն հնարելու» ադրբեջանական մոլուցքը, որը, ըստ հեղինակի, «նախ և առաջ հանցանք է սեփա-

¹ Ձեյքունցյան Պ., Ովքեր են անցել այստեղով, Գրական թերթ, 29 հոկտեմբերի, 1982 թ.:

² Ձեյքունցյան Պ., Մեզ չի հասկանա օտարերկրացին, մեզ չի հասկանա սառն օտարուիհն, փետրվար, 1990 թ., Ապրենց տասը պատվիրաններով, Երևան, ԴՊՄ հրատ., 2009 թ., էջ 367:

³ Ձեյքունցյան Պ., Չարության տոնավաճար, «Առվետական Դայաստան», 23 նոյեմբերի, 1988 թ.:

կան ժողովրդի առջև»: Հատկապես ազդեցիկ են պաշտոնական փաստաթղթերից արված մեջբերումները, օտարազգի հեղինակների ու քաղաքական գործչների վկայակոչումները:

Զեյթունցյանի մասնակցությունը տեղեկատվական փոքրիկ հակամարտություններին միայն մասնակիորեն էր հաջողվում, հեղինակը հաճախ է ցավ հայտնում, որ իր հերթական հոդվածը «Դարձյալ պիտի լույս տեսնի միայն հայերեն լեզվով...»: Ցավոք, արտաքին լսարանին ուղղված մտորումներն ու բանավեճերը միշտ չեն, որ հասնում էին հասցեատերերին:

Ուստի քաղաքագիտական դպրոցը պնդում է, որ ««Ազգային շահ» հասկացությունը օգտակար չէ ժողովրդավարական զարգացումների համար»¹: Եվ, իրոք, երբեմն, փորձելով տուրք տալ ազգային գերակայություններին, աշխատելով գործել ի շահ պետական հետաքրքրությունների, ստիպված ես լինում լոել որոշ խնդիրների մասին, որոշների մասին էլ բարձրածայնել պետք եղածից ավելի: Զեյթունցյանի դեպքում այլ է. նա չի լուսն, ավելին, հանդես է գալիս բավական սուր և համարձակ որակումներով, բայց միևնույն ժամանակ զարմանալիորեն կարողանում է նպաստել ներազգային բարենպաստ հոգեբանական միջավայրի ձևակորմանը:

Զեյթունցյանը մշտապես արծագանքել է իր շուրջը տեղի ունեցող իրադարձություններին: Խորիրդային կարգերի դեմ նրա ընդվզումն ինքնին հասկանալի է: Խորը հիմաքափություն ապրած հայրենադարձ ընտանիքի զավակի համար, բնական է, որ՝ «ԽՄԿԿ-ն երբեւ չէր կարող հանդես գալ մարդկային տեսքով: Մի կուսակցություն, որի խորին ընկած է միլիոնավոր մարդկանց (ըստ Գինեսի գրքի՝ 66,7 մլն) զագանային սպանությունը: Ընդ որում՝ ոչ միայն անմեղ մարդկանց, այլև՝ նվիրված յուրայինների»²: Վերը նշված՝ ժողովրդավարության և ազգային շահի անհամատեղելիությունը այս դեպքում կարծես քննություն չի բռնում. իրապարակախոսը արտահայտում է ազատական գաղափարներ, բայց և գործում ազգային շահի դիտակետից. ըստ Զեյթունցյանի՝ «Կոմունիստական զաղափարախոսությունը ազգային դեմք չունեցող, ապազգային եռթյամբ զաղափարախոսություն է», որը այդ շրջանում վարում էր հակահայկական քաղաքականություն. «Չեմ թաքցնում, որ իմ խոր զայրույթը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության

¹ Ակեն Ղետոնյան, Ազգային շահ հասկացության ոեալիստական մեկնարանության հարցը շուրջ. Վելուս 3 (8), ապրель - մայ' 08, 15.06.2008 http://ap.rau.am/?page=stajia&st_id=481, (Ե. Շ. Կապուտին "Национальный интерес", как консервативная утопия, ж-л "Свободная мысль", 1996, №3, стр. 12).

² Զեյթունցյան Պ., Ուրիշի տուն մի մտեք առանց թույլտվություն խնդրելու, «Հայաստան», 6 հոկտեմբերի, 1990 թ.:

դեմ ԽՍՀՄ-ի կատարած բացահայտ ագրեսիայով»¹, - գրում է հրապարակախոսը:

Իհարկե, խորհրդային կարգերի դեմ հոդվածների դեպքում, հասկանալի պատճառներով, կարելի է որոշակի վերապահում կատարել: Նոր իշխանությունների հանդեպ գեյրունցյանական մոտեցումը ևս ընդունմադիր էր և ազատական: Բայց և սուր քննադատությունների կողքին միշտ դրված էր հայրենիքի, պետականի, նաև այն անձանց հանդեպ հարգանքն ու սրտացավությունը, որոնց դեմ շատ խիստ է արտահայտվել Զեյթունցյանը. «...Երկրիդ դեկավարի դեմ գրելը, հավատացնում եմ, այնքան էլ մեծ հաճույք չէ, մանավանդ որ նա նորանկախ Դայաստանի առաջին նախագահն էր, մեր դարավոր Երազանքի իրականացման խորհրդանշը»²: Շատ բարդ է գրել երևույթի կամ անձի դեմ, միևնույն ժամանակ հարգանք ծևափորել նրա հանդեպ. Վկայությունը՝ մերօրյա մամուլը, երբ տարբեր քաղաքական ուժերի դեմ գրված հոդվածներում անխնա փոշիացվում են ներ ազգային ամենանվիրական արժեքները: Զեյթունցյանին դա հաջողվում է:

Պոռթկումի պահին հրապարակախոսը կարող է նաև կասկածել ազատ ու անկախ հայրենիքի գոյությանը, բայց անմիջապես հաջորդ պահին անկեղծանալ. «Ես պատրաստ եմ հանուն իսկապես անկախ և իսկապես ազատ Դայաստանի անտրոտունց կրել ամեն դժվարություն, պատրաստ եմ լուրջումունջ տանել ամեն գրկանք, կարծում եմ՝ նաև բոլորը...»³:

Եթիկական և ազգային առաջնահերթությունները ևս, ցավոք, միշտ չեն, որ համընկնում են: Եվ ծիշտ կլինի, եթե տեղեկատվական գործողությունները դատենք ըստ պետության համար դրանց հնարավոր հետևանքների: Չե՞ որ արդյունավետ տեղեկատվական քաղաքականությունը ենթադրում է գործողություններ ի շահ ազգային և պետական գերակայությունների, ինչը եթիկապես սիսալ լինել պարզապես չի կարող: Զեյթունցյանի հրապարակումների մեջ հանդիպում են խիստ որակումներ (ինչպես՝ բիրդանադաներ, քաջնազարներ, հեգնական չակերտավոր «ազգընտիրը» և այլն), որոնք, չնայած նրա հրապարակախոսական ողջ հարստությունը միասնաբար քննելու դեպքում արդարացվում են, բայց առանձին հոդվածներում չունեն բավարար հիմնավորվածություն: Բառերի համատեքստը, սակայն, արտահայտում է ավելի շատ սրտացավ զայրույթ, քան չարություն: Սա ոչնչացնող, բունուտ ծաղր չէ, ինչպիսին շատ է մերօրյա մամուլում, այլ ուղղողող, ճանապարհ մատնանշող խոսք. «...Իշխանության գլուխ անցնելուց հետո «ախպեր-տղերքի» նկատմամբ հավատարմություն պահպանելը թերևս գովելի է կեն-

¹ Նույն տեղում:

² Զեյթունցյան Պ., Մի քիչ էլ համբերենք, «Ասպարեզ», Լու Անգելիս, 22 հունվարի, 1999 թ.:

³ Զեյթունցյան Պ., Մեր հայրենիք թշվար, անտեր..., «Երկիր», 9 հուլիսի, 1993 թ.:

ցաղային մակարդակով, բայց ոչ՝ պետության դեկավարի: ...Ես գրել եմ, հիմա էլ կգրեմ ու կգրեմ միշտ, որ ուզում եմ, շատ եմ ուզում, երդվում եմ ամենայն սրբությամբ, որ մեր ու նախագահի հեռակա կամ ուղղակի բախնան և տարածայնությունների մեջ հաղորդ նա լինի, միշտ նա, և միայն նա, ոչ թե ես, ոչ թե դու»¹: Զեյթունցյանը լավ տեսնում էր հասարակության մտածողության ներքին շերտերը, գիտեր այդ շերտերի ձևավորման պայմաններն ու պատճառները և իր հոդվածներում փորձում էր հնարավորինս չեղոքացնել դրանք, հնարավորինս նպաստել հասարակական ազգային գիտակցության կառուցմանը:

Արևմտյան քաղաքագետները վստահ են՝ պետությունները միմյանց կապող միակ ամուր օղակը նրանց շահերի միջև հակասության բացակայությունն է²: Շահերի բախումներից խոսելիս՝ հարևան պետությունների մասին չխոսել չենք կարող: Եվ Զեյթունցյանը անդրադառնում է այս խնդրին պարբերաբար: Դրապարակախոսն առանձնակի ոգևորությամբ է հիշում այն օրը, երբ «Քմբիրից արթնացած, մեկ կամք, մեկ մարմին դարձած»՝ մեզ իրավունք վերապահեցինք խոսելու ապրիլի 24-ի մասին: «Պատմական հիշողության արթնացումը 23 տարի անց ժայթեց լավայի պես, դարձավ ազգային ինքնագիտակցության տոն»³: Չեղինակը վստահ է, որ պատմության տիխուր էցերը ևս կարող են վառ պահել ժողովրդի ոգին, «ուժ ու կորով տալ նրան, ապրելու և գործելու կամք թելադրել»: Չեղատես ստեղծագործողը կարևորում է հատկապես նման երևույթների ներկայացումը արվեստի և գրականության միջոցով, խոսում դրանց գեղարվեստական իմաստավորման մասին:

Զեյթունցյանը շատ է անդրադարձել Ղարաբաղյան խնդրին և հատկապես սումգայիթյան դեպքերին: Ավելին, բոլորովին վերջերս մի առիթով ասել է. «Մինչև 1988 թվականը հրապարակախոսական ոչ մի հոդված չեմ գրել (չնայած որ գրել եմ - Ա.Ս.)⁴, բայց ժողովրդի հրաշք զարթոնքը ստիպեց, ուղղակի պահանջ արթնացրեց անդրադառնալու ժամանակի իրադարձություններին»⁵: Ուստի պատահական չեմ, որ այս թենայով գրված հոդվածներն աչքի են ընկնում առանձնակի զգացմունքայնությամբ: Զեյթունցյանը ազգային զարթոնքի այս շրջանը, իր բոլոր թերություններով հանդերձ, համարում է «մեր պատմության աստե-

¹Նույն տեղում:

² H. J. Morgenthau, Politics Among Nations, NY, 1949, p. 94.

³ Զեյթունցյան Պ., Յիմի՞ էլ լուսնը. «Ազգ», 17 մայսի, 1995 թ.:

⁴ Զեյթունցյանի հրապարակախոսական հոդվածներին կարելի է հանդիպել 70-ական թթ.-ից:

⁵ «Միջին չափի թատերական դահլիճը մեկ գրի տպացանակն է», PanARMENIAN.Net, 26 ապրիլի 2010 - 13:33 AMT 08:33 GMT, <http://www.panarmenian.net/arm/culture/news/47816>

դային ժամանակներից մեկը»¹: Բայց և նշենք, որ ընդգծված ոգևորությունը ամենահին չի խանգարում հրապարակախոսին լինել փաստարկված, հարկ եղած դեպքում կատարել սրափ տեղեկատվական գործողություններ: 1988 թ., առաջին հայացքից առանց որևէ տեղեկատվական առիթի, Զեյթունցյան անդրադառնում է Սարդարապատի ճակատամարտին, բերում օրինակներ մեր հերոսական էջերից: Դրապարակախոսը քաջ գիտակցում էր, որ ոգեշնչման կարիք կա թե՛ մուր ու ցուրտ բնակարաններում, թե՛ մարտի դաշտում, որ այդ պահին ավելի քան երեսէ անհրաժեշտ է համախմբվել և 70 տարի առաջվա դեպքերի մասին գրում էր. «Դա պարետիկ այն պահն է, ողբերգականորեն պաթետիկ, երբ մի կողմ են դրվում ներքին պարակտումներն ու տարածայնությունները, միավորվում են հակառակորդները, աշխարհականն ու հոգևորականը, նտավորականն ու գեղորուկը, արևմտահայոն ու արևելահայք, դառնում մեկ քուննցք, մեկ կամք և ամբողջություն: Դառնում են ժողովուրդ: Ոչ թե երնիկական, այլ՝ հոգևոր բարձրագույն իմաստով»²: Նաև անհրաժեշտ էր ոգևորել մարտի դաշտում կյանքը վտանգող ազատամարտիկին, ցույց տալ, որ տարիները մոռացության չեն մատնում հերոսներին, և Զեյթունցյանը մեկիկ-մեկիկ թվարկում է ճակատամարտերին մասնակից երկու տասնյակից ավելի հերոսների անուններ:

Ի դեպ, պատմական հիշողության կարևորությունը նա հաճախ է շեշտադրում. «Յերուները մեծարման կարիք չունեն, մենք ինքներս կարիք ունենք մեր հավաքական հիշողությունը հարգելու»: Դրապարակախոսը գիտակցում է, որ ազգային դիմագիծը պահելու համար աշխարհասփյուռ հայությանը անհրաժեշտ է նախ միասնական լինել, ապա չկորցնել հիշողությունը, որը «Մենք չենք ընտրում, պատմությունն է պարտադրում մեզ»³: Չե՞ որ, եթե չլինի մեր ազգային հիշողությունը, իրենց մարդասեր և քաղաքակիր հոչակած ազգությունները ուրախությամբ կմոռանան իրենց գործած ոճիների մասին:

Կեղծ կարգախոսներով հանրային գիտակցության վրա ազդելու և հանրային վարքը ուղղորդելու օրինակներն այսօր շատ են: Ընդ որում, մի շարք կարգախոսներ գալիս են դեռևս 90-ականներից: Զեյթունցյանն առանձնացրել է մի քանիսը: «Մեր անցյալը զօհի բարդույթ է ձևավորում մեզ մոտ». սա իրական ոտնձգություն է Զեյթունցյանի կողմից այնքան կարևորված պատմական հիշողության հանդեպ: Դրապարակախոսը չի զլանում ներկայացնելու սոցիալ-կենցաղային այն խնդիրները, որոնք իրոք կարող են զոհի բարդույթ ձևավորել, մինչդեռ «պատմական հիշո-

¹ Զեյթունցյան Պ., Երեխն լուրջունը իրոք ոսկի է, «Ասպարեզ», ԱՄՆ, 10 մարտի, 2001 թ.:

² Զեյթունցյան Պ., Սրբազն խորհուրդ, 1988 թ., Ցուկերը դեռ այնտեղ են, Երևան, «Տափակ» հրատ., 1990 թ., էջ. 161:

³ Զեյթունցյան Պ., Դիմի՛ էլ լունք, «Ազգ», 17 մայիսի, 1995 թ.:

դությունը, անգամ նրա մռայլ դրսնորումները, ունակ են մաքրել մարդկանց, հասցնել կատարսիսի՝ մաքրագործման, ապաքինման, հոգեկան տառապանքի թթափման...»¹: Դաջորդ կարգախոսը, որ ժամանակ առ ժամանակ դրվում է շրջանառության մեջ, փաստում է, թե «չկան հավերժական թշնամիներ»: Զեյթունցյանը ամոթալի է համարում նման կարգախոսի գոյությունը, քանի դեռ «Թուրքիան չի ընդունել հայոց ցեղասպանությունը և քանի դեռ մեր հողերը զավթված են Թուրքիայի կողմից»: Նա վստահ է. «Դրա համար առնվազն մեկուկես միջինոն հայ գոհերի և 3 մլն-ից ավելի սիյուռքահայերի համաձայնությունը պետք է ունենալ»²:

Պատմական հիշողությամբ սրբագրօված ազգային արժեքների պահպանությունը ևս նտահոգում է Զեյթունցյանին: «Պատերազմի տարիներին նա անհանգստացած էր այն անդունդով, որ ավելի էր խորանում «Արցախում ու Ղայաստանի սահմաններին կովող պայծառ տղաների, նրանց զոհված ու սրբացած ընկերների ու երևանյան սեղանիկավորների»³ կամ ռեստորաններում Փիդայական երգերի ներքո հարթած պարողների միջև. «Ժամանակը չէ», որ մեր սուրբ երգերը չօգտագործվեն որպես լայն սպառման առարկա և Ֆիդայի բառն էլ մարդիկ շատ գգուշորեն օգտագործեն իրենց հասցեին»⁴: Ազգայինի արժենորման է ուղղված նաև Զեյթունցյանի երազանքը. «Երբ պիտի գա այն օրը, որ հայ մարդն էլ ներքին պահանջ կունենա պատշգամբից կախելու իր երկրի դրոշը, իր եռագույնը...»⁵:

Արտազադրի թեման առանցքային է Զեյթունցյանի հրապարակախոսության համար: Ներգաղթած ընտանիքի զավակը հստակ պատկերացնում է արտագաղթի պատճառները և անդրադարձնում դրանց բավականին սուր հողվածներով, քայլ և գիտակցում է, որ «մեր ճակատագի տեր փոքր ժողովուրդները դեռ վրեժ ունեն պատմությունից, մենք հազիվ-հազ պատեհություն ենք ստացել մի տաճիքի տակ հավաքվելու... Ոչինչ, ոչինչ, որ տաճիքից դեռ ջուր է կարում... Գուցե մի քիչ էլ դիմանանք, իր՝ գուցե մի քիչ էլ ատամներս սեղմենք»⁶, - դիմում էր նա ժողովորդին 1989-ին, երբ արտագաղթի հզոր ալիք էր թափ առել: Այս թեմայով գրված հոդվածներում Զեյթունցյանը հաճախ է խոսում 1946-48 թթ. հայրենադարձության մասին, ցույց տալիս ներգաղթողների չար-

¹ Նույն տեղում:

² Զեյթունցյան Պ., Մեզ չի հասկանա օտարերկրացին, մեզ չի հասկանա սառ օտարուին, փետրվար, 1990 թ., Ապրենք տասը պատվիրաններով, Երևան, ՀԳՄ հրատ., 2009 թ., էջ 372:

³ Զեյթունցյան Պ., Ղովհարածն ղենոկրատիա, «Երկիր», 22 հուլիսի, 1992 թ.:

⁴ Զեյթունցյան Պ., Մի՛ խանձեց մեզ ծեր վայրի, արջի ցեղերին, 1990 թ., ապրիլ, Ցուլւը դեռ այնտեղ են, Երևան, «Նախիմ» հրատ., 1990 թ., էջ 120:

⁵ Զեյթունցյան Պ., Այդ «տարբեր, տարբեր» հայերը, «Ազգ», 27 հունիսի, 2001 թ.:

⁶ Զեյթունցյան Պ., Կերը լավ կլիմի, 1989 թ., մայիս, Ապրենք տասը պատվիրաններով, Երևան, ՀԳՄ հրատ., 2009 թ., էջ 305:

դարացված ոգեստությունը, այստեղ կրած դժվարություններն ու համատարած ահի, մերժվածության մթնոլորտը: Այս ամենով, կարծես, ցույց է տալիս ընթերցողին, որ իրենք բախտակից են, որ լիովին հասկանում է նրանց, և կարեկցողի ու բախտակիցի առավել իրավասուր դիրքերից հորդորում: «Գուցե դեռ պայքարենք միասին...»: Գտնված մոտեցում է:

Դամահայկական միասնությանը Զեյթունցյանը այլընտրանք չի տեսնում, պետք է «կամ միասնական բռունքը դարնալ, կամ փոշիանալ ու անհետանալ»¹: Յիշեցնում է ամերիկյան հայտնի կարգախոսը՝ «Միավորվի՛ր կամ մեռի՛ր», որն, ի դեպ, ևս ժամանակին շրջանառության մեջ դրեցին մամուլի օրգանները և որը մեծապես նպաստեց գաղութների միավորմանը միասնական հզոր պետության մեջ²:

Ընդհանրությունը շահի և նպատակի միջև այն է, որ և առաջինը, և երկրորդը արտացոլում են օրյեկտիվ պահանջմունքներ, իսկ տարրերությունը՝ որ առաջինը գիտակցում է, իսկ երկրորդը՝ գործում: Շահերը, այդ թվում նաև ազգային շահը առկա են միայն այնտեղ, որտեղ կան նպատակային սկզբունքով գործող սուբյեկտներ³: Կստահարար կարելի է ասել, որ Զեյթունցյանը գործում է նպատակային, նրա յուրաքանչյուր խոսքը պայմանավորված է առկա խնդիրներով և ազգային հետաքրքրություններով. «Եթե ասեմ, որ հրապարակախոսական հոդված չեմ սիրում գրել, գուցե կուկետություն համարեք: Բացատրեմ: Գրում եմ միայն այն ժամանակ, երբ մեջս կուտակվում-կուտակվում են մտահոգություններն ու դժգոհությունները և պոռկալու անհրաժեշտություն է ծագում: Իսկ ի՞նչ հաճելի բան կա դրանում: Երանի չէ», որ այդպիսի առիթներ չլինեն»⁴ ...

¹ Զեյթունցյան Պ., Իսկ ո՞վ ենք մենք, 1990 թ., մայիս, Ապրենք տասը պատվիրաններով, Երևան, ՀՊՍ հրատ., 2009 թ., էջ 392:

² Բենջամեն Ֆրանկլինը «The Pennsylvania Gazette»-ում 18-րդ դարասկզբին տպագրեց հետազայում հանրահայտ դարձած այն նկարը, ուր պատկերված էր 7 մասերի բաժանված օճը (7 զաղությունների թվով): «Միավորվի՛ր կամ մեռի՛ր» կարգախոսով:

³ Այս Ղետոնյան, «Ազգային շահ» հասկացության ռեալիստական մեկնարանության հարցի շուրջ, Վեյպուս 3 (8), ապրель – մայ, 08, 15.06.2008 http://ap.rau.am/?page=statja&st_id=481:

⁴ Զեյթունցյան Պ., Կցկոտուր մենախոսություն, «Ազգ», 17 սեպտեմբերի, 2005 թ.:

Գոռակամյան
Մամուլի պատմության և տեսության
ամբողջի ասիստենտ, ք. գ. թ.

ԱՆԴՐԱԿԱԿԱՆ ԾԱՌՈՒԿՅԱՎԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Հայացքը հայոց ապագային» վերնագրով ուղերձում Յրամտ Մաքսոյանը 1983 թ. գրում է. «Առաջնակարգ արձակագրի, լրագրողի, փայլուն հրապարակագրի, խմբագրի ծննդյան յոթանասունամյակը մենք նշում ենք ոչ ամենակին որպես սոսկ փրկվածի և անգամ ոչ որպես տաղանդաշատ գրողի, այլ որպես ուժեղ մի անհատի, որ պոկում է մեզ սփյուռքի նկատմամբ հուսահատության ու կասկածների ոստայնից, անհատի, որ հանդգնում է այսօրվա ու ապագա իրականության աշբերին նայել և մեզ համար լույս ու հույս կորցել։ Իրականությունը ծառուկյանի պես մարդկանց երթեք անակնկալի չի բերում, քանի որ իրականությունը նրանք չափում են միայն մի բանով՝ իրականությամբ։ Վերապրել է պետք, ամեն օր վերապրել, անընդհատ վերապրել։ Ահա թե ինչի ուսուցմանն է ուղղված Անդրանիկ Ծառուկյանի կյանքն ու գործը, ահա թե ժողովրդական ինչ առողջ բնագդի առջև է բացել Ծառուկյանը իր կյանքի դոճերը։»

Անդրանիկ Ծառուկյանի կյանքի ամեն եզր, բողած հսկայական գրական ժառանգության յուրաքանչյուր կտորը վերապրում յուրատեսակ դրսնորում է։ Ինչպես որը, որ մոլորպել է աշխարհի անարդարության, իր վախերի ու երազանքների հակասականության հորձանուտում, որտեղից փորձում է դրւոս գալ լուր համառությամբ ու կամքի գերլարումով, կամ ինչպես կայացած ուժեղ անհատականությունը, որ իր մեջ զսպելով պարտադրված մարդկային ողբերգության ցավն ու կսկիծը, այն վերափոխում է ազգային նվիրումի, հայրենիքի նկատմամբ անափ ու անշահախննիք սիրո։

«Նայիրի»-ի խմբագրի պաշտոնում մոտ 40-ամյա գործունեությունը չհաշված՝ 12 հատոր երկեր, բանաստեղծություններ ու արձակ ստեղծագործություններ է բողել մեզ Ծառուկյանը, որոնք որքան գրական գեղարվեստական, նույնքան էլ հրապարակախոսական արժեք ունեն։ Դրանք այնքան շաղկապված են միմյանց ու ներդաշնակ, որ դժվար է ասել՝ որ սկիզբն է ավելի շահել՝ գրականությունը, թե՝ հրապարակագրությունը։ Թերևս երկուսն էլ։

Սակայն Ծառուկյանի հրապարակագրության հիմնական միջավայրը, անկասկած, նրա հիմնադրած և մինչև մահը խմբագրած «Նայիրի» շաբաթաթերթն է։ Այն ունեցել է կյանքի 2 շրջափուլ։ 1941-1949 թթ., երբ

Ծառուկյանը ապրում ու գործում էր Հալեպում, և 1952-1983 թթ., երբ նա Բեյրութում էր: Թերթի առաջին շրջանում Ծառուկյանը կուսակցական էր, բայց «Նայիրին» ուներ ընդգծված գրական ուղղվածություն: Իսկ Բեյրութում հրատարակության շրջանում արդեն ազատ էր և «Նայիրին» հրատարակում էր որպես գրական, ազգային քաղաքական շաբաթաթերթ: Այսպիսի մոտեցումը գույտ նախապատվությունների, կամ Ծառուկյանի մոտ թեմատիկ առաջնայնությունների փոփոխության պարզ դրսերում չէր: Դա հավաստումն էր այն բանի, որ նա երեք գրականությունն ու իր քաղաքական կողմնորոշումները չշաղկապեց, չփորձեց նեղացնել, կուսակցական կաղապարմերի մեջ առնել գրականագետի իր հայացքները, մոտեցումները Սփյուռքի հայապահպանության և Հայաստան-Սփյուռք հարաբերությունների առնչությամբ: Մինչդեռ իր ժամանակների շատ մտավորականներ, ովքեր իմանականում այս կամ այն ավանդական կուսակցության անդամներ էին և առաջնորդներ, հաճախ տուրք էին տալիս կուսակցական նեղ գաղափարաբանությանը: Ծառուկյանի ներսում կուսակցականը երեք առաջին պլանում չի եղել: Նա հանդես էր գալիս իրեն սփյուռքահայի ճակատագիրը կիսող հազարավորներից մեկը՝ իր որոնումներով, ինքում կուտակված ու ժայռացած կորստի ցավով, կարոտներով, և վերջապես խոր մարդկային ողբերգությամբ, որ ծնունդ էր փնտրված ու չգտնված, ավերված մանկության թողած բաց վերքի: Ծառուկյանի «Թուղթ առ Երևան» ստեղծագործությունը չափածո հրապարակախոսության մի իսկական զլուխգործոց է: Լինելով դաշնակցակամ՝ խորհրդահայ գրող Գևորգ Արովի «Մենք չենք մոռացենք» հակադաշնակցական բանաստեղծությանը Ծառուկյանը նախընտրում է պատասխանել իրեն օտար անդաստաններում իր տեղը որոնող ու չգտնող, կսկիծը սրտում կուտակած տարարախտ մի անձ՝ ընդ որում՝ առանց Արովի նկատմամբ ատելության ու մաղթի:

Իմ հոգին հիմա, մրիկների տեղ
ճարճատող քնար,
Որին փաթթել է անցեալը դժիսն
Որպէս հնչուն լար՝
Միլին զոհերի աղիքները պիրկ՝
Դարն է մղկտում լարերի վրայ
Ու ողբն իր նետում դարերին գալիք.-
Շասել է ահա րոպէն գերագոյն,
Կեանքի եւ մահևան արարը վերջին.
Չկա՞յ մեզ համար ուրիշ փրկութիւն
Քան մեռելների սեւարախտ ուրին,
Որ ծգվում է տաք անապատներից,
Անցնում մեր սրտից
Եւ հասնում ի քե՞զ, եւ հասնում ի քե՞զ,
Իմ լուսապայծառ, կարմիր հայրենիք...

Որքան խորն էր, սակայն, Ծառուկյանի ներքին խռովքը, մարդկային ողբերգությունը, նա երևէ դրանք չփաթաթեց ընթերցողների պարանոցին, այլ դարձեց իր ժամանակների Սփյուռքի իրական դեմքը գծագրելու միջոց: Նրա «Մանկություն չունեցող մարդիկ» հուշագրությունը Սփյուռքի առաջին սերնդի կենսապատում կարելի է համարել: Այն հուշերի հիման վրա գրված ակնարկների, գրողի որբանոցային կյանքի դրվագներից հյուսված իրական պատմությունների մի ամբողջություն է, որն իր ապրած ժամանակների շունչն է, մտայնությունների, սպասելիքների ու հիմասթափությունների հակասական աշխարհի նկարագրությունը: «Մեր մանկությունը թշվառության ու տառապանքի դժոխային խառնուրդ էր, որի հիշատակն իսկ, տարիներ հետո, դեռ պահում է մեր սրտերը կարծր ու հոգիները՝ խանձված: Իսկ մանկություն չունեցանք, որովհետև հայ էինք ու որբ էինք: Մանկություն էր արդյոք կիսամերկ, բորիկ ու թշվար մեր գոյությունը սալաքարերի վրա, ցրտին ու անձրկին, մանկությունը էր զրկանքը, անօրությունը, արցունքները, բոլորի անտարերությունը...: Մանկություն էր, որ Վեց տարեկանից արդեն գիտեինք գոյության բոլոր ծները, նաև մուրացկանության արվեստի նրբությունները, մի կտոր հացի համար դրներ ծեծելը»: Իրավամբ, ըստ գրականագետ Վ. Գաբրիելյանի՝ Ծառուկյանի «Մանկություն չունեցող մարդիկ» հուշապատումը իր նյութով, ժանրով և առհասարակ բռվանդակությամբ կարող է շատ հաճիստ միանալ Գ. Մահարու, Ն. Զարյանի, Թորովենցի կենսագրական վեպերին, իսկ իրապարակագրական տեսանկյունից՝ հայ իրականության նշանակալից էջերին:

Այն, ինչ Ծառուկյանը կորցրել էր մանկությունում, տենդագին որոնում էր ապագայում ու այդ ապագան կերտում ներկայով: Ու այդ որոնումները տանում էին դեպի այն մի կտոր հողը, որ ջերմացնում էր համայն Սփյուռքին ու նրան տուկալու, գոյատելու և հայեցի մնալու ուժ հաղորդում: Կար այդ հողեղեն, իրական հայրենիքը, թեև շատերը սփյուռքում ստեղծում էին հոգևորը, երազայինը, որը հաճախ բախվում էր իրականությանն ու օտարման նոր խթան դառնում: Ծառուկյանի համար կար միայն իրական հայրենիք՝ Խորհրդային Հայաստանը՝ անկատար, դժգույն, վանդակների մեջ, որին, սակայն, նվիրված էր իր ողջ եւրյամբ, իր մտածումներով, ամեն մի նյարդալարով:

«Դին երազներ, նոր ճամփաներ», ինչպես նաև «Նոր Հայաստան, Նոր Հայեր» աշխատությունները Ծառուկյանի ընդգծված իրապարակախոսական գործերից են, որոնք ստեղծվել են Հայաստան կատարած նրա երկու այցելությունների անմիջական տպավորությունների ներքո: Եվ ինչպիսի ջերմությամբ է այդ երկերում հիշում Հայաստանում անցկացրած օրերը. «Այցելեցի սուրբ Էջմիածին, տեսա ճեմարանի աշակերտներին դասի ժամանակ, ապա այցելեցի Գրողների տուն և երկար ու սիրալիր գրուց ունեցա բազմաթիվ գրողների հետ, ներկա եղա

Երգի-պարի երեկույթին և «Անուշ» օպերային: Դիացումով շրջեցի կոնյակի գործարանով, և իրոք զմայլվեցի իրականացրած աշխատանքներով: Այցելեցի նաև Օշական՝ սուրբ Սեսրոպի դամբարանին: Զվարդնոցն էլ տեսա... Երեկ ացելեցի Գեղարդ, որի նկարագրությունը, սակայն, չի կարելի կատարել ոչ բառերով, ոչ էլ անգամ նկարներով. կարելի է ըմբռնել և շշմել միայն տեսնելով»: Կարծես շուտասելուկի պես, երազում տեսածն ու զգացածը չմոռանալու և արագ ունկնդրին հասցնելու մղումով գրում է Ծառուկյանը «Դին երազներ, նոր ճամփաներ» ստեղծագործության մեջ:

Դայաստանին առնչվող ցանկացած հարցում նա անզիջում էր, կտրուկ. Դայաստանը նրա համար գերագույն արժեք էր: Անգամ գաղափարախոսությունները տեղ չունեին, եթե խոսքը սկսում էր առնչվել Դայաստանին: «Դայենասեր հայ մարդը սփյուռքում, ինչ համոզումի և գաղափարի ծառայող լինի, մինչև անգամ եթե կոնումիզմը խորթ զգա հոգուն, պարտավոր է երբեք զգտնվել հակակոմունիստ դիրքերի վրա: Ի վերջո քաղաքական բոլոր տեսությունները և զգացական բոլոր ապրումները հանգում են հետևյալ տարրական իմաստության՝ եթե սիրում ես հայրենիքը, ուրիշ աշխարհներում քո հայրենիքի դեմ պայքարողների հետ գործ մի ունեցիր», - Ծառուկյանի խոսքերն է մեջ բերում Բեյրութում լույս տեսնող «Զարթոնք» օրաթերթը 1989 թ.: Նա իր պարտըն էր համարում «Նայիրի»-ի միջոցով պատասխանելու Դայաստանին ուղղված ցանկացած քննադատության: Անդրադառնում էր Դայաստանում կատարվող բոլոր քիչ թե շատ նշանակալից իրադարձություններին, արձագանքում ամենաաննշան փոփոխություններին՝ լինեին դրանք գիտության, մշակույթի, հասարակական կյանքի, թե մարդկանց սովորական կենցաղի, սոցիալական հարցերի հետ կապված: Նրա խոսքը կենդանի էր, գրում էր իրականության մասին՝ իրական գույներով՝ առանց որևէ պաթոսի, գունազարդման, այնքան պարզ ու անմիջական, ինչպիսին իր անկեղծ սերն էր: Միակ բանը, որ չէր կարողանում հասկանալ, ներել, Դայաստանից սկսված արտագաղթն էր:

Դայաստանը նրա համար Սփյուռքի ինքնապահպանության միջոց էր, կովան, փրկօղակ ուժացման անկասեի վտանգի առջև կանգնած Սփյուռքի համար: Կահիրենի «Արև»-ում Ծառուկյանը գրում է. «Դայաստանը նյութապես մեզ պետք չունի, մեր ապրած երկրներում մենք Դայաստանին պետք ունենք՝ հայ մնալու համար: Պետք ունենք իր խոսքին, գրեթեին, երգերին, իր բանաստեղծներին, հայագետներին ու արվեստագետներին: Պետք ունենք օտարի առջև հպարտությամբ ցույց տալու, թե մեզ պես հայեր են նաև Վիկտոր Դամբարձումյանը, Միկոյանը, Բաղրամյանը... պետք ունենք: Եվ այս ամենի փոխարեն ի՞նչ ենք մենք տալիս Դայաստանին: Բացարձակապես ոչինչ: Եվ նա ոչինչ չի ել ուզում մեզանից: Մենք ենք, որ պետք է ճգնենք, խորհենք, խորանանք

մեր մեջ՝ ինչո՞վ կարող ենք ծառայել հայրենիքին»: Սփյուռքի պրոբլեմատիկայի համատեքստում Ծառուկյանի հրապարակախոսության մեջ Հայաստանը նույնախիս արժեք ուներ, ինչպես հայոց լեզուն և հայ գրականությունը: Ինչպես Հայաստանի հարցում որևէ Վերապահում գոյություն չուներ նրա համար, այնպես էլ հայոց լեզվի անաղարտության, հստակ ոճավորման, հայեցի մտքի ու մտածողության: Ծառուկյանի ոճը, որպես ստեղծագործող, հստակ էր, պարզ, անմիջական, խիստ պատկերավոր, զգացմունքային: Իսկ որպես գրաքննադատ ու տեսաբան՝ դիպուկ, հասցեական, սուր, հաճախ սարկազմով: Նրա մի քանի գրախոսականներից կարելի է հստակ պատկերացում կազմել գրականության վերաբերյալ Ծառուկյանի ընկալումներից: Հակոբ Օշականի «Հայ գրականություն» աշխատությունը քննելիս Ծառուկյանն ընդգծում է. «Օշականը բերել է վերլուծության բազմաթիվ օրինակներ, բացատրել լեզվի, ոճի, արտահայտության կերպերի հատկությունները, թե ինչպես պետք է փնտրել տող առ տող, բառ առ բառ, զատել զգացական և իմացական տարրերը, ամբողջացնել և խորացնել վերլուծումը»: Ճիշտ այդպիսի որակներով են օժտված նրա գրեթե բոլոր ստեղծագործությունները: Լևոն Ղախվերդյանի գրաքննադատության առանձնահատկություններին անդրադառնալիս 1981 թ. «Խայիրի»-ի համարներից մեկում Ծառուկյանը նշում է. «Ղախվերդյանի արժանիքը լեզվի մաքրությունն է, ոճի հստակությունը: Գրականագետները, առհասարակ, վերլուծող և ուսուցողական կարևորություն չեն տալիս լեզվին: Նրանց համար կարենու է, թե ինչ են ասում, այլ ոչ թե՝ ինչպես: Իսկ Լևոնի բառարանային իմաստից անկախ բառերը իր գրչի տակ իրենց հարմար տեղն են ունենում և երբեք չեն կարող փոխարինվել այլ բառերով, նույնիսկ հոմանիշներով»:

«Խայիրի»-ի գործունեության առաջին շրջանում Ծառուկյանը վարում էր կայուն բաժիններ, որոնք կոչվում էին «Հաշվեհարդար» և «Հայ մամուլի արատներ»: «Հաշվեհարդարի» նյութ դարձող ստեղծագործություններն ու դրանց հեղինակները ենթարկվում էին անխնա քննադատության: Սակայն դա ինքնանպատակ չէր. Ծառուկյանը երբեք չէր փորձում առաջնորդվել քննադատությունը, իր սուր քննադատությունը չէր օգտագործում անձնական հաշիվներ նաքրելու համար: Նա ուներ հստակ սկզբունք. երբեք քննադատության չենթարկել սկսնակների գործերը: «Քաջալերանըն իմաստ կրւենա այն ժամանակ միայն, եթե մեր առջև իրական արժեք լինի: Մենք երբեք հաշվեհարդարի չենք բերել և չենք էլ բերի սկսնակներին: Իսկ այ նրանք, ում քննում ենք, կատարյալ չարիք են մեր գրականության համար», - ասում էր Ծառուկյանը «Խայիրի»-ում: Որպեսզի հասկանալի լինի, թե որքան իյութեղ ու սուր էին նրա դիտարկումները, բերենք մեկ օրինակ: Ինքնահաստատման ուղին բռնած գրողներից մեկի ստեղծագործության մասին Ծառուկյանը

գրում է. «Այն ոչ վսեմաշունչ է, ինչպես կարծում են շատերը, և ոչ էլ նսեմաշունչ, այլ պարզապես անշունչ: «Նրա բանաստեղծությունները չունեն համապատասխան հանգավորում, գրված են խառն ու անհասկանալի կերպով, և այդքանի հետ մեկտեղ էլ բանաստեղծը շատ ինքնահավան ու փառասեր է, մի բան, որ վայել չէ գրական կերպարին: Եվ այն բանասերները, ովքեր գովարձնում ու շոյում են նրա փառասիրությունը, ճիշտ հակառակը պետք է անեն՝ ասել այդ խեղճ տղային, որ նա բանաստեղծ չի և որևէ անելիք չունի այդ ասպարեզում»: «Դայ մանուլի արատներ» և «Նշմարներ» բաժիններում նա նաև քննության առարկա էր դարձնում սփյուռքահայ առաջատար թերթերի հրապարակումները: «Ժողովրդի ծայն», «Արարատ», «Զարթոնք», «Եփրատ» և այլ պարբերականներ հաճախ են դարձել նրա քննադատության թիրախները: Բոլոր դեպքերում նյութը մեկն էր. նկատված լեզվաօճական, տրամաբանական թերությունները:

Այս անողոք հաշվեհարդարները, բնականաբար, չեին կարող չնկատվել: Ոմանք խոցվում էին Շառուկյանի սարկազմից, ոմանք՝ ճիշտ արված դիտողություններից: Նրան հաճախ էին մեղադրում ստեղծագործողին հոգեպես ու բարոյապես ոչնչացնելու միտումների մեջ: Բայց Շառուկյանն իր բարձրությունից դրա կարիքը չուներ: Դա չարամտության արտահայտություն չէր, պարզապես նա չէր կարող անտարբեր լինել այն հարցերում, որոնց հետ կապված ուներ սկզբունքային մոտեցումներ: Ինչպես վայել է իսկական լրագրողին ու հրապարակագրին, խոսում էր փաստերով, հիմնավորված, ինքնավստահ: «Պահպանելով լրագրության լավագույն ավանդույթները՝ նա իր ընդդիմախոսներին պատասխանում էր՝ նախապես իր և «Նայիրի»-ի հասցեին ինչած քննադատական հոդվածները արտատպելով պարբերականում:

Անենակարևոր սկզբունքը, որին փորձում էր հասու դարձնել գրողների, գրաքննադատների երիտասարդ սերնդին, ազատ մտածողությամբ առաջնորդվելն էր: «Նայիրի»-ի «Ինացական բաժին» խորագրի ներքո թե՛ թերթի փոքրաթիվ աշխատակիցները, թե՛ բոլոր ցանկացողները կարող էին իրենց կարծիքներն ու հայացքները ներկայացնել գրականության, արվեստի տարատեսակ հարցերի, հիմնախնդիրների շուրջ: Դաճախ այն դառնում էր իրարամերժ տեսակետների բախման, բանավեճների բատերաբեն: Միակ կանոնը, որ գործում էր այս բաժնում, և որին առհասարակ գրական բանավեճի հետ կապված հավատարիմ էր Շառուկյանը, հետևյալն էր. ընդունելի է անգամ պարսականքը, պայմանով, որ այն լինի անկեղծ և բացառապես պարկեշտության ու բարոյականության սահմաններում: Անկախ ամեն ինչից՝ ըստ Շառուկյան՝ գրողը պարտավոր է լինել ազատ ու անկաշկան: Գրականության մեջ հատկապես ազատության սահմանափակումը, ինքնական թե պարտադրված, արվեստագետին մղում է միջակության, տափակության, կեղծ,

շինծու իրագործումների: 1946 թ. նա գրում է. «Գրողների համագումարը հայ գրականության համար ուղիղներ է նշում, նյութեր է մատնանշում, սահմաններ սահմանում, սակայն որոշումով գրելու սոսկալի փաստն ինքնին ընդվզումի պատճառ չէ՝ արդյոք բանաստեղծի, առհասարակ գրողի համար: Բանաստեղծն իր ներշնչումը պետք է առնի ոչ Պիդատոսից, և ոչ էլ Հիսուսից: Իրենց հոգին պետք է լինի իրենց համար ուղեցույց, նաև նույն հոգին՝ ստեղծիչ: Թող ցանկացած պահ բացեն իրենց սիրող աշխարհի առջև որպես պատուհան, թող հագենան և արքենան մարդկանց և աշխարհի տառապանքով և հրճվանքով, լինեն կյանքի երկրպագու, բայց երբ լինեն իրենց հոգու հետ միայնակ, փակեն յուրաքանչյուր պատուհան և ականց դնեն միայն իրենց սրտի տրոփին»:

Դայաստանի, հայոց լեզվի ու գրականության նկատմամբ այս վերաբերմունքը սոսկ անհատի ներքին զգացողությունների, ապրումների արտահայտություն չէր: Ավելի շատ այն պայմանավորված էր Սփյուռքի ապագայի հետ կապված ներքին տագնապներով: Իրական Դայաստանը, մաքուր հայերենը և բարձրարժեք հայ գրականությունն անհրաժեշտ էին Սփյուռքին ինքնապահպանության համար, հայկական տարրի միասնականության ապահովման համար՝ որպես բովանդակ հայ ժողովոյի լինելության գրավական: Ծառուկյանը թե՛ գրականության և թե՛ հրապարակախոսության մեջ մնաց որպես հայոց ցավի կենդանի մարմնավորում: Նրա գրականությունը վերապրելու և վերապրեցնելու գրականություն էր, նրա հրապարակախոսությունը հիշենալու և հիշեցնելու հրապարակախոսություն էր: Ծառուկյանը հրաշալի գիտեր Սփյուռքն իր բոլոր ներքին խնդիրներով, շերտերով, բազմազանությամբ, նրա ծեռքը մշտապես Սփյուռքի օարկերակին էր, չէր հանդուրժում երկպառակության, կուսակցությունների միջև փոխադարձ մեղադրանքների, պատշաճության սահմաններն անցնող մրցակցության դրսկորումները: Երբեմն-երբեմն Սփյուռքի կենսարիթմն արտացոլվում էր «Նայիրի»-ում, գրական-հրապարակախոսական գործերում: Սփյուռքի համապատկերի բացահայտմանն են ուղղված նրա մի քանի արձակ ստեղծագործություններ, մասնավորապես «Մեծերը և մյուսները», որով ուշագրակ համեմատությունների, ակնարկների, հուշապատումների միջոցով կերպարանավորում է հայ մի շարք մեծանուն մտավորականների՝ Լևոն Շանթ, Նիկոլ Աղբալյան, Դրո, Արշակ Չոպանյան և այլք, «Սփյուռքի տասնամյակները», որը գրեթե ամբողջությամբ «Նայիրի»-ի՝ Սփյուռքին վերաբերող հրապարակումների խմբավորված համահավաք է ըստ տասնամյակների և ծանաչողական հսկայական նշանակություն ունի, «Երազային Դալեպ»-ը, որը սփյուռքահայի կերպարի, ներաշխարհի բացահայտմանն ուղղված իրապատումների շարք է և այլն:

Ծառուկյանը վախճանվեց 1989 թ., տեսավ համազգային զարթոնքը, բայց ընդամենը երկու տարի չբավականացրեց՝ վայելելու Դայոց

անկախ պետականության վերածնունդը, երազանք, որի իրագործմանը նվիրեց իր ողջ գիտակցական կյանքը: «Նրա հոգնատանց հոգուն միայն մի ափ հայրենի հող էր պետք նետել: Բոլորն էին նրան սիրում, քանզի նա, հատկապես շնորհիվ իր «Նայիր»-ի 40-ամյա վաստակի, դարձել էր ազգային ու գրական մակարդակի չափանիշ, իսկ իր «Նայիրն» մնայուն մի հուշակոթող այն մարդու, ով բանաստեղծ էր, գրականագետ, խմբագիր, հրապարակախոս ու մտավորական, մարդ, ում անունն էր Անդրանիկ Ծառուկյան» («Զարթոնք», 1989 թ. հուլիս):

Գայանե Դակորյան
բանասիրական գիտությունների թեկնածու

**ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄԱԽԱՆԴԻՐԸ
ՄԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ ՂՐԱՄԱՐԿԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԶ**

Միլվա Կապուտիկյանի հրապարակախոսական ժառանգության մեջ բացառիկ տեղ է գրավում անդրադարձը ղարաբաղյան հիմնախնդիրն: Իր գործունեության ամբողջ ընթացքում նա նշտապես ուշադրության կենտրոնում է պահել Ղարաբաղի հայկական երկրամասի խնդիրը, նամակներով, դիմում-բողոքներով բազմից դիմել խորհրդային Միության, նաև Աղորեջանի ղեկավարությանը՝ պահանջելով պատշաճ վերաբերունք ԼՂԻՄ-ի առջև ծառացած խնդիրներին: Սակայն հատկապես ղարաբաղյան հիմնախնդիրի նկատմամբ ունեցած դիրքորոշման պատճառով էլ 1980-ական թթ. Վերջին Ս. Կապուտիկյանի անձի ու գործունեության հանդեպ ծնավորվեց մերժողական վերաբերմունք: Կապուտիկյանի քաղաքացիական կեցվածքն այդ շրջանում ճիշտ չընկալվեց ու չմեկնաբանվեց, ինչի պատճառով այսօր էլ մեզանում, հատկապես երիտասարդության շրջանում, ասվածը չափազանցություն չէ, առկա է որոշակի բացասական տրամադրվածություն ամենայն հայոց բանաստեղծություն հատկապես այդ շրջանում ծավալած գործունեության, նույնիսկ ստեղծագործության նկատմամբ:

Ս. Կապուտիկյանը խորոշովյան «Ճնհալից» հետո խորհրդահայ գրողներից առաջինը հնարավորություն ունեցավ այցելելու Ղարաբաղ և Ելույթ ունենալու Ստեփանակերտի հայ բնակչության առջև: Չանդիպան ժամանակ հնչած գրողի Ելույթը «չափած-ծնած» ու «զգուշավոր» էր և դիվանագետի հմտություն ու ծկունություն էր պետք դրսնորել՝ ազգային զգացմունքներ չբորբոքելու համար:

Մեկ ամիս տևած ուղևորությունից վերադառնալուց հետո հրապարակախոսը նամակ է հղում Աղորեջանի գիտությունների ակադեմիայի նախագահ Մամեդալիկին, որում իր Վոլովկունքն է արտահայտում ԼՂԻՄ-ի պատմական հուշարձանների, մասնավորապես Խութավանքի անմիտբար վիճակի վերաբերյալ: Պատասխան նամակում Մամեդալիկը ստեղծված իրավիճակը բացատրում է «իրենց» հայրենիքում հուշարձանների մեջ քանակությամբ, ինչի պատճառով հնարավոր չէ ժամանակին համապատասխան պահպանություն ապահովել: «Կարդացի նա-

մակը, վիրավորվեցի և միայն այսքանը...»¹, - խոստովանում է Կապուտիկյանը:

Ղարաբաղին առնչվող Ս. Կապուտիկյանի հաջորդ, առավել խիստ քննադատական նամակն ուղղված էր Ադրբեյջանի կոմիուսի կենտրոնի առաջին քարտուղար Յ. Ալիկին: Բանաստեղծուի հին այն գրել է 1975 թ. մարտի 21-ին Ստեփանակերտում կայացած կուսակցական պլենումից հետո, երբ մարզի ղեկավար Կևրոկովը հանդիս է գալիս «Աշխատավոր ների ինտերնացիոնալ դաստիարակության...»² մասին գեկույցով: Այն, շատերի համար դաստիարակության նշանակություն ունեցավ դարարադարձային համար, քանի որ դրան հաջորդած տարիներին սկսվեց Ղարաբաղի հայաթափումը:

«Առանց այն էլ խեղոված-խեղանդամված Ղարաբաղի հայությունը այդ պլենումից հետո շնչահեղծ էր լինում»³, - վերիիշում է Կապուտիկյանը, և քանի որ Ղարաբաղ այցելելուց հետո հարազատի պես կապվել էր «այդ բազմաչարչար հողին», Վրդովված նամակ է ուղարկում Յ. Ալիկին: Կապուտիկյանը դատապարտում է Ադրբեյջանի, մասնավորապես ԼՂԻՄ-ի ղեկավարության վարած հակահայկական քաղաքականությունը: Նա գրում է. «...Չի կարելի իր հայրենի Ղարաբաղում ապրող հայից պահանջել, որ նա հոգեպես պոկվի իր ժողովրդից, իր պատմությունից ու մշակույթից... Յարկավոր է ընդմիշտ հիշել, որ պետական մակարդակի հասցրած Վրեժիմությունը, ռեպրեսիաները, Սովետական Հայաստանի հետ կապերի արգելումը, դպրոցների և հիմնարկների պատերից հայ գրողների և նշանավոր գործիչների դիմանկարները պոկելը և ոտքի տակ տրորելը, հայկական հնամյա հուշարձանների սրբապղծումը, Ստեփանակերտի մատուցմներին կանգնեցրած քարակերտ պատի ու տատի դեմ ծիծաղելի կորիվ մղելը... կարող են տալ հակառակ արդյունք. բորբոքել թշնամություն և ատելություն...»⁴: Եվ այստեղ, և առհասարակ Ղարաբաղին առնչվող բոլոր նամակներում ակնհայտ է Ղարաբաղի պատմությանը Կապուտիկյանի քաջատեղյակ լինելը. Ալիկին ուղղված վերոնշյալ նամակը պատմական փաստերի և բանաստեղծական մեծ հույգերի միահյուսման հրաշալի օրինակ է: Այսօր էլ, ազգայի խոսքի պայմաններում, կարդալով Ադրբեյջանի ղեկավարին ուղղված նամակը, պարզապես զարմանալ կարելի է այն համարձակության վրա, որով հայ բանաստեղծուի դիմում է Ալիկին՝ կարծես մարտահրավեր նետելով նրան:

¹ Կապուտիկյան Ս., Եզեր փակ գգրոցներից, Ե., 1997, էջ 228:

² Կևրոկով Բ., Աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակության հետագա բարեկաման ուղղությամբ մարզային կուսակցական կազմակերպության խնդիրները «Մսկետական Ղարաբաղ», 1975, 23 մարտի, թիվ 71:

³ Կապուտիկյան Ս., Եզեր փակ գգրոցներից, Ե., 1997, էջ 231:

⁴ Նույն տեղում, էջ 234:

Այդ օրերին «ՊրաՎդա» թերթի առաջնորդողը, անդրադառնալով Անդրկովկասում ինտերնացիոնալ դաստիարակության հարցերին, որպես այդ գործի լավագույն օրինակ հիշատակում է Աղրբեջանը, նշում հատկապես ԼՂԻՄ կուսկազմակերպության վերոհիշյալ պլենումը¹: Վրոշված սույն հոդվածից՝ Կապուտիկյանը Ղարաբաղում տիրող իրավիճակը նկարագրող ընդարձակ նամակ է ուղարկում Լ. Բրեժենևին, Քաղբյուրոյին և Դայաստանի կոմիտսին, ապա նաև առանձին հեռագիր Լ. Ի. Բրեժենևին՝ խնդրելով ուշադրություն դարձնել Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակին²: Այս ընդարձակ հեռագիրը ևս չափանց համարձակ էր, հատկապես, եթե նկատի ունենամք, որ այն ուղղված էր բռնատիրական ուժիմի գլխավոր դեմքին: Կապուտիկյանը պահանջելու նման խնդրում է Լ. Ի. Բրեժենևին անհապաղ ուշադրություն դարձնել Լեռնային Ղարաբաղում ստեղծված պրոբլեմին: «...Խոսքը ամբողջ Երկրամասի կենսական խնդիրների մասին է, նրա ավելի քան 80 տոկոս կազմող հայ ազգաբնակչության, ամբողջ հայ ժողովրդի ազգային արժանապատվության ոտնահարման մասին»³, - ասվում է հեռագրում: Այս նույնական մնում է անպատճախան, իսկ քաղաքական երեսպաշտության մթնոլորտը շարունակվում է մինչև 80-ականների վերջը՝ մինչև գորբաչովյան վերակառուցման տարիները:

Ղարաբաղի բնակչությունը հավատում ու արձագանքում է վերակառուցման գաղափարներին: Կրցախում սկսվում են համատարած միտինգներն ու բողոքի ցույցերը, Դայաստանի ղեկավարությանն են ուղարկվում նամակներ ու հեռագրեր՝ ԼՂԻՄ-ը Դայաստանին վերամիավորելու խնդրանքով: Դատկանշական է այն փաստը, որ այդ բովանդակությամբ մի շարք նամակներ են ուղղվել նաև Ս. Կապուտիկյանին: Նամակագիրները, նկատի ունենալով Կապուտիկյանի՝ ղարաբաղյան հիմնախնդրի նկատմամբ ունեցած մեծ հետաքրքրությունն ու շահագրգորությունը, նրան են հասցեագրել իրենց նամակներն ու խնդրագրերը՝ ակնկալելով «ազգի մեծանուն գավակների սգնությունը»: 1988 թ. փետրվարի 15-ին Դայաստանի գրողների միության կուսակցական փակ ժողովում ելույթ է ունենում նաև Ս. Կապուտիկյանը: Նա կոչ է անում գրողների միությանը սատարել Ղարաբաղի ժողովրդին, իրենց ձայնը միացնել նրանց արդար պահանջին, իսկ 1988 թ. փետրվարի 20-ին մասնակցում է Ղարաբաղին նվիրված առաջին միտինգին և ելույթով ոգևորում շարժման նախաձեռնողներին: «Սիլվա Կապուտիկյանը, որ 50-60-ական թվականներից ի վեր արժանի ճանաչում էր գտել Խորհրդային Սիության և Կառավարական, և մանավանդ

¹ Предисловие «Правда», 1975, 29 мая, № 149.

² Կապուտիկյան Ս., Եղբ փակ գզոցներից, էջ 238:

³ Նույն տեղում, էջ 236:

բազմալեզու ընթերցող հասարակայնության շրջանակներում, իսկ վերջին տասնամյակներին էլ իր գրական հեղինակությանը գումարել էր հրապարակախոսի բարձր համարումը, շարժման առաջին իսկ օրերից գտնվում էր հործանուտի կենտրոնում»¹, - այսպես է գնահատում Բ. Ուլուբարյանը գրողի այս շրջանի գործունեությունը:

Նետագա օրերին լայն քափ են ստանում բազմահազարանոց հանրահավաքները Հայաստանում և Արցախում, որոնք բնականաբար անհանգուացնում են կենտրոնական իշխանություններին: Նկատի ունենալով Ս. Կապուտիկյանի մեծ հեղինակությունը՝ Ս. Գորբաչովը հանդիպման է հրավիրում Ս. Կապուտիկյանին և Զ. Բալայանին: Հայ մտավորականները Մոսկվա են մեկնում՝ զինված զարարացյան հիմնահարցի հետ կապված մի շարք կարևոր փաստաթղթերով: Սակայն միութենական իշխանությունների համար առաջնահերթ խնդիր էր դադարեցնել ցույցերը և, մի քանի կիսախոստումներ տալով, երկրի դեկավարը հայ մտավորականներին հորդորում է գնալ և ցանկացած միջոցներով հանդարտեցնել ժողովրդին: «Իմացեք, որ դուք պատասխանատու եք դեպքերի հետագա ընթացքի համար»², - նախազգուշացնում է Ս. Գորբաչովը:

Սոսկվայից վերադառնալուց անմիջապես հետո Ս. Կապուտիկյանը հեռուստատեսային ելույթով դիմում է ժողովրդին, որում վերարտադրում է հանդիպման ընդհանուր բովանդակությունը և հորդորում պահպանել հավասարակշռությունը մինչև առաջիկա պլենումը, որի ժամանակ, ինչպես խոստացել էր Ս. Գորբաչովը, ի թիվս այլ խնդիրների, կրնարկվի նաև Լեռնային Ղարաբաղի հարցը:

Սակայն, ինչպես հետո պարզվում է, կենտրոնական դեկավարության խոստումները վերաբերում էին միայն Ղարաբաղի տնտեսական ոլորտին: Իսկ մինչ այդ՝ «Լեռնային Ղարաբաղի խնդիրը «լուծելը» ... իրենց խնդիրը դարձրին մոսկովյան պարբերական հրատարակչությունները»³, ասես հոդ նախապատրաստելով առաջիկա տնտեսական զարգացման ծրագրի համար: Այս շրջանում Կապուտիկյանը արձագանքում է կենտրոնական մամուլի այն հրապարակումներին, որոնք ինչ-որ կերպ առնչվում էին դարաբառյան հիմնախնդիրին: Հակահայկական ամբողջ քարոզչության «գլուխագործոցը» «Հույզեր և բանականություն»⁴ հոդվածն էր, որում ազգային վերելքը բնորոշվում է որպես բանականության կուլություն և ազգային սահմանափակություն, իսկ հա-

¹ Ուլուբարյան Բ., Արցախի գյուղապարհի տարեգրություն, Ե., 1997, էջ 25:

² Կապուտիկյան Ս., Եջեր փակ զգողոցներից, Ե., 1997, էջ 291:

³ Ուլուբարյան Բ., Արցախի գյուղապարհի տարեգրություն, Ե., 1997, էջ 30:

⁴ Օվաչենկո Ռ., Արակելյան Յ., Կադիմբեկօն Յ., Էմօսու և բազմա Պատրիարքական կուլություն և ազգային սահմանափակություն, իսկ հա-

յաստանյան իրադարձությունները՝ «միտինգային, փողոցային դեմոկրատիա», որում առաջին տեղում են հույզերն ու կրքերը:

Չոդվածի ընդգծված հակահայկական բնույթը, շարժումը Վարկաբեկող բնորոշումները, մի ամբողջ ազգի նվիրական զգացմունքների հանդեպ դրսնորված արհամարհական վերաբերմունքը, կենտրոնական նամուլի ու հեռուստատեսության՝ հատկապես սումգայիթյան դեպքերի մակերեսային լուսաբանումը և քաղաքական գնահատական չտալը, և Վերջապես, «Իզվեստիա» թերթում հրապարակված՝ ուստի մտավորականության՝ Ադրբեյջանի, Դայաստանի և Ղարաբաղի բնակչության ուղղված «հավասարապես խաղաղվելու» հորդորը Կապուտիկյանին նղում են գրելու ուստի մտավորականության ուղղված իր հանրահայտ Բաց նամակը:

Ամբողջ ժողովրդի տրամադրությունները, նաև Կապուտիկյանի այս շրջանի գործունեությունն ու հոգեվիճակը առավելագույնս բնութագրում է այս Բաց նամակը, որը թեև չի տպագրվում խորհրդային մամուլում, սակայն, թարգմանաբար տարածվելով, լայն ճանաչում ու արձագանք է գտնում: Բանաստեղծութիւն Կապուտիկյանը, գնահատելով հանդերձ իր գործընկերների մտահոգությունն ու տագնապը, երկու ժողովուրդներին խաղաղեցնելու ծգտումը, անընդունելի է համարում «հավասարապես» բառը, քանի որ ուստի գործները, միակերպ գնահատելով երկու հանրապետություններում ծավալված իրադարձությունները, ցույց էին տալիս իրենց անտեղյակությունը դեպքերի բուն էության ու պատճական փաստերի վերաբերյալ: Դրապարակախոսը «Հույզեր և բանականություն» հոդվածն անվանում է մեր ժողովրդի համար «հոգենոր Սումգայիթ», քանի որ խեղաքյուրված և միակողմանի էին ներկայացվում փաստերը: Տարիներ անց Կապուտիկյանը, անդրադառնալով այս նամակին, նշում է, որ ղարաբաղյան խնդրին առնչվող իր բազմաթիվ հոդվածներից, ելույթներից ու դիմումներից ոչ մեկը չի ունեցել այն ներազդող ուժը, մտքի ու զգացումների հագեցվածությունը, էլեկտրականացնող լիցքը, ինչպես այս նամակը:

Շարժումը ղեկավարող «Ղարաբաղ» կոմիտեի գործունեությունը, սակայն, շուտով տագնապեցնում է Կապուտիկյանին և նրա սերնդակից մտավորականներին: Նրանք ստեղծում են «Ավագների խորհուրդ» որը փորձում է «Ղարաբաղ» կոմիտեի հետ համընթաց գործելով՝ «հունի» մեջ պահել, Կապուտիկյանի բնորոշմանը, արդեն տարերային և անկառավարելի դարձող Ղարաբաղյան շարժումը:

Եթե «Ղարաբաղ» կոմիտեն ըմբռստության, գենքի միջոցով նպատակին հասնելու, ԽՍՀՄ-ից անկախանալու կոչեր էր հնչեցնում, ապա «Ավագների խորհուրդ» հավասարակշռության, զսպվածության կոչ էր անում խռովահույզ միտինգավորներին, հորդորում դադարեցնել գործադրությունները և պայքարի համար ընտրել ժամանակին և պայմաններին

ապելի համապատասխան միջոցները: Տարաբեռ այս մոտեցումներն էլ պատճառ դարձան «Ղարաբաղ» կոմիտեի և «Ավագների խորհրդի» ճամփարաժամկետության:

Նույն թվականի սեպտեմբերյան հանրահավաքում բազմությունը, չցանկանալով լսել Կապուտիկյանին, նրան իշխնում է հարթակից: Նման վերաբերմունքի են արժանանում նաև մի շարք այլ մտավորականներ: Որոշ ժամանակ անց լույս է տեսնում Լ. Տեր-Պետրոսյանի «Պատվերը կատարված է, սպասեք շքանշաններին»՝ հոդվածը, որն ասես խորիրդահայ մտավորականների մահվան դատավճիռն էր: Հոդվածագիրը դատապարտում է հայ մտավորականներին, մեղադրում, որ վերջիններս ոչինչ չեն արել իրենց հայունիքի համար, կատարել են վարչակարգի պատվերներն ու ստացել շքանշաններ: Ս. Կապուտիկյանը պատասխան նամակում գրում է. «Ի՞նչ անեն, որ հավատար... Ղարաբաղյան նյութերով լցված բազմաթիվ ստվարաբղթե տուփերս դատարան բերեմ, նեա 60 թվից սկսած աղրբեջանական ակադեմիային, Ալիկին, Բրեժնևին ուղղված նամակ-քողովներս մեջտեղ հանեն, Ղարաբաղյան նվիրված բանաստեղծություններս կարդամ... Մոսկվա հղված իմ նամակները, հեռագրերը, բազմաթիվ ելույթները... »²:

Այսուհանդերձ, վերոնշյալ իրադարձություններից հետո Կապուտիկյանի գործունեությունը թևակոխում է նոր փոլք: «Ավագների խորհուրդը» ընտրել էր դարաբաղյան հիմնախնդիրը Վերակառուցման շրջանակներում, սահմանադրական եղանակով լուծելու տարրերակը, ինչին էլ հետամուտ եղավ իր հետագա գործունեության ընթացքում: Դրապարակախոսի գործունեության այս շրջանն ամենաառատն է Դայսաստանում ու Արցախում տիրող իրավիճակի վերաբերյալ բարձրագույն ղեկավարությանն ուղղված դիմում-բողոքներով, նամակներով, հեռագրերով, ամենատարբեր ամբիոններից հեշտագործությամբ: Դրանցից շատերը բովանդակային առօւնով միանման են: Եթեաքը իր է, որ տարիներ անց, վերագնահատելով իր գործունեության այս շրջանը, Կապուտիկյանը նշում է, որ ապագայի պատմաբանները, ուսումնասիրելով Դարաբաղյան շարժման պատմությունն ու աչքի անցկացնելով անհամար դիմումները, գուցե ժամանակակից միամտության վրա: Սակայն այդ պահին նրանք ավելի լավ ելք կամ միջոց չին տեսնում: Դիպուկ է ընդհանրապես խորհրդային սերնդին տրված Կապուտիկյանի «ազնվորեն մոլորվածներ» բնորոշումը: Գրողը խոստովանում է, որ կյանքում արված իր բոլոր քայլերը պայմանավորված են եղել խորհավատով տիրող գաղափարախոսության նկատմամբ, և ինքը միշտ հավատարին է եղել իր խործին:

¹ Տեր-Պետրոսյան Լ., «Պատվերը կատարված է, սպասեք շքանշաններին», «Դայը», 1990, 6 մայիսի, թիվ 13:

² Կապուտիկյան Ս., Եթեր փակ օգողաներից, Ե., 1997, էջ 506:

Ղարաբաղյան իրադարձությունների գարգացմանը, «չափ ու կշռից» դուրս գալուն զուգընթաց ավելանում է գրողի հոգեկան երկվությունը: Նա ներքին խոր տագնապ ու անհանգստություն էր ապրում՝ միտինգների ու ցույցերի ժամանակ հաճախակի լսելով զենքի դիմելու կոչեր: Ավագի փորձառությունը, իր ժողովրդի ողբերգական պատմությանը բացատեղյակ լինելը, երկրում անկառավարելի իրավիճակ ստեղծվելու տագնապն էլ ավելի էր մեծացնում Կապուտիկյանի նտահոգությունը: Ողջ հոգով ու զգացմունքներով ընդունելով Շարժման արդարացիությունը՝ նա, սակայն, բանականորեն ընդգում էր պայքարի՝ իր պատկերացմանը ծայրահեղ միջոցների դեմ. բացի այդ, գրողը դեռևս չէր կորցրել հավատը գորբաչովյան վերակառուցման գաղափարների նկատմամբ: Թերևս այդ պատճառով էլ այն ժամանակ, երբ Դայաստանում արդեն անթաքույց հնչեցնում էր նկախորհրդային, հակապետական կոչեր, Կապուտիկյանը, իրավիճակը կարգավորելու ակնկալիքով, դարձալ դիմում է «իր ճանաչած քարձրագույն իշխանությանը»՝ Մ. Գորբաչովին՝ խնդրելով ծեռնարկել համապատասխան միջոցներ՝ արյունահեղությունը կանխելու համար: Ներքին տարութերումների, հոգեկան երկվության ու վտանգի կանխազգացողության արդյունքն էր 1988 թ. մայիսին հրապարակված «Խոսք դարարացիներին»¹ նամակը, որը հայ հասարակության մեջ նույնիսկ որակեց որպես դավաճանական քայլ: Խոսիրն այն է, որ ընդամենը նի քանի ամիս առաջ չափազանց վրդովկելով «Դույզեր և բանականություն» հոդվածում արտահայտված մի շարք տեսակետներից, հատկապես վիրավորվելով «Բանականության կուրությունը աչքի կուրությունից վատ է» արտահայտությունից, Կապուտիկյանն ինքն իր հերթին սրակի դատողության և ողջամտության կոչ է անում՝ հորդորելով առժամանակ դադարեցնել Շարժումը:

Այսօրվա ընթերցողին պարզապես զարմացնում է Կապուտիկյանի անսահման հավատը գորբաչովյան վերակառուցման ու ժողովրդավարական գաղափարների նկատմամբ: Նա դարարացիներին հորդորում է դադարեցնել անժամանակ պայքարը և սպասել 19-րդ կուսկոնֆերանսին: Այս նամակին հետևում են հանդիպումները քարձրագույն դեկավարության հետ, մասնակցությունը Մոսկվայում կայացած ԽՄԿԿ հանմիտութենական 19-րդ կոնֆերանսին: Մոսկվայան հանդիպումների ժամանակ նա առիթը բաց չի թողնում հանդիպելու ծանաչված ու ազդեցիկ նտավորականների հետ, նրանց դրականորեն տրամադրելու դեպի դարաբաղյան հիմնահարցը: Սակայն այն փաստը, որ Կապուտիկյանը ընդդիմանում է Ղարաբաղյան հիմնահարցը զենքի միջոցով լուծելու տարրերակին, նաև ԽՍՀՄ կազմից դուրս գալուն և անթաքույց ներկա-

¹ Կապուտիկյան Ս., Խոսք դարարացիներին «Սովետական Ղարաբաղ», 1988, 29 մայիսի, թիվ 124:

յացնում իր դիրքորոշումը, նրա դեմ ծևավորում է բացասական վերաբերմունք: Դայտնի է, որ այդ ընթացքում բանաստեղծութուն հարյուրավոր նամակներ են ուղղվել բնավ էլ ոչ դրվագանքի խոսքերով: Նամակագիրների մի մասը դատապարտել է Կապուտիկյանին՝ ժողովրդական շարժմանը դեմ գնալու, որոշ մասն էլ՝ ընդհանրապես «Ղարաբաղյան շարժումը հրահրելու և մի կողմ քաշվելու հանար»:

Օտարվածության, իր հարազատ տարերքից մեկուսացած լինելու, սխալ ընկալվելու զգացումն, անշուշտ, տանջել է Կապուտիկյանին: Այդ շրջանում իրեն մտահղող բազմաթիվ հարցերի է անդրադառնում հրապարակախոսը «Երեկոյան Երևան» թերթին տված «Ավելի հժվարը չիավատալն է»¹ հարցազրույցում: Սրանում արտահայտված տեսակետները, պատկերացումները, հետագա տարիներին առավել ամրապնդվելով, դրաման Կապուտիկյանի հասարակական-քաղաքական գործունեության մեխերը: Նա անվերապահորեն ընդունում է, որ դարաբաղյան շարժման բուռն օրերին ստեղծված կոմիտեները նոր մտածողության, ժողովրդապարության օրինակներ էին, և որ դրանց շնորհիվ Շարժումը չմարեց և տվեց իր դրական արդյունքը: Կապուտիկյանը, սակայն, անընդունելի է համարում նրա գործունեության հետագա ընթացքում դրսորվող որոշ պահեր: Նախ այն, որ նրա կազմից դուրս մղվեցին Շարժման սկզբնավորողները, իսկ ասպարեզ մտած նոր գործիչների ծայրահեղ դիրքորոշումը, հատկապես հակառուսական ընդգծված քաղաքականությունը, բանաստեղծության համոզմամբ, մեր ժողովրդի ճակատագրի համար ոչ միայն վնասակար է, այլև կործանարար:

Ս.Կապուտիկյանը Ղարաբաղի հարցի լուծումը պատկերացում էր բացառապես խաղաղ ճանապարհով՝ ԽՍՀՄ սահմանադրության և օրենքների շրջանակներում՝ համոզված լինելով պատերազմական եղանակով խնդրի լուծման անարդյունավետության ու անհնարինության մեջ: Հետագայում, երբ Ադրբեյջանը փորձեց ռազմական պարտադրանքի միջոցով իր կամքը թելադրել արցախահայությանը, Կապուտիկյանը, ընդունելով իր «քաղաքական միամտությունն» այս հարցում, պարզաբանում է, որ իր խաղաղամիջությունը պատճառաբանված էր հայ ժողովրդին բազում աղետներից ու արհավիրքներից հեռու պահելու մտահղոցությամբ:

Գնահատելով իր այդ շրջանի գործունեությունը՝ նա գրում է. «Ես միշտ ինձ ուժեղ եմ զգացել՝ սեփական արդարության զգացումով: Ես ինձ արդար եմ զգացել, երբ միամտորեն հավատալով վերակառուցմանը, հոգուս ողջ կարողությամբ արծագանքել եմ ազատագրական կովի ելած Ղարաբաղի՝ հայրենի ժողովրդին դիմող օգնության կանչերին, իսկ երբ զգացել եմ դարաբաղյան պրոբլեմի այդ պահին լուծելու

¹ Ավելի հժվարը չիավատալն է «Երեկոյան Երևան», 1988, թիվ 38:

անկարելիությունը..., ջանացել եմ առժամյա դադարի կոչել Շարժման մասնակիցներին»¹:

Ընդ որում, Ա. Կապուտիկյանը համոզված էր, որ կարժանանա պատմության և ժողովրդի օբյեկտիվ գնահատականին. «Ես գիտեի և հիմա էլ գիտեմ, որ այդ բոլորը, ինչպես և ներկա որոշ թերթերի առավոտյան բերած խայթոցները երեկոյան նոռացվում են և իմ, և հանրության կողմից: Մնում է հիմնականը՝ ժողովրդի կայուն սերն ու գնահատականը, որը ինձ համար վեր է ամենայն կոչումներից ու շքանշաններից»²:

¹ Շառօյան Ռ., Եթև անկեղծ չենց լինելու, եկեք չխոսենք «Մունետիկ», Երևան, 1992, թիվ 4:

² Անանյան Գ., Մտորումներ ճանապարհի վերջերին «Գրական թերթ», 1999, 15-31 հունվարի, թիվ 2:

**Թամրագ Յովսեփինան, Իրան
Լրագրող, հասարակական գործիչ**

**ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆԻ
ՎԵՐԺԻՆ ՇՐՋԱՆԻ ԴՐԱՄԱՐԱԿԱՆՕՍՍԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ**

Սիլվա Կապուտիկեանին Սփիտուքի վաղ սերունդները ծանօթ էին վաղուց՝ նախքան նրան հանդիպելը, այսինքն՝ մինչև 1962 թուականը:

Ծանօթութիւնը սկսվել էր հոգի ալեկոսող նրա առաջին իսկ բանաստեղծութիւններից, այնուհետեւ վերածվել կարօտալից սպասման: Ինչո՞ւ: Քանզի Սփիտուքի հանրութիւնը՝ որպես ճգված զգայարանների մի խառնարան, պատրաստ էր կլանել հայրենիքից եկող ամեն շշունչ, եթե հարցը հայրենաբաղնութեանն էր վերաբերում: Բանաստեղծութիւնն իր վերին քանցարով դարձաւ հենց դրա արտահայտիչը: Նա գեղեցկորեն նւազեց բոլոր հայերի և առաջին հերթին՝ մեղեդի ակնկալող մեր զգայարանների ու մեր բաց սրտի լարերի վրայ եւ հեռու-հեռուում դարձաւ Սփիտուքի փարոսը:

Այստեղից արդեն մի քայլ է սիրասուն դստերը սեփական աչքերով տեսնելիս իղծ ու երազանք նրա հետ կապելը, նրա դիմաց հոգի ու տագնապ բացելը, նրանով երջանկութիւն պայմանավորելը: Չորր զգացմունքների այդ օվկիանոսը 1962 թ.-ից ալիք տւեց ու բարձրացաւ իրական հանդիպունքների ժամանակ, երբ բանաստեղծութիւնն որոշեց շրջել գաղութբներում և ճանաչել հայոց Սփիտուքը: Ինքն իրենից ելած այդ օվկիանի ինքնաբուխ պահկածքը Կապուտիկեանի շնորհի առաջին անգամ մտաւ գրականութիւն, եւ բարեբախտաբար այնպէս մտաւ ու այնպէս փայլատակեց, որ բանաստեղծութիւնը առաջին հուշագրութիւնները՝ «Քարավանները» (1962) եւ «Խճանկարը» (1974), դարձան ողջ հայութեան ոգեւորութեան ու ոգեշնչան առարկան:

Այդուհետև միմեանցից անբաժան մնացին բանաստեղծութիւնն ու Սփիտուքը: Մինչեւ խոր ծերութիւն՝ ուղիղ 40 տարի, այսինքն՝ մինչեւ 2002 թուականը, Կապուտիկեանը ամեն հնարավոր առիթով կրկին ու կրկին եկավ հայոց գաղութներ, ոգեւորեց ու ոգեանդեց, իր բոցաշումք խօսքով կրակներ վառեց հայոց սրտերում և ամեն անգամ առատ հունձք հանձնեց թղթին, բողեց հարուստ ու հուզիչ վավերագրութիւն:

Այսօր, իբրեւ այդ հանրոյթի ներկայացուցիչ, ով մանկուց նույնպէս սնունդ է առել «Խօսք իմ որդուն», «Դայոց բարդին» և միւս բանաստեղծութիւններից, սերնդակիցներիս անունից երախտագիտութիւն են հղում և ցանկանում մի քանի տող ընթերցել թերամի հայոց թէնի

առաջնորդ Սեպուհ Արքազանի խօսքից, ով իմանալով Երեւան գալու նպատակս՝ իր օրինութիւնն ուղարկեց հետեւեալ խօսքով. «Արդի գրականութեան լուսավոր աստղերից է Ս. Կապուտիկեանը: Նրա ստեղծագործութիւնը պատվանդանուած է հայ ժողովրդի ողջ պատմութեան վրա: Մեր մանկութեան օրերից նա մեզ համար եղած է այն տաղանդաշատ ու բազմերախստ բանաստեղծը, որ մեր ոգին ալեկոծած է իր հայրենասիրական ստեղծագործութիւններով ու Վստահարար շարունակելու և ալեկոծել հոգիները բոլոր նրանց, ովքեր հաղորդվում են իր գրականութեան հետ: Նա այն մեծերից է, որի գործերի հետ հաղորդուելիս մարդ ինքը եւս մեծանում է ու օգրանում միանգանայն»:

Այժմ բուն նիւթին անցնելով՝ խօսքս պիտի սկսեմ Կապուտիկեանի՝ 1996 թ.-ի Թեհրան այցելութեամբ, որ ուշացած լինելով հանդերձ, մեծ իրադարձութիւն եղաւ համայնքի կեանքում: Ինչպէս ինքը՝ բանաստեղծութին է նշում, մեր արանքում միայն Արաքսն էր, բայց հեռավոր գաղութներ այցելել հնարավոր էր, *Պարսկաստան*՝ ոչ: ճանապարհների բացելուց հետո էլ տարօրինակ կերպ լուծվեց հարցը: Յեղինակի խօստովանութեամբ՝ «Մի 10-եակ առաջ ես չեմ կարող ենթադրել, որ Թեհրան կգնամ «Ալիքի» հրավերով, մանավանդ որ ժամանակին մեր՝ խորիդահայ գրողի եւ դաշնակցական պաշտօնաթերթի միջեւ «սրեր էին խաչածեւուել»... Սակայն մեր ժամանակները չենթադրելիք բաների ժամանակներ են» («Ին կածանը աշխարհի ճանապարհներին», «Գոյներ իրանահայ աշխարհից», Երեւան, 2002, էջ 370):

Ահա այս չենթադրելիք ժամանակներում շատ բան տեսած բանաստեղծուին կեանքում այնպիսի մեծ փոփոխություններ եղան, որոնք եւ տիրեցրին, եւ ուրախացրին, սակայն ամենակարեւորը Թեհրանից հեռանալիս նա ծեւակերպեց այսպէս. «...մեծ միացումը սփիւրքի ու հայրենիքի միջեւ, տարբեր շրջանակների միջեւ կայացել է, եւ այդ միացմանը կասեցում չկայ» (Ա. Մ., էջ 441):

Անկեղծ ասած, կարծում եմ՝ Կապուտիկեանի վերջին ուղեգրությունների համար սա ամենահենակետային բանաձևումն է: Ոչ թէ զուտ լաւատեսական, ոգեւորելու մղումից ասած խոսք, այլ գրողի բարձր տեսողութեամբ՝ կեանքին, իրականութեամբ տաճ ընդհանրացում, որ համազգային նշանակութեամբ վեր է կանգնում ամեն ինչից եւ մի պահ նրան էլ, մեզ էլ հեռացնում թէ՝ օրախնդիր դժվարութիւնները քննելուց, թէ իշխանական չարաշահումներն ու վարում մնացած մանր-մունք անհասկացողությունները դատապարտելուց:

Իհարկե, Կապուտիկեանի համար իդեալական կլիներ այս ամենը գուգորդած տեսնել անկախացած հայրենիքի բարգավաճմանը կամ գոնե տանելի դժվարութիւններ քաշելու բախտին, սակայն, ավաղ... Սփյուռքն արդեն ինքն էր բանաստեղծուից առաջ ընկնում, խօսում այն ահավոր իրավիճակի մասին, որ Յայաստանում ապրում էր հայու-

թիւնը, եւ տարիքն առած մեծամորը ոչինչ չէր մնում, քան երիցս տանջվել ու տառապել ստեղծված կացութեան համար: Այդպէս պատահեց նաեւ Թեհրանի «Սասունցի Դավիթ» դահլիճում հենց առաջին անգամ կազմակերպւած մեծ հավաքոյթի ժամանակ, որտեղ ցուցադրուած երեւանյան Ֆիլիմի ճնշող տպավորութեան տակ բանաստեղծուիին խօստովանեց, թէ ամեն օր ապրելով այդ կեանքի մեջ, այդպէս խորունկ ու քանձր չէր զգացել իրավիճակը: Սակայն Կապուտիկեանը Կապուտիկեան չէր լինի, եթէ մթութեան միջից արշալոյսի շողերը նկատող մեկը չի լինել, եւ թեհրանահայութեանը չկարողանար հանել տրտութեան վիճակից: Այստեղ նա հիշեցնում է, թէ մուլթ տարիներին Դայաստանում հանկարծ ծաղկեց մանկական տաղանդը եւ տանն էլ, արտասահմանում էլ բոլորին ափիքերան բռլեց աննախադեպ վերելքով: Դիշեցնում է դժվարագոյն պայմաններում բեմադրուած «Անուշ» և «Պողիկտոս» օպերաների մասին, որոնք պատիւ կրերէին Փարիզին ու Նիւ Եորքին, ապա գրում է. «Նորից լցուու ենք հավատով, յոյսով, յիացմունքով այն բանի համար, որ մեր ժողովուրդը այս անասելի տառապանքների մէջ էլ մնում է մեծ ժողովուրդ եւ, այնուամենայնիւ, շարունակում է ապրել արարելով, պատասխանել ճակատագրին ի՞ր ծեւով: Ես ուզում եմ, քանկագիններ, որ այդ կենսայաստատ զգացումները հաղորդվեն նաեւ ձեզ, որպեսզի դուք երեք չիուսահատավքը, որովհետեւ ծեր հուսահատութիւնը շատ քանկ է նստում մեզ վրայ» (էջ 378):

Նման մուտքից հետո Կապուտիկեանն անցնում է իր հիմնական առաքելութեանը, այսինքն՝ գաղութի և երկրի կեանքը հաւուր պատշաճի նկարագրելուն, հայութեան ջրաղացին ջուր լցնող մեծ ու փոքր բոլոր դեմքերին ներկայացնելուն: 50-ի հասնող հանդիպումներից բանաստեղծուիին ինքն էլ դժվարութեամբ է ընտրում բոլորին հանձնելու պատահիկները և աննոռաց տողեր է թողնում հայկական դպրոցների, Նոր Զուղայի հայոց եկեղեցիներում ու մատենադարանում տեսածի, Թեհրանի՝ ամեն ինչով օրինակելի «Սոսե մայրիկ» ծերանոցի, հայ քարեսիրական բօլոր և հատկապես կանանց միութիւնների, պարսից արցունիքում վառ յիշատակ բոլոած մեծ քարգմանիչ Խան-Մասեհեանի, ներկայում մեծ յարգանք վայելող հայ պատգամաւորների ու շահի ժամանակներից ոսկերչի հատուկ համբաւ վայելող արհեստաւորի մասին:

Յուզիչ երանգ ունեն հատկապես Նոր Զուղայից մնացած յիշողութիւնները, որ առանձնանում են մեր այլ հեղինակների գործերից: Կապուտիկեանի գրչի տաքութիւնն իրեն զգալ է տալիս մի այլ երանգով՝ մայրական գորով ու քնքշութիւն դնելով ամեն ինչի մեջ: Այդ գորովն ու սերը երևում է թե՝ հատակից մինչև զմբեք նկարագարդաւած Ամենափրկիչ եկեղեցու անկրկնելի պատկերը գծելիս, թե՝ Խաչատուր Կեսարացու պատմութիւնն անելիս, որից պարզվում է՝ Զուղայում էլ հայ Գուտտենբերգ ենք ունեցել, ով 1638 թ. վանքի պատերի ներսում ստեղ-

Ժել է տպագրական մեքենայ և տպել «Սաղմոս ի Դավիթ» գիրքը: Անկեղծ հիացմունքի պես է հնչում Կապուտիկյանի զարմանքը Ծահ Աբասի հրովարտակի առթիւ, որից բանաստեղծութիւն մեծ մեջքերում է անում. «Կեցցե՞ն, երեսները պա՞րզ: Այս է կերպը հյուրամեծարութեան... Մի ժողովուրդ, որ մեր խաթեր լրել է իր հազարամետա հայրենիքը և խալւարներով ոսկին ու մետաքսը թողած ծեր տունն է Եկել, տեղի՞ն է, որ մի քանի սեխի, մի քանի լիտր խաղողի ու բամբակի համար նրանց հետ կուեց...»: Ահա նաեւ մեկ այլ բանալի՝ հետազոտողներիս համար, թե որտեղից Կապուտիկեանի բանաւոր Ելոյթներում հայտնւեց ցնցոտիմերով ժողովորի մեջ շրջող դերւիշի կերպարը, որով բանաստեղծութիւն ամօթանը եր տալիս մարդկանց վիճակից անտեղեակ նորոյք իշխանավորներին, խրախուսում գոնի մեկ-մեկ դերվիշ դառնալ, մտնել ժողովորի մեջ, իմանալ նրա ցաւուդարդը: Բայց ահա նաեւ մեղալի հակառակ երեսը՝ պատմութեան գիրկն անցած այլ իշխաններ ու իսկական ազնվատոհմիկներ, որ տաղանդի ու աշխատանքի շնորհիւ հասել են Կալկաթա, Չափա, Մոսկվա, չեն մոռացել ծննդավայրը և դպրոց ու վարժարան են բացել այնտեղ, իսկ ռուս ցարին աղամանդակուր գահ են նվիրել՝ հայ համայնքի վրայ նրա աչքը քաղցր պահելու համար...

Պերսեպոլիսի պատերի տակ իրեն պաշարած զգացումներից խօսելիս Կապուտիկեանը ներկայացնում է մի պահ ընկրկելու վիճակը, երբ 23 հոգանոց շարքի մեջ ցոյց են տալիս շահին ներ տանող հայերին՝ մեկի ծեռքին՝ կժով ոսկի, մյուսի առջևից՝ մի կով. «Երևի 2500 տարի առաջ ունեցած մեր ամկախության ժամանակ էլ «տեղներս նեղ է եղել», մտածեցինք մենք... Սակայն, երբ իմացանք, որ այդ նվեր բերողները՝ Բաբելոնը, մարերը, կապադովկիացիները, Յին Եգիպտոսը, հին հույները, - բոլորն էլ հիմա անհետացել են, իսկ մենք կանք.- ամեն տեսակի ստրես-մստրես վայրկենաբար անհետացաւ», - ուրախ վրա է բերում բանաստեղծութիւն (էջ 404):

Նա մեծ տպակորութեամբ է խօսում նաեւ իրանահայ գրողների հետ ունեցած համոյիաման մասին, հայտնում նեղսրտութիւնը, որ ի տարբերութիւն սփիւռքի միւս հատվածների՝ իրանահայ հրաշալի պոեզիային աւելի անհաղորդ մնացինք, գուցել հենց այդ առթիւ էլ Վարանդից ամբողջութեամբ մեջ է բերում հրաշալի մի քերուած:

Այսօր ի յիշատակ այդ անմօռաց համոյիաման՝ ինձ հետ խօսք է ուղարկել նաեւ իրանահայ գրողների միութեան նախագահ Վարանդը, որը կկարդամ ծեր թոյլտվութեամբ և դրանով էլ կամփոփեն իրանահայ խճանկարը. «...Մեծ Եղավ Սիլվա Կապուտիկեանի ստեղծագործութիւնների ազդեցութիւնը հայութեան վերարթնացման, ինքնագիտակցութեան, ինքնաճանաշման և ինքնահաստատման առումով: Կապուտիկեանի բանաստեղծութիւնները՝ թեւ առած բնմերում, մտան գրքերի ու

դասագրքերի մեջ, շնչեցին մեր հարկերի ներքոյ՝ ոգի, հայրենասիրական շունչ ու գոյատեման, հարատեման կամք, վճռականութիւն փոխանցելով մեր՝ կորստեան ու հուսահատման եզրին կանգնած սերունդներին: Նոյն էր Կապուտիկեանը նաեւ Արցախյան շարժման եւ գոյամարտի ու Հայաստանի ազատագրման, դրան հաջորդող տարիներին՝ միշտ արդար, միշտ արքուն եւ միշտ պատմեշների վրայ:

Հարգանք՝ իր վաստակին եւ յիշատակինեւ:

Թե ինչպիսին էր Կապուտիկյանը Վարանդի խօսքով ասած՝ պատմեշների վոա, բօլորս գիտենք: Սակայն այն պարագան, որ նա 1992 թ. թե՛ օրերին գերմանահայ համայնքի հրավերով գնաց Գերմանիա ու Ավստրիա՝ իր քարոզչութեան համար օգտագործելու նաեւ Եւրոպական ամբիոնները, գիտեն ոչ բօլորը: 1993 թ. լոյս տեսած «Հոգու նոյն երթուղիներով» գիրքն, ահաւասիկ, հենց այդ՝ դարաբաղեան գոյամարտը աշխարհին ներկայացնելու ջանքերի մասին է:

Կարդալու ընթացքում ընթերցողն առաջին պահ տարակուսանք է ունենում համայնքի պատկերը տեսնելիս: Սակավամարդ, ոչ այնքան կազմակերպված, Պոլսից ու Թեհրանից եկած, մանր առեւտրի մէջ ներքաշւած և հասարակական կենացի համար դեռ ժամանակ չունեցող այս գաղութը բաւական հեռու է այլ գրքերից ճամաչած մեր գաղութերին նման լինելուց: Կապուտիկեանի խօսքն էլ, անշուշտ, նիւթից ելնելով, այն տաքութիւնն ու ջերմութիւնը չի կուտակում, որ սովոր ենք տեսնել այլ ուղեգործութիւններում:

Բանաստեղծութին ավելի քան կարկամած ու տարակուսած է, որովհետեւ Եւրոպայի սրտում ժրածան մեղլափեթակ տեսնելու, քաղաքական գործերի մէջ թաղւած քաղաքագէտներ գտնելու յոյսն ուներ, բայց գաղութում աւելի թրքախօս են, քան հայախօս, ավելի անտեղեակ են, քան տեղեակ: Ի՞նչ անել: Քյոլում համայնքը պառակտած է, ինքնագործ թատերախումբը միայն աղջկներից է թաղկացած, Մայնցում հազիկ իրար զիսի են հայաքում մի քանի հոգի՝ տարիին մի քանի անգամ անվարժ պատարագ երգելու, շաբաթօրյա դպրոցներ հաճախում են հաշւած թուզ երեխաներ, որոնց ծնողները թրքախօս են և մոյնակես հայերեն սովորելու կարիք ունեն... Բայց ի՞նչ հայերեն սովորեն, եթէ իրենց խանութերի հիմնական հաճախորդները Գերմանիան հեղեղած թուրքերն են, որոնց սպասարկելու համար ստիպված են չմատնել հայնելը...

Կապուտիկեանը, ուզած-չուզած, կառչում է որոշ առկայժումներից. Ծոտուզգարդում ահա Մինասեան ամուսինները հայկական շրջիկ ցուցահանդես են ստեղծել և Եւրոպացիներին ծանօթացնում են հայկական հին ու նոր արժեքներին, Հոլանդիայից հանդիպման եկած երիտասարդները Գորբաչովին նամակ են հղել՝ ճանաչելու հայերի արդար պահանջները, Հեսսենից երկրաշարժի օրերին օգնութիւն առաջած

գերմանացիները դարձյալ շարունակում են բարեկամութիւնը Հայաստանի հետ, Ախսնում իրանահայ ճարտարապետ Արմեն Յախնազարեանը (ով վերակառուցեց Սաղմոսավանքն ու Դադիվանքը) ցոյց է տալիս քաղաքի մայր տաճարը և ասում, թէ վանքը աղերսներ ունի հայկական ճարտարապետութեան հետ, և գտել են մի արծանագրութիւն, որի վրայ գրած է եղել, թէ այն կառուցել է Նոյի տապանից Եկած վարպետը: Քարն, աւաղ, արդեն չկայ, գողացել են: Ու չկայ նաեւ բարյացակամութիւնը մեր պատմութեան հանդէա: Վաղամեթիկ ճարտարապետը բանաստեղծուիուն պատմում է նաեւ, թէ ի՞նչ դժվարութեամբ, դատարանում դատը շահելուց հետո է միայն կարողացել թերթում փոքրիկ յայտարարութեան չափ նիւթ տպել ապրիլի 24-ի առթիւ, յիշատակել Յայոց ցեղասպանությունը: Ահա այսօրվա Գերմանիան հայութեան համար:

Այսքանից հետո իսկական յայտնութիւն է թրում Ավստրիա կատարած կարծ ուղեւորութեան ժամանակ ՄԱԿ-ի շենքում երեւելի հայ դեմքերի հետ հանդիպումը: Կապուտիկեանը Վերջապէս կարծես շունչ է քաշում եւ հղում իր պատգամը. «Տարտունած աշխարհով մեկ, մենք՝ տուն-տեղ ու հայրենից կորցրած հայերս, մեծ մասամբ հայտնի ենք եղել որպէս փոքրիած վաճառականներ, հմուտ արհեստաւորներ եւ այլն: Մենք պետք է կարողանանք մեր այս չարիքը, մեր այս աշխարհապիեր վիճակը բարիք դարձնել մեր ժողովրդի համար: ...Ուրախ եմ ծեզ ողջունելու այս միջազգային կառուցվածքի՝ ՄԱԿ-ի մէջ և յուսով եմ, որ ծեր մասնակցութիւնը այստեղ պտղաբեր կլինի նաեւ մեր ժողովրդի համար»: Իրեւ պտղաբեր Աերկայություն նա հիշատակում է լուսավոր մի տիկնոց՝ Արշալոյս ճգնավորեանի մասին, որ հայտնի խմբավարի քոյրը լինելով՝ երկար տարիներ դեկավարում էր ՄԱԿ-ի տնտեսական մասնաճիւղի քիմիական արդիւնաբերութեան բաժինը:

Փրկարար Վիեննայում է, Վերջապես, կայանում բանաստեղծուիուհու հարցագրոյց «Ստանդարտ» թերթի լրագրողի հետ: «Մի անսովոր ողբերգութիւն» խոսուն Վերնագրով Կապուտիկեանը Վերջիվերջոյ հնչեցնում է խռովայոյգ մտքերը և Ղարաբաղի, և Սումգայիթի, և Յայստանի շրջափակման, և հակահայկական հիստերիայի մասին:

Սա, բնականաբար, այն չէր, ինչ ակնկալում էր բանաստեղծուիին իր այցելութիւնից, սակայն գուցէ այն է, ինչ այսօր պետք է մեզ՝ բոլորիս: Նրա անդուլ ջանքին ի տես, մենք երիցս համոզվում ենք, թէ որքան քիչ է քաղաքականութեան մեջ ներդրած մեր ջանքը, և որքան շատ են անելիքները: Տարիքն առած բանաստեղծուիուհու որոնումներն ու պայքարի դուրս գալու մարտունակութիւնը մեծ պարտք է դնում իրաքանչիւրիս վրայ՝ առաջ նայելու, առաջ շարժելու, քանի դեռ մեջներս խօսում է հայի նախանձախնդրութիւնը:

Թոյլ տւեք խօսք ավարտեմ Կապուտիկեանին լաւագոյնս գնահատող, նրա վաղեմի բարեկամ, այժմ Իրանում Յայստանի արտակարգ և

լիազօր դեսպան Գրիգոր Առաքելեանի խօսքով. «Խօսել Ս. Կապուտիկեանի մասին, նշանակում է խօսել մի ժողովրդի խղճի, ազգի յոյսերի ու հոյզերի մասին։ Լինելով մեր ժամանակակիցը՝ նա վաստակեց նաեւ դասականի դափնեապսակը։ Ապրեց ու ստեղծագործեց մի դարաշրջանում, որի ժամանակ հայրենիքում վտանգւած էր մեր ժողովրդի հայեցի դաստիարակութեան խնդիրը։ Եւ նա՝ որպես հայոց լեզվի հավատաւոր քարօզիչ, մայրենիի նկատմամբ իր անհուն սերը փոխանցեց նատաղ սերնդին։ Եթէ մենք հայրենիքում եւ այլուր թոթովում ենք մայրենիով, դա այն հունձն է, որը ժամանակին սփռեցին Կապուտիկեանն ու ազգապահանձան նվիրական գործին զինվորագրւած միւս բանաստեղծերն ու ազգային նշակոյթի ջատագովները։

Կապուտիկեանն իր ներկայութիւնն ու նվիրվածութիւնը ցուցաբերել է մեր ազգի համար ամենակարեւոր ու վճռորօշ պահերին, պայքառել անարդարութեան դէմ, ծեռնոց նետել չարին, խրախուսել բարին եւ որպէս մեր ազգի պատմութեան ամենաղածան ժամանակահատվածի թովում թրծուած հասուն քաղաքական գործիչ՝ բարձրածայնել մեր ժողովրդի արդար դատը»։

Արմենուհի Դժմիրյան
Բանաս. գիտ. թեկնածու

ԱՆԴՐԱՆԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ ԳՐԱՊԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ամերիկահայ արծակագիր, «Նոր օր» և «Պայքար» թերթերի երկարամյա խմբագիր, Ռամկավար ազատական կուսակցության նունետիկ Անդրանիկ Անդրեասյանը (1909-1997) ծագումով Խարբերդի նահանգի Չմշկածագ գավառից է: Կեց տարեկանում ճաշակելով եղեռնի արհավիրքները՝ նա էլ միլիոնավորների նման տարագրվել է հաստատվելով՝ 19 տարեկանից նվիրվել է ազգային-հասարակական գործունեությանը, բուռն հետաքրքրություն դրսերել քաղաքական անցույղաբի, մանուկի համեստ, որն անմկատ չի մնացել: 1937-ին նշանակվել է Սան Ֆրանցիսկոյի «Նոր օր» թերթի գլխավոր խմբագիր, 1957-ին գործուղվել է Բոստոն, տասը տարի գլխավորել «Պայքարի» խմբագրությունը, այնուհետև Կրկին հետ է կանչվել Կալիֆոռնիա՝ շարունակելու «Նոր օր»-ի խմբագրումը: Ահա այս առթիվ ինչ է գրում Շահան Շահնուրը. «Սիրելի Անդրանիկ, «Պայքարեն» լսած էի, թե քեզ դրոշակի տակ կանչած են Կրկին՝ երթալ պաշտպանելու առաջին գիծը Լոս Անձելեսի լքյալ ճակատին: Երբ դասալիք կ'ըլլա նոր սերունդը, ուրիշ որու կրնային զենք Վստահել, եթե ոչ այն նվիրյալ և փորձառու մարտիկին, որ դուն ես»¹:

Հետաքրքիր է իմանալ, որ Շահնուրի պես մեծ գրողի բարձր գնահատանքին արժանացած գրչի այս անխոնջ մշակը պատշաճ կրթություն չի ստացել: Նրա ուսումնառությունը սկսվել և ավարտվել է Պոլսի Եղի Գուլեթի որրանոցում, իսկ համալսարանը եղել է սեփական գրասեղանը: Գրողի կենսագրությանն անծանոթ ընթերցողը, սակայն, մշտապես այն կարծիքին է եղել, թե հեղինակը, ճշմարիտ տաղանդով օժտված լինելուց բացի, բարձրագույն կրթություն ստացած, մագիստրոսի կամ դոկտորի կոչումով այն փնտրված «դատավորն» է, որին իրավունք էր վերապահվում բարձր ամբիոնից քննադատել հայտնի դեմքերին, խոսել արդարության անունից, պահանջել արժեքավոր գրականություն:

¹ Ա. Անդրեասեան, Գրական-հասարակական գործունեութեան 45-ամեակի յորելեան, Լոս Անձելը, 1976, էջ 23:

Անդրեասյանի՝ 16 հատոր հաշվող երկերում հրապարակախոս-խոհագիր-գրականագետի վաստակը կազմում է 6 գիրք («Խոհեմ»՝ երեք հատորով, «Սփյուռքը և հայրենիքը», «Դայլկական դատին նոր հանգրվանը», «Գրականության և գրողներու մասին»): Նրա գրականագիտական հոդվածներուն ամփոփում են հայ գրական երթի ողջ ընթացքը՝ Մաշտոցից մինչև Շահնոր, Սևակ, Կապուտիկյան, պատմական ակնարկները՝ հայոց պատմության անկյունադարձային դրվագները, իսկ նորագույն պատմության վերլուծություններն ընդգրկում են Դայլկա-տան-Սփյուռք հարաբերությունները Հայ դատի համատեքստում: Եթաքրքիր են նաև ամերիկյան կյանքին վերաբերող ուսումնասիրությունները, որոնցում գրողը շոշափում է քաղաքական նշանակալի անցուղարձեր և երևելի գործիչների անուններ:

Ի դեպ, իր սուրբ քննադատությամբ աչքի ընկնող Անդրեասյանը սկզբից և առանձնացել է այլ հրապարակագիրներից՝ հաճախ հակառակ դիրքորոշում դրսութելով ընդունված կարծիքներին, և երբեմն խոցելի, երբեմն անընդունելի, սակայն նոր տեսակետներ է բերել հայ հրապարակախոսություն: Նախապես իբրև համաճարդկային արժեքների ջատագով՝ նա ստեղծագործել է «սպիտակ արդարության» թեմանեռով, իսկ քննադատական հոդվածներով քարոզել հայ գրականությունը դրւուս բերելու ազգային ներ շրջանակներից: Ահա մի դիտողություն՝ ուղղված սփյուռքահայ հեղինակներին: «Ազգայինը գրականության մեջ» (1957) հոդվածից: «Պատմվածքներուն մեջ հաճախ այնքան ուժգնորեն կը շաչէ ազգային շունչը, որ դուրս կը հալածէ ծշմարտութեան լոյսն ու արևստին հրապոյրը: Ան (հայ գրողը – Ա. Դ.) Կիհիւծի նիւթերու աղքատութենէն, որովհետեւ երկչուտ ինքնալքումով իր ներշնչումները կը բանտարկէ հայ լեզու - հայ ոգի - Արարատ եռանկյունիի վանդակորմէն ներս»¹:

Դրանից ավելի վաղ «Գաղութահայ գրականության մասին» (1948) հոդվածում Անդրեասյանն արդեն խոսել էր սիրված ու մեծարված հեղինակների մասին՝ շնորհայելով նրանց ոչ վաստակի, ոչ էլ անվան համար: Բամն այնտեղ էր հասել, որ Դամաստեղին ու Սնձուրուն մեղադրել էր գրական ամլության մեջ՝ գրելով տողեր, որոնք այսօր էլ ցավ են պատճառում ընթերցողին. «Քննադատութիւնը փոխանակ օգնելու Դամաստեղին, որ նա ըլլար ծշմարիտ արվեստագէտ նկարիչ մը... զայն վերածեց գիւղանկարներու փայլուն ընդօրինակիչի մը: ...Դակոր Սնձուրին կար ու չկայ»²:

Նույնայսի տողով հետագայում գրում է իր համար շատ գնահատելի հեղինակների՝ Թեքեյանի, Չարենցի, Շիրազի ու Սևակի մասին՝ ասե-

¹ Ա. Անդրեասեան, Խոհեմ, Ա, Պեյրուք, 1967, էջ 30:

² Ա. Անդրեասեան, Խոհեմ, Բ, Լու Ամելլս, 1976, էջ 22:

լով, թե նրանց հայերգությունը ոչինչ չի տանում դեպի «տիեզերական մարդու»: 1967 թ. լուս տեսած «Գրական խորքի ու տարագի մասին» հոդվածում երկար առաջարանից հետո գրում է, թե մեզանում ազգային արժեքի շուրջ ստեղծվել է կրապաշտական վերաբերմունք, որին իրենց տուրքն են տալիս նոյնիսկ տաղանդավոր գրողները՝ ստեղծելով «այսպիսի ժամանակար, որ կը սանձ նիւթեր ընտրելու և մեկնելու անեն փորձարկութիւն» (էջ 33):

Այսպիսի «կրապաշտության» մեջ Անդրեասյանը նախ մեղադրում է Թեքեյանին՝ գրելով. «Դայերգութիւն խորագիրը կրող հատորի մը մեջ նոյն սեռի քերթվածները ոչինչ կը հաղորդեն հայեն դուրս մարդուն», ապա անցում է անում Չարենցին՝ մեղադրելով ոչ ավել-ոչ պակաս «Ես իմ անուշ»-ի վերջին տողերի համար. «Որեւէ օտար ընթերցողի, նոյնիսկ հայու համար կան Արարատի նման ճերմակ գագաթներ... Եվ կան Նարեկացիի ու Քուչակի պէս, եւ ավելի լուսապսակ ճակատներ» (ն. տ.):

Դասկանալով հանդերձ գրողի մտահոգությունը, այսինքն՝ հայ գրականությունը համաշխարհային ուղեծիր դուրս բերելու մեծագույն ցանկությունը, այնուամենայնիվ, դժվար է ընդունել հայերգությունը թիրախի տակ առնելու այն համար չարչարանքները, որոնցով Անդրեասյանը փորձում էր «դարձի բերել» Չարենցին ու Շիրազին: «Շիրազ իր բոլոր քերթվածներուն մեջ եթե հեծու Մասհսներու կողերուն վեր, Արարատն հողի պտղունց մը չպիտի կրնայ փոխսադրել Երևան, սակայն կրնայ հաշմել կամ սպաննել այդքան բանաստեղծութիւն՝ ոչինչ շահի դէմ կրուստի մատնելով հայոց գրականութիւնը» (ն. տ.):

Նկատենք, որ հայության և հայ գրողի հանդեպ նման «ուրացումներ» էլի կան մեր գրականության մեջ: Շահնուրը իր «Դարալեզներուն դավաճանությունը» պատճառքում գրական հերոսի անունից ասում է. «...Անիրաժեշտ էր հեռանալ վատառողջեն, ազգայինեն, հայեն: Պետք էր լքել հայը: Որքան ատեն որ սեր չկա մեր մեջ, այսինքն՝ հայը իր ազգակիցը չի սիրեր, իր ազգային փրկությանը՝ մասին հույս չունի և ատու իսկ ոչինչ կընե, պետք է հեռանալ հայեն»¹:

Նույն հաճագի մեջ է խոսում նաև Նուպար Ակիշյանն իր «Գաղթական-ներ» վեպում, Դակոր Կարապենցը «Աղամի գրքում» հեգնելու տոնով ափսոսում է, թե աշխարհը՝ հազար ու մի խնդրի հետևից, մենք՝ մեր լուսանցքային թեմաների՝ ինչպես անենք, որ հայը հայ մնա: Բայց, բարեբախտաբար, բոլորն էլ կես ճանապարհից հետ են դառնում, Շահնուրի խոսքով՝ ընդունում իրենց տկարությունները, ուրացումներն ու սուտը: Վերադարձողների մեջ է նաև Անդրեասյանը: Վերջինս, ի դեպ, վերադարձ է ապրում ոչ միայն տեսական, այլև գրական հայացքներով. ռասիզմին նվիրված իր հանրահայտ սպիտակ արդարության թենանե-

¹ Ը. Շահնուր, Երկեր, հ. 1, Երևան, 1982, էջ 304:

թից հետո նա անցնում է գուտ ազգային թեմաների, արդեն առաջացած տարիքում հասցնում ավարտել Դայոց մեծ եղենին նվիրված երկու գիրք:

Վերադարձը ակնհայտ երևում է նաև «Գրականության և գրողների մասին» (1988) հոդվածների գրքում, ուր վերոնշյալ հեղինակներին սիրո ու հիացմունքի շատ տողեր է նվիրում՝ երիցս փաստելով, որ խիստ քննադատ լինելով հանդերձ՝ մեծ հայրենասեր էր, իրականությունը տարբեր լույսերի ներքո տնտղող տեսաբան ու գրող:

Դիշյալ հատորում ուշագրավ է 1975 թ. գրված «Ավետիք Խահակյան» հոդվածը, որը լույս է սփռում միանգամից երկու մեծերի՝ Զարենցի և Խահակյանի կենսագրությունների վրա: Այստեղ հեղինակը պատմում է, թե ինչպես է 1935 թ. ամերիկահայ պատվիրակության կազմում առաջին անգամ հայրենիք այցելելով՝ հանդիպել Զարենցին և ինչպիսի դաս է քաղել նրա կերպարից: «Դանդաղ քայլերով ամպին բարձրացավ եւ Զարենցը... Ան սկսավ կարդալ Դայաստանի 15-րդ տարեդարձին նուիրուած իր զմայլելի բանաստեղծութիւնը դեւդեւանքով, սխալելով: ...Երկիւղած, գրեթ ահարեկ լուսիւն Կտիրապետէր սրահին, գորովով ու պատկառանքով շաղախած լրջութիւն մը համակեր էր բոլոր դեմքերը, եւ Կ'թվէր, թէ դադրեր էր նոյնիսկ ամեն շնչառութիւն: Կարժես հայոց դիցաբանական անցեալեն կիսաստուած մը մարմին առեր էր»¹:

Դիցումը շարունակվում է էլ ավելի բարձր նոտայի վրա, երբ Անդրեասյանը հիշում է, թե ինչպես ՅՕԿ-ի պատվիրակի ելույթը սկսվելուն պես Զարենցը բռնում և ցուցադրաբար հեռանում է դահլիճից, իսկ հետո նրան հետևում են մյուս բոլոր գրողները: Մահարին Անդրեասյանին տեղեկացնում է, թե Զարենցն այդ կերպ պատժում էր սինթքոր պատվիրակին, որը Փարիզում ամբարտավանորեն աթոռ էր բարձրացրել Խահակյանի վրա: Օրեր անց՝ Փարիզում ելույթ ունենալիս, Անդրեասյանը ամբիոնից հիշատակում է երևանյան դեպքը, Ներկայացնում գրողների ցուցադրական բողոքը և Խահակյանին փոխանցում Զարենցի հրավերը. «Երբ Բարիզ հասնեք, մեր անունից խնդրեցք Վարպետին... թող վերադառնայ հայրենիք... թող գայ մեզ մօտ... Սենք նրան շատ ենք կարօտել... մենք նրան՝ շատ կարիզ ունենք: Ասացեք Վարպետին, որ մենք նրան կպահենք իշխանի պէս, իբրև մեր գլուխների թագը...»:

Անկե հետո դարձեալ իրարու հանդիպեցինք... Եւ ամեն անգամ ձայնին մեջ տրտում աղերսի շեշտով մը կ'ըսէր.

- Խնդրում եմ, մե՛կ էլ պատմեցք, գրողները ինչպէս քայլեցին սրահից դուրս:

Եւ հետոյ.

¹ Ա. Անդրեասյան, Գրականության և գրողների մասին, Լու Անծելըս, 1987, էջ 110:

- Խնդրում եմ, ասացեք՝ ինչ խոսեց Չարենցը իմ մասին...» (էջ 112-113):

Ահավասիկ, Խսահակյանի խանդավառության և տունդարձի համար որոշում կայացնելու պատճառը, որում, ինչպես երևում է, փոքր չի եղել ինց իր՝ Անդրեասյանի դերը: Ահավասիկ նաև ժամանակաշրջանի անցուդարձի պատճությունը, որտեղ հեղինակը երևանյան մտավորականությանը շնորհում է ամենաբարձր դափնիները. «...Ազատութեան այս մայր ոստանին մեջ ոչ մեկ բողոքի կամ օայրոյթի մրմունց կը լսուի... Խոկ հոն՝ Երեւանի մեջ, ուր ճնշում ու բռնութիւն կը տիրեն, հայ գրագետներ բաւական ազատ զգացին իրենց և բաւական քաջ եղան... բոլորիս ճակատներուն ամորն ալ սրբելով» (էջ 113):

Այս ամենը երիցս գալիս է փաստելու, որ Անդրեասյանը քաղաքացիական անթերի պահվածքով գործիչ էր, բարձր սկզբունքների կրող, որոնց նա դրսկորում էր նաև իր գրական դատերում: Վերջիններից հետաքրքիր են Շահնուրին և Մահարուն սատարող հրապարակունները, որոնցում նա նատնացույց է անում գեղարվեստի շահը և գրողի ազատությունը ամեն ինչից վեր դասելու կարևորությունը:

Բացահայտելով հանդերձ թյուրիմացությունը (թեյրութի «Սփյուռք» շաբաթաթերթը, առանց տարեթիվ նշելու, 35 տարի հետո արտատպել էր Շահնուրի «Ազատն Կոմիտաս» հոդվածը, որի պատճառով Վահագն Դավթյանն ու Շահնուրը ելել էին միմյանց դեմ), Անդրեասյանն, այնուամենայնիվ, չի փորձում հաշտության եզրեր փնտրել երկու հեղինակների միջև՝ փաստելով, որ գրողն ազատ է իր մտորումների մեջ և չի կարող հասարակական կարծիքին դուր գալու համար դավել սեփական արվեստին. «Շահնուր եւ որեւէ վաւերական գրագէտ անկապտելի իրավունք ունի նոյնիսկ այսօր արտահայտելու նոյն համոզմունքը, կասկածները, վերապահումները» (էջ 295):

Նույն հոդվածում Անդրեասյանը պարսպում է նաև նրանց, ովքեր օտարագիր հայ գրողներին համենատում և նոյնիսկ գերադաս են դիտում հայագիրների հանդեպ՝ ուրանալով հայ արվեստին մատուցած իրական ժառայությունները. «Որեւէ օտարագիր հայ գրող, որքան ծավալուն հռչակի ալ բարձրացած ըլլայ և հայտարարէ իր հայկական ծագումը, շնորհք մը բաշխած չըլլար հայ ժողովուրդին, այլ իր մարդկային արժանապատվութիւնը հարգած կ'ըլլայ» (էջ 296): «Այրվող այգեստանները» պաշտպանելիս նա շեշտում է, թե գրական երկի գնահատման մեջ ազգային արժանապատվության ընթանման չափանիշով պետք չէ, որ անձեռնմխելի համարվեն քաղաքական դեմքերը, և հարցերը փակվեն դեռ չբացված: «Պաշտպան կանգնելով Մահարուն՝ նա հետևում է վերլուծության արժեքանական եղանակին և համոզված պնդում, որ գրական երևույթները մշտապես ենթակա են այն գաղափարին, թե որ-

քանով են ծգտում դեպի ընդհանուրը, բացարձակն ու համամարդկայինը:

Այս չափանիշներից ելնելով է նաև, որ Անդրեասյանը հանդում է քննադատական խոսք ասել ժամանակին անձեռնմխելի համարվող Շակոր Օշականի մասին, ով, չարաշահելով իր հանդեպ եղած ակնածանքը, մեծ վերապահումով էր վերաբերվում խորհրդահայ գրականությանը՝ սփյուռքին դրդելով ժխտական պահպաժիք: «Օշականի «Դատումին» վրիպանքը» հոդվածում (1946) Անդրեասյանը միանգամայն տեղին նկատում է, որ Օշականը հաճախ մեղանչում է քննադատության գիտական կոչման նեմ՝ իրական վերլուծությունը փոխարինելով սուրյեկտիվ կարգախոսներով: Նա հատկապես զարմանում է Ընացրդացի ռահիկիրայի՝ հարթելու, անտեսելու հոգեբանության վրա, որով Վերջինս վերից վար ջնջում, հերքում էր խորհրդահայ գրականությունը՝ ապավինելով անսխալականության իր հեղինակությանը: Ընդհանրացնող մի տողով նա ամփոփում է. «Կը ցավիմ մանաւանդ Օշականին հաճար... չունենալուն երիտասարդ ու անկեղծ բարեկամ մը, որ փսխսար իրեն թէ՝ նորերը այլեւս լրջությամբ չեն առներ իր դատավճիռները» (էջ 80):

Անդրեասյանի՝ հայոց պատմության հին ու նոր անցքերի ժանրակշիռ վերլուծություններից կարևորները Շայ դատին առնչվող հոդվածներն են, որոնք բացահայտում են բազմաթիվ մութ ու խորին հարցեր: Բայց այստեղ էլ Անդրեասյանը Անդրեասյան չէր լինի, եթե դիտարկուները չսկսեր ամենասկզբից և չքափանցեր պատմության խորերը: Խոսքը Կարդանանց պատերազմի մասին է, որին անդրադառնում է «Կարդան և Կասակ» (1952) հոդվածում: Այստեղ հեղինակին ամենաշատ զբաղեցնողը Կասակի կերպարը վերարժնորելու հարցն է, որ սփյուռքում նոր կրքով սկսեց հոլովկել՝ դերերի վերաբաշխում կատարելու մոլուքքով: Անդրեասյանը նախ ուզում է հասկանալ, թե ինչպես պիտի վարվել Կարդան Մամիկոնյանի անվան հետ, եթե հաստատվում է Կասակ Սյունու փառքը. «Ուրեմն՝ Կարդան և իր համախոները ապիկար, մոլեռանդ ու յանցապարտ արկածախնդիրներ էն, որ իրենց աղանդամոլութեամբ հայ ժողովուրդը դեպի կործանում կառաջնորդէն»¹: Երկրորդ՝ Անդրեասյանը բացեիրաց դատապարտում է այն ցնորամտությունը, որով փորձում էն ննամություն հաստատել 5-րդ դարի Պարսկաստանի և Խորհրդային Միության միջև և որպես Կասակի արդարացման փաստ բերել երախտագիտական զգացումները, ինչպես դա կարտահայտվեր ոռւսների հանդեպ: Փաստերն իրենց անուններով կոչելով՝ Անդրեասյանն ասում է, եթե համեմատելու մի բան էլ լիներ, ապա միայն Սասանյան Պարսկաստանի և Օսմանյան կայսրության միջև, որոնք երկուսն էլ «...հայացնցման նույն բարբարոս ծրագիրը կը

¹ Խոհեր, Բ, էջ 130:

գործադրելին զարմանալիօրեն համանման ու դաժան միջոցներով» (էջ 136): Եվ հետո՝ Վարդանին դատապարտելով, մենք պետք է պարսավենք մշտապես փոքր ուժերով թշնամու դեմ կովող մեր բոլոր գորականներին՝ Արշակ թագավորից մինչև Դավիթ-Բեկ ու Անդրանիկ, որ «իրատեսություն» չունեին հանձնվելու ոստիսին՝ «չհարուցելու» նրանց զայրույթը: Կրոնափոխության՝ այսօր թերև ներկայացվող վտանգի եռւթյունը Անդրեասյանը բացահայտում է Պարսկաստանի օրինակով, որն արարական կրոնին ու մշակույթին ենթարկվելով՝ «ալ երբեք չկրցաւ բարձրանալ իր նախկին զորութեան, հարստութեան ու փառքին» (էջ 153), և եթե հաջողեց պահել ազգությունն ու լեզուն, ապա միայն մեծաթիվ բնակչության շնորհիվ, որ մեր պարագայում բոլորովին հակառակն էր: Կերծապես, Անդրեասյանը բերում է նաև Յուրքական քաղաքականության թարմ օրինակը. «Օսմանյան կառավարութիւնը վեհանձն հանդուրժողությամբ մը հայ զանգվածներուն շնորհեց ֆիզիկական պատուհաննեն ազատելու ճամբար մը. - իսլամացում, որ անհատ հայը փրկել կը խոստանար թքացումով, այսինքն՝ հայոց ազգային ոչնչացումով» (էջ 134):

Ասվածն այսօր ավելի քան դառը իսկություն է. Թուրքիայում այդպիսի հայերի թիվն անցնում է 3 միլիոնից. և չկա ազգային գիտակցության նշույլ:

Անդրեասյանի քննարկած արդի թեմաներից խիստ ուշագրավ է Հայ դատի վերհանումը «Հայկական դատին նոր հանգրվանը» գրքում (1967, Բեյրութ), ուր նա միանգամայն հնարավոր է համարում հայ ժողովորի դատի հաղթանակն ընդուն թուրքիայի: Իրավագիտական փաստարկներով հեղինակը պնդում է, որ միջազգային օրենքների համաձայն արևմտահայ նահանգները այսօր էլ կարող են ճանաչվել որպես ինքնուրույն տարածք՝ հայության պատմական հայրենիք, քանի որ նույնիսկ 15-րդ դարից սկսած, Օսմանյան կայսրության հպատակությամբ հանդերձ, քարտեզներում ու միջազգային դաշինքներում միացյալ ծևով հիշատակվել են որպես Հայաստան: Ի դեպ, հաղթանակի մեծագույն կռվանը Անդրեասյանը տեսնում է ՍՍԿ-ի կանոնադրությամբ ու Նյուրնբերգյան դատավարության սկզբունքով թուրքիային իրեն ոճրագործ ճանաչելու ճանապարհը:

Սակայն բացի ապագայի համար պայքարելուց՝ Անդրեասյանն ապրում էր ներկայով և մեծ գործ կատարում հարցի միջազգայնացման ուղղությամբ: Նա մեզանում այն առաջին երախտավորն էր, որ հինգ տարվա չարչարանքով 1967-72 թթ. Տիգրան Բոյացյանի հետ կազմեց Հայոց ցեղասպանության մասին անգլերեն առաջին ստվարածավալ՝ մոտ հազար էջանոց վակերագրությունը՝ «Հայաստան. մոռացված մի ցեղասպանության վկայություն» վերնագրով, և հանձնեց ՍՍԿ-ին:

Այս ամենից բացի՝ Անդրեասյանը նաև ժամանակի հորի խոսակցությունների ու ցնորամիտ տեսությունների դեմ պայքարողներից մեկն էր: Իր «Վերապրում, ազատութիւն, անկախութիւն» (1976) հոդվածում խստ քննադատություն հնչեցնելով այն ժամանակվա դաշնակցական դիրքորոշման վերաբերյալ, ըստ որի՝ հնարավոր էր համարվում տարածքների ծեռքբերումն առանց Հայաստանի, գրում է. «Եղերական ցնորը է կամ ծիծաղելի բանդագուշանք այս իրողութեան դէմ յեղեղել «արտերկրային հայրենիցի»՝ Սփիլորի մէջ «հոգեկան Հայաստան»-ի ստեղծման խարդաւանքը: Հաւատալ ու յօշակել, թէ արտասահմանի հայութիւնը կրնայ ապրիլ ու տեւել առանց Հայաստանի գոյութեան, միայն հաշմած դատողութիւն կը հաստատէ այդ պարտադրանքը վաճառդներուն մէջ»¹:

Վիճելի համարելով կուսակցական դիրքորոշման որոշ սուր ամկյուններ՝ նկատենք, որ բոլոր պարագաներում իրավացի է Անդրեասյանը, երբ ազգայինի Վերականգնումը հետապնդում ու իրագործելի է համարում պատմական Հայաստանի ազատագրված, միացյալ հողերի վրա և անքակտելի կապ տեսնում Հայաստան, Հայ դատ, Հայ եկեղեցի անբաժանելի խորհրդանշիների միջև:

Խսկացես էլ, Վիճելի տարածայնությունները ժամանակի սրբագրմանը թողնելով՝ միանշանակորեն պետք է ընդունել Անդրեասյան գործի առհասարակ լայնախոհ մտածելակերպն ու ժամանակի մեջ լինելու, ժամանակը գգալու կարողությունը, որով Վերլուծում էր իրավիճակը և տալիս դեպի առաջ նայելու, առաջ շարժվելու բանաձևեր: Դրանցից մեկը, որով հեղինակը մատնանշում էր հայության բռնելիք ուղին՝ ասելով. «Կենսական պայման կը դառնայ լիալս ճանաչել հայկական ընդհանուր գոյավիճակը՝ աւելի հստակօրէն կարենալ ընբանելու համար հետապնդող համազգային նշանակետերը եւ սահմանելու անոնց իրագործման ուղիները»², - գործուն քաղաքականություն է ներկայում, երբ հստակեցվում են համազգային գործողությունների թիրախները:

Այսօր առողջ ու կենսունակ են Անդրեասյանի առաջադրած նաև մյուս բանաձևերը, որոնցով պատգամում էր լինել խիզախ ու հետևողական՝ չընկրկելու ժամանակի առաջ, Վերադարձնելու կորուստները, որոնցից առաջին ծեռքբերումը՝ Արցախի շրջակա տարածքների ազատագրումը, տեսակ նաև ինքը:

¹ Խոհեր, Բ, էջ 199:

² Ա. Անդրեասյան, Սփիլորը և Հայունիքը, Պէյրութ, 1982, էջ 6:

Անակիտ Բրուտյան
Մամուլի տեսության և պատության
ամբիոնի ղոցենտ, ք. գ. թ.

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ
ՊԱՐՈՒՅԹ ՍԵՎԱԿԻ ԴՐԱՊԱՐԱԿԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՍԵԶ

1967 թ. Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում կայացած գիտական նստաշրջանում՝ նվիրված Եղիշե Չարենցի 70-ամյակին, Պարույր Սևակն իր «Ե. Չարենցը և արդիականությունը» գեկուցման մեջ ասել է. «Երբ էլ որ մենք զրկվեինք Չարենցից, թեկուզ 18-20 տարեկան ժամանակ, նա պիտի մնար հայ գրականության պատմության մեջ, ինչպես մնում են և հավերժորեն մնալու են իր և բոլորիս պաշտելի Դուրյանն ու Մեծարենցը»: Սևակյան այս խոսքերը, թերևս, անվերապահորեն կարելի է վերագրել նաև իրեն՝ Սևակին: Արդեն գրեթե չորս տասնամյակ կյանքից ողբերգականորեն հեռացած Սևակը հավերժորեն կենդանի է ոչ միայն իբրև մեծ բանաստեղծ և գրականագետ, այլև իբրև իսկական հայ մտավորական, իր երկրի ու ժողովրդի նվիրյալ զավակ:

Գրականագիտական և հրապարակախոսական բազմաթիվ հոդվածներում, տարբեր առիթներով գրված գրախոսություններում և զեկուցումներում Պ. Սևակը Վերհանել ու բարձրածայնել է ազգային մի շարք երևույթների կարևորության խնդիրը՝ դրանց հաղորդելով համամարդկային նշանակություն: Ազգայինի կարևորագույն բնութագրիչը Սևակի ներկայացմամբ լեզուն է, որին բանաստեղծը մեծ նախանձախնդրությամբ է վերաբերվել:

Սեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի առիթով ներկայացրած «Թրի դեմ՝ գրիչ» գեկուցման մեջ, փորձելով համակողմանիորեն պատասխանել իր իսկ առաջադրած «Ո՞վ էր Մաշտոց» հարցին, Պարույր Սևակը նրա մեծագույն սիրանքը համարում է այն իրողությունը, որ նա եկավ պատասխանելու մեր ժողովրդի առջև ծառացած «Լինե՞լ, թե՝ չլինել» հարցին և ասաց՝ «Լինել»: Եվ մեր լինելիության մեծագույն գրավականը դարձավ մաշտոցյան այբուբենը, հայոց գրավոր հզոր լեզուն: «Արդեն միայն Աստվածաշնչի բարգմանությամբ,- գորում էր Սևակը,- հայոց լեզուն կատարեց իր փառատոնը՝ ապացուցելով, որ ի գորու է լիապես արտահայտելու ինչպես պատմություն, այնպես էլ

օրենսդրություն, ինչպես հրապարակախոսություն, այնպես էլ բանաստեղծություն...»¹:

Պ. Սևակի հետ Ա. Արիստակեսյանի մի հարցազրույցում, որ տպագրվել է «Սովետական գրականություն» ամսագրի 1971 թ. 2-րդ համառում, ի պատասխան այն հարցին, թե որոնք են ազգային հատկանիշները պոեզիայում, ընդհանրապես գրականության մեջ, բանաստեղծը ասել է. «Ազգայինը նախ և առաջ լեզուն է, որ բառերի կույտ չէ, այլ հոգեբանություն, և իմ ասածը բնավ խոսք չէ, այլ շոշափելի իրականություն: Եվ այն երկը, ուր կա ազգային հոգեբանություն՝ արտահայտված միայն լեզվի միջոցով, արդեն այնքան է ազգային, որ նույնիսկ, եթե պատկերվող նյութը ազգային էլ չլինի, կմատնի իր ազգայնությունը»²: Եվ իբրև ամենավառ օրինակ՝ Վկայակոչել է Նարեկացուն՝ նշելով, որ «Ազգայինը և միջազգայինը գործում Նարեկացուն նմանները հազվագյուտ են»³:

Գրականագետ Սերգեյ Մարինյանի բնորոշմամբ՝ «Պարույր Սևակը նաև բանասեր-հայագետ էր: Մի հանգամանք, որ առանձնահատուկ նշանակություն է ստանում նրա անհատական կարողություններում, դա հայոց լեզվի հմուտ իմացությունն է: Նա գիտեր մայրենի լեզուն ոչ միայն գեղարվեստորեն, այլև գիտականորեն, գիտեր նրա պատմությունը, կառուցվածքը, զարգացման օրենքներն ու օրինաչափությունները»⁴: Դայոց լեզվի բոլոր մակարդակներին կատարելապես տիրապետելը Սևակին հնարավորություն է տվել ոչ միայն հարստացնելու իր գրական ստեղծագործությունների ինքնատիպ լեզուն, այլև անդրադառնալու հայագիտության տարրեր հարցերի, կատարելու խոր վերլուծություններ, առաջադրելու գիտական հիմնավորված տեսակետներ: Սևակը գրողի համար կարևորագույն և, թերևս, միակ գործիքը համառում էր խոսքը, որով նա ի գորու ու նկատած նկատելի դարձնել, տեսածը տեսցնել: Վ. Խեցումյանի պատմվածքների «Գիրք պանդիստության» ժողովածովի մասին գրախոսության մեջ Սևակը հայոց լեզուն նմանեցրել է իր քառակի պարիսպների մեջ դժվարամատույց մի ամրոցի, որը «գրոհով առնել անհնարին է, կարող է օգնել միայն երկարատև պաշառում»⁵:

Բանաստեղծի մասին իր հուշերում գրականագետ Ալմաստ Զաքարյանը նշում է. «Անսահման էր նրա բարիմացությունը: Տեղին բառ ու

¹ Տե՛ս «Պարույր Սևակ, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5, Երևան, 1974, էջ 178:

² Տե՛ս «Ինչ-ը. ինչպես-ը և որպես-ը», «Պարույր Սևակ, Երկերի երեք հատորով, հ. 3, «Սովետական գրող» իրատ., 1983, էջ 255:

³ Նոյն տեղում:

⁴ Տե՛ս «Պարույր Սևակ, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 1, Երևան, 1972, էջ XXXVIII:

⁵ «Պարույր Սևակ, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5, Երևան, 1974, էջ 52:

ծևակերպումներով իոսում էր նրա բանավոր, մանավանդ գրավոր խոսքը՝ հարուստ, ճկուն, խաղացկուն հայերենով, հեռու լեզվական թորած կամ օտարաբառ սեթնեթանքից»¹:

Պ. Սևակին լրջորեն մտահոգում էր հայոց լեզվի մաքրության և միաժամանակ հարստացման խնդիրը: Ամենաին չնսեմացնելով գրական ստեղծագործություններում գրաբարի՝ իբրև «Ծոխ ու գեղեցիկ հին լեզվի օգտագործման շահեկանությունը», Սևակը, այնուհանդերձ, մտահոգված էր գրական լեզվի գրքայնացմամբ, «գրաբարայնացմբ», ինչը համարում էր լեզվի հյութագրկություն: Այսպես, Սաքը Սութիայանի «Եջեր Վահան Տերյանի կյանքից» գրքի առիթով գրված «Տերյանը պահանջում է...»² հոդվածում անդրադառնալով հիշյալ խնդրին՝ Պարույր Սևակը վերստին հաստատում է, թե «այնպիսի մի դարավոր լեզու, ինչպիսին հայերենն է, չի կարող աղքատ լինել», բայց նաև զուգադրում է այն միտքը, որ «լեզվի հարուստ կամ աղքատ լինելը որոշվում է ոչ միայն բառապաշարի հարստությամբ», քանի որ «պաշար ունենալը հարստություն է, բայց դեռ հարուստ ապրել չէ»³: Նրա խորին հանգմանը՝ լեզվի հարստությունը որոշվում է նրա ճկունությամբ, մինչդեռ ճկատում է, որ այն պակասում է մեր գրողներից շատերին, որոնք «խուսափում են կենդանի, հյութեղ, պատկերավոր, խոսուն դարձվածքներից, նույնիսկ հարադրություններից»⁴: Ընդթելով գրողների դերը լեզուն հղկել-ողորկելու, նաև ստեղծելու գործում՝ Սևակը նշում է, թե «լեզվաշինարարի նրանց դերը ամենից ավելի որսնորկում է և պիտի երևա տվյալ լեզվի բոլոր կենսունակ տարրերը համարձակորեն «հունցելու» գործում», ըստ որում «հունցել» այնպես, որ «հա՛ց դառնա՛քուրին անհրաժեշտ, բոլորից մարսվող հաց»: Միայն այս դեպքում է լեզուն ճկուն՝ ի վիճակի ոչ միայն արտահայտելու առավելագույնը, այլև արտահայտածը նատչելի դարձնելու⁵: Այսուհանդերձ, Սևակը խստորեն դեմ էր լեզվական օտարամոլությանը, սակայն խոստովանում էր, որ ինքն «այն մաքրասերներից չեն, ովքեր լեզուն համարում են մեկընդիշտ «կոմպլեկտավորված»»: Միաժամանակ, նա համարձակորեն քննադատում էր մայրենի դերը նսեմացնող կամ անտեսող ցանկացած երևույթը: Ահա «Գրական թերթ»-ի 1961 թ. հունվարի 27-ի համարում տպագրված նրա «Բաց նամակ «...բառարան»-ը կազմողներին», որում թեև գտնում էր, որ ամեն մի լեզու զարգանում է և ամեն մի խելացի փոխառությունից հարստանում ու ճոխանում, այնուամենայնիվ,

¹ Տե՛ս Ալմաստ Զաքարյան, Գրականության և պատմության ընթացքները, Երևան, 1989, էջ 476:

² Տե՛ս «Գրական թերթ», 13 մայիսի, 1960 թ.:

³ Տե՛ս Պարույր Սևակ, Երկերի ժողովածու 6 հաստորով, հ. 5, Երևան, 1974, էջ 64:

⁴ Նույն տեղում, էջ 65:

⁵ Նույն տեղում, էջ 68:

աչքակապությամբ գրադարձել է համարում մանավանդ համառոտ բառարանի մեջ «պարսպվորել այնպիսի օտարազգի բառեր, որոնք կան բնավ գործածական չեն, կամ ունեն իրենց հայեցի ծևերը, կամ գործածական են միայն նեղ մասնագիտական գրականության մեջ»¹:

Սևակյան ստեղծագործություններում (թե՛ բանաստեղծություններում և թե՛ հրապարակախոսական ելույթներում ու հոդվածներում) հայոց լեզվի արժենորումը թերևս լիովին արտահայտված է նաև նրա «Մայրենի լեզու» բանաստեղծությամբ և, մասնավորապես, դրա հետևյալ երկու տողում:

«Անցյալին պարզված դու մեր լսափող,
Եվ մեր խոսափող՝ գալիքին ուղղված»²:

Դայագիտության զարգացման գործում հայեցի բառ ու բանի արժանիքն է կարևորվում «Պահպաննենք և հարստացնենք մայրենին»³ հոդվածում, որտեղ Պ. Սևակը, քննության առնելով իր իսկ բնորոշմանը՝ «հրամանագրով մեր լեզվին փաթաթված» օտար բառերի մի խումբ, լեզվաբանի հմտությամբ ստուգաբանութեն բացատրել և համեմատել է դրանք հայերեն համարժեքների հետ՝ Վրդովմունքով նշելով, որ դրանցից և ոչ մեկը «չունի գեթ ամենաչնչին առավելություն մեր բնիկ բառերի համեմեա՝ ոչ չ ստուգաբանությամբ, ոչ հասկանալիությամբ, ոչ էլ ճկունությամբ: Ավելին, այդ բառերը բնիկներին գիշում են և ստուգաբանությամբ, և հասկանալիությամբ, և ճկունությամբ»⁴: Սևակին, սակայն, խորապես մտահոգում էր ոչ միայն օտար բառերի հրամանագրում մեր լեզվում, ինչը համարում էր ինքնին չարիք, բայց ոչ աղետ, այլև մտավորականության զանազան շերտերի մեջ, նաև գրականագետների և գրողների շրջանում վարակի պես տարածվող այն երևույթը, ըստ որի՝ «օտար բառերի գործածությունը դարձել է մի տեսակ կիրք լինելու, զարգացածության, խելքի նշան», մինչդեռ, ըստ հոդվածագրի, դա պիտի ընկալվի իրեն տգիտություն, կիսագրագիտություն, մտավոր խեղճություն»: Չթերագնահատելով կամ, ավելի ճիշտ, արժենորելով փոխառությունների դերը և չափո՞ մեր լեզվի կշռի մեջ՝ գրողը պահանջում էր բառափոխանակություն կատարել ըստ անհրաժեշտության, հարցուացնելով մեր լեզուն, չծանրացնելով նրա բեռը: Ընդգծելով հայերենի ունեցած մի առավելություն՝ բառակազմության հեշտությունը և շահավետությունը, որ բնորոշ է քիչ լեզուների, Սևակը պահանջում էր ոչ թե փոխառնել օտար բառը, այլ հայացնել այն, քանի որ «օտար բառը,

¹ Նույն տեղում, էջ 95:

² Տե՛ս նույն տեղում, հ. 1, Երևան, 1972, էջ 508:

³ Տե՛ս «Գրական թերթ», 1962, մարտի 25:

⁴ Նույն տեղը:

իբրև ընդհանուր օրենք, շատ ավելի քիչ բան է ասում հային, քան մայրենի լեզվի հաջող բառակազմությունը»:

Դոփհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական գիտական նստաշրջանում կարդացած «Թումանյանի հետ» գեկուցման մեջ, խոսելով Ամենայն հայոց բանաստեղծի լեզվի մասին, դարձյալ անդրադարձել է առհասարակ գրողի լեզվի խնդրին՝ ընդգծելով, որ «Գրողի համար լեզուն ինչ-որ ինքնարավ երևույթ չէ, այլ նրա կան ու չկան: Լեզուն է գրողի գեղագիտության և կենսափիլիսոփայության ինչպես հիմքը, այնպես էլ առաստաղը»²:

Ոչ միայն լեզվի, այլև առհասարակ նշակութային արժեքների կարևորման համատեքստում Սևակը ազգայինը զուգորդում է համամարդկայինին: Մատնանշելով համաշխարհային նշակույթի մթերանոցում մեր ազգի բաժինը, մեր նախնիների կտակած ոչ փոքր ժառանգությունը, այնուհանդերձ, ընդգծում էր, թե՝ «մեր ժառանգության մեծագույն գանձը մեր լեզուն է»³:

Ինչպես Տերյանին, Սևակին ևս մտահոգել է մասնավորապես երիտասարդ բանաստեղծների շրջանում իշխող ազգային սահմանափակության և սնամեջ պարծենկուտության հարցը: Այդ երևույթների բազմաթիվ պատճառներից առաջինը համարելով շնորհ-օժտվածություն-տաղանդի բացակայությունը, նաև հետամնացությունը՝ բանաստեղծը վրդրվնունքով ընդգծում էր, որ գրողներից շատերը ոչ միայն զարգացած չեն, այլև «վատ գիտեն նույնիսկ հայրենի գրականության պատմությունը, որովհետև դրա համար ոչ միայն ընթերցասիրություն է պետք, այլև մի փոքր գրաքար, միջին հայերեն, արևմտահայերեն»⁴:

Դայաստանի գրողների միության V համագումարում ներկայացրած «Ազգային սնապարծություն և ազգային արժանապատվություն» ելույթում, որ հետո տպագրվել է «Գրական թերթ»-ի 1966 թ. դեկտեմբերի 15-ի N 51-ում, Սևակը սնապարծությունը համարել է ազգային ինքնասպանության ծևերից մեկը: Որքան էլ հայրենասեր ու ազգասեր էր Սևակը, նրա համար նույնչափ կարևոր էին համամարդկային արժեքներն ու արժանիքները: Նա մերժում էր հայրենասիրության այն տեսակը, որը հենվում է սնապարծության, «սնամեջ ու հավակնոտ, պոռոտ ու պոատ» գլուխգովանության վրա: «Ես ինձ թույլ եմ տալիս ասելու, որ ժողովուրդների (մանավանդ փոքր ժողովուրդների) հարատևման երկու եղանակ կա միայն. կամ ընթանալ համամարդկային քաղաքակրթության հետ զուգաքայլ, կամ ապրել նախնական-վաչկատնային կյանքով: Այս վերջին ճամփան մեր առջև փակ է և փակ է արդեն ավելի քան

¹ Նույն տեղը:

² Են «Գարուն», 1969, N 9:

³ Են «Պարուն» Սևակ, Երևանի ժողովածու 6 հատորով, հ. 5, Երևան, 1974, էջ 154:

⁴ Նույն տեղում, էջ 82:

1500 տարի: Ուրեմն, սուրբ Մեսրոպի կամքով թե մեղքով, մեզ մնում է միայն մեկ ճանապարհ՝ աշխարհի առաջարես երկրներից շատ ետ չմնալու, նրանց հետ համարայլելու ուղին: Դակառակ դեպքում մեզ չի փրկելու ոչ մի հոգանոց կամ անձրևանոց, պիտի այրվենք կամ նեխնք», - տագմապում էր՝ հորդորելով, որ իրավունք չունենք ուշանալ պատմության գնացքից կամ օդանավից¹: Սակայն եթե չուշանալը, ըստ Աևակի, մեր ազգային դիմանկարի կարևոր գծերից մեկն է, մեր նկարագրի բարեխառնությունը, մեր հոգեհատակը, և ամեն մի հայի նշանաբանը պիտի լինի՝ «Չուշանալ, ետ չմնալ», ապա նրա իսկ պահանջով «Ով-ով, բայց մենք իրավունք չունենք շփոթել մակերես և մակարդակ բառերը: Մենք պիտի չլինենք մակերեսի Վրա (չենք էլ կարողանում), բայց մենք պարտավոր ենք միշտ էլ լինել մակարդակի վրա՝ համաշխարհայինի»²: Գրողի խոսքը, անշուշտ, ուղղված էր ոչ միայն բանաստեղծներին և առհասարակ մշակույթի ոլորտի գործիչներին: Դա, թերևս, մեծ հայրենասերի պահանջն էր բոլորից և բոլոր ժամանակների համար:

¹Նույն տեղում, էջ 298:

²Նույն տեղում, էջ 262:

ԳՐԱՊԱՐՍԿԱԽՈՍ ՄԱՐԳՈ ԴՐԻԿԱՍՅԱԼԻ ԱԿՆԱՐԿՆԵՐԸ

«Եօմ կարող անտարբեր անցնել թե՝ վատի, թե՝ լավի կողքով։ Քանի նկատում եմ, պիտի գրեմ», - ահա ավելի քան կես դար մարդկային անտարբերության ու սխալների դեմ կրիվ տվող, նաև մարդու մեջ գեղեցիկը փնտրող լրագրողի սկզբունքը։ Ինչո՞վ են առանձնահատուկ Մ. Ղուկասյանի ակնարկները, ինչի՞ շնորհիվ են ապահովել իրենց տեղը արդի հայ լրագրության, մասնավորապես ակնարկի պատմության մեջ։ Եղ Զրբաշյանի գնահատմամբ՝ զաղտնիքը փաստերի ուժի և անկեղծության հմայքի մեջ է։ Յարցադրումներին լրագրողն ունի իր պատասխանը՝ թեմայի կարևորությունը երկրի և հասարակության համար, նյութի ուսումնասիրությունը տվյալ բնագավառի մասնագետի մակարդակով, անկեղծությունը և սրտացավությունը, որն էլ դառնում է լրագրողի հանդեպ հավատի և վստահության երաշխիք։ Ամենակարևորը լրագրողի համար նկատելու ունակությունն է, դիտողականությունը, տեսնել և տեսածը ներկայացնել կարողանալը։ Մ. Ղուկասյանի տեսադաշտում մարդն է, բնությունը, հայրենիքն ու հայրենյաց մասունքները. այլ կերպ ասած՝ կյանքը մանրադիտակի տակ։

«Մարդու մասին գրելը շատ դժվար է, - ասում է արծակագիրը, - պետք է կարողանաս ճանաչել նրան, հասկանալ։ Պետք է լինել չափազանց գգույշ, որպեսզի չխարբվես ու չվարկաբեկվես...»¹ Մարդ արարածին Մ. Ղուկասյանի տողերում հանդիպում ենք տարբեր իրավիճակներում՝ մարդկային երթյան տարբեր դրսևորումներով։ Մի դեպքում որպես երևույթի կրողի, մյուս դեպքում որպես անհատի՝ միայն իրեն հատուկ երթյանք, ապրումներով, ինքնատիպ ճակատագրով։ Ակնարկ - դիմանկարները նույնքան տարբեր են, որքան մարդկային ճակատագրերը. ընդհանուր է լրագրողի մոտեցումը՝ հնարավորինս լավ ճանաչել հերոսին, վերջինիս մեջ գտնել ու ընդգծել ամենաարժեքավորը։ Մ. Ղուկասյանը այս խնդիրը լուծում է իր ձևով։ Դիմանկարի հեղինակ են դառնում ակնարկագիրն ու հերոսը։ Լրագրողը պարզապես դառնում է միջնորդ հերոսի ու նրա հուշերի միջև։ Ահա թե ասվածը ինչպես է հաստատում Մ. Ղուկասյանը «Բալետի արտիստը»² ակնարկում։ «Եվ

¹ Այս և հետագայում հանդիպող հղումները՝ Մ. Ղուկասյանի և հեղինակի հարցագրույցից։

² Ղուկասյան Մ., Վկայություն քաններորդ դարի, Երևան, 2005, էջ 5:

մենք երկուսով՝ տողերիս հեղինակն ու բալետի արտիստ Եղվարդ Ղայլումյանը ետ գնացինք ավելի հին ժամանակներ»: Այնուհետև հուշը կրծատում է անցյալի ու ներկայի միջև տարածությունը, փոխարենը լրագրողի ու հերոսի միջև ստեղծված անմիջականությունը կարծել է տալիս, թե նրանց բարեկամությունը հարյուրամյա պատմություն ունի. «Փաստորեն մենք վաղեմի բարեկամներ էինք, սկսած 1902 թվականից, երբ նրա Խահակ պապը Բաքվի Արմենիանի Փոքր Եկեղեցուն զահ էր նվիրել և երբ այդ դեպքից ուղիղ հարյուր տարի անց, 2002 թվականի աշնանը, Ծաղկածորում նա ինձ ցույց էր տալիս իր «ղութիի» տախտակները...»: Այստեղ գործ ունենք արդեն դուկասյանական գրչի մեկ այլ առանձնահատկության հետ. ընդամենը մի քանի բառը բավական է, որպեսզի հերոսին խոսենի իր միջավայրին հարազատ բառ ու բանով. այդպիսի բառեր, ապրումները մատնող արտահայտություններ որսալու մեջ հմտություն ունի Մ. Ղուկասյանը: «Խնձորս մնաց քաղելու...»¹ ակնարկի հերոսուհու՝ Մարտունաշենից տեղահանված ութուններկուամյա Մարգարիտ Յովսեփյանի բողոքը ապրումների այնպիսի խոտացում է, որի մեջ կարելի է տեսնել այդ օրերն ապրած յուրաքանչյուր մարդու. «Տներս, բաղուբաղչեքս. շարունակությունը երգեցիկ ծայնով. խնձորս քաղած չէր, կարտոլս քանդած չէր: Դադար է տալիս, մտածում է: Լորիս հասել էր, քաղելու էր: Յիսուն հավ ունեի, ծվերը մնացին չհավաքած: Կովս կթալ եմ, վերոյովզ վար դրալ, որ մերեմ: Յոնը, մոշը, պրապոք, հաճարը...Մեր անտառներումը անպտուդ ծառ չկար, չկար: Մեղք ըլնեմ ես, դուռս փակել եմ, զինվորական ավտոմեքենայով գնացել...»: Դիմանկարներից յուրաքանչյուրը մի ծանրություն է արդեն ծանոթ կամ անծանոթ մարդկանց հետ. տպագրությունն այնպիսին է, որ հեղինակն էլ իր հերոսին ժանորանում է ընթերցողի հետ՝ աստիճանաբար: Նախ այն զգացողություններն են, որ ապրում է լրագրողը մինչև հերոսի դուռը բախելը, ապա առաջին հայացք, ծանրություն և քիչ-քիչ «սիրտը բացող» հերոս, որը վերջում դառնում է հարազատ ու մտերիմ: Ի դեպ, սիրտը բացելու մասին ահա թե ինչ է գորում Մ. Ղուկասյանը. «Տարբեր տարիքի ու սերի մարդիկ են, տարբեր կրության ու մասնագիտության: Եվ որքան տարբեր են նրանց հոգեբանությունը, ապրումները, երևոյթների ընկալումները, պատմելու և, առավելապես, լոելու կերպը»: Տարբեր կերպ են լուսն մարդիկ և տարբեր պատճառներով, բայց այդ բոլոր կերպերի մեջ մի ընդհանուր բան կա. «Ես իիշում եմ մորս խոսք՝ քարք որ շուր տաս, մեջ թե փոքր, տակից անպայման մի բան դուրս կգա» (Մ. Ղ.): Երբ հերոսը խախտում է լուսությունը, նշանակում է «քարն արդեն շուր ենք տվել»: Տարբեր ակնարկներում, տարբեր մտորումների մեջ լրագրողը մաս-մաս տալիս

¹ Նույն տեղում, էջ 21:

է այն բանաձևը, որի միջոցով հնարավոր է հասնել ամենակարևորին՝ զորուցակցի վստահությանը. «Ի՞նչ կարող ես անել, միայն լսել, հնարավորություն տալ, որ նա դատարկի հոգում կուտակված դառնությունը»¹: Դենց սրա շնորհիվ է ակնարկը դառնում երկխոսություն լրագրողի ու հերոսի և հերոսի ու ընթերցողի միջև:

Հողի, արյան կանչը տարբեր մարդկանց մեջ տարբեր կերպ է հնչում: Մ. Ղուկասյանին ուղեկցել է այդ կանչը և կյանքում, և տողերի մեջ, եթե անգամ այդ տողերով պատմում է ուրիշի նասին. «Ի՞նչ պարզվի, որ լավ լինի: Ինչպես իր, այնպես էլ իմ նախնիները Արևմտյան Դայաստանի Բասենի գավառից էին և իրար շատ նոտ գոյւղերից՝ Պատժվան և Դալիբարքա: Նույն հողությոց ենք, ասացի, իրար լավ կիասկանանք...»²: Ահա մի երևոյթ ևս, որն անմիջապես մերձեցնում, հարազատ է դարձնում. լրագրողի համար սա նաև յուրօրինակ հոգերանական հնարք է՝ զրուցակցին առավել անմիջական, մտերին դարձնելու: Սեկ այլ ակնարկում, ուղղակի հետևելով տեղահանության ու բռնությունների սարսափն ապրած հերոսի հիշողություններին, մի պահ կտրում է վերջինիս մտքի թելն ու քանդրում սեփական հուշերի կծիկը («Միջանկյալ ես ևս, այս ակնարկի հեղինակը՝ Մարգո Ղուկասյան, հոգերանականի՝ Տեր-Գաբրիելի թոռն եմ: Իմ պապը՝ Բասենի գավառի Դալիբարքա գոյւղի վերջին քահանան, զենք բռնելու տարիքի տղամարդկանց հետ տարվել է երգում, որտեղից այլևս չի վերադարձել...»)³: Դավանաբար չկա մեկը, որը դիմացին լսելու պահին զգացած չլինի, որ տարվել է սեփական մտքերով՝ արթնացած զրուցակցի խոսքերից: Նման անմիջական զգացողությունների Մ. Ղուկասյանի էօերում կարելի է հաճախ հանդիպել: Ակնարկն ավարտվում է այսպես. իբրև եղեռն տեսած վերջին մոհիկաններից մեկը՝ նա իր հուշը փոխանցեց նվաստիս, որ ես ել իմ հերթին, ընթերցող, փոխանցեմ քեզ...

Այսպես է աշխատում լրագրողը, այսպես է ստեղծում դիմանկար՝ հերոսի վրձնով ու ներկով. իրենց միայն մաքուր կտավն է, մնացածը ծիշտ գույնը ծիշտ վրձնահարվածով ծիշտ տեղում դնելն է. սա է հեղինակի խնդիրը, որը Մ. Ղուկասյանը յուրաքանչյուր ակնարկում յուրովի է լուծում: Մարդը բնության ստեղծագործությունն է և մարդ-բնություն փոխհարաբերությունը Մ. Ղուկասյանի ստեղծագործության առանցքային խնդիրներից մեկն է: Բնական մարդու և բանական բնության սահյանական բանաձևը դրսնորված է նաև այստեղ. «Դիտել բնությունը. տեսնել նրա գույները, լույսը, գգալ վայրի բնության թարմությունն ու

¹ Ղուկասյան Մ., Միասները, «Գրական թերթ», 2003 թ., ապրիլի 4:

² Ղուկասյան Մ., Դյուքսանդացի Դարայի համակենտրոնացման ճամբարում, Վկայություն բաններող դարի, Երևան, 2005, էջ 24:

³ Ղուկասյան Մ., Կարսի Առաքելոց եկեղեցու քահանայի թոռը, «Դայացը Երևանից», 2003 թ., թիվ 6:

հմայքը... Գիտե՞ս թե ինչ մեծ հարստություն է այդ, հոգու ու մտքի ինչ սմունդ»¹: Դիտել, տեսնել ու գրել գրել առանց արհեստականության, գրել այնպես, որ ընթերցողը տեսնի, շոշափի, լսի, կլանի առանց մտավախության՝ ճշմարի՛տ է այն, թե ոչ: «Եկողիգիապես մաքուր» ակնարկներ՝ կապված բնապահպանության խնդիրների, մարդ՝ բնություն հարաբերությունների հետ, մարդկային անտարերությունից եկող անկեղծ մտահոգություն. այս ամենն, իհարկե, փաստերի լեզվով: Տասնյակ փաստեր և օրինակներ են բերվում հեղինակի կողմից՝ ապացուցելու այն, որ բնությունը ոչինչ անվճար չի տալիս, ու թե չարաշահեցիր՝ կվճարես ամենաթանկով՝ առողջությամբ: Լրագրողի փաստերն ավելի քան համոզիչ են. պատճառը դրանց՝ թօախնորությանք ուսումնասիր-ված լինելը է: «Մսիթար Գոշի առակնենրը» կամ «Դիալոգ իրավաբանի հետ՝ Մ. Գոշի մասնակցությամբ»² Վերնագրի ներքո Մ. Ղուկասյանը ներկայացնում է հոդվածներ Մ. Գոշի «Դատաստանագրքից»՝ դատաստան սերմնահորերի վերաբերյալ, դատաստան տնկահատների վերաբերյալ, դատաստան թռչունների վերաբերյալ... և փորձում 12-րդ դարում ստեղծված «Դատաստանագրքից» տեսնել այսօրվա իրականության մեջ: «Դատիկը երկար ժամանակ փակ հորում մնալով քայլայվում է, արտադրում մերժան գազ, որը մահաբեր է: Ողբերգությունից խուսափելու համար պահանջվում է աշխատանքն սկսել սերմնահորի կափարիչը որոշ ժամանակ բաց թողնելուց հետո: Մարդիկ միշտ չեն, որ բարեխիղծ են: Այդ իմանալով է, որ Մ. Գոշը խիստ պատիժ է սահմանել»: Ժամանակը չի ջնջել այն հակադրություններն ու հակասությունները, որոնց գործում են օրենքների ու դրանց հետևողների միջև: Որպես իր ժամանակի զարկերակը նշտապես շոշափող լրագրող՝ Մ. Ղուկասյանը գուգահեռներ է անցկացնում դարերի վաղեմություն ունեցող անցյալի ու ներկայի միջև՝ ցույց տալով, որ փոխվում է ժամանակը, անփոփոխ է, սակայն, մարդկային եւթյունը:

«Դոյի վերին՝ 18-20 սմ-ը ամենաարժեքավորն է, հումուսով հարուստը, որից և կախված է բույսերի բերքատվությունը: Դայտնի է, որ այդ 18-20 սմ բերրի հողաշերտը գոյանում է 7000-10000 տարում»³: Այս տեղեկությանը նախորդում է հոյի մասին մեկ այլ փաստ, այն, որ Դայրենական պատերազմի ժամանակ գերմանացիները Ուկրաինայից և Կուբանից ի թիվս հազարավոր գերիների, արվեստի գլուխգործոցների ու թանկարժեք իրերի, իբրև թանկագին ավար տանում էին նաև հոյ: Այս տեղեկությունները ամենակին ինքնանպատակ չեն. փաստերի մեջ արդեն կա որոշակի վերաբերմունք, որը հետո հեղինակը պետք է հակադրի այն իրողությանը, որ առաջ է բերել նույնիսկ լեռնալանջերի զայրույթն

¹ Ղուկասյան Մ., Լուսավոր աղբյուրներ, Ու՞ր է կողյակն Աևանա, Երևան, 1999, էջ 40:

² «Գարուն», 1971 թ, թիվ 7:

³ Ղուկասյան Մ., Լեռնալանջերի բողոք, Ու՞ր է կողյակն Աևանա, Երևան, 1999, էջ 32:

ու բողոքը: Բողոքի պատճառը հողի քայլայումն է: Բացատրությունը դարձալ գիտական է՝ ամրագրված փորձով. «Հողի երոգիայի շատ տարածված պատճառներից մեկն էլ սխալ վարելն է: Չնում օրենք է եղել վարը կատարել լանջին զուգահեռ: Սրբազնություն է եղել այդ օրենքի խախտումը»: Սրան դարձյալ հետևում է մանրամասն բացատրությունը, որ դա ոչ թե քամահաճույք է, այլ հողի պահանջ, և լրագրողը առաջ է քաշում հողագործության կարևորագույն դրույթներից մեկը: Այսպես կարող էր գրել միայն գյուղատնտեսությանը քաջածանոթ գրիչը:

Դաջորդ էջում արդեն մեղվապահությանն առնչվող խնդիրներն են՝¹ ոչ մասնագետին անտեսանելի նրբություններով ու հեղինակի գրչին հատուկ ահազանգով. Վարիտող դաժան տիզը ոչնչացրել է մեղվազնտանիքները: Անհազանգն էլ ավելի ազդու է դառնում հակադրության միջոցով. Մի կողմից պատկերներ են, որոնցից մեղվապարսի բզեց է գալիս ու մեղրաբույր, մյուս կողմից այդ գեղեցկության ոչնչացման վտանգն է: Մեկ այլ ակնարկում սրատես աչքը երկրի ընդերքում է. «Ե՞՛ որ Գանձասարն այդ երեք մետաղներից բացի (աղինձ, մոլիբդեն, ոսկի) պարունակում է նաև ռենիում, գերմանիում, տիտան, սելենիում, միկել, սկանդիում, վոլֆրամ...»²: Յուրաքանչյուր ակնարկ փաստերով հիմնավորված մի հիմնահարց է, որի վրա անհրաժեշտ է հրավիրել հասարակության ուշադրությունը: Փաստերի առատությունը Մ. Ղուկասյանի ակնարկը չի դարձնում զուտ փաստագրական նյութ. յուրաքանչյուր փաստ ունի իր շրջապատի հոգոսով ապրող մարդու զգացմունքային մեկնարանությունը, ավելին, երբեմն լրագրային նյութը թեքվում է դեպի գեղարվեստական ակնարկ՝ շնորհիկ այն գեղեցիկ, հարուստ լեզվի, որով ստեղծվում են պատկերները: Մ. Ղուկասյանի գրչի տակ անձրևը կարող է խոսել, անտառը՝ արտասվել կամ խոռվել, ծաղիկը՝ շնչել, ծիծաղել և ապացուցել, որ բնությունը կենդանի ամենաբարդ օրգանիզմն է, որին չպետք է խանգարել ապրել, եթե ուզում ես ինքը երկար ապրել: Ասվածը հաստատենք մի քանի պատկերներով.

«Մեղուն ի՞նչ գիտի ծաղկելու ժամը: Պարզվում է՝ գիտի»:

«Բնության անտեսանելի ուժը խլրտում է կոկոնի ներսում»:

«Պարզվում է, որ բույսերն էլ են իրար հետ կովում: Եվ գիտե՞ք ինչի համար: Ապրելու համար: Ես դա տեսել եմ իմ աչքով»:

«Բնության մեջ արև չտեսած էֆերը շատ-շատ են»: «Ղեզս դեղին գույնը չի խփել անտառին. աշունը դեռ չի սկսվել»:

«Կարծես դիտավորյալ է թաքնվել, որ թաղելիս ծնկի գաս առաջը» (խոսքը հիրիկ ծաղկի մասին է):

¹Ղուկասյան Մ., Գարուն առանց մեղվի, Ու՞ր է կողյակն Աևանա, Երևան, 1999, էջ 32:

²Նույն տեղում՝ Սար տաշողները, էջ 44:

«Արդիկի տուֆի հանքերը ծաղկումքով լի քանի - քանի չքնաղ ձոր են փակել, քանի սառնորակ աղբյուր կուրացրել»:

«Բնության ծայներին ականջ դնել է պետք. ամբողջությամբ մի մեծ համերգ է դա... Տարվա բոլոր եղանակներին, օրվա բոլոր ժամերին բնությունն իր համերգն ունի»:

Միա բնության ընկալման մի պատկեր ևս. «Դաճելի է գետի ծայնը, որ պարուրում է մարդու եռությունը... Ամեն ինչ հրաշալի է, եթե աչքերդ փակ են»: Բացում ես՝ հրաշքն անհետանում է. մնում է մարդկային ծեռքով ապականված զետը. «Կարծես քո գգեստին մեկն իր կեղտոտ ծեռքերն է քսել»¹: Դամեմատությունն ավելի քան տեղին է, ավելի խորը, քան թվում է առաջին պահին. եթե փորձեն կեղտոտ ծեռքերով դիպաշել գգեստիդ, թույլ չեն տա, իսկ եթե գիտակցեն, որ բնությունն էլ նույնքան ցոնն է, որքան գգեստդ, որկե մեկին թույլ չեն տա ապականել այս:

Մ. Ղուկասյանի համեմատությունները, երթեմն առաջին պահին անհասկանալի, իրականում ունեն ներքին խոր տրամաբանություն: Դաճախ ակնարկներում մեջքերվում են այնպիսի փաստեր (հիմնականում պատմությունից), որոնք կարծես թե որկե կապ չունեն քննարկվող նյութի հետ: Իրականում ոչ մի տող աննպատակ չէ: «Գետի երգը լոել է» ակնարկում խոսվում է Դեբեդի՝ Թումանյանի ներշնչանքի աղբյուրի ու նրա «հերոսներից» մեկի մասին: Թումանյանից մեջքերված տողերի կողքին լրագրողի տարակուսանքն է՝ ինչու՞ այնպես եղավ, որ մարդն ու բնությունն իրարից խռովեցին:

Թվում է՝ զրոյցը բնության ու ընթերցողի հետ ինչպես սկսվել, այնպես էլ շարունակվելու է, բայց... «Դեբեդի կապը ներքին եղիպտացիների հնագույն գրանշաններն են...»: Դարց՝ ինչ կապ ունեն եղիպտացիները Դեբեդի հետ: Պատասխանը չի ուշանում. «Պատկերագրերում հանդիպում է նաև մեջքի վրա շրջված ձուկ: Երկար ժամանակ հնագետները չին հասկանում, թե դա ինչ է նշանակում: Իսկ հիմա շատերին է հայտնի՝ զուրը աղտոտ է և թթվածնով աղքատ: Զկները շրջվում են մեջքի վրա, երբ շնչահեղձ են լինում: Տարբեր նայրցամաքներում զետեր կան, որոնց կենդանական աշխարհն աստիճանաբար նվազել է և, ի վերջո, իսպառ ոչնչացել: Դրանցից մեկը Դեբեդն է»: Միա թե ինչպիսին էր կապը Դեբեդի և եղիպտական հեբերոգի կապը միջև: Նույն ակնարկում ասվում է՝ բնության մեջ բոլոր երևույթները կապակցված են միմյանց: Երբ մարդն այդ երևույթներից որկե մեջ փոփոխություն է մտցնում, խաթարում է ամբողջությունը: Լրագրողի՝ բնապահպանությանը նվիրված վերնագրերից յուրաքանչյուրը մի այդպիսի խաթարման ծնունդ է: Մարդ-բնություն հարաբերություններում եղած սխալները հեղինակը հունցում ու մատուցում է մարդուն, որպես վերջինիս ցանածի ու հնձա-

¹ Ղուկասյան Մ., Գետի երգը լոել է, Ու՞ր է կղզյակն Սևանա, Երևան, 1999, էջ 22:

Ժի արդյունք: Մարդկային անտարբերությունը ոչնչացնում է բնությունը: Դզոր է բնությունը, միաժամանակ՝ անպաշտպան: «Եթե Ծաղկաձորի անտառները, քնքուշ ծաղիկները (որոնք այնքան պակասել են) լեզու ունենային, շատ բան կպատճենին իրենց վիճակի մասին»: Ա. Ղուկասյանի ակնարկներում հաճախ վերաբերմունքն արտահայտվում է փակագծերում: Թվում է՝ ասվածն ընդամենը ռեպիկ է կամ լրացում: իրականում փակագծում եղածն ամբողջացնում, շեշտադրում է ասելիքը: «Բնությունը նույնպես կարող է առօղջ կամ հիվանդ լինել (երբեմն ծանր ու անբուժելի) ...», կամ «Չէ՞ որ միլիոններ են ծախսվում գործարանը կառուցելու համար (թեկուզն սխալ, թեկուզն անհեռանկար)», - փակագծում ասվածը և վերաբերմունք է, և ասելիքի շեշտադրում, և փաստ, և ահազանգ¹:

Մեծ է լրագրողի ստեղծագործության ճանաչողական արժեքը: Թուփ առ թուփ, քար առ քար ճանաչում է Շայաստանը (և ոչ միայն Շայաստանը) և պատկերները պահելով աչքերի մեջ, բերում, նույնությամբ փոխանցում է ընթերցողին: «ճամփորդությունների ժամանակ ավերված լանջերի ես հանդիպել եմ Սևանը գրկող Գեղամա և Կարոբենիսի լեռներում, Թալինում, Եղեգնաձորում, Վերիի շրջանում, Ողջիի ափերին, Արարատյան դաշտում»: Ակնարկը ներկայացնում է ոչ միայն Շայկական լեռնաշխարհում, այլև Աֆղանստանում կառուցված քահրիզների ստրատեգիական նշանակության մասին, և վկայակոչելով հայոց հնագույն ծեռագրերից մեկը, տալիս է հետաքրքիր և արժեքավոր տեղեկություններ, որոնք ել ավելի են մեծացնում ակնարկի ճանաչողական արժեքը:

Աշխարհը ճանաչելը, աշխարհի տեսած լինելը անընդհատ համեմատության մեջ է պահում լրագրողին: համեմատությունը չի կարող լինել առանց վերլուծության՝ այն, ինչ անհրաժեշտ է երևույթը ճիշտ գնահատելու և ներկայացնելու համար: Դիմենք օրինակներին.

«Այդպիսի մասրենիներ տեսել էի Ենիսեյի ափին, սիրիոյան տայգայում»:

«Մի ամառ, Ծղալտությունը հանգստանալիս, երես առ երես հանդիպեցի բնության անակնկալներից մեկին»:

«Բարեբախտաբար ես այցելել եմ Փարիզի ակվարիումը»:

«1985 թվականն եր, Խսպանիայից վերադարձել էի հարուստ տպագործություններով»:

«Ֆինլանդիայում էի... Գեղեցիկ բնություն է, ծով, նավակներ, ծառեր, ստվերախիտ անտառներ»²:

¹ Ղուկասյան Ա., Ծաղկաձոր՝ առանց ծաղկի և անտառի, «Գարուն», 1998, թիվ 1:

² Օրինակները՝ Բնության մեջ հ՝ նշն է ամենաբարենքը, Ծաղկի զաղտնիքը բնության գաղտնիքն է, «Օվկիանոսի բնակչները, Դովիաննեսի և Մկրտչի քարապատնիշը, Տիուր նվազներ՝ ծոնկած ծաղիկներին» ակնարկներից են:

Այսպես կարելի է երկար թվարկել, և որքան մեծ է շրջագայություն-ների աշխարհագրությունը, նույնքան ընդարձակ է այն մարդկանց և երևույթների ցանկը, որոնք արժանացել են ակնարկագրի գրչին:

Դուկասյան-լրագրողի ստեղծագործության առանձնահատկություններից է նաև ժողովրդական առածների առատությունը: Իր խոսքը հաստատելու, ժողովրդի փորձով, իմաստությամբ ամրագրելու նպատակով հեղինակը հաճախ է դիմում ժողովրդական բանահյուսությանը: «Մեր ժողովուրդը մի առաջ ունի. բարի մարդկանց մասին ասում է՝ մի մրցյուն անգամ չի տրորել» («Բնության մեջ ի՞նչն է ամենաբանկը») կամ «Կյանքի փորձից ելնելով՝ ժողովուրդը շատ գործնական մի ասացվածք է ստեղծել՝ կովի ժամանակ փլավ չեն բաժանում» («Լեռնալանցերի բողոքը»): Եվս մեկ օրինակ. «Չուրը ոսկի է,- աշխարհի համարյաբոլոր ժողովուրդներն ունեն այս առածքը: Բայց անտեղի ինչքան ջուր է հոսել ու հոսում», - ժողովրդական առածին հակադրվում է ափսոսանքը, ապա նույն՝ «Լուսավոր աղբյուրներ» ակնարկում հանդիպում ենք՝ սառը, համեղ ջուր էր. ինչպես մեր մեծերն են ասում՝ ծյան բերանից էր զալիս:

Նեքիաթով է սկսվում «Սար տաշողները» ակնարկը. «Լինում է, չի լինում, մի ուժեղ մարդ է լինում, այնքան ուժեղ, որ անունը դրած են լինում Սար Տաշող...»: Ինչպես հեքիաթում, Դուկասյանի ակնարկներում նույնպես չարի ու բարու կոչիվ է, չարը ճանաչել տալու, չարն ի ցույց դնելու, բարին արժուորելու պայքարը: «Երբ մի քիչ երկար ես մտածում մարդ-բնություն փոխարաբերության շուրջը, հասկանում ես, որ դա անվախճան պայքար է...»: Ակն ընդ ական՝ այսպես կարելի է բնութագրել Մ. Դուկասյանի գնահատականը մարդ-բնություն հարաբերություններին:

Գնահատելու հարցում անաչառ լինելու լրագրողի սկզբունքը ակնառու է բոլոր ակնարկներում: «Երկի սրա համար է ասված՝ մարդը միշտ հակված է լավին խարվելու», - այսպես է ավարտում հեղինակը «Տիսուր պատմություն»՝ ակնարկը. ինքը, սակայն, գրչին երբեք չի խաբում, որքան էլ հակված լինի լավ բան գրելու: Ահա թե ինչ է հիշում ակնարկագիրը. «1970 թ. «Գարունի» խմբագիրը Վարդգես Պետրոսյանն էր: Ինձ ուղարկեց Գյումրի՝ մի լավ, դրական ակնարկ գրելու: Գնացի: Լավ ակնարկ գրելու մտադրությունը, սակայն, շատ արագ փոխվեց մտահոգության. փաստերը խոսում էին հակառակի մասին: Երբ ծեռագիրը պատրաստ էր, ինքս ին գրածից վախեցա...»: Եղածը եղած էր, և սպասվելիք դրական ակնարկի փոխարեն խմբագրի սեղանին դրվեց «Երկրորդ քաղաք՝ չի նշանակում երկրորդական քաղաք» ծավալուն ակնարկը՝ արժեքավոր առաջին հերթին Լենինական քաղա-

¹ Դուկասյան Մ., Ու՞ր է կղզյակն Անանա, Երևան, 2003, էջ 263:

քի մասին հարուստ ինֆորմացիայով: Առհասարակ, ցանկացած ակնարկ, իրապարակախոսական հոդված տարբեր ժամանակներում արժևորվում և ընկալվում է տարբեր կերպ: Այսօրվա վերլուծողի հանար թերևս ամենաուշագրավն այն հատվածն է, որը տեղեկություն է տալիս 1961 թ. հիմնադրված ՀԽՍԴ Գիտությունների ակադեմիայի գեղփիզիկայի և ինժեներային սեյսմոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտի, նրա դերի, նշանակության, հեղինակության ու հնարավորությունների մասին: «1965 թ. ԽՍԴ Գիտությունների ակադեմիայի նախագահությունը որոշում ընդունեց, որի համաձայն՝ ինստիտուտը ճանաչվեց Խորհրդային Միության տերիտորիայում ուժեղ և ավերիչ երկրաշարժերի գրանցման և ուսումնասիրման առաջատար կենտրոն»: 1970 թվականին, երբ գրվում էր ակնարկը, այլ էր հարցադրումը՝ և ինչքան բան կփոխվի քաղաքում, եթե այս տիպի հիմնարկությունները ավելանան... 1988 թ. ավերիչ երկրաշարժից տասնութ տարի առաջ մտահոգությունը կապված էր կադրերի հետ: Մինչդեռ 1988-ը ստիպված է այլ կերպ նայել խնդրին, այլ կերպ ընկալել հարցադրումն ու հետևողություններ անել: Իսկ ակնարկում տեղ գտած փաստերն իրենց ճշգրտությամբ և ճշմարտացիությամբ թույլ են տալիս անել հետևողություններ՝ թեկուզ տասնամյակներ անց: «Քաղաք – պետություն, քաղաք – հանրապետություն», - մի՛թե այսօրվա Երևանի համար չեն այս բնորոշումները, որոնց մասին ակնարկել է հեղինակը նեռնս 1970 թվականին: «Երևանը դարձել է մեծ գլուխ՝ թույլ վերջույթներով. նույնիսկ երկրորդ քաղաքը թուլացել է մայրաքաղաքի պատճառով»: Սա փաստ է, որը, ցավոք, ավելի քան իրական է նաև մեր օրերի համար:

Մի կողմից ակնարկը՝ որպես լրագրային ժամանակագրական ժամանակաշիրճակ, մյուս կողմից, ուսումնասիրելով Ս. Ղուկասյանի՝ տասնամյակներ առաջ գրված ակնարկները, կարող ես մտածել, որ դրանք գրվել են օրեր առաջ: Գաղտնիքը նյութի ընտրության մեջ է՝ խնդիրներ, որոնք հավերժական են, որոնք բնորոշ են մեր մտածողությանը, մկարագրին: Եվ քանի որ անփոփոխ է նկարագիրը, անփոփոխ են նաև այստեղից բխող խնդիրները, իսկ լրագրողի տաղանքը դրանք նկատելու, բարձրածայնելու մեջ է: Լրագրողական աշք, ծիշտ կողմնորոշվելու ունակություն և հետևողականություն՝ սրանք են այն պայմանները, որոնք կարող են ակնարկը դարձնել ազդեցիկ միջոց՝ որևէ խնդիրի լուծման համար: «Բաց նամակ երկու միջին հասցեով»՝ ծավալուն նյութի մեջ (որի ժամանակին պատկանելությունը դժվար է որոշել բարդ կառուցվածքի պատճառով) միևնույն երևույթը դիտարկված է տարբեր հայացքներով՝ հնագետի, բուսաբանի, քիմիկոսի, բժշկի, աշխարհագրագետի, վերջապես մի մար-

¹ Ղուկասյան Ս., Բաց նամակ երկու միջին հասցեով ակնարկը գետեղված է համանուն ժողովածուի մեջ, «Պայաստան», Երևան, 1974:

դու հայացքով, որին մտահոգում են շրջակա միջավայրի պահպանության հարցերը։ Ակնհայտ հետևողականությամբ հեղինակը փորձում է ընթացք տալ արձանագրված խնդիրներին և հրավիրել ոչ միայն հասարակության, այլև պատկան մարմինների ուշադրությունը՝ ակնկալելով գործնական միջամտություն։ Եվ «Բաց նամակի» շարունակությունը այն բաց հարց ու պատասխաններն են, որ տեղի են ունեցել լրագրողի և հանրապետության պետական այրերի միջև դեռ 1968 թվականին։

Որպեսզի ասվածի ճշմարտացիության մեջ համոզես ընթերցողին, առաջին հերթին պետք է հավատաս ու համոզված լինես ինք։ «Եղել է դեպք, երբ քաղցկեղի պատճառների հայտնաբերման մասին ակնարկ գրելու համար ստիպված եմ եղել խմել նույնիսկ պատրաստուկը», - այսպիսի քահսնդրությամբ է ծնվել «Մոռացված լաբորատորիայից մինչև Խսրայել»¹ ակնարկը Օնիկ Կարապետյանի և նրա ստեղծած՝ քաղցկեղի վաղ ախտորոշման «Օկարին» պատրաստուկի մասին։ Չետագայում ակնարկը դարձավ հիմք «Մի կյանքի պատմություն» վիպակի համար։ Մ. Ղուկասյանի գրիչն ուրվագծում է ոչ միայն մարդկային կյանքի պատկերներ, այլև պատմություններ այն ամենի մասին, ինչն ունի հոգի և կենսագրություն։ Այդպիսի շարք է հայոց քարակերտ հրաշքներին՝ հնագույն վանքերին, եկեղեցիներին, մատուռներին ու խաչքարերին նվիրված ակնարկաշարը, որը մեր մասունքները ճանաչել տալու լավագույն միջոցներից է։ Մ. Ղուկասյանը, խոսելով ճշմարիտ ստեղծագործության մասին, հաճախ է վկայակոչում Վիլյամ Սարոյանին՝ ինչ իրականում տեսել ես, եթե կարողանաս ճիշտ այդպես նկարագրել, դրանից գեղեցիկ պատմվածք չի լինի։

Ութսունամյա լրագրողը ցայսօր պատմում է այն, ինչ տեսել է. բնական, գեղեցիկ, առանց ավելորդ, կեղծ բառերի։ Ամենագեղեցիկը հենց այդ պարզությունն է։

¹ «Գարուն», 1994 թ., թիվ 8:

Մարիամ Կարապետյան
Սամուկի պատմ. և տես. ամբիոնի ասպիրանտ

ՔԱՂՋԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՓՈՒՄԸ՝ ԱՆԴԱՏԱԿԱՆ ԶԱՆԳ.

Ա. ԱՅՎԱԶՅԱՆԻ «ԴԱՅՈՒԹՅՈՒՆ» ԹԵՐԹԸ

ՁԼՄ-ների մատուցած հատվածականացող իրականության դիտարկումը քննական է դարձնում այդ պատկերն ամբողջացնելու հարցը իրականության ակտիվ դիտող-սպառողի համար: Ժուռանալիստիկայով գրադարձողի, լրատվության մեջ իրեւ փորձագետ կամ լուրերի աղբյուր հանդես եկողի և դիտող-սպառողի համար, առավել ակտիվ հայացք ունենալու դեպքում, կարող է ծագել համակարգման խնդիրը: Դամակարգումը կամ դրա խնդրականացումը կարող է տեղի ունենալ իրեւ լուրեր ստեղծողի, փորձագետի առնվազն մտահոգություն, իրեւ ժուռանալիստիկայով գրադարձողի առնվազն ներքին հարցադրում, իրեւ դիտողի հայացք (այս դեպքում պահանջվում է առավել ակտիվ, ոչ պարզ սպառողական դերակատարում), իրեւ որևէ առանձին կառուց (ՁԼՄ, գիտահետազոտական ինստիտուտ), որի ստեղծած համակարգը նաև չելի է դիտողին: Դիմելով Պ. Բուրդյոյի կիրառած «դաշտ» եզրին՝ հարցը կարելի է քննել իրեւ ժուռանալիստիկայի դաշտի հիմնախնդիրներից մեջ:

Ժուռանալիստիկայի դաշտը դիտարկելիս Պ. Բուրդյոն, ի թիվս այլ հարցերի, առանձնացնում է նաև դաշտին բնորոշ հապճեպությունը: Մասնավորապես նա խսում է հեռուստատեսության այն պրակտիկայի մասին, երբ կարող են տաղավար հրավիրել որևէ նաև ազգային մասնագետի՝ երեք բոպեռում խսուելու, օրինակ, ճգնաժամի մասին. «Ժուռանալիստիկան հապճեպություն է, ժամանակի անդադար հոսք: Դուք չեք կարող նաթե մատիկայով գրավել TFI-ի հրապարակում, այնտեղ չեք կարող գրադարձել նաև սոցիոլոգիայով, դուք այնտեղ ոչինչ չեք կարող անել»¹: Պ. Բուրդյոյի հարցադրումը՝ կապված այս սահմանափակության հետ, խնդրարկում է դրան հակառակելու հնարավորությունը, երբ որևէ ուղրությունը ունենալու իրավունքի պաշտպանությունը «չի նշանակում պաշտպանել էլիտարությունը: Դա նշանակում է պաշտպանել այն

¹ П. Бурдье, Поле политики, поле социальных наук, поле журналистики, В книге: Соционализ Пьера Бурдье. Альманах Российской-французского центра социологии и философии Института социологии Российской Академии наук, М.: Институт экспериментальной социологии; СПб.: Алтейя, 2001, с. 137.

բաների արտադրության սոցիալական պայմանները, որոնք կարող են ստացվել միայն որոշակի պայմաններում»¹: Բուրդյոն անհրաժեշտ է համարում մուտքի իրավունքի և ելքի անհրաժեշտության հարցի առաջադրումը:

Նման հարցադրումներով փորձել են ներկայացնել 1992-1997 թթ. Ա. Այվազյանի խմբագրած «Հայություն» թերթ՝ նպատակ ունենալով քննել այն հանգամանքները, որոնցով, ըստ իս, Այվազյանին հաջողվել է պաշտպանել թերթի գաղափարների «արտադրության սոցիալական պայմանները»: Այս տեսակետից «Հայություն» ուսումնասիրելով ժուռնալիստական դաշտում՝ հարկ է լինում շեշտել նախ վերը թերված մի շարք գործուն հայացքների կարևորությունը, առանց որոնց տարտամ ու անհստակ է դառնում «Հայության»՝ իբրև որոշակի համակարգի պատկերը, որ ներկայացվում է ստորև: Խոսքը տարբեր խորագրերում քաղաքակրթական չափման հաճախ չտարորշված սփովածության մասին է, որը հավաքելու համար էլ անհրաժեշտ է դիտողի ակտիվ հայացքը: Այս պարագային «Հայություն» կարող է ներկայանալ իբրև իմաստավորող կառույց, որի ստեղծած համակարգը՝ իբրև վերը նշված հարցադրման պատասխան, մատչելի է դիտողին:

Անկախության առաջին տարիները, ինչպես յուրաքանչյուր սկիզբ, վերադիրքորոշումների ժամանակահատված էին: Քաղաքական-գաղափարական վերարժևորումներն ու ընթացքի ուղղությունները հստակեցվում էին ոչ միայն տարերայնորեն կամ «հոսանքին համընթաց», այլև որոշակի տեսական հիմնավորումներով: Ժամանակաշրջանի մասին շատ են հնչում դրական ու բացասական գնահատականներ՝ լուրջ ծեռքբերումների ու լուրջ վթարմերի հաշվառմաբ: Ընդ որում՝ այդ գնահատականները տրվել և տրվում են ինչպես «ծեռքի հետ»՝ իբրև առավելապես անհատական-հոլովական արձագանք եղածին, այնպես էլ բանական մեկնարաբանման որոշակի փորձով:

Հոդվածում անդրադառնում են «Հայություն» պարբերականին՝ իբրև նման բանական փորձի: Նման ուսումնասիրությունը թույլ է տալիս դիտարկումներ անել, որոնք ոչ միայն բնորոշում են պարբերականը, այլև տեղիք են տալիս մի շարք արդիական հարցադրումների: Թերթը, ինչպես նշվեց, ուսումնասիրվել է առավելապես իբրև մտավոր փորձ՝ ակնհայտ արժեքային-գաղափարական նպատակադրմաբ, երևույթների ներկայացնան ոչ թե պարզ-նկարագրական, այլ վերլուծական ուղղվածությամբ: Ակնհայտ են առաջադրված թեմաների ու մեկնարաբանման կերպերի հաճախ քաղաքակրթական շեշտադրումները:

Այս համատեքստում «Հայության» իրատարակման ժամանակահատվածը դիտարկելիս նկատելի է դառնում վերարթնացող ազգային-

¹ Պ. Բուրդյո, սկզբ. սու., ս. 137-138.

պետականը ստեղծելու ճիգը, որ ենթադրում էր կրկին հասկանալ ինքն իրեն և իբրև հաջորդ քայլ՝ նոր ինքնաստեղծում հանրային-մշակութային կյանքի բոլոր ոլորտներում, որ հանգուցային էր անցյալը, ներկան և ապագան կարգաբերելու տեսակետից: Նոր ինքնակազմակերպման լիցքը ուրվագծում է ազգային ինքնության վերահայտնաբերումը և ներկայացումը նոր գրություններում՝ որպես ամփոփում ու մեկնարկ, ինչպես մեկ ուրիշ տեքստի և այլ, բայց որոշ առօլմերով գուգահեռելի ժամանակի՝ Ա. Խորենացու պատմության վերաբերյալ նկատում է Ա. Ստեփանյանը, «շարակարգելու հայոց պատմական ժամանակը»՝ «ազգային ինքնությունը բանաձևելով իբրև գրության միասնական տեքստ՝ ներքին լժորդումներով ու զարգացումներով», որ «կարելի է ընթերցել, ընթեռնել և ինաստավագրել»¹:

Նման գուգահեռումներ առթելով՝ 1992 թ. փետրվարի 14-ից լույս տեսած «Դայություն» թերթը տարբերվում է մինչ այդ, այդ օրերին և դրանից հետո հրատարակված թերթերից: Խմբագիրն Ա. Այվազյանն էր, որի կողքին ապրած ու աշխատած մարդիկ նշում են՝ նրա ողջ ստեղծագործությունը միտված էր «Ո՞վ ենք Վերջապես մենք» հարցին: Այվազյանի ժամանակակիցների համար անակնկալ էր, որ գրականությունից, կինոյից, գեղանկարչությունից դուրս նա այս հարցը որոշում է քննել նաև առանձին պարբերականում: Սա ուշագրավ փաստ է և Այվազյանի ստեղծագործությունը հասկանալ-բնորոշելու նոր մեկնակետեր է տալիս: Եվ ոչ միայն Այվազյանի ստեղծագործությունը, այլև այդ օրերի հայ հրականությունն առհասարակ:

Ինչպես նկատում է արծակագիր, հրապարակախոս, թերթի աշխատակից Գ. Զանիկյանը, «Դայություն» տարբերվում էր հայկական բոլոր լրատվամիջոցներից իր ուղղվածությամբ, իենց թեկուզ էջադրումով ու ձևավորումով: Դա «հեղինակային թերթ էր»². Այվազյանը ոչ միայն հղում էր հերթական համարի թեմաները, այև անմիջապես գրում էր այն, ինչը պակասում էր տվյալ էջում՝ պատմվածք, հոդված, ակնարկ, կատակարանություն:³ Փաստորեն նման մտահղացումն ու դրա հրագործումը առավելապես մեկ անվան հետ է կապվում, որքան էլ որ թերթը կոլեկտիվ աշխատանքի արդյունք էր:

Մեփական մտահղացմանք՝ գրողը հարցը դնում է ժամանակային ընթացքի մեջ՝ դուրս գալով գուտ գրական ընդհանրական ժամանակից: Սա Այվազյանի գրությունը նմանեցնում է պատմագրական փորձի, երբ հրերը, գաղափարները ներկայացվում են ժամանակագրական կարգով:

¹ Ա. Ստեփանյան, Խորենացու «Ողբի» մի հատվածի մեկնաբանության շուրջ, Զեկուցումների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2006, էջ 249:

² Գ. Զանիկյան, Ա. Այվազյան առեղծվածը, Այվազյանական ընթերցումներ-2008, Երևան, 2008, էջ 170:

³ Տե՛ս նույն տեղում:

Ընդ որում՝ ուշագրավն այստեղ այն է, որ լրագրային տիրույթի մեջ փորձ է արվում դնել «Երկար տևողությունների ժամանակը»¹. թերթի միտումը՝ ներկայի ժամանակագրությունը, որ առհասարակ բնորոշ է լրագրությանը, այվազյանական տեքստում ծեռօթ է թերու նաև քաղաքակրթական ժամանակի արժեքը: Ինչպես նկատում է «Դայություն» թերթի աշխատակից Ռուզան Զաքարյանը, «Դայություն» առանձնանում էր, «քանի որ ոչ թե աշխարհագրական տարածքի, այլ ժամանակների չափումով էր մեր տիրույթի սահմաններում կատարվող իրադարձություններին անդրադառնում»²:

Խորենացիական միտումը՝ ազգի մշակութային կերպը ներկայացնել ժամանակագրական ընթացքի մեջ, Այվազյանի «Դայությունում» արտահայտվում է իրեն ՆԵՐԿԱ-յացում, երբ քննվողը օրերի ժամանակն է, սակայն քաղաքակրթական իմաստավորումներով: Ընդ որում՝ ներկայի իրողությունները շարադրվում են հեռու և մոտ անցյալի իրողություններին գուգահեռ՝ արժեքներ առանձնացնելով նաև ժամանակային չափույթի հաշվառմամբ. «Դիմա մենք, կարծես թե առհասարակ, կորցնում ենք կապը մեր անցյալի հետ: Ավելի ստույգ՝ կապո՛ թելը բարակել է և այնպես, որ կարող է կտրվել: Իսկ կտրվելու դեպքում մենք կկորցնենք նույնիսկ ժառանգորդ կոչվելու իրավունքը»³: Ուստի «Դայության» ընդգրկած թեմատիկ շրջանակը՝ «ժամանակների ժառանգորդության» պարագաներ, քավական լայն է՝ ճարտարապետություն, քաղաքաշինություն, գրականություն, քաղաքականություն, պատմություն և այլն: Իսկ ժամանակները համադրելու, ներկայացնելու պահանջն իրականացնում են մտավորականները՝ ոչ միայն թերթի աշխատակիցներ, այլև գիտության և մշակույթի տարրեր գործիչներ, որոնց դիտարկումները տպագրում է թերթը: Սովորել ժամանակների կրկնությունից, քանի որ «նա կրկնում է իր բոլոր փուլերը նույնությամբ». «Դրա ապացույցը պատմության մասին տարբեր ժամանակների մտաժողների բնորոշումներն են: Եվ դրանցով որոշել, թե որ ժամանակն է նկատի առնվում, դժվար է»⁴ (ընդգծումը մերն է - Ս.Կ.): «Դայության» ներկայացրած ժամանակը «քաղաքակրթության հիմնաքարերի վրա»⁵ դրոշմ ունեցող ժողովությունից ընթացքն է:

¹ Տես Ս. Դովիաննիսյան, Ֆ. Բրոգելի պատմության տեսությունը, «Վեմ» համահայկական հանդես, 1 (2011), էջ 98-118:

² Ո. Զաքարյան, Մենք երկիր մշակույթ չունենք, Այվազյանական ընթերցումներ-2008, Երևան, 2008, էջ 179:

³ Ա. Ղազարյան, Երևան XXI, «Դայություն», 1998 թ., 28 փետրվարի, թիվ 2:

⁴ «Դայություն», 1998 թ., 28 փետրվարի, թիվ 2:

⁵ Ա. Այվազյան, Զրիստոնեությունից դեպի հեթանոսություն՝ 7 կիլոմետր, «Դայություն», 1992 թ., 3 ապրիլի, թիվ 4:

Երկար տևողությունների մասին մտածելը, հետևաբար՝ դրամց ներքերումը լրագրային իրականություն կատարվում է ընթացքի իմաստավորումների միջոցով: «Մտավորականության Սկիլլան և Քարիբդան», «ԿԳԲ-ի նկուղներում» և այլ խորագրեր կողք կողքի են դնում ոչ վաղ անցյալի պատմությունները՝ հասկանալու և դրա հիման վրա ներկան ստեղծելու միտումով: Այվազյանի փորձը դառնում է ազգային ինքնության հայտնաբերումով նաև ազգային ժամանակը վերագտնելու փորձ: Ազգային ժամանակի տեղափոխումը անցյալից դեպի ընթացիկ ժամանակ (ներառելով նաև անցյալը) արտահայտում է հայացքի վերակողմնորոշումը, միտումն առ ապագա, որ ենթադրում է նաև անդրադարձ հայկական ինքնության ու քաղաքական կողմնորոշման խնդիրներին¹:

Ուշագրավ է, ինչպես արդեն նշեցի, մի հաճամանց ևս՝ մշակույթով համակարգվող ժամանակի հասցեագրումը բոլոր հայերին, այն է՝ անհատի միտումն առ բոլորը, որ դրսևորվում է համայն հայությանն ուղղված պարբերականի ստեղծմամբ. «Դայաստանը միակ տեղն է հողագնդի վրա, որ կարող է կոչվել համայն հայության կենտրոն՝ առանց խորականության, առանց բաժանումի ներքին սփյուռքի, արտաքին Սփյուռքի և Մայր Դայաստանի: Այժմ, երբ միտում կա աշխարհի հայությանը հնարավորություն տալ լինելու Դայաստանի քաղաքացի, յուրաքանչյուր հայի ծայն, որտեղից էլ նա լսվի, հայրենիքի ծայնն է, և յուրաքանչյուր հայի սեփականություն առաջին հերթին իր հողն ու ջուրն է, իր երկինքն ու իր պատմությունը: ...Այսօր բոլոր հայերի ծայները մի հնչողություն ունեն, և այդ միաձայնությունը պետք է լսվի ամենուր: Դրան են ծառայելու «Հայություն» թերթը և նրա հիմնադիր մարմինը՝ Սփյուռքահայության հետ կապերի կոմիտեն: ...Մեր շաբաթերթը հայության թերթն է, և նրան պետք է աշխատակցեն, ավելի ճիշտ՝ նրա տերը դառնան բոլոր հայերը աշխարհի տարբեր ծայրերից»²:

Այվազյանի ննան հավակնութ-ծավալային մտահղացումը նրան մոտեցնում է Թումանյանական «ամենայն հայոց»-ին: Ընդ որում՝ ուշագրավն այն է, որ բոլոր հայերին ուղղված խոսքը թերթին թղթակցող մտավորականության խոսք է սրանով ազգը, կարենի է ասել, որպես պոտենցիալ ընթերցող՝ ենթարկվում է մեկ մշակութակենտրոն ուղղորդման: Պետության ներքին լարված քաղաքականության հարցեր գրեթե չեն շոշափվում: Երկիր ունենալու խանդավառության մեջ խնդիր է դառնում գրեթե բացառապես ազգի մշակութային ինքնության կերպը: Գրագետ շուկայակարման կանոնը՝ սեգմենտավորել լսարանը, որ նոր ժամանակներում կիրառելի և արդյունավետ նույնիսկ ավանդաբար ոչ

¹Տե՛ս «Հայություն», 1992, հունիս, թիվ 9-10: Դամարն ամփոփում է «Հայությունը 21-րդ դարի շեմին» համահայկական գիտաժողովի եղանակները:

²«Հայություն», 1992 թ., 14 փետրվարի, թիվ 1:

շուկայական համարվող ստեղծագործական արտադրանք թողարկելիս, շրջանցվում է այս նույնագուման մեջ: Իր բովանդակությամբ առավել ինտելեկտուալ շրջանակների բավարարող թերթը ննան նպատակ չի հետապնդում. դա դառնում է մի տեսակ երկրորդային որակ: Բնական է, որ այս հանգամանքը որոշակի ազդեցություն է ունենում թերթի կառուցվածքի, բովանդակության ու նաև հրատարակման տևողության վրա: «Հայությունը» շահում է ինքնատիպության ու ասելիքի ինաստով: Նեղինակային կառուցիկ մտահղացունը առանձնացնում է «Հայությունը» այլ պարբերականներից, տալիս նրան մի տեսակ ինքնաբավություն՝ այլ թերթերի հետ հարաբերության տեսանկյունից:

Նման «ինքնարաբավության» լուծած որակական խնդիրը հասկանալի է դառնում մրցակցության դերի թեկուզ հարևանցի քննումով: Ըստ Պ. Բուրդյոյի դիտարկման՝ «...Մրցակցությունը, որը միշտ ներկայացվում է իրեն ազատության պայման, հակառակ ազդեցություն է ունենում մշակութային արտադրության դաշտերի վրա, որոնք առևտրային ճնշում են գգում:...»: ...Մրցակցային պայքարը, որ [...] տարբերության, առաջնայնության սևոռում որոնումների է հանգեցնում, բերում է ոչ թե տարբերակման, այլ միասնականացման»¹: Այսօր, սակայն, նման «ինքնարաբավություն» անբույլատրելի շքեղություն կդիտվի: Այվազյանի ծեռնարկը՝ իրեն գաղափարական կազմակերպում, ցավոք, ավելի բնորոշ է նման անցումնային-ինքնակազմակերպող, բայց ոչ քիչ թե շատ կարգավորված կամ իրեն այդպիսին համարող ժամանակի:

«Ժամանակի դանդաղեցումը» այսքանով «Հայությանը» հաջողվում է նաև կոմերցիոն լուծումներից խուսափելու ճանապարհով: Այս տեսակետից խնդիր է ստեղծագործական ազատության և կոմերցիոն միջավայրի հակասությունը, որ այվազյանական մտահղացման դեպքում լուծվում է բացառապես հօգուտ առաջին՝ ակտիվացնելով թերթում քաղաքակրթական ժամանակը, իսկ գաղափարականից դուրս ծավալվող հարթության մեջ հարուցելով կենսական նշանակության դժվարություններ:

Սա, թերևս, ներքին կապ ունի մեկ այլ խնդիր հետ: Խնչած նկատում է մշակութարան Յ. Բայազյանը, «քազմաթիվ լուրջ և հրատապ հարցերի մասին խորհրդածելու և լուծումներ առաջարկելու հիմնական տեղը, պատշաճ գիտական կարողությունների և ասպարեզի բացակայության պայմաններում, հաճախ դառնում են հանրահավաքային հարթակներն ու լրագրերի խմբագրական սյունակները»²: Սա, ըստ մշակութարանի, «մտավորական դիսկուրսի անհետացումն է»: Նման հայացը լրատվական սյունակներին ու հանրահավաքային հարթակներին

¹ Պ. Բուրդյե, սկզ. սու., ս. 134.

² Յ. Բայազյան, «Եղափոխություն», [http://old.hetq.am/am/politics/revolution-1/\(14.09.2011\)](http://old.hetq.am/am/politics/revolution-1/(14.09.2011)):

Երևան է թերում մշակութային իրական կարիքների և տարրեր քաղաքական-հասարակական շրջանակներում առաջարկվող լուծումների անհամարժեքությունը. քաղաքական-հասարակական, լրագրային չկայացած կառուցվածքների Վերլուծությունները հատկանշվում են իրականության մեկնաբանման սուբյեկտիվ, շահերի կողմնակալության ծայրահեղ ազդեցությունը պարունակող դիմուրսով։ Առավել համակարգային, հասարակական տարրեր կառուցվածքներին բնորոշ սահմանափակումները հաղթահարող քննարկումն անհնար է դառնում այդ առանձին կառուցվածքների սահմաններում (մանավանդ որ այդ կառուցվածքները նման գործառույթ երթեմն նաև չունեն)։ Տեղափոխվում է մեկ այլ՝ ավելի ազատ ու սահմանափակումներից առավել ազատ միջավայր՝ արվեստ, գրականություն, մշակութարանական երկխոսություն, հարցագրույց մտավորականի հետ՝ առավելապես բնորոշելով անհատական ճիգեր և ոչ համակարգային մոտեցումներ։ Հավագույն դեպքում անհատական ճիգերն են փորձում որոշակի համակարգեր ստեղծել (սա, փորձը ցույց է տալիս, ոչ դյուրին և ոչ էլ «լավ օրից» եկող հանգամանք չէ)։

Այս իմաստով Այվազյանի «հեղինակային թերթը» բնորոշ օրինակ է՝ առանձնանալով համակարգվածությամբ, տաղանդավոր անհատի մտածական կառույցի հետևողականությամբ։ Իր հարցագրույցներից մեկում Այվազյանը նկատում է. «Մեզ սա է պակասում՝ պետական մշակույթը, որ ունի կոմպոզիցիա, պլաստիկա, ռիթմ, այսինքն՝ այն ամենը, ինչ ունի և պետք է ունենա գեղարվեստական ուզածող ժանրի գործ»¹։

Մոտավորապես համարժեք է նույն տարիներին Ա. Ոսկանյանի արժարժած մտածողական խնդիրը՝ «մտքի առարկան մինչև վերջ սպառելու, մտքով կտրել-անցնելու գործողությունը, որ գերմաններնում կոչվում է durchdrehen, երբեմն՝ շառեծենեն, իսկ ռուսերնում թարգմանվում է «ործումատ» բառով»²: «Արդյոք մենք՝ հայերս, ունենք մտածել-սպառելու [այդ] ավանդույթը» հարցին պատասխանելու համար Ա. Ոսկանյանը մեջքերում է Դայաստանի առաջին Դանրապետության առաջին վարչապետ Յ. Զաքարյանունու խոսքն ինքնահաշվետվությունից. «Չեմ ասում, թե չգիտեինք, չիմք հասկանում: Գիտեինք, իհարկե, հասկանում էիմք ու ասում, երբ հարկ էր լինում բառերով բնորոշել դրությունը: Բայց սրտերիս խորը չիմք գիտակցում այդ բառային ֆորմուլի ամբողջ իմաստը, մոռանում էիմք մեր գիտցածը և եզրակացություններ անում (ընդգծումներ՝ Ա. Ո.)»³:

¹ Ո. Զաքարյան, Մենք երկրի մշակույթ չունենք, Այվազյանական ընթերցումներ, Երևան, 2008 թ., էջ 183:

² Ա. Ոսկանյան, Ազգ. ինքն. հիմնահարցը և մտավ. կոչումը, «Ինքնություն» 1, Կամար, Երևան, 1995, էջ 17:

³ Նոյն տեղում:

«Երկրի մշակույթ» ասվածի կամ «մտածել-սպառելու ավանդույթի» իմաստային լիցքը Այվազյանը կիրառում է թերթ հրատարակելիս: Նրա տեքստը նախ ստանձնում է ոչ այնքան իրազեկման, որքան ինքնահամակարգման գործառույթ՝ ինչպես նշվեց, առանձնանալով իր կառույցով, բովանդակությամբ ու նպատակադրումով: Այվազյանն ընտրում է թերթի Ա3 ծևաչափը. ըստ նրա՝ հայության մասին թերթը պետք է ընթերցանության համար ջանք պահանջեր: «Դայությունը» հավաքում-համակարգում է ազգային ինքնության բաղկացուցիչները՝ հընթաց հաղթահարելով ոյուրինությունը:

Պատահականությո՞ւն է հանգանանքը, որ «Դայության» առաջին համարը լույս է տեսնում Տիրոջն ընդառաջ գնալու՝ Տրնդեցի օրը՝ փետրվարի 14-ին: Այն, որ դա գիտակցված փաստ է, թերթում ուղղակիորեն չի նշվում, սակայն ենթադրելի է դառնում համարի ու առհասարակ թերթի բովանդակությունից: Առաջին համարը բացվում է Տերունական աղորքով, իսկ որպես խմբագրական՝ Այվազյանի անդրադարձն է քրիստոնեությանը. «301 թ. հայերը իրենց համակայության վրա բարձրացրին Քրիստոսի որոշը: Դայոց անտությունը աշխարհին ներկայացավ որպես առաջին քրիստոնեական նույնաբանություն: Այսօր դա, թերևս, քաղաքական գործողություն նկատվի, պետականության հիմք ու տեսակ, բայց ես՝ իբրև այդ կազմավորության մի փշուր, որը սկիզբ ունի իմ ժողովրդի մեջ, ընթացք ու նաև հանգրվան պիտի ունենա նրա մարմնում, այժմ կրում եմ լոկ գիտակցությունը մեր եղելության: Ու անընդհատ ներքին տառապանքով ծգտում են իմ նախագոյի հավատն ու ներուժը պահպանել, ավելի ճիշտ՝ թրափել իմ շեղված, խոտոր ճանապարհի աղետը և վերգունել իմաստուն արժատը, որը համարյա երկու հազար տարի եռթյունն է եղել իմ ցեղի: Եռթյունն է եղել և ոչ թե ընտրությունը: Մենք ուրիշ տեսակ չենք կարող լինել, քանզի այլ գոյական վիճակ չկա մեզ համար: Թեքումը ծախ կամ աջ՝ քայլայում է, վերջ մեր բարոյական և ֆիզիկական լինելիության: Որովհետև թեքում քո տեսակից անհնար է գիտության բոլոր բնագավառների փորձով: Դա վատը մենք ենք, և ընտրության հնարավորություն ի բնուստ չի տրված...»¹:

Ընդ որում՝ Այվազյանի համար հավատը՝ «...քրիստոնեությունը [ևս] աշխատանք է: Ներհատուկ ջանք է, ծանր աշխատանք: ...Մենք՝ քրիստոնյա ու հեթանոս, հաճախ մեր ներսում ենք, երբեմն՝ դրսում, ու ճակատագրի առեղծվածային հարվածների տակ ծգտում ենք պահպանել մեր հավատքը՝ նույնիսկ մարմնական ճիշերի, արյան մոլեգին տոփ-

¹Ա. Այվազյան, Դավատ, «Դայություն», 1992 թ., 14 փետրվարի, թիվ 1:

փի ժամանակ, քրիստոնեության և հեթանոսության յոթ միլիմետրի վտանգավոր շրջապատճեններում»¹...

Նետխորհրդային ժառանգությունից հայությունը առանձնացնելու, նրա դիմագիծը հստակեցնելու համար, իբրև առաջին քայլ, Այվազյանն, այսպիսով, ընտրում է հավատը:

Դաշտորդիկ նա գրում է ազատության մասին, ապա՝ տուն, լեզու, խոսք, աշխատանք և այլն: Թեմաների շարակարգությունը ազգային վերահմաստավորումների ու մեկնաբանումների կերպ է: Երեմն փողքիկ այլարանական պատմությունների միջոցով Այվազյանը ներքերում է այս քառերը՝ իբրև պատմություն:² Նպատակը թերևս կարենի է համեմատել պլատոնյան հղացման հետ՝ «...ի հակակշիռ քաղաքակրթականի գորացնել մշակութային ժամանակի ու տարածության ներգործությունը՝ նպատակավ համակարգելու համակեցության տարասեռ բաղադրիչները»³: Վերսկսել քառերը «մաքրելուց», վերանվանելուց՝ դրանց տարողությունը վերահասկանալու, վերահաստատելու միտումով: Սա գրողական իրապարակագրություն է՝ հասարակական խնդիրների յուրակերպ մեկնաբանման յուրակերպ հանձնառությամբ:

Մշակույթի այսպիսի ներբերումը լրագրային տեքստ, շեշտենք մեկ անգամ էլ, ակնհայտորեն քաղաքակրթական ինքնահասկացման և ինքնակազմակերպման խնդիր է լուծում: Այսպես է ընկալվում ազատությունը: Դա ինքնաբննման նոր թեմաներ պարառելու հնարավորություն է, «մեր բնակազմությունը սկզբնաստեղծ վիճակին բերելու», մեր երջանկությունը մեր «իսկական տեղի» մեջ գտնելու միջոց, քանի որ «ազատության մեջ բերք չունի վարչական ուժ, այն միայն բարոյական է խոսք հղում»⁴: Ընդսմին՝ «ազգային» ասվածի մեկնաբանումներում Այվազյանը չի մնում ավանդական ընթացումների սահմաններում:

¹ Ա. Այվազյան, Քրիստոնեությունից դեպի հեթանոսություն՝ 7 կիլոմետր, «Դայություն», 1992 թ., 3 ապրիլ, թիվ 4:

² Տես Ա. Այվազյան, Մի տուփ լուցի, «Դայություն», 1992 թ., օգոստոս, թիվ 12:

³ Ա. Ստեփանյան, Պլոտինոս (Մշակութային ինքնարարություն և մեկնություններ՝ Ա. Ստեփանյան, Երևան, Սարգս Խաչենց, 1999, էջ IX: Սեցքերում մեկնարկում է «մշակույթ» և «քաղաքակրթություն» եզրեր տարրերակրությունը՝ եթև պարզեցնենք, մշակույթը դիտելով իբրև հոգևոր փորձառություն, իսկ քաղաքակրթությունը՝ նյութական: Այսուղև զանց ենք ամուսն եզրերի տարրեր մեկնաբանումները՝ ընդգծելով մեր համատեքսում դրանց հակասարժեքությունը:

⁴ Հանձնատեսք՝ «Թ. ա. Վ դարի վերջին, IV դարի սկզբին, երբ հունական պոլիսը ապրում էր իր քաղաքակրթական վերջալուսը, նա (Պլատոն-Մ. Կ.) ստեղծեց գաղափարների (կամ մաքուր քանական մերի (ընդգումը մերն է -Մ. Կ.)) «գուգահեռ տիրույթը» և «ի պահ տվեց» բոլոր նյութական գոյացությունների քացարձակ արժեքները: Դավերժական դադարի վիճակում, շարադասպած ըստ ծցաղիս կարգի, դրանք նպատակառուղղված են առ Գեղեցիկը, ճշմարիտը, էռուրյունը ու Բարիթը, նույն տեղում:

⁵ Տես Ա. Այվազյան, Մի տուփ լուցի, նույն տեղում:

Եվս մեկ ծավալուն մեջբերում հեղինակից՝ ասվածը ցույց տալու համար. «Մարդկության ստեղծած համակարգը պինդ կարգաբանված, դասդասված մի փխրուն կառույց է, որը ավելի քանական ողնասայան: Եթե եղերաշուք Արշիլ Գորկին չգաղթեր Վանի իր Խոռոզ աշխարհի ծերպից Ամերիկա, ԱՄՆ-ը այսօր չէր ունենա եքալեսինիստական արստրակցիոնիզմ՝ Ա. Գորկի տեսակով: ... Եվ քանի-քանի արտերևույթներ կան իին ու նոր Դայաստանի սորսորներում ու քարութօնաներում: Եվ յուրաքանչյուրը Աստծո առաջ նույն սկզբնաստեղծ գոյությունն է: Նրանք զարդարում են Աստծո թանգարանը, որ ավելի հայտնի է հավիտենականությանը, քան շարապնիված, այսպես ասած, քաղաքակրթված մարդկությանը: Ի՞նչ էր ստանալու Գ. Նարեկացին, եթե հայտնվեր Եվրոպայի գեղագիտական և մտավոր աշխույժ խաղի մեջ: Ինչպես կներկայացներ երես առաջ պշըուիի Եվրոպան Նարեկացուն, եթե անձնամատնիչ հայր մասնակցեր Արևոտքի խաղերին, Արևոտքի հանդիսակիրը լիներ... ճակատագիր, որ մեզնից յուրաքանչյուրը կրում է իր մեջ և տառապում է իր ճակատագիր ծեռքին, որ մենք չգիտենք: Գնա գերեզմանոց և կտեսնես, որ գոյություն ունեն միայն երևակայական կապեր, կապեր տիեզերքում: Եվ չկա հրական կապ: Տիեզերական կապի մասին է Կիկոսի մոր ողբը: Ավելի մեծ ողբ դժվար է պատկերացնել: Եղածը հավասար է չեղածին: Ահա բանաձևը: Լավագույն բանաձևը արսուրդի: ...XX դարի արսուրդի արվեստը ոչ թե Իռնեսկոյի և Բեկետի, այլ Դ. Թումանյանի «Կիկոսի մահը» երկի մեջ»¹:

Եռություն, միեղինություն, սկզբնաստեղծ գոյություն, բնակազմության սկզբնաստեղծ վիճակ, ազգային գաղափարախոսություն և այլն. սեփական հիմքերին վերադարձի պատումը, սակայն, տարբեր է ազգային ինքնության էսենցիալիստական մեկնաբանումներից: Եվս մեկ գուգահեռ Խորենացու «հայեցողական փորձի» մասին Ա. Ստեփանյանի դիտարկումների հետ. «Դամաձայն նրա՝ [Խորենացու-Մ.Կ.] միայն նյութական և հոգեմտավոր մշակության ծանապարհով է, որ երկրի բնական տարածքն ի գորու է վերածվելու տան և հայրենիքի: Կարևորագույն նախապայմանը երևելի այրերի ստեղծագործ մղումներն են՝ նյութականացած իրեւ «գործք արութեան». ռազմական հաղթանակներ, ինմաստուն բարենորոգումներ, հավատքի ու լուսավորության տարածում, քարեգործություն, շինարարություն և այլն: Եվ որչափ արդյունական են դրանք, նույնափ էլ տան և հայրենիքի կառույցները մոտ են իրենց հղեալական արքետիպերին»²:

¹ Ա. Այվազյան, «Կիկոսի մահը»՝ արսուրդի կատարյալ օրինակ, «Դայություն», 1993 թ., մարտ, թիվ 2:

² Ա. Ստեփանյան, Ինքնության ազգային չափումը [նախնական դատողություններ], Ինքնության հարցեր: Տարեգիրք, Խմբ.՝ Ա. Ստեփանյան, Եր., Զանգակ-97, էջ 18:

Զանազանելի են «Հայության» մասին վերն ասվածի նմանության եզրերը մեջբերված հատվածի հետ: Առանձնացնենք մի քանիսը:

- «Ծագումով՝ հայ»: Խորագիր, որ ամփոփում է ինչ-որ բանով նշանագոր հայերի պատմությունները, որ գուգահեռելի է «գործը արութեանի»-ի հետ:
- «Երևան XXI»՝ ճարտարապետական-քաղաքաշինական հեռանկարներ՝ շարադրված ճարտարապետների կողմից՝ լուսավորության, բարեգործության, շինարարության լիցքով:
- Խմբագրական և ոչ խմբագրական հոդվածներ, մանրապատումներ, փոքրիկ առավանձան պատմություններ՝ վերը ներկայացված և այլ իմաստային ներբերումներով:

Հարքը կարելի է երկար շարունակել: Այստեղից՝ վստահաբար պետք է խոսել ոչ թե էսենցիալիզմի, այլ կառուցղղական ինքնության, ստեղծագործ «այլափոխական սահման» մասին¹:

Դիտարկելին ներկայացնել ոչ միայն իրեն փաստ (թեև փաստերի նման հայտնաբերումն արդեն իշխարժան է), այլև իրեն իմաստավորում, որ գորոյ խմբագրին տալիս է որոշակի «քաղաքացիական-քաղաքակրթական կեցվածք» (արժեն, թերևս, այս տեսակետից նայել գրողներից այսօր ակնկալվող քաղաքացիական կեցվածքին): Ընդ որում՝ ազգային կյանքի իմաստավորումները՝ որպես լրագրի խնդիր, հատկանշվում են քաղաքակրթական պարառումներով՝ առավելապես իրեն անհատական ջանք: Վերջին հանգամանքը տեղիք է տալիս հարցադրում անելու հայկական իրականության մեջ նման որոնումների շարունակության հնարավորության մասին: Այվազյանի «Հայությունն», այսքանով, անկախության շրջանի հայ մանուկի ուսումնասիրության տեսանկյունից ուշագրավ է նաև նման հարցադրում առթելով:

Դասագրքային դիտարկում է, որ պետական իշխանության բացակայության պայմաններում պետության գործառություններից շատերն իրենց վրա են վերցրել հայ մտավորականները: Այվածը վերաբերում է հատկապես գրողներին: «Հայության» պարագայում կարող է գայթակղություն առաջանալ նման համակարգվածություն ու ինքնակազմակերպում փնտրել մեկ այլ ոլորտում նույնպես՝ մամուլում: Սակայն ասվածից ակնհայտ է դառնում, որ «Հայություն» թերթը և անհատական-գրողական լուծում է, և նրա բովանդակային հաջողվածությունը (մասնավորապես ազգային-քաղաքակրթական հարցեր ներկայացնելիս) ոչ այնքան ընդունված իմաստով թերթի, որքան դրա հեղինակ-գրողի արժանիքն է՝ իհարկե, չնեմացնելով թերթի աշխատակիցների գործը և շեշտելով Այվազյան-հղացող-կազմակերպողի դերը Նետևաբար՝ նման ինքնահամակարգող «իմաստավորումների մամուլ» և առ-

¹ Տես նույն տեղում, էջ 15:

հասարակ որևէ հասարակական կառուցվածք ունենալու հնարավորության հարցը՝ կապված մտավոր, նյութական-առևտրային և այլ դժվարությունների հետ, ցավոք, գոնե տեսանելի ապագայում վերստին կապվում է միայն առանձին անհատներ ունենալու անհստակ հեռանկարի հետ:

Անփոփելով ասենք, որ ժուռանալիստիկայի հապճապությունը, փաստորեն, այստեղ հաղթահարվում է քաղաքակրթական չափման ակտիվացումով, որ, ըստ Էության, բնորոշ չէ լրագրին: Առանձին երևությների համակողմանի «արտադրությունը» լրագրում և «միայն որոշակի պայմաններում» ստացվող բաների արտադրության «պայմանների պաշտպանությունը» այս պարագային հաջողվում են, նախ, լրագրի համար ոչ օրինաչափ նպատակից ելնելով: «Դայության» նման լրագրի հրատարակումը թերևս հնարավոր է դառնում 90-ականներին բնորոշ սոցիալ-քաղաքական առանձնահատուկ պայմանների բերումով և Ա. Այվագյանի հեղինակային ջանքով:

**Զարուիի Սարգսյան
Մամուլի պատմության և տեսության
ամբիոնի հայցորդ**

**ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ԲԱՑԱՐԱՅՏՈՒՄԸ
ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆԻ ԴՐԱՊԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Անցյալ դարի 90-ականների սկզբին մամուլում տեղ գտած նյութերն առավելապես հրապարակախոսական բնույթի էին: Պատճառն, իհարկե, ժամանակն էր: «Դասարակությունների կյանքում լինում են պահեր, երբ հրապարակախոսությունն ու ժուռնալիստիկան այնքան են մերձենում, որ գրեթե նույնանում են: Այդպես է լինում մեծ հեղարեկումների նախօրյակին...»¹:

Այդ շրջանի մամուլի հրապարակումներում ժամանակի ընկալման և բացահայտման, երևույթները խորությամբ ընթացնելու և հետագա զարգացումները կռահելու յուրօրինակ կարողությամբ առանձնանում է գորոդ, հրապարակախոս Զորի Բալայանը:

1992 թվականի ամռանը «Գոլոս Արմենիի» թերթում տպագրվեց նրա «Կրակակետ» վերտառությամբ հոդվածաշարը, որը հետագայուն ամբողջացավ 1995-ին լույս տեսած «Դժոխք և դրախտ» գրքում:

Դրապարակախոսը դեռևս այդ ժամանակ շատ լավ գիտակցում էր, որ աղբեժանական քարոզչության ակտիվությունը միջազգային տեղեկատվական դաշտում լուրջ մարտահրավեր է հայկական երկու պետություններին (ՀՀ և ԼՂԴ): Աղբեժանական քարոզչամեքենան մեզնից ավելի լավ էր գործում, ավելի արագ՝ աշխարհին ներկայացնելով իրականության խեղաթյուրված պատկերը:

Դարաբաղյան պատերազմի կրակակենտերում հերոսանալուց բացի պակաս կարևոր չէր պայքարը տեղեկատվական դաշտում (սա էլ մի երկրորդ ճակատ է), ուր ստեղծված հասարակական կարծիքը շատ դեպքերում կարող է կանխորոշել հակամարտությունների ելքը: Տարբեր կերպ կարելի է այն անվանել այսօր՝ տեղեկատվական պատերազմ, մանիպուլյացիա, լոբբիստական աշխատանք, PR (հանրային կապեր), որը ծավալվում է ՁԼՍ-ների միջավայրում, միջազգային առյաններում:

¹ «Ժուռնալիստիկա (տեսության և պատմության հարցեր)», պրակ Ա. Երևան, 1999, էջ 10:

Յարկ է փաստել, որ այս խնդիրը տևական ժամանակ կարծես չեր ընկալվում որպես լուրջ մարտահրավեր մեր ազգային անվտանգությանը, և միայն 2008 թ. այն դիտարկվեց պետական մակարդակով¹:

«Մենք բոլորս էլ լավ էինք հասկանում, որ քանի դեռ պարտություն ենք կրում տեղեկատվական պատերազմում... կպարտվենք մարտի դաշտում և դիվանագիտական ճակատում»², - 90-ականների սկզբին գրում է Զորի Բալայանը՝ համոզված, որ ծշմարիտ են հայ ժողովրդի մեջ բարեկամ Քերոլայն Կոքսի խոսքերը. «Ամերիկան պարտվեց Վիետնամին, իսկ Խորհրդային Միությունը Աֆղանստանին ոչ այնքան մարտադաշտում, որքան հեռուստացույցների էկրաններին»³:

Յայսնի է, որ մարդու գիտակցությունը կյանքի երևույթները, իրադարձությունները ընկալում է պատկերների միջոցով: Այսօր հոգեբանները նշում են, որ եթե մեր կյանքը շարունակվի այսպիսի տեմպերով զարգանալ, ապա երևույթների կարծրատիպային ընկալումը կդառնա անխուսափելի, պարտադիր պայման:

Արցախյան պատերազմում աղորեջանական քարոզությունը հիմնվել և այսօր էլ հիմնվում է կարծրատիպեր ստեղծելու տեխնոլոգիայի վրա: Յասարակության գիտակցության մեջ կերպարներ ձևավորելով ու ներդնելով՝ այն նպատակառուղված ներգործում է մարդու հետագա վարքագժի, հանրության դիրքորոշման վրա⁴:

«Գոլսս Արմենիում» լույս տեսած հոդվածաշարում և դրա հիման վրա կազմված «Դժոխք և դրախտ» գրքում Բալայանը բացահայտում է աղորեջանական ապատեղեկատվության համատեքստում ստեղծված կարծրատիպերը, ցույց է տալիս դրանց պարզունակ, մտացածին լինելն ու կենդ հիմքերը: Գիրքը, միաժամանակ, Ղարաբաղյան անկոտրում ոգու պատմությունն է:

Ստեղծված կարծրատիպերը հիմնականում կապված են հայերի սոցիալ-հոգեբանական, բարոյական, էրնիկական բնութագրերի բացասական պատկերացումների հետ: Աղորեջանական քարոզամեքենան դրանք ստեղծում և տարածում է երկու ուղղություններով՝ սեփական

¹ Աղորեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը, Երևան, 2009, էջ 5:

² Զ. Բալայան, Դժոխք և դրախտ, Երևան, 1995, էջ 116:

³ Նոյն տեղում, էջ 117:

⁴ «Սոցիալական ստերեոտիպ» հասկացությունը առաջինը գործածել է ամերիկացի լուսաբող Ուլուտեր Լիպմանը իր «Պասարակական կարծիք» աշխատության մեջ: Ըստ Լիպմանի՝ ստերեոտիպերը «մարդու գլխում» աշխարհի կանոնակարգված, սխեմատիկ պատկերներ են, որոնք մարդու գիտակցության մեջ ի հայտ են գալիս ոչ թե սեփական փորձի կամ դիտման, այլ ստացված ինֆորմացիայ ազդեցության տակ:

Ստերեոտիպերի յորս ասպեկտներ է առանձնացնում Լիպմանը: Դրանք միշտ ավելի պարզ են, քան իրականությունը: Ենավորվում են ոչ թե սեփական փորձի, այլ հաղորդվող տեղեկատվության միջոցով: Բոլոր ստերեոտիպերն էլ քիչ թե շատ խարուսիկ են: Եվ վերջապես, դրանք շատ կենտունակ են: Նոյնիսկ, եթե մարդու համոզվում է, որ ստերեոտիպը չի համապատասխանում իրականությանը, միևնույն է, հակած է չհրաժարվել դրանից:

Երկրի ներսում և միջազգային համրության համար: Նպատակն էր ուղղողութել հանրային կարծիքը՝ հայերին ներկայացնելով որպես «ագրեսորներ», «անջատողականներ»: Այստեղ ցավով փաստենք միայն, որ մեթոդ գործում և բավական լավ արդյունք էր տալիս՝ հայկական կողմից տեղեկատվական լրության պայմաններում: Այսպես՝ 1992 թ., երբ ժմկյան համաձայնագրով արգելված հրթիռային սարքավորումներով սկսեցին գնդակոծել Հայումյանը, լեհի Կողքի խորհրդով հայկական կողմը, որպես ապացույց վերցնելով հրթիռի բեկորի մնացորդները, ավերված մանկական մարզական դպրոցի լուսանկարները, ուղևորվում է վերոպայի և Ամերիկայի երկրներ: Ահա թե ինչ է գորում ուղևորությանը մասնակից հրապարակախոսը. «... ամենուրեք մեզ ցույց էին տալիս փաստաթղթեր (գեկույցներ, հայտարարություններ, լուսանկարչական ալբոններ, այդ թվում նաև՝ Սունգայիթի, թերթերից ու ամսագրերից կտրված հատվածներ), որ ներկայացրել էին աղրբեջանական և թուրքական կողմերը: Ինձ ապշեցրեց այն, որ Եվրախորհրդարանի շենքում մեզ ցույց տվեցին մի լուսանկար, որտեղ պատկերված էր ջարդված գերեզմանաքար մահմեղական գերեզմանոցում»¹:

Իհարկե, աշխարհը չի տեսել իրականությունը, նա այդ մասին գիտի միայն Աղրբեջանի կողմից հրամցված պատրաստի պատկերների միջոցով, որտեղ հայերին վերագրվում են ճիշտ այն հատկանիշները, որոնք իրենց են բնորոշ: Յեղինակը ցավով արձանագրում է իրականությունը՝ միաժամանակ բացահայտելով աղրբեջանական քարոզչության եւրելունը. «Բացվում կողոպտել էին հայկական անծայրածիր գերեզմանոցը, թողնելով միայն մի քանի գերեզմանաքար, որպեսզի հեռուստատեսությանը անընդհատ ցույց տան դրամք: ... Հային նետել էին իններորդ հարկից, կենդանի-կենդանի այնել էին պառավ կնօք, բայց մի քանի գերեզմանաքար պահպանել են քարոզչության համար»²:

Ի՞նչ անել: «Պատասխանը մեկն էր՝ «Դժեշի դեմ հրեշ է հարկավոր»: Հայերը ստիպված էին պայքարել՝ պաշտպանելու համար իրենց հարազատներին և հայերները: Եվ «ագրեսորներ» էին կոչվում միայն այն պատճառով, որ «չեն ուզում պատմական Հայաստանի տարածքից, որը բոլշևիկները տվել էին բուրգերին, այսօր կրակեն Լեռնային Ղարաբաղի հայկական տների ու գերեզմանոցների վրա»³:

Աղրբեջանական քարոզամեթենայի ստեղծած մյուս ստերիտիպն այն է, որ հայերը ծեռք են բարձրացնում այնպիսի հողերի վրա, «որոնք առաջներում երբեք չեն մտել ԼՂԻՄ-ի տարածքի մեջ»⁴, և հայկական բանակի կողմից ազատագրված տարածքները ներկայացվում էին

¹ Նույն տեղում:

² Զ. Քալայան, Շժոխը և դրախտ, Երևան, 1995, էջ 118:

³ Նույն տեղում, էջ 402:

⁴ Նույն տեղում, էջ 160:

որպես «բռնազավթված» հողեր՝ դիմելով պատմության գեղձարարության: Այդպիսին էր ներկայացվում Լաշինը: Դրապարակախոսը նշում է հարցադրման պատմական անհեթերությունը: «Աշխարհը պետք է իմանա վերջապես, որ երբ Ստալինը Թուրքիայի ճնշման տակ Լեռնային Ղարաբաղը տվեց Ադրբեջանին, ապա այն ժամանակ ինքնավար մարզը դեռևս սահման ուներ Ղայաստանի հետ: Միայն իինգ տարի հետո, այսինքն 1926 թվականին, որպեսզի Լեռնային Ղարաբաղը Ղայաստանից բաժանվի, կազմավորվեց քրդական ազգային օկրուգ, որը բոլշևիկյան ճարպկությամբ անվանվեց «Կարմիր Բուրդիստան» և նույն ճարպկությամբ էլ չորս տարի հետո, 1930 թվականին, հանկարծ վերացվեց, կտրելով Ղարաբաղը Ղայաստանից»¹:

Աշխարհը դժվար թե իշեր այս պատմությունը, իսկ խորանալ և ստուգել ճշմարտությունը քչերը կցանկային, ավելի հեշտ եր հավատալ աղրբեջանական քարոզության ստեղծած պարզունակ ստերեոտիպերին: Լաշինը, սակայն, միակը չէ: Ղարաբաղյան հողերի հայկական պատկանելությունը Ժիտող աղրբեջանական ստերեոտիպի գաղափարախոսություն, դեպի այն ժամանակները, երբ Աթարութքը որոշում էր, որ միմիայն հայերի Վտարումն իրենց հայրենիքի կենանի քարտեզի վրայից կօգնի արագ լուծելու տարածքային վեճերը², իսկ Ստալինը՝ հայտարարում. «Հկա մարդ, չկա հարց: Հկա ժողովուրդ, չկա հարց»³:

Զ. Բալայանը նշում է, որ սրա հետ կապված նպաստավոր նախադրյալներ ստեղծվեցին հատկապես խորհրդային տարիներին. «Վաթսունական թվականների վերջին, երբ կուսակցական բռնապետությունը իրականում երկիրը հասցրեց ֆաշիզմի, անպատճ կերպով սկսեցին ոչնչացնել իին հուշարձանները: Այդ ժամանակ էր, որ բուլղողերի տակ առան Շուշիի ամբողջ հայկական թաղամասը... Տասը հազարից ավելի գերեզմաններ քարութան արեցին՝ բացելու համար այն ճանապարհը, որով հետո «Գրադ» էին տեղափոխում կրակակետ»: Ազերիները ոչնչացնում էին գերեզմանոցները՝ անպատկառորեն հայտարարելով, թե՝ «մեռածները խանգարում են ողջերին»⁴: Մինչդեռ պատճառն այն էր, որ Շուշին այդ ժամանակ առողջարանային քաղաք էր, ուր հանգստանալու էին գալիս երկրի բոլոր ծայրերից և, իհարկե, հետաքրքրվում հնություններով, որոնք ևս մեկ անգամ ապացուցում էին, որ հայերն այստեղ նոր չեն:

Նույնը տեղի էր ունենում հայկական բոլոր բնակավայրերում:

¹ Զ. Բալայան, էջ 160:

² Նույն տեղում, էջ 395:

³ Նույն տեղում, էջ 397:

⁴ Նույն տեղում, էջ 154:

Ստերեոտիպերը, որոնք սնվում են քարոզչամեքենայի կողմից, կատարում են նաև պաշտպանական գործառությ, ինչպիսիք են, օրինակ, երկրի գործող կարգերի պաշտպանությունը կամ վախի մթնոլորտի ստեղծումը այն ամենի հանդեպ, ինչը կարող է սպառնալ դրանց: Աղբեջանական քարոզչամեքենան այս նպատակով սեփական երկրում գործածելու ստերեոտիպեր է ստեղծել՝ հասարակությանը ներշնչելով կեղծ գաղափարներ և տալով ոչ ճիշտ բացատրություններ:

«Ագրեսորի» ստերեոտիպը լայն տարածում էր գտել նաև Աղբեջանում՝ ստեղծելով վախի և խուճապի մթնոլորտ ժողովրդի մեջ: «Պատերազմական անկառավարելի իրավիճակում այս իրադրությունը հենց իրենց դեմ է աշխատում՝ թուլատրելով սեփական քաղաքացւուն օգտվել առիթից և անարգել հանցագործության դիմել. մորթել իր երկու կանանցից ավագին՝ մեկնարաննելով, թե վախենում էր հանկարծ կինը հայերի ծեռքը ընկնի¹: Սակայն այստեղ ծնվում է անխուսափելի հարցը. եթե վախենում էր հայերի գաղանություններից, ապա ինչո՞ւ սպանեց տարեց կնոջը և ոչ՝ երիտասարդին:

Աղբեջանի կողմից ստեղծված մյուս ստերեոտիպը, որ քողազերծում է հրապարակախոս Զորի Բալայանը, նպատակ ունի սեփական ժողովրդի գիտակցության մեջ ներդնել «հայերի անխուսափելի պարտության» գաղափարը՝ հոգերանական ներգործելով և թուլացնելով հայկական բանակի ոգին: Այնպիսի տպակորություն է ստեղծվում սեփական երկրի ներսում, որ հայերը միասնական չեն, ավելին, նրանք կրվել չգիտեն, և Ղարաբաղում միայն արտասահմանցի վարձկաններ են կովում: «Մեր բոլորի գլուխն են մտցրել, թե պատմության մեջ հայերին միշտ էլ ջարդել են», - հրապարակախոսին այս մասին պատմում է մի աղբեջանցի գերի: Իսկ ազերիների բանակի գումարտակի ազգությամբ լեզգի հրամանատարը պատմում է, որ Աղբեջանում կարողացել են բոլորին համոզել, թե պատերազմը զուտ կրոնական է²: Նա հայտարարում է, որ իրենք բոլորը քարոզչության զոհեր են:

Այնուհետև ազգությամբ լեզգի հրամանատարը սկսում է նկարագրել Ֆիզուլու զորքերի մեջ մտնող ութ գումարտակները, որոնցից երկուսը բացառապես կազմված էին աֆղաններից, մեկը՝ բանտերից պատված քրեական հանցագործներից, մյուսների շարքերում կային ուկրաինացիներ և ռուսներ:

Դայերից թվային առումով բացարձակ առավելություն ունեցող աղբեջանական կողմը, սակայն, չի կարողացել ճեղքել պաշտպանական գիծը: Դրապարակախոսը տալիս է այս հարցի պատասխանը՝ միաժամանակ բացահայտելով աղբեջանական՝ կեղծիքի վրա հիմնված

¹ Զ. Բալայան, Դժոխք և դրախտ, Երևան, 1995, էջ 393:

² Նույն տեղում, էջ 26:

քարոզչության ողջ էռթյունը. «Բանն այն է, որ մենք՝ հայերս, մեր հողն ենք պաշտպանում, իսկ դուք՝ լեզգիներդ, ուրիշի հողը»¹:

Ղարաբաղյան ազատամարտի տարիներին Զորի Բալայանը պայքարել է այս (քարոզչական) ճակատում: Ադրբեջանի իշխանությունները մինչ այսօր փորձում են վրեժիննորի լինել Ղարաբաղի անկախության պայքարում ցուցաբերած մասնակցության համար՝ նրա նկատմամբ հետախուզում հայտարարելով Ինտերպոլով: Նրանք առիթը բաց չեն թողնում հեռագիր ուղարկել այն բոլոր երկրներ, ուր այցելում է հայ հրապարակախոսը: Իհարկե, Ինտերպոլը հանել է Զորի Բալայանի անունը փմտրվող անձանց ցուցակից՝ հասկանալով ադրբեջանական բողոքի քաղաքական դրդապատաճառները:

¹ Նույն տեղում, էջ 27:

**Քնարիկ Միրզոյան
ԵՊԴ արևելագիտության ֆակուլտետի
թյուրքագիտության ամբիոնի դոցենտ**

ՀՐԱՎՅԱ ՔՈՉԱՐԻ ԿՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Հրաչյա Քոչարը գրական ասպարեզ մտավ որպես հանրապետական թերթերի աշխատակից՝ մոխիրներից հառնող երկի տնտեսության, մշակույթի, պետական շինարարության բնագավառում ունեցած յուրաքանչյուր ծեռքբերում հասցնելով ընթերցողին, նրան տոգորելով հայրենասիրությամբ, երկի արարող աշխատավոր մարդկանց, մեծատաղանդ արկեստագետների նկատմամբ ջերմ սիրով ու հպարտությամբ:

Մեծ հայրենասերը սևոռուն ուշադրությամբ հետևում էր նոր կերտվող հասարակության զարգացման ընթացքին, մասնակցում կարևորագույն հարցերի քննարկմանը, հանդես գալիս ուշագրավ առաջարկություններով, քննադատական հոդվածներով՝ իր միտքն ու ծիրքը ծառայեցնելով նոր սերնդի կրթության ու հայրենասիրական դաստիարակության կարևորագույն գործին: Լավ է հասկանում ու գնահատում ուսուցչի դերն ու նշանակությունն ուսումնական գործընթացում: «Խոսք հարգանքի» հոդվածում երախտագիտությամբ ու ակնածանքով է խոսում իր ուսուցիչների մասին, բնութագրում նրանց ստեղծագործական միտքն ու տաղանդը, նվիրվածությունը սիրած աշխատանքին: «Ուսուցչությունը պահանջում է սեր, ոգևորություն, ներշնչում, այն բոլոր հոգեկան ու մտավոր հատկությունները, որինց ամբողջ գումարը միասին կարծ բարով կոչում են տաղանդ: Առանց տաղանդի չկա ստեղծագործություն, իսկ ուսուցչությունը ստեղծագործություն է, այն էլ բոլոր ստեղծագործություններից թերևս ամենաբարդը», - գրում է Հրաչյա Քոչարը:

ՀՊԴ քարտուղար եղած ժամանակ, ղեկավարելով երիտասարդ ստեղծագործողների բաժինը, Քոչարը մտահոգվում էր գրական նոր սերնդի խնդիրներով, ամեն կերպ օգնում կայանալու տաղանդավոր սկսնակներին, քանզի համոզված էր, որ նոր սերունդը գալիս է թարմացնելու գրական կյանքը, նորոգելու և իր վաստակն ավելացնելու եղածին՝ թերելով գրականության մեջ երիտասարդություն, թարմություն, ուժ, կորով, խիզախություն և զգացումների նոր երանգներ: Ըստ Քոչարի՝ «Գրողը վարպետության կարող է հասնել միայն այն դեպքում,

Եթք տքնում է և ծգտում ավելի ու ավելի լավ դարձնել իր գործը: Վատը սահմաններ ունի, գեղեցիկն ու լավն է, որ սահմաններ չունեն»:

Քոչարն ամենուր էր: Նա անընդհատ մարդկանց հետ էր, հանդիպումների ընթացքում զրուցում էր նրանց հետ, ոգևորվում հայ մարդու արարագործությամբ, գրում ակնարկներ ու հողվածներ: Այսօր գրչակից ընկերների հուշերում կարդում ենք նրա անհանգիստ բնակորության, հայի ու Հայաստանի, բնապահպանության, հատկապես Սևանա լճի ջրային պաշարների ճիշտ օգտագործման մտահոգության մասին: Նա գտնում էր, որ Հայաստանի բախտը մեծապես կախված է Սևանա լճի ճակատագրից, ու մենք դրանում համոզվեցինք՝ ցուրտ ու մուրտարիներին ապավինելով Սևանի արցունքներից քամվող լուսին ու ջերմությանը:

Երկրորդ աշխարհամարտի առաջին իսկ օրերից մարտական գործողություններին մասնակցելուն զուգընթաց նա հողվածներ, ակնարկներ է գրում խրամատներում իր կողքին կռվող գինակիցների, հայրենիքի համար մարտնչող անձնվեր մարտիկների մասին՝ նրանց մեջ տեսնելով իսկական հայրենասերներին, հայրենի հողի մոլեգին պաշտպաններին: Անվանի գրողի ռազմաճակատային ստեղծագործություններն ապագա հաղթանակի նկատմամբ հավատ են ներշնչում ընթերցողներին: Շատերի վկայությամբ՝ մարտի դաշտից Հրայքա Քոչարի ուղարկած հայրենաշունչ ակնարկներն ու պատմվածքներն ապրեցնում էին թիկունքում մաքառող մարդկանց՝ նրանց համակելով հաղթանակի հույսով:

«Նահանջի և պարտությունների այդ ժամը տարիներին Քոչարի ակնարկները բաղմալի դեսանտի նման իջնում էին մարդկանց հոգիներին, հույս ու վստահություն էին ճառագում այնտեղ, հաղորդում հեղինակի անսասան համոզվածությունը հաղթանակի նկատմամբ», - գրել է Ս. Կապուտիկյանը¹:

Հրայքա Քոչարի հրապարակախոսության մասին դրվատանքով է խոսում խորհրդային լրագորդ Գրիգորի Սագալը՝ իր 25 լավագույն հարցագրույցների շարքում հրատարակելով հայ գրողի հետ երևանում ունեցած գրույցը. «Քոչարի հրապարակախոսությունը հուզական է, զգացմունքային, այն թելադրված է ոչ միայն մտքով, այլև սրտով, տոգորված անկեղծությամբ», - նշում է Սագալը:

Քոչարի հրապարակախոսությանը բնորոշ է բարձր քաղաքացիականությունը, փաստական նյութի խորաքնին իմացությունն ու գիտական հանրամատչելի վերլուծությունը, ոճական բազմազանությունը և, անշուշտ, բանավիճելու կիրքը: Գրականագետ Ս. Աղաքարյանը գրում է.

¹ Ս. Կապուտիկյան, Յո. Քոչարը և իր ժամանակը, «Գրական հանդես», Ա, 2005, էջ 197:

² Г. Сагал, Двадцатая пять интервью, Изд-во полит. литературы, М., 1974, стр. 66-75.

«Ինձ հանդիպած մարդկանցից և ոչ ոք չուներ Քոչարի վերլուծությունների տրամաբանական ուժը և դատողությունների անկախությունը»¹: Ըստ Քոչարի՝ «իրապարակախոսի գործն իր ժամանակի պատմությունը գրելն է, օգնել ընթերցողին իմաստավորելու մարդու տեղը կյանքում, հետազոտել կարևորագույն խնդիրները, որ կանգնած են հասարակության առաջ»:

Նրա իրապարակախոսական հոդվածները միութենական ու հանրապետական մամուլում լույս տեսնելուց հետո սովորաբար արտատպվում էին արտասահմանյան հայկական թերթերում:

Մեծ ոգևորություն էր ապրում սփյուռքահայերի հայրենադարձությամբ՝ հավատացած լինելով ու հուսալով, որ իրականանում է իր վաղեմի երազանքը: Դայրենադարձների քարավանը դիմավորողների առաջին շարքերում էր՝ հիացած մեծագույն իրադարձությամբ: Նա գրում է. «Սկսվում է մեր ժողովրդի սփռված հատվածների վերադարձն ու Վերամիավորումը, և մենք այդ նշանավոր փաստի ականատեսներն ենք»²:

1961 թ. հունվարյան այցելությունները Երաք և Լիբանան, հանդիպումները, ելույթները սփյուռքի հայկական դպրոցներում ու մշակութային օջախներում իրապարակախոսի մեջ վերստին ալեկոնեցին հին ցավերը, և նա սկսեց մտորել հայապահպանության, սերունդների մեջ հայկականն ամրացնելու խնդիրների մասին: Այսպես, նա ճանապարհ բացեց դեպի 60-ականներ, դեպի ազգային զարթոնք՝ 1965 թ. իրադարձությունները: Խսկ դեռևս 1964 թ. մտածում էր եղեռնի 50-ամյակի նշման անհրաժեշտության ու կարևորության մասին: Կյանքի վերջին տարիներին նա գրում է նի քանի հոդվածներ, գրախոսում Դայոց մեծ ողբերգության թեմայով լույս տեսած գրքեր, աշխատում իր կարապի երգը դարձած «Սպիտակ գիրքը» ժողովածուի վրա:

Դանրապետության թերթերի ու ամսագրերի խմբագրությունները Հր. Քոչարին էին միշտ դիմում իրատապ, հորելյանական, ազգային, գրական ու գիտական և այլ թեմաներով հոդվածներ գրելու խնդրանքով: Նույն թեմայի շուրջ միևնույն օրվա (ապրիլի 24) կապակցությամբ վեց տարրեր հոդված է գրել՝ ոչ մեկում չունենալով մտքի կրկնություն:

Այսօր մենք ապրում ենք նորացող հասարակարգում: Փոխվել ու փոխվում են շատ արժեքներ, վերագնահատվում հները: Հր. Քոչարի իրապարակախոսությունը կմնա որպես հայ գրականության մեջ ամենահջողվածներից ու ամենապահանջվածներից, որովհետև որանք իր երկրի հողին ու ջրին, քարին ու թփին, մարդու մրմունքին ու երգին անկեղծորեն նվիրված, նրա ճակատագրով մտահոգ մտավորականի զգացմունքների ու ապրումների արգասիքն են:

¹ Ս. Աղարաբյան, 20-րդ դարի հայ գրականության գուգահեռականներում, Երևան, 1983, էջ 409:

² Հր. Քոչար, Երկեր, հու. 6, էջ 460

**Տաթև Դարուբյունյան
Մամուլի պատմության և
տեսության ամքիննի ասպիրանտ**

ԳԱՌԵՆԻԿ ԱՆԱՆՅԱՍԻ ԴՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Գիտնական, գրականագետ, մանկավարժ, հասարակական գործիչ, հրապարակախոս. թվարկված բոլոր կոչումների ներքո այս պարագայում կարելի է տեսնել մեկ հիմնական բնութագրի՝ մարդ-անհատականություն:

Գառնիկ Անանյանը ծնվել է 1934 թ. հուլիսի 22-ին Խջևան քաղաքում: Ավարտելով տեղի միջնակարգ դպրոցը՝ 1953 թ. ընդունվել և 1958 թ. գերազանցության դիմումով ավարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը: Գ. Անանյանի տարերքը գիտությունն էր: Նա բողոքում է շատերի համար բաղձակի, բարեկեցիկ կյանք ու բարձր պաշտոններ խոստացող կուսակցական աշխատանքն ու 1961 թ. ընդունվում ԵՊՀ ասպիրանտուրա: Այսպես սկիզբ է դրվում նրա գիտական բեղուն գործունեությանը: «Կերականգնենք մեր հիշողությունը» (Երևան, 2000), «Արդի հայ մանուկի լույսն ու ստվերը» (Երևան, 2001), «Միջնորդ Աստուծոյ և մարդկան» (Երևան, 2006), «Կերաղարձ ինքներս մեզ կամ ինքնության որոնումներ» (Երևան, 2009) սրանք այն ժողովածուներն են, որտեղ տպագրված են Գառնիկ Անանյանի հրապարակախոսական հոդվածները: «Գրական թերթ»-ի, 1989-ի փետրվարի 10-ի համարում տպագրված «Նիկոլ Ալբայան կամ վերականգնենք մեր հիշողությունը» վերնագրով հոդվածում հրապարակախոսը գրում է. «Ծանր բան է հիշողության կորուստը: Եթե դա սոսկ անհատներին վիճակված հիվանդություն է, ափսոսանքի ու ցավակցության զգացում է առաջացնում ընդամենը: Սակայն լինում է հիշողության պարտադրված կորուստ. սա արդեն հիդ է Վտանգներով ոչ միայն անհատների, այլև ողջ հասարակության համար: «Դասարակական սկլերոզ» սերունդների հիշողությունից ջնջում է դեմքեր, դեպքեր, երևույթներ, պատմական շրջաններ, սկիզբ են առնում ավերածությունները մարդկանց հոգիներում: Այսպես է ստեղծվում բարոյական այն մթնոլորտը, որ չի հանդուրժում ոչ ազնվություն, ոչ էլ արդարություն»: Գ. Անանյանը հանգանանալից ներկայացնում է հասարակական-քաղաքական մեծ գործչի անցած ուղին, նրա կատարած բարեփոխումները, մտորումները կրթության, մատադսերնից դաստիարակության և Դայաստանի հետագա ճակատագրի մասին: Նա այնպիսի դիպուկ նկարագրություններով է կենդանացնում

Ն. Աղբայլան գործչի պատկերը, որ ակամայից թվում է, թե Աղբայլանը մեր ժամանակակիցն է ու ստեղծագործում և գործում է հենց մեր ժամանակներում:

Կրթության և գիտության հարցերը ևս հուզել են Անանյան հրապարակախոսությունը: «Երեկոյան Երևան»-ի 1992-ի մարտի 12-ի համարում «Նամակ 77 ԳԽ Կրթության և մշակույթի հանձնաժողովի նախագահ պարոն Ռաֆայել Ղազարյանին» հրապարակախոսական հոդվածում Գ. Անանյանը կարծիք է հայտնում, որ դպրոցի և բուհի միջև ոչ մի օղակ չպետք է լինի, նախարարությանը պետք է ազատել միջնորդի (թեկուզ և ոչ կասկածելի) տիհած պարտականությունից: Խաթարված իրականության մեջ նրա ոչ մի օղակ չի կարող անխարթ աշխատել և գերազնիվ մարդու կեցվածք ընդունելը զավեշտական կլիներ, եթե դրա հետևանքները չլինեին ողբերգական: Թերևս այս խոսքերի ճշմարտացիության մեջ համոզվում ենք ամեն անգամ, երբ հայացք ենք նետում իրականացվող կրթական բարեփոխումների ընթացքին ու հայաստանյան կրթահամակարգում տիրող իրավիճակին:

Գառնիկ Անանյանի հրապարակախոսական հետաքրքրությունները բազմազան են. Կրթության, գրականության հարցերը քննելուն զուգահեռ նա անդրադառնում է նաև քաղաքական թեմաների: Օրինակ՝ «Ազգ»-ի 1992-ի նոյեմբերի 25-ի, «Երկիր» օրաթերթի 1992-ի № 237 համարներում տպագրված «Դիմա» էլ լաենք...» հոդվածում Գ. Անանյանը խիստ տոնով է խոսում բոլոր այն դիտարկումների մասին, որոնք կասկածի տակ են դնում Արցախի ազատ ինքնորոշման իրավունքը: Արցախի հողերի Վերադարձի հետ կապված ցանկացած հիվանդագին հայտարարության նա տախս է սպառիչ և խիստ պատասխան. «Արցախի ճակատագիրը պետք է վճռեն իրենք՝ արցախցիները: Ով չի հավատում Արցախի ու հայության հաղթանակին, թող հեռանա ասպարեզից ինքնակամ, քանի դեռ ուշ չէ: Արցախի պարտությունը Դայաստանի կորստյան ահազանգն է, բոլոր նրանք, ովքեր հնկի գալու կոչեր են անում, պետք է դիտվեն իրեւ նորահայտ թալեաթներ...»: Սի առիթով ԴՅԴ-ի կազմակերպած միջոցառումն ժամանակ, երբ Անանյանը մտավորականության անունից «Արցախյան շարժման խորհուրդները» խորագրով ելույթ էր ունենում, նշում է. «Դպարտություն է ներշնչում Արցախյան հերոսամարտը: Դպարտանանը մեր հաղթանակով, հպարտանանք, բայց և ի լուր աշխարհի հնչեցնենք մեր ծայնը, մեր պահանջն ու բողոքը, ինչու չէ խնդրանք նաև. աշխարհի հզորներ, մի պարտադրեք մեզ նման հաղթանակներ, մի պարտադրեք, մենք գերադասում ենք հաշտ ու խաղաղ հարևանությունը...»:

«Դպրոց չունենք, բանակ էլ չենք ունենա», հոդվածը տպագրվել է «Դայաստանի Դանրապետությունում», 1999-ի 92, 94-95 համարներում: Այստեղ հրապարակախոսը նկատում է այն օրինաչափությունը, որ 20-

րդ դարի վերջը հայերիս համար զարմանալիորեն նման է դարասկզբին. «Հայաստանը կրկին հայտնվել է մեծ տերությունների եսասիրական շահերի բախման խաչմերուկում՝ դրանից բխող հետևանքներով. անկախ պետականության վերականգնման հոլուսեր և հուսախարություններ, պատերազմ և ցեղասպանություն, գաղթականություն և զանգվածային արտագաղթ, սովոր ու համաճարակներ, մի խոսքով՝ արդեն որերորդ անգամ մեր գլխին կախվել է լինել-չլինելու աղետալի հարցականը, որ այս դեպքում ոչ այնքան Ֆիզիկական, որքան հոգեորդ-բարոյական կորուստների սպառնալիքներով է հոյի»: Այս խոսքերը թերևս 21-րդ դարում էլ են արդիական:

Անանյանի հրապարակախոսական հոդվածների մի գգալի հատված նվիրված է հայաստանյան ԶԼՍ-ների համակարգում արդի փուլում գոյություն ունեցող հիմնախնդիրներին և զլրբալ տեղեկատվության՝ հասարակության վրա ազդեցության հարցերին:


«Աղյուկ և իրականություն» հոդվածը, որ տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն»-ում, 2000 թ., № 25-ում քննում է արդի հայ լրատվամիջոցների համակարգը, որտեղ, թերևս, իրավիճակը հուսադրող չէ: Անանյանը նշում է, որ ինֆորմացիոն շուկայի ծևագործան դժվարին ընթացքը դրսնորում է նաև անցանկալի իրողություններ, պարզապես կորուստներ, որոնց մի գգալի մասը տնտեսական-քաղաքան անկանոն, երբեմն էլ եղծված զարգացումներով է պայմանավորված. «Ոչ ոք չի Ժխտի, կարծում եմ, որ մամուլի վրա Վայրենի ճնշումներին փոխարինել է վայրենի մի «ազատություն», որ անկախ լրատվության ծևագործանը խանգարում է նույնքան, որքան և առաջինը: Մի դեպքում դա հետևանք է լրատվամիջոցների իրական տերերի կամքի դրսնորման, որը ուժի տակ է տալիս ժուռնալիստական էթիկայի նորմերը՝ կանգ չառնելով սևը սպիտակ և հակառակը ներկայացնելու չափ իրականությունը կեղծելու, սադրիչ ինֆորմացիա տարածելու առօք, մյուս կողմից՝ ժուռնալիստական գործի մասին թյուր ընթրունումների»: Մյուս հիմնախնդիրը, որը ըստ Գ. Անանյանի, ծառացած է հայկական ժուռնալիստիկայի առօք, ինֆորմացիոն արտադրությունը արևմտյան չափանիշներին մոտեցնելն է: Այս երրեք չի լուծվի, ինչպես հեղինակն է նշում, ժուռնալիստական «կորպուսը» մասնագիտական կրթություն չունեցողներով և ընտանեկան անձնակազմով լրացնելու դեպքում: Յեղինակը կրկին կանխատեսումներ է անում, որոնց ճշմարտության մեջ այսօր համոզվում ենք հայ հասարակության որակը, մամուլի ազատության աստիճանը աչքի առաջ ունենալով. «Քանի դեռ մեզանում պետական այթերը զբաղված են տնտեսական ոլորտների վերաբաշխման, իշխանական լծակները պահելու խնդիրներով, մենք կունենանք այն հասարակությունը, ինչ ունենք...»:

«Համաշխարհայնացումը և տեղեկատվությունը» հոդվածում խոսելով տեղեկատվության տարածման ֆենոմենի մասին, Գ. Անանյանը մեջբերում է Չարենցի այն խոսքերը, թե աշխարհը դարձել է փոքրիկ մի փողոց, այնքան փոքրիկ, որ հեռու-հեռավոր Պեկինից մի Չիկ Ֆու կառող է ծեռքը մեկնել դեպի Նորք և ասել՝ բարե, բանվոր Պողոս: Մեծ երազողի մտքով անգամ չէր կարող անցնել, որ իր եղերական վախճանից մեկ-Երկու տասնամյակ հետո իր մտքի թոփշքը դառնալու է ուալ իրականություն և նույն այդ Չիկ Ֆուն կարող է Պեկինից պարզապես վայրկյանների ընթացքում բարեւել նորքեցի բանվոր, այժմ գործազուրկ Պողոսին: Ընդունելով հանդերձ գլորալ տեղեկատվության տարածման առավելությունները, իրապարակախոսը չի խուսափում նշել տեղեկատվության բերած բացասական հետևանքները: Նա գրում է: «Հայտնվել ենք մեր Երկարածից ճանապարհի բերևս ամենավտանգավոր հանգրվանում. դարեր շարունակ մեզ ոչնչացրել են ֆիզիկապես, իսկ հիմա անկատելիորեն փոխվում է մեր տեսակը, և դրանում մեծ է գլորալ տեղեկատվության դերը»:

«Տեղեկատվական պատերազմ» իրապարակախոսական հոդվածում Գ. Անանյանը քննում է 21-րդ դարում լրջագույն վտանգ ներկայացնող «տեղեկատվական պատերազմ» Երևույթին և ահազանգում. «Տեղեկատվական-հոգեբանական պատերազմը շարունակվում է, ովքեր չեն գիտակցում դրա կարևորությունն ու սպառնալիքները, իրենց դատապարտում են հայտնվելու պարտվողների շարքում»:

«Ազգային ինքնությունը ժամանակի հոլովույթում» իրապարակման մեջ Անանյանը քննության է ենթարկում հայ մարդու՝ ինքնության փոփոխման վտանգի առջև կանգնած լինելու փաստը և հոդվածը եղրափակում հետևյալ հետորական հարցադրմամբ. «5-րդ դարում մի Սովետ Խորենացի աշխարհին պիտի ցույց տար՝ ով ենք մենք, որտեղից ենք գալիս: 19-րդ դարում մի Խաչատուր Աբովյան «Հայոց մեծ ազգին չե՞ք ծանաչում» հարցադրունով պետք է հաստատեր մեր արքանցման, մեր ինքնագիտակցության, հարատևելու մեր կամքը: 20-րդ դարում մի Եղիշե Չարենց նորից պիտի կախեր հարցադրումը՝ ո՞վ ենք մենք, որտեղից ենք գալիս, ու՞ր ենք գնում՝ պատասխանի փնտրութքը պարտադրելով ժամանակակիցներին ու հետնորդներին: Ո՞վ է լինելու 21-րդ դարի մարզարեն»:


Դրապարակախոսի այս խոսքերը թերևս մեր ժամանակների գլխավոր հարցադրումներն են: Ով կլինի 21-րդ դարի մարզարեն, ցույց կտան ժամանակն ու սերունդների գործունեությունը: Մի բան հստակ է՝ Գառնիկ Անանյանի հրապարակախոսությունն այն ուղեցույցն է, որ օգնում է սերունդներին՝ կողմնորոշվելու ժամանակի բարդ իրադարձությունների հոլովույթում:



ՅԵՌՈՒՍԱՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ

ՅԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ



Մուշեղ Չովսեփյան
Ուժիոհեռուստատեսային ժուռնալիստիկայի
ամբիոնի վարիչ, ք. գ. դ., պրոֆեսոր

ՄԱՅՐԵՆԻ ՊԱՐՊԱԼՄԱՆ ԵՎ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԱՌԱՋԱՎԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՅ ՔԵՌՈՒՏԱՎՈԱԴԻՇԵՐՈՒՄ

Դայաստանի Դանրապետության հեռուստադաշտի ձևավորման առաջին տարիներից օրախնդիր դարձավ մայրենի լեզվի անաղարտության, եթերային խոսքի մաքրության պահպանման ու մատուցման հարցը: Մայրենիի եթերային անաղարտության պահպումը հիմնականում կապված էր նորաստեղծ հեռուստաընկերությունների լրագրողական կազմի և հեռուստաշուկայում նորություն հանդիսացող նոր տիպի նախագծերի, հեղինակային և ժամանցային ծրագրերի ձևավորմամբ: Ինչպիսի՞ն է մայրենիի պահպանման իրական վիճակը հայկական հեռուստաերերում: Հարցի պատասխանը կարելի է ստանալ՝ ուսումնասիրելով հեռուստաընկերությունների կողմից իրականացվող ծրագրային քաղաքանության հիմնական ուղղությունները:

Արդի փուլում հայաստանյան հեռուստաերերում մայրենիի պահպանումն ու մատուցումը շահագոգի կողմերի միջև դարձել է բուռն քննարկման առարկա: Խնդիրը ոչ միայն մայրենի լեզվի անաղարտության հարցն է, այլև հայերենի որպես ազգային անվտանգության երաշխիքներից մեկի նկատմամբ սպառնացող վտանգի առկայությունը, որը տեղեկատվական գլոբալացման մեր ժամանակներում ծեռք է բերել հասարակական հնչեղություն և դարձել հրատապ լուծում պահանջող հիմնախնդիր: Մշակութային գլոբալիզացիայի արդի փուլում, եթե «աշխարհի հզորների» կողմից տարվում է ազգային մշակույթների համահարթեցման և օտար արժեհամակարգի ներդրման ու պարտադրման քաղաքականություն, հայերենի պահպանման և փոխանցման անհրաժեշտությունն ավելի է մեծացել: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը, որը բերեց զանգվածային տեղեկատվական միջոցների հնարավորությունների մեծացման, բոլոյլ տվյալ լրատվամիջոցներին լայնորեն օգտագործելու այդ առավելությունները, մշակել ու լսարանը զբաղեցնելու նոր ծեր և մոտեցումներ: Այդ հնարավորություններից աննաևն չմնացին նաև ՀՅ հեռուստաընկերությունները, որոնք ժամանակի պահանջներին համահունչ, մշակեցին և կյանքի կոչեցին ծրա-

գրային նոր քաղաքականություն: Այն դրական միտումների հետ մեկ-
տեղ, բերեց նաև որոշ բացասական դրսնորումներ:

Դայերենական հեռուստաղլորտի պատասխանատուների, հատկա-
պես հեռուստաընկերությունների ղեկավարների «թեր» ծեռօպվ բակա-
յին, ժարգոնային լեզուն անարգել «ներխուժեց» հայրենական եթեր,
գրական հայերենին թողնելով տեղեկատվական և գիտահանրամատչե-
լի բնույթի հաղորդումների պատրաստումն ու մատուցումը: Մեծ չափե-
րի հասնող օտարահունչ և օտարաբանություն պարունակող բառապա-
շարով «թույն» և «կարգին» հաղորդումները բառացիորեն ողողեցին
մեր եթերը և ամեն օր միջինավոր հեռուստադիտողների հայեցի լեզ-
վամտածողությունից դուրս են մղում մեր լեզվի ընկալման և մատուց-
ման ուսկեղենիկ շերտերը:

Պետք է նշել, որ հայերենը օրենսդրորեն երբեք այնպես պաշտ-
պանված չի եղել, ինչպես հիմա: Մեզանում հայերենը Դայաստանի
Դանրապետության պետական, պաշտոնական լեզվի կարգավիճակով
արտացոլված է ինչպես «Լեզվի մասին» ՀՀ օրենքում, «Դեռուստատե-
սության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում, այնպես էլ՝ ՀՀ Սահմանա-
դրությունում: Չնայած բոլոր վերը նշված օրենսդրական ակտերում
ամրագրված է հայերենի՝ որպես պետական լեզվի գերակայության և
պետության կողմից պաշտպանվածության մասին, այնուամենայնիվ
ամեն օր ականատես ենք լինում մայրենիի եթերային աղավաղմանն ու
«ավերածություններին», որն այդպես էլ մնում է անպատճի: Դայաս-
տանի Դանրապետությունում գործող ոչ մի հեռուստաընկերություն կամ
ռադիոկայան մինչ օրս չի պատժվել մայրենիի եթերային խոսքի
աղավաղման և անկիրք ձևով մատուցելու համար:

Դանրապետության լեկտրոնային լրատվաշուկայում գրագետ և
կիրք խոսքով հիմնականում առանձնանում են «Դանրային» և «Շողա-
կաբ» հեռուստաընկերությունները, որոնք հեռուստալսարամնին կրթող,
ուսուցանող, դաստիարակող, լրատվամիջոցներ են և ունեն բավական
մեծ և կայուն լսարան, ինչպես Դայաստանում, իսկ «Շ1»-ի պարագա-
յում նաև՝ արտերկրությ: Մրան հակառակ՝ ՀՀ-ում գործող մասնավոր
հեռուստաընկերությունների որոշ մասը, որոնք վերջին տարիներին
ծեռք բերեցին նաև մետրային և արբանյակային հեռարձակում, ոչ
միայն չշտկեցին և չբարձրացրին իրենց եթերային խոսքի կուլտուրան,
այլև տարաբնույթ ժամանցային հաղորդումների և սերիալների միջո-
ցով իրենց իսկ կողմից աղավաղմած հայերեն սկսեցին գովազդել,
բազմացնել և մասսայականացնել նաև արտերկրությ, սփյուռքի մեր
հայրենակիցներին հաղորդակից դարձնելով բակային, ժարգոնային
բառապաշարի բոլոր հնարավոր «նրբություններին»:

Ներկա փոլում հայաստանյան հեռուստալրագրողների լեզուն
կարելի է բնութագրել միևնույն հատկանիշներով: Եթերում շատ են

հնչում գանազան քերականական կաղապարներ: Նեռուստալրագրող-ների խոսքի մեջ հաճախ կարելի է հանդիպել նաև «խրատական» դանդաղախոսության, որն ավելի շուտ խոսում է տվյալ լրագրողի լեզվական ցածր մակարդակի, քան քննարկվող նյութի իմացության մասին: Նույնիսկ խոսակցական, առօրյա արտահայտությունները հեռուստաեթերում պահանջում են յուրահատուկ մոտեցում: Անգամ յուրաքանչյուր ժամը յուրովի մատուցելու համար այն պետք է գրել հանգատախոսան լեզվով: Այսօր մեր լուրերի հաղորդման և առհասարակ այլ ժամրերի մեծագույն թերությունն այն է, որ չեն գործածում սահմանափակ, ժամրի առանձնահատկություններով պայմանավորված բառապաշար: Երբեմն, ասենք, «շիկահերի» փոխարեն գործածում են «քաղ դեղնավուն մազերով մարդ», այսինքն՝ արիեստականորեն բարդացնում են խոսքի ընկալումը: Նեռուստաեթերում առավել գործածական պետք է լինեն բայական պարզ կազմությունները (կարծիք հայտնել-դիտարկել, գնումներ կատարել-գնել, մասնակցություն ունենալ-մասնակցել և այլն), ինչպես նաև դերբայական դարձվածով պարզ նախադասությունները:

Եթերային խոսքի «Քարաներ» հաճախ ենք նկատում հանգատրաստից եթերում հայտնվողների ու մեզ «քարի լույս» կամ «քարի երեկո» մաղրողների խոսքում, որոնք, որպես կանոն, հայրենական շոութիզնեսի հայտնի ներկայացուցիչներն են: Այս միտումը նկատվում է նույնիսկ ուղիղ եթերի պայմաններում: Երաժշտական, ժամանցային շոու հաղորդումների ստեղծագործական խմբերը նույնիսկ հարկ չեն համարում պատշաճ նախապատրաստվել եթերին, անհրաժեշտ տեղեկատվություն հավաքել և խելամիտ չափաբաժնով դրանք մատուցել լսարանին: Հաճախ նմանատիպ հաղորդում վարողները այնպիսի հարցեր են տալիս հյուրերին, որոնց պատասխանները իրենք ել ղժվարությամբ կարտաբերեին, կամ այնպիսի պահվածք են որդեգրում, որ հյուրին դնում են անհարմար վիճակի մեջ:

Դեռևս անկախության առաջին տարիներից մեր հեռուստառադիոների պատասխանատունները և պատկան մարմինները պարբերաբար հետևել են հեռուստառադիոհաղորդումների լեզվին, նրա դրսնորման առանձնահատկություններին, հավաքել լրագրողների եթերային խոսքի սխալներն ու ամեն տարի անփոփելով՝ այն տրամադրել հեռուստառադիոնկերությունների տնօրեններին ու համապատասխան խմբագրություններին: Դամաձայն այդ դիտարկումների՝ անաղարտ հայերենով են մատուցվում հիմնականում Դանրային հեռուստատեսության լրատվական և գիտահանրամատչելի բնույթի հաղորդումները, որոնց հաջորդում են «Արմենուզ», «Ծողակաթ», «Ծանթ», «Երկիր մեղիա» հեռուստաընկերությունների նմանատիպ հաղորդումները: Մյուս հեռուստաընկերությունների մոտ տարեցտարի թեև պակասում են լեզվական անհար-

թություններն ու մեղանչումները, բայց շարունակում են եթերում հնչել իմաստ չարտահայտող երկար-բարձր նախադասություններն ու արտահայտությունները: Դատկապես լեզվական մեղանչումներով և թերություններով են եթեր հեռարձակվում ժամանցային, առավոտյան երաժշտական-ժամանցային և շոու ծրագրերը: Դեռուստատեսային հաղորդումների բազմազանությունը, ցավոք, բազմաբովանդակ և հայեցի չփառքը մեր հեռուստաեթերը:

Արդի փուլում հայաստանյան հեռուստաեթերում մեծ թիվ են կազմում նարդկային ողբերգությունների, ավագակային հարձակումների, քստմնեի, արյունայի սպանությունների, կտտանքների, ինքնասպանությունների, անչափահասներին սպանության մղելու բացահայտ տեսարանները: Դեռուստաեթերում սովորական են դարձել բակային, ժարգոնային «հարուստ» բառապաշար օգտագործող բազմաթիվ շոու և հումորային ծրագրերը, սերիալները և ժամանցային հաղորդումները: Դայրենական հեռուստաշնկերությունների եթերից կարծես թե Վերացել է կրթադաստիարակչական գործառույթի իրականացման առաքելությունը, որը ենթադրում է բարու, գեղեցիկի ջարովզություն: Մինչեւ Վերջինս մեր հեռուստաեթերում արհամարհվածների շարքին է դասվում:

Դայաստանյան երիտասարդ հեռուստալսարանի վրա հատկապես բացասաբար են ազդում ցածրաճաշակ ժամանցային հաղորդումներն ու հեռուստասերիալների անվերջանալի շարքերը:

Իսկ ինչ վերաբերում է հայաստանյան ռադիոշուկայում գործող մասնավոր ռադիոընկերություններին, որոնք հիմնականում աշխատում են ուղիղ եթերի պայմաններում և աննիջական ինտերակտիվ կապի մեջ են երիտասարդական լսարանի հետ, մայրենի անաղարտության պահպանումն ու նատուրումը նրանց համար օրակարգային դարձավ հիմնադրման առաջին տարիներից: Իհարկե, աննիջական կապը լսարանի հետ ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր: Դայաստանյան մասնավոր ռադիոընկերություններում մայրենի լեզվի անաղարտության, եթերային խոսքի մաքրության հարցը հրատապ դարձավ, եթե ռադիոկայանների կողմից եթեր հեռարձակվեցին մի քանի տասնյակ երաժշտական, ժամանցային բնույթի հեղինակային հաղորդաշարեր և ծրագրեր: Եթերում հայտնվեցին այնպիսի ծրագրավարներ և լրագրողներ, որոնք, չունենալով հայերենի բավարար պատրաստվածություն, եթերային խոսքի կուլտուրա, ռադիոեթերը լցրին օտարահունչ բառակապակցություններով ու ժարգոնային-խոսակցական արտահայտություններով; Այդ միտումները աստիճանաբար տիրապետող դարձան հայաստանյան մասնավոր ռադիոեթերում, հետին պլան մղելով մայրենի իմացությունն ու եթերային խոսքի կուլտուրան: Օտարամոլության արդյունքում բավականին արագ և անհաջող ընդօրինակ-

վեց ամերիկյան «սլենգային խոսքը», ոռւսական ժարգոնային-խոսակցական ոճը, որը եթերն իջեցրեց լեզվառնական տեսակետից մի անորոշ լեզվախառնուրդի:

Դայաստանյան ռադիոչուկայում իր գրագետ և կիրթ խոսքով հիմնականում առանձնանում է ՀՀ հանրային ռադիոն, որը միշտ էլ եղել է լսարանին կրթող, ուսուցանող, ամենահուսալի լրատվամիջոցը, սրան հակառակ մասնավոր ռադիոընկերություններից շատերը խոսում են մի լեզվով, որում դժվար է առանձնացնել հայերենը, անգլերենը և ուսերենը:

Սասնավոր ռադիոընկերությունների եթերում, հատկապես, ժամանացային հաղորդումներում խապար մոռացվել է հայերենի շեշտը: Շեշտը դրվում է բարի ցանկացած վանկի վրա, բայց ոչ վերջինի: Ներկայացնեն շատ գործածվող բառերից մի քանիսը՝ «տրանսպորտ», «Ոո՛քերտ», «Գագիկ», և հենց այստեղ է, որ օգնության է զայիս ամենափրկիչ «և այլն»-ը: Եթերում աղավաղված հնչում են նաև մի շարք այլ բառեր՝ «նախագա» կամ «նախագան», «համբյուր», «Լյավ», «ողջյուն»: Մի հսկա խումբ են կազմում օտար բառերի աղավաղումները, որոնք մտնելով մեր լեզու, փոխանակ ենթարկվեն մեր լեզվի հնչյունաբանական օրենքներին, եթերում հնչում են օտար առողջանությամբ: Դենց «ռադիո» բառը, որի «դ»-ն գրեթե միշտ «ձ» է հնչում: Ինչպես նաև բազում այլ բառեր՝ «ֆակուլտետ», «մենտալիթետ», «իմունիթետ», «ծեխսովլաստ», «իմծելեկտուալ», «ռեյծինգ»: Խսկ երբ ճանաչված ռադիոկայանի հեղինակային հաղորդում վարող լրագրողին հարցորդնք, թե չի՞ կարելի արդյոք այդ բառերը հնչեցնել հայերեն առողջանությամբ, պատասխանեց, թե այդ դեպքում բառը գեղեցիկ չի հնչի...

Սասնավոր ռադիոընկերությունների եթերային լեզուն դեռևս «անմշակ» է, եթերում չի պահպանվում մայրենի լեզվի անաղարտությունը, և որքան էլ «ոյլուրամարս» լինի անմիջական խոսքը, չափոր է մոռանալ, որ եթերում հնչող խոսքը պետք է լինի գրագետ և հասկանալի:

Չնայած մայրենիի նկատմամբ կիրառված «ավերածություններին», այնուամենայնիվ Դայաստանի էլեկտրոնային զանգվածային լրատվամիջոցների շուկայում վերջին տարիներին ծևավորվեցին և արմատավորվեցին հայերենի պահպանման և մատուցման նոր մոտեցումներ ու դրսնորումներ: Դանդաղորեն եթերից դուրս են մնվում օտարահունչ ոճը, խոսակցական և ժարգոնային բառակապակցությունները: Այնուհանդերձ՝ հայաստանյան հեռուստառադիոընկերությունները դեռևս շատ անելիքներ ունեն մայրենիով անաղարտ եթերի հեռարձակման, լեզվի իմացության և կիրառման որակական աստիճանը ապահովելու հարցում:

Անակիտ Մենեմշյան
Մամուլի պատմության և տեսության
ամրիոնի դոցենտ, ք. գ. թ.

ԱՐԺԵՔՆԵՐ ԷԿՐԱՆԻՑ

Դաղորդակցության ոլորտի ֆրանժսացի տեսաբանների պնդմամբ՝
12 տարեկանից բարձր յուրաքանչյուր մարդ օրական միջինը երեք ու
կես ժամ անցկացնում է հեռուստացույցի առջև։ Մտացվում է 1200
ժամից ավելի կամ գրեթե 2 ամիս տարվա ընթացքում։

Ոմանց համար էլեկտրոնային այս լրատվամիջոցը մեծ պատուհան է՝ ուղղված աշխարհին, և առանց նրա հնարավոր չէ պատկերացնել ժամանակակից մարդուն։ Մյուսների կարծիքով՝ այն մեծ վտանգ է հասարակության համար։ Ըստ ֆրանժսական Վիկիպեդիա ազատ հանրագիտարանում տեղ գտած տվյալների՝ ֆրանժսական մի շարք առողջապահական և մանկավարժական կազմակերպություններ միավորվել են «Մամկություն և մեղիա» շարժման մեջ, որը պարբերաբար հանդես է գալիս հայտարարություններով՝ հիշեցնելով, որ հեռուստա-տեսությունը վտանգավոր է երեխանների առողջության, մտավոր և զգացմունքային զարգացման համար¹։ Ամերիկյան տեսական դպրոցը ևս դեմ է երկնագույն էկրանին։ Վաշինգտոնի համալսարանի հետազոտող Ֆրեներիկ Զիմերմանը գտնում է, որ «Երեք տարեկանից ցածր երեխանների համար հեռուստադիտումը կարող է ուղեկցվել ուշադրության խնդիրներով, բերել ագրեսիվ վարքի և դանդաղ զարգացման։ Այն նաև նվազագույնի է հասցնում ընտանեկան շփումները»²։ Եվրոպական լրագրողական-սոցիոլոգիական դպրոցի որոշ ներկայացուցիչներ ավելի հեռու են գնում՝ հայտարարելով, թե «լավ կլինեն եթե հեռուստատեսություն գոյություն չունենար ընդհանրապես»³։ Մենք ակտիվորեն քննադատում ենք հեռուստատեսությունը, բայց և նույնքան ակտիվորեն սպառում նրա տված արտադրանքը և ազդվում նրանից։ Միգուց այլընտրանք չունենք... Ամեն դեպքում, պետք է խոստովանենք, որ

¹ http://www.alternatives-economiques.fr/la-societe-de-la-télé_fr_art_175_19210.html

² http://fr.wikipedia.org/wiki/T%C3%A9l%C3%A9vision#Effets_sur_le_d%C3%A9veloppement_de_1.27 enfant

³ <http://www.collectifciem.org/spip.php?article113>

⁴ <http://www.zetud.net/6421-la-television-dans-la-societe.html>

հեռուստատեսության դերը, դրական թե բացասական, չտեսնված մեծ է, հատկապես երեխաների ու դեռահասների համար:

Կյանքի, ընտանիքի և մյուս արժեքների բարոյականության կողմ դեռահասը ստանում է հենց լրատվամիջոցների կողմից: Սեր հասարակությանը մատուցվում են պատրաստի, սահմանված արժեքներ, որոնք ծևավորվում են ոչ թե կյանքում կենսափորձի և գիտելիքների արդյունքում, այլ հեռուստաէկրանին: Սերիալները, թոք շոուները, տարաբնույթ ընտանեկան պատմությունները սահմանում են որոշակի մտածողություն, կոտրում և ստեղծում կարծրատիպեր, փոխում մեր հասարակության մեջ ընդունելի նորմերը, խեղում հասարակության հոգեբանական, արժեհամակարգային, սովորությային պատկերը: Եկանը ապրելածնի որոշակի նիշ է սահմանում դեռահասության համար: Եվ այս դեպքում երեխայի նախնական ինքնությունը, մինչ այդ ստացած դաստիարակությունը քիչ նշանակություն ունեն, քանի որ, եկանից եկող հաղորդագրությունները էականորեն մասնակցում են նրա ինքնության ծևավորմանը արտահայտվելով որոշակի ճգումների տեսքով, ունենալով որոշակի վարքային դրսորումներ: Ընդ որում այդ դրսորումներն արտահայտվում են իբրև հասարակության, ընտանիքի անդամ, ազգի ներկայացուցիչ ինքնիրացվելու ընթացքում¹:

Արդյո՞ք հայկական հեռուստաեթերը կարողանում է ներկայացնել ընդորինակման արժանի հասարակություն և ընտանիք:

Ընտանիքի ինստիտուտը կարևորվում է բոլոր ազգությունների կողմից: Ավստրիացի փիլիսոփա Ֆրիդրիխ Այլերի խոսքերն են. «Ընտանիքը փոքրիկ հասարակություն է, որի ամբողջությունից է կախված մարդկային ողջ հասարակության անվտանգությունը»: Դայ իրականությանը հատկապես հատուկ է ընտանիքի պաշտամունքը: ՀՀ Սահմանադրության 35-րդ հոդվածը փաստում է. «Ընտանիքը հասարակության բնական և հիմնական քիջն է»: Դայոց պատմության ողջ ընթացքում մեծապես արժևորվել, սրբացվել է ընտանիքը: Գնորդ Մարզպետունու խոսքերը՝ «Ամուր ընտանիքը ամուր պետության հիմքն է», բազմիցս են հնչել տարբեր մասնագիտությունների տեսաբանների, քաղաքական և մշակութային գործիչների կողմից: Այսօր այդ սրբացված, ավանդույթներով հարուստ կերպարը տառերայնորեն աղավաղվում է եթերում: Բազմաթիվ հեռուստասերիալները, ընտանեկան պատմությունները, երբեմն նաև լրատվական ծրագրերը ծևավորում են հայ ընտանիքի, կնոջ, տղամարդու կերպարներ, որոնք չեն տեղափորվում ոչ մի չափան մեջ. մի կողմից՝ խիստ տարբեր են հայկական ընտանիքի մոդելի պահանջական ընկալումից, մյուս կողմից էլ ոչ ավանդական, առաջա-

¹ http://www.media-awareness.ca/francais/ressources/parents_ressources/trousse_valeurs_télé.cfm

դեմ, գենդերային տեսանկյունից գրագետ կառուցված ընտանիքի մորել էլ չեն մարմնավորում: Փորձենք դիտարկել դեռահասների շրջանու առավել մեծ համարում ունեցող հեռուստասերիալներից մի քանիսը («Դրեշտակների դպրոց», «Դժվար ապրուստ» և մի քանի հումորային հեռուստանովելներ): Ի դեպ, դիտելիության մակարդակի հետ կապված տվյալները վերցված են մեր կողմից երևանյան դպրոցներում 1500-ից ավելի դեռահասների շրջանում իրականացված հարցումներից:

«Դրեշտակների դպրոց» նովելում հիմնական դերակատարները տարրեր սոցիալական խավերի, բարոյական նկարագրի ընտանիքներից դուրս եկած դեռահասներ են: Նրանց միավորում է մեկ բան. բոլորի ընտանիքները դժբախտ են, չկայացած. նովելում ներկայացված 4-5 առանցքային ընտանիքներից առանց բացառության բոլորում խնդիրներ կան, բոլոր ընտանիքներում ծնողները բաժանված են կամ ապրում են առանձին:

Ընտանիքների հայրերի դերը հասցված է նվազագույնի. Նրանց մեծամասնությունը կամ մահացած է, կամ լքել է ընտանիքը, ամեն դեպքում չի մասնակցում զավակի դաստիարակության և ընտանիքի կայացման գործին: Ընտանիքներից մեկում հայրն առկա է, բայց ոչ միայն գերի է երիտասարդ երկրորդ կնոջ ծեռքում, այլև չի կարողացել ծիշտ դաստիարակել որդուն:

Դասարակության մեջ հայ կնոջ դերի փոխակերպումների մասին հաճախ է խոսվում: Այս գործընթացը էկրանին ստեղծում է կնոջ երկակի կերպար. մի կողմից՝ սերիալային կանայք խելացի են, կարողանում են միայնակ տանել ընտանիքի ֆինանսական բեռը, լավ դաստիարակել զավակներին (գենդերայնորեն զգայուն մողել), մյուս կողմից՝ հենց նույն կանայք արհամարհված են, խարբած, գլխիկոր տանում են ֆիզիկական և հոգեբանական ուսնագույթյունները (գենդերայնորեն ոչ զգայուն մողել): Կետաքրքիր է, որ այս երկու հակադիր մողելները մարմնավորվում են միևնույն կանանց մեջ: Ընդորինակման արժանի ավանդական հայ կինը՝ իր վեհությամբ, իր հանդեպ հարգանքի զգացումով շատ քիչ է էկրանին, գոնե մեր ուսումնասիրած նովելներում: Միջանկյալ նշենք, որ կնոշը, նրա խնդիրներին նվիրված հեռուստանախազքերը հաճախ ևս ծիշտ չեն կառուցվում և կարծրատիպեր կոտրելու, կնոշն օգնելու փոխարեն, խանգարում են նրան ապրել, հոգեպես և ֆիզիկապես լավ զգալ: Նրբակազմ, և գեղեցիկ աղջիկներն էկրանից բարդությունների պատճառ են դառնում նույնիսկ արտաքին բավականին լավ տվյալներ ունեցող շատ դեռահասների համար, ստիպում նրանց դիմել տարաքանույթ միջոցների, որոնք միշտ չեն, որ նաև առողջարար են: Քննարկվող նովելում առանձին ուշադրության է արժանի դպրոցի տնօրենի կերպարը: Նա մարմնավորում է կնոջ, որը չի կարող երեխա

ունենալ և դաժան է՝ ակամայից ծեավորելով կարծրատիպ, որ բոլոր երեխա չունեցող կանայք դաժան են լինում:

«Դվար ապրուստ» նովելում ներգրավված են ավելի շատ ընտանիքներ: Ի տարբերություն նախորդ նովելի, այստեղ բարեբախտաբար ոչ բոլոր զույգերն են առանձին ապրում: 11 ընտանիքներից հինգում ամուսնական զույգերը բաժանված չեն: Բայց այս հինգից քննությունը ի հայտ է բերում ավելի անմշխթար պատկեր: Հինգից մեկում ընտանեկան զույգը միասին է զուտ այն պատճառով, որ ընտանիքի մայրը այլ ճանապարհ չունի և ստիպված է դիմանալ ամուսնու մշտական խոշտանգումներին ու արհանարիակամ վերաբերմունքին: Երկու նորաստեղի երիտասարդ ընտանիքներում վեճերն ու բաժանություններն անընդհատ բնույթ են կրում, ընդ որում, երկու դեպքում էլ զույգերից մեկը սիրում է այլ մարդու: Եվ այս 11-ից ընդամենը երկու ընտանիքն է (ոչ առանցքային, երկրորդական ընտանիքներ), որտեղ ամուսնական զույգերը ապրում են ներդաշնակ կյանքով: Գրեթե բոլոր ընտանիքներին բնորոշ է ընդգծված ագրեսիվ վարքը, որն արտահայտվում է, ավելի ծիշու՝ հարաբերությունների հիմնական կերպն է ինչպես ամուսին-կին, այնպես էլ զավակ-ծնող հարաբերություններում: Վերոնշյալ տասնմեկ ըտանիքներից իննում կան հասուն երեխաներ: Որանցից երեցում ծնող-զավակ հարաբերությունները հիմնված են փոխադարձ հարգանքի վրա, մինչդեռ մյուս վեց դեպքերում առկա են կոնֆլիկտային, ագրեսիվ հարաբերություններ:

Արևատյան մամուլի տեսարանները բռնությունը վաղուց հաստատել են իրեն լսարան նվաճելու արդյունավետ հնարանը: Բայց և արյունաշատ տեսարանների, ագրեսիվ վարքի դրսնորումները, որքան էլ որ լսարան են ապահովում էկրանի առջև, այդուհանդերձ բերում են խեղված արժեքների ծեավորմանը: Դատկանշական է, որ անգամ դրական հերոսներին է հատուկ դաժանություն ու սառնասրտությունը: Երիտասարդության քրեականացված կերպարի ներկայացումը, թերևս, էկրանից եկող հերթական ակնհայտ հաղորդագրությունն է, որը կարող է մտածելակերպ ծևախեղել. ցավոք, հաճախ էկրանը չափն անցնում է գորեհիկ, ոչ եթերային բառերի կիրառությամբ, թմրանյութերի օգտագործման տեսարանների մանրամասն նկարագրությամբ:

Եթե փորձենք անդրադառնալ դեռահասների կողմից ոչ պակաս սիրելի հումորային հեռուստանովելներին («Կարգին սերիալ», «Գերղաստանը»), ապա այստեղ հայ ընտանիքը խարխլող առավել վտանգավոր դրսնորումների կիանողիանքներ: Երկու դեպքում էլ ներկայացված են ընտանիքների մողելներ, որտեղ երեխաները, ի տարբերություն հայկական ընտանիքներին հատուկ ծնողի հանդեպ պաշտամունքի, չեն սիրում ծնողներին, ամեն կերպ խուսափում են նրանց հետ շփումից, թութիկի համար խստագույն պատիժ են համարում տատիկի հետ շփումը:

Դասկանալի է, որ նախագծերի հեղինակները դրանք վերցնում են արևմտյան նմանատիպ նախագծերից և առավելապես միտում ունեն ծաղրելու այն կերպարները, որոնց մարմնավորում են: Ցավոք, դրանց ազդեցությունը երեխաների վարքի և մտածողության վրա անհերթելի է: Չէ՞ որ այդ կերպարներին մարմնավորում են դեռահասների կողմից այնքան սիրելի հեռուստահերոսները, նրանք առօրյա խոսքում ընդօրինակում են այդ հերոսներին, օգտագործում նրանց թեավոր դարձած խոսքերը, շարժուձեզ, միանշանակ՝ նաև մտածողությունը:

Այսպիսով, հայկական հեռուստասերիալային իրականության մեջ քիչ են ամուր ընտանիքները, որոնք հիմնված են փոխադարձ սիրո և հարգանքի վրա: Բացի այդ, սերիալային ընտանիքներում իշխող արժեքները միշտ չեն, որ նույնանում են իրական արժեքների հետ, և հարկ է ակտիվորեն զատել, ապա միայն թույլ տալ դրանց մուտքը իրականություն: Մենք քննության ենք առել հայ ընտանիքը մի քանի հեռուստանախագծերի համատեքստում և ամենին հակված չենք կարծելու, թե մեր դիտարկումը ներկայացնում է հայ հեռուստատեսային ընտանիքի ընդհանրական պատկերը:

Այսօր էկրանը շատ այլ հաղորդագրություններ է ուղարկում հասարակություն, որոնցից յուրաքանչյուրի քննությունը կարող է առանձին ուսումասիրության թեմա լինել և բացահայտել մեր հասարակության մեջ առկա շատ երևույթների գոյության պատճառները...

Նամե Վարդամյան
Ռազիոհետուստատեսային ժուռնալիստիկայի
ամբիոնի ղոցննու, թ. գ. թ.

**ՂԵՐՈՒՄԱԵԹԵՐԻ ԱՐԴԻ ՔԻՍԱԿԱՐՑԵՐԻՑ
ՄԻՆՉԵԿ ՄԵԴԻԱԿՐՈԹՈՒԹՅՈՒՆ**

Տարբեր տարիների ու տարբեր ձևաչափի վերլուծությունները քույլ են տալիս նատնանշել հայաստանյան հեռուստագննկերությունների ընդհանուր առմամբ ոչ գրագետ արտադրանք եթեր հեռարձակելու հիմնական պատճառը. այս ոլորտում զգալի է նաևնագիտական (պոտֆելոնալ) լուրջ պատրաստվածության պակասը, ինչը ստեղծագործական վարքագիր կողմնորոշչիններից ու կարգավորիչներից ամենահզորն է:

Այստեղ են թաքնված լսարանի անվատական ու թերահավատության հիմնական պատճառները:

Նշենք հիմնական թերացումները:

Տեղեկատվությունը մեր եթերում հեռուստատեսային կերպ ընդունելու կարիք ունի... Նիմնական ու պարտադիր աշխատանքը՝ նախապատրաստվելը և պահապործը, որպես կանոն, անտեսված է: Օրինակ՝ երկխոսական հաղորդումներում թեմաներն ու հերոսները նախապես չեն դարձում մասնագիտական հետազոտության առարկա. հաղորդավարներն աշխատում են հում նյութի հետ, մինչ տեսախցիկներն աշխատում են արդեն եթերի համար... Ներոս(ներ)ի պատմությունը հեղինակ(ներ)ի կողմից նախապես պիտի մշակվի, դառնա էկրանային նյութ՝ որոշակի ընթացքով: Իսկ նյութի, մտածողության ու վարքագիր՝ առօրյային բնորոշ ռիթմն ու տոնայնությունը չպիտի տեղափոխել էկրան առանց մասնագիտական լուրջ «միջամտությունների»...

Այսօր մեր հեռուստաեթերի խնդիրները տեսնելու և լուծելու պատասխանատվությունն ընկած է նախևառաջ հեռուստագննկերությունների ղեկավարների ուսերին, որոնք շրջահայաց պիտի լինեն կադրեր ընտրելիս, միևնույն ժամանակ մասնագիտական վերապատրաստման հնարավորություններ ստեղծեն մշտապես... Դամենայն դեպս, սեփական գիտելիքը, հմտությունն ու կարողությունը փորձության ենթարկելու հնարավորությունն անտեսելը կամ արհամարիելը, մեր համոզմամբ, կասկածի տակ է առնում թե՛ մասնագիտական և թե՛ մարդկային որակները...

Լրագրողական վարքագծի կարգավորիչների շարքում մեծ տեղ պետք է հատկացնել նաև հասարակությանը: Այս անվիճելի ճշմարտությունը «հայաստանյան հեռուստապայմաններում» կրել է շոշափելի փոփոխություններ: այսօր լսարանը շատ դեպքերում չունի այն ամենի (ավելի ծիշտ՝ այն ծավալի ու որակի) կարիքը, ինչ առաջարկում է եթերը:

Այս առումով պատասխանատվության մի մեծ չափաբաժին էլ ընկնում է մասնագիտական կրթություն ապահովող հաստատությունների, ֆակուլտետների, բաժինների ուսերին, որոնց դերն իրականում հսկայական է:

Ժուռանալիստական կրթության տարբեր մոդելներ գոյություն ունեն՝ ակադեմիական կրթություն՝ բակալավրի աստիճանով, ժուռանալիստական ծրագրեր, մագիստրոսական երկրորդ ծրագրեր՝ ժուռանալիստիկա մասնագիտությամբ և այլ մասնագիտությամբ դիմորդների համար և այլն: Այդ ծրագրերն ու ամենատարբեր կուրսերը պիտի կազմվեն՝ հստակ գիտակցությամբ, որ ժուռանալիստիկան իրականում առանձին գիտակարգ է: Կրթական բաղադրիչները պետք է մշակել՝ պարզորոշ պատկերացնելով «ժուռանալիստիկա» մասնագիտության դերն ու նշանակությունը տվյալ երկրում, ոլորտի արդի հիմնահարցերը՝ միաժամանակ չափանիւնով տեսարանների ու պրակտիկների կարծիքները: Ժուռանալիստական կրթություն ապահովող հաստատությունները պիտի կարողանան օպտիմալ համամասնություն ապահովել ունիվերսալ մասնագիտական պատրաստվածության և նեղ, պրոֆիլային մասնագիտացումների միջև, գիտելիքների փոխանցման և դրանք ստուգելու առավել արդյունավետ եղանակներ մշակեն, անցյալի ծեռքբերումները տեսնելու և յուրացնելու հնարավորություն տան, օրինակ՝ մասնագիտական գրականության օգնությամբ: Եվ որ ամենակարևորն է, պրակտիկ գիտելիքներ ու հմտություններ ծեռք բերելու համար հարմարավետ միջավայր ստեղծեն՝ հիմնելով, օրինակ, մոլուխիմիա տարածք, որտեղ առաջին իսկ պարապմունքներից ուսանողը կրթափի վախը միկրոֆոնի ու համակարգչի մկնիկի նկատմամբ: Մեր ֆակուլտետը 2001 թվականից, արդեն տասնմեկ տարի, այդ հնարավորությունն ընծեռում է իր ուսանողներին:

Պետք է գիտակցել նաև, որ ոչ մի կրթական ծրագիր չի կարող կենսունակություն ունենալ առանց բարձր որակավորմամբ դասավանդողների, որոնք պետք է մասնագիտության պրակտիկ հիմնահարցերից հեռու չլինեն, միաժամանակ չդադարեն գրաղվել ինքնակրթությամբ:

Կրթական հաստատությունները պիտի մեծապես կարևորեն իրենց և լրատվամիջոցների սերտ համագործակցության անհրաժեշտությունը՝ գիտակցելով դրա փոխահարավետությունը և խուսափելով ամեն տեսակ մրցակցային հարաբերություններ կառուցելուց: Պրակտիկներին

Ներգրավելով կրթական գործընթաց՝ պետք է հաշվի առնել մի խնդիր ևս. ամենատաղանդավոր ու փորձառու պրակտիկը միշտ չէ, որ լավ ուսուցիչ է: Առաջին երկու պարապմունքները լսարանում բավական են՝ տեսնելու համար իրադարձության ետևից շտապող լրագրողի և լսարանում նստած ապագա լրագրողի հետ աշխատանքի տարրերությունները: Իհարկե, դրանից հետո արդեն տարիներ են անհրաժեշտ դասախոս-ուսանող հարաբերություններում օբյեկտիվ վարվելածն և ճշգրիտ մեթոդաբանություն մշակելու և ամենակարևորը՝ դրանք պահպանելու համար: Անգամ ունակություններով առանձնապես չփայլող ուսանողին պիտի կարողանալ հավատ ներշնչել՝ դրանով իսկ կրկնապատկելով նրա ուժերն ու ստվորելու ցանկությունը:

Լսարանում մասնագիտական թեկուզել դիպուկ գնահատականները պատրաստած սյուժեի մասին բավարար չեն. պետք է կարողանալ միասին ետ գնալ, անցնել այն նույն ճանապարհով, ինչ անցնել է ուսանողը, ամենայն մանրամասնությամբ ու ճշգրտությամբ ցույց տալ սխալները, որոնք նա թույլ է տվել: Միաժամանակ քննարկմանը պետք է պետք է մասնակից դարձնել մյուսներին:

Պետք է կրթական համապատասխան տարածք ստեղծել նաև այն մասնագետների համար, ովքեր այսպես ասած՝ «դրսից են համալրում» ժուռնալիստների շարքերը, այսինքն՝ նրանք, ովքեր իրենց բազային կրթությամբ ժուռնալիստներ չեն: Մագիստրոսական համապատասխան ծրագրերը, ժուռնալիստական դպրոցները, պարբերաբար կազմակերպվող կարճատև ծրագրերը կարող են մեծապես օգնել այն մասնագետներին, ովքեր ուզում են գիտելիքներ ծեռք բերել լրագրության բնագավառում կամ ամրապնդել խմբագրություննում ստացած հմտությունների մակարդակը: Իհարկե, խմբագրությունը ոչ պակաս կարևոր դպրոց է, մի պայմանով միայն, եթե այնտեղ իրոք կա պրոֆեսիոնալ միջավայր, որտեղ կարող ես տեսնել ու ստվորել: Ի դեպ, ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետում արդեն գործում է մագիստրոսական երեք ծրագիր, այդ թվում և՝ այն դիմորդների համար, ովքեր բազային կրթությամբ ժուռնալիստներ չեն:

Ժուռնալիստական կրթության դերն իրականում շատ ավելի համեստ է, քան երեքմն կարծում են. հնարավորություն տալ ապագա մասնագետին արդեն առաջին իսկ օրերից համոզվելու, որ ստեղծագործական բնատուր ունակություններն ու մեծ սերը, օրինակ, հեռուստաթեսության նկատմամբ, դեռ բավարար չեն. դրանք պիտի անպայմանորեն ամրապնդվեն կատարողական, տեխնոլոգիական հմտություններով, որոնք առանց աշխատանքի չեն տրվում: Արդյունքում՝ ապագա լրագրողները կսկսեն լրջորեն վերաբերվել մասնագիտական աշխատանքի տեխնիկային: Կամաց-կամաց նաև կցուվեն տրամադրություններն այն

առնչությամբ, որ հեռուստալրագրող դաշնալու համար քավական է միայն շատ սիրել հեռուստատեսությունը:

Գուցե դանդաղ ընթացք ունի մեր առաջադրած խնդրի լուծման այս տարրերակը՝ պատշաճ մասնագիտական կրթություն ապահովելը, բայց, համոզված ենք միայն այս կերպ է հնարավոր արմատախիլ անել ճշգրիտ մասնագիտական աշխատանքը վարկաբեկող մուտեցումները և աղոտ ու անգրագետ պատկերացումները, որոնք, ցավոք, ինչպես արդեն նկատեցինք, հասցել են ամեն ինչ փչացնել...

Պրոֆեսիոնալ հենքը նաև թույլ կտա պակաս ագրեսիվ լինել ինչող քննադատությունների, առողջ քննադատությունների հանդեպ: Ինչի պակասը, ի դեպ, ևս կա: Անգամ մասնագիտական շրջանակներում փորձագիտական լուրջ դիտարկումները շփոթում են սուրճի սեղանի խոսքությունին հարազատ քառությամի հետ և հենց այդ ոգով էլ վերաբերվում կամ պատասխանում դրանց:

Քանի դեռ մեր հեռուստաընկերությունները գրադարձ են մասնագիտության վարկաբեկմամբ ու սերնդի գունազրկմամբ, պիտի շարունակենք անտարբեր չմնալ մասնագիտական ամենատարբեր իրողությունների նկատմամբ, փնտրենք կամ ստեղծենք առարկայական տեղաշարժեր կատարելու նոր հնարավորություններ:

Աստղիկ Ավետիսյան
Ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկայի
ամբիոնի ասխատենութ, ք.գ.ք.

ՍՓՅՈՒՇԵՐՈՒՄ ԳԵՂԱՐՉԱԿՎՈՂ ԳԵՂՈՒՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Արդի տեղեկատվական տեխնոլոգիաները թույլ են տալիս համացանցի միջոցով ոչ միայն ծանոթանալ համաժամանակյա հրատապ նորություններին, այլև, շնորհիվ տարբեր հեռուստաշնկերությունների կողմից ստեղծված հեռուստահաղորդումների պահոցների ցանկացած պահի ստանալ նաև տեսատեղեկատվություն: Հեռուստատեսությունն այս պարագայում ձերբազայի վերոշնչությունից՝ այժմ բոլոր պահությունների հարաբեկանությունից, հնարավորություն ընձեռելով վերադառնալ և վերանայել հեռարձակվող տեսանյութը առանց ժամանակային սահմանափակումների: Այս պարագայում անհրաժեշտ է նաև սահմանել էկրան-հեռուստադիտող փոխհարաբերությունների ներքին օրինաչփությունը՝ իր դասական ձևով: Այսպես, օրինակ, եթե տարիներ առաջ հեռուստատեսությունը հասարակության դատին էր ներկայացնում միայն նախօրոք մշակված հաղորդաշարեր ու տեսանյութեր, ապա այժմ ստեղծվել են մեծ հնարավորություններ, որոնց շնորհիվ հեռուստարտադրության գործընթացին կարող է ակտիվորեն մասնակցել նաև հեռուստալսարանը: Խոսքը հեռուստատեսության վերաբերյալ անցկացվող սոցիոլոգիական ուսումնասիրությունների, ինտերակտիվ հաղորդաշարերի և հարցումների մասին է: Փաստորեն, այսօր հեռուստադիտողների մասնակցությամբ և նրանց մեծամասնության պահանջով է հիմնականում ձևավորվում հեռուստահաղորդումների ցանցը: Սակայն այս մասին, իհարկե, կարելի է խոսել միայն որոշ վերապահումներով, քանզի հայաստանյան մերօրյա հեռուստաշնկերությունների հիմնականում սուլ տեխնիկական հնարավորությունները և ազգարնակչության կողմից հեռարձակումն ընդունելու սակավ հնարավորությունները թույլ չեն տալիս ամբողջությամբ հետևել ու ապավինել լսարանային «կոնյուկտուրային»:

Դայաստանյան հեռուստաշնկերություններից 5-ը՝ «Դամրային», «Արմենիա», «Ծանք», «Երկիր մեղիա», «Կենտրոն», իրենց հաղորդումները հեռարձակում են արբանյակային կապով: Թվում է, թե Սփյուռքում ապրող մեր հայրենակիցները հնարավորություն ունեն դիտելու, բազ-

մաժանը, հետաքրքիր հեռուստածրագրեր: Ուսումնասիրելով արբանյակով հեռարձակվող հեռուստածրագրերը, դրանցում ներառված հաղորդումներն ու ֆիլմերը, միանգամից տպագրություն ես ստանում, որ հեռուստացնկերություններում ծրագրային քաղաքականություն մշակողները մասնագետներ չեն: Ո՞ւմ համար են պատվիրվում կամ արտադրվում հաղորդումները, ի՞նչ քարոզչական գործառույթ ենք իրականացնում, կրթադաստիարակչական ո՞ր մողելներն են ազդեցիկ: Այս հարցերի պատասխանները չկան: Դայաստանում հեռարձակվող հեռուստածրագրերը նույնությամբ հեռարձակվում են արբանյակով: Ի՞նչ եք կարծում, Դայաստանում ապրող հայր և արտերկրում ապրող հայր նույն մտածողությունն ունեն, նույն խնդիրներն ու պահանջները: Իհարկե՛ ոչ: Մեր կողմից իրականացված էլեկտրոնային հարցումները ցույց տվեցին, որ արտերկրում ապրող մեր հայրենակիցը հայկական հեռուստաեթերից առաջին հերթին ակնկալում է տեղեկանալ Դայաստանում տեղի ունեցող իրադարձություններին տիրապետումը, երկրորդ՝ ծանոքանալ ազգային մշակույթի գոհարներին և երրորդ՝ տիրապետել ուսուցողական հաղորդումների միջոցով հայերենը ընկալելու, սովորելու և օգտագործելու հմտություններին: Մինչդեռ սույն թվականի փետրվարի 16-ին ուսումնասիրելով հեռուստածրագրերը, հայտնաբերեցինք, որ հեռուստասերիալները մեր կյանքում ամենակարևոր և նշանակալից երևույթներից են, ներկայացնեն Դանրային հեռուստատեսության մեկ օրվա համահայկական ալիքի ծրագիրը.

08:10	Կյանքի կարուսել
Ինդեքս	11:20
08:20	Բարեն, մենք ենք
Ա/Լ Քաղցր կյանք	11:50
09:00	Ա-Լ Գեներալի աղջիկը
Առաջին լրատվական. /Սփյուռք/	12:40
09:25	Գ/Ֆ Երեք ընկեր
Տեսանկյուն	13:00
09:30	Առաջին լրատվական
Տեսանկյուն	13:15
09:35	Պարականոն
Դարցագրույց	13:45
10:00	Մերոնք
Ա/Լ Աննա-2	14:00
10:40	Կարծիք
Ա-Լ Դրեշտակների դպրոցը	14:10
11:00	Դոբելյան /Դմայակ Դակորյան/
	14:30

Ներկայացումը շարունակվում է /Գայանե Սկրտչյան/	Կյանքի կարուսել 19:30
14:55	Դրապարակում 19:50
Գ/Ֆ Զգուշացեք փողից	Ինդեքս 20:00
15:25	Կյանքի կարուսել 20:10
Ծողակաթը ներկայացնում է.	Ինդեքս 20:20
15:50	Ա/Լ Քրեշտակների դպրոցը 21:00
Ս-Լ Քրեշտակների դպրոցը	Առաջին լրատվական /հիմնական թողարկում/ 21:30
16:25	Տեսանկյուն 21:35
Ա/Լ Քրեշտակների դպրոցը	Ա/Լ Աննա-2 22:15
16:40	Ազատ գոտի 22:30
Ս-Լ Գեներալի աղջիկը	Ա/Լ Քրեշտակների դպրոցը 23:00
17:00	Առաջին լրատվական /հիմնական թողարկում/ 21:30
Առաջին լրատվական	Տեսանկյուն 21:35
17:30	Ա/Լ Աննա-2 22:15
Ս/Լ Աննա-2	Ազատ գոտի 22:30
17:50	Ա/Լ Աննա-2 23:00
Ազատ գոտի	Ա/Լ Քրեշտակների դպրոցը 23:00
18:10	Ազատ գոտի 23:00
Ազատ գոտի	Երջանկության մեխանիկա 23:00
18:35	Երջանկության մեխանիկա 23:00
Երջանկության մեխանիկա	Դարձագորույց 19:25
18:40	
Երջանկության մեխանիկա	
19:25	

Մյուս հեռուստաընկերությունների ժրագրերը տես www.eter.am կայքեղում:

Վերլուծելով վերոնշյալը, կարող ենք արձանագրել, որ նշված հեռուստաընկերություններից «Երկիր մեղիս»-ն որոշ չափով կարդանում է Սփյուռքում ապրող մեր հայրենակիցների երերային պահանջները բավարարել։ Դեռևս ստացնելությունը 2010 թվականին ծեռք է բերել ոչ միայն արբանյակային հեռարձակման հրավունքը, այլև հայկական գաղթօջախներում, հայաշատ համայնքներում ստեղծել է թրեակցային կետեր։ ԱՄՆ (Լոս Անջելես, Բոստոն), Վրաստան, Լիբանան, Ֆրանսիա, Ռուսաստան, Իրան, Չունաստան, Սիրիա, Թուրքիա, որոնց միջոցով տվյալ համայնքի կյանքի, ծառացած խնդիրների մասին հնարավորություն կա թարմ լրատվություն ստանալու։ Ծրագրում տեղ գտած հաղորդումներն ել ինչ որ չափով նպաստում են ազգային երգերաժշտության, կերակրատեսակների, պատմական անցյալի մասին տեղեկատվության տարածմանը։

«Հանք» հեռուստաընկերությունը վերջին տարիներին լավագույն նախագծերը վերածեց համահայկականի, ինչը հնարավորություն է տալիս արտերկրում ապրող մեր հայրենակիցներին և մասնակից դառնալ տվյալ հաղորդումներին։ «Հանք»-ը նույնպես թրեակցական կետեր ունի ԱՄՆ-ում, Ռուսաստանում, հաճախ թեմատիկ տեսականություններ է կազմակերպում՝ ԱՄՆ-Ռուսաստան-Լիբանան-Հայաստան։ «Առաջին ալիք»-ն առանձնանում է «Առաջին լրատվական-Սփյուռք» տեղեկատվական հաղորդման հեռարձակմանը, այն ներկայացվում է արևմտահայերենով։ «Մերոնք», «Օտար, ամային ճամփերին» հաղորդաշարերն ել պատմում են Սփյուռքում ապրող հայերի, հայկական գաղթօջախների մասին։ «Արմենիա» հեռուստաընկերությունը սահմանափակվում է տեղեկատվական թողարկման ընթացքում ԱՄՆ-ից ուղարկվող տեսանյութերով, «Հայաստան -Սփյուռք» ու «Մեր լեզուն և մեր խոսքը» հաղորդումների ներկայացմանը։

«Կենտրոն» հեռուստաընկերությունը դեռ որոնումների ճանապարհին է։

Դեռևս ստացների կողմից վարվող ժրագրային քաղաքականության պատճառով հեռուստաընկերությունները կորցնում են հեռուստատեսությանը բնորոշ գործառույթները, այն է՝ կրթադաստիարակչական, քարոզչական և այլն։

Համահայկական հեռուստալիք կոչվելու համար հեռուստաընկերությունները, բացի շահույթ հետապնդելուց, պետք է մտածեն նաև ոչ շահութաբեր ժրագրերի մասին, որոնք օգտակար կլինեն հասարակությանը։

Առաջարկում են օրենսդրական համապատասխան քննարկման դնել այն դրույթը, որ, եթե հեռուստաընկերությունն իրավամբ համա-

հայկական ալիք է դառնում, ապա որևէ կազմակերպություն, գերատեսչություն պետք է վերահսկի հեռուստաընկերության կողմից վարվող ծրագրային քաղաքականությունը։ Այդ դերը կարող է ստանձնել, օրինակ, ՀՀ Սփյուռքի նախարարությունը։

**Վահրամ Միրաքյան
Մամուկի պատմության և տեսության
ամբիոնի հայցորդ**

**ՂԱՅԿԱԿԱՆ ՀԵՇՈՒՏԱԵԹԵՐԻ ՈՐՈՇ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ
ԱԳՐԵՍԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ
ԽՆԴՐԻ ՂԱՄՊԱՏԿԵՐՈՒՄ**

Դայ հասարակության շրջանում ագրեսիվ սոցիալական դիրքորոշումների հնարավոր ձևավորման վրա հայկական հեռուստասերիալների ազդեցությունը պատկերացնելու համար իրականացրել ենք հայկական երեք՝ «Աննա - 2», «Վերադարձ - 2» և «Ժառանգներ» հեռուստասերիալների մշտադիտարկում (մոնիթորինգ): Ծիշու է, նրանցից երկուսը՝ «Վերադարձ - 2-ը» և «Ժառանգները», ավարտվել են 2011 թվականին, իսկ «Աննա - 2-ը»՝ 2012 թ. սկզբին, բայց հետազոտությունը շարունակում է մնալ արդիական, որովհետև ավարտված սերիալների փոխարինողներն ընդհանուր առմանը որևէ փոփոխություն չեն կրել:

Ծիշալ սերիալների մոնիթորինգն իրականացվել է մեկ ամսվա ընթացքում՝ 2011 թ. հունվարի 17-ից փետրվարի 12-ը: Նպատակն էր վիզուալ փաստաթրային ուսումնասիրության մեթոդով քանակական և որակական տվյալներ հավաքելու և վերլուծելու միջոցով պարզել, հասկանալ հայկական սերիալների հնարավոր երկարաժամկետ և կարճաժամկետ ազդեցությունն ագրեսիվ սոցիալական դիրքորոշումներ ձևավորելու հարցում:


Վիզուալ դիտման միջոցով բովանդակության ուսումնասիրություն է իրականացվել, դրվագները դասակարգվել են ըստ ագրեսիվ և ոչ ագրեսիվ տեսարանների՝ հիմնվելով դրանց զգայական և վերբալ բռվանդակության վրա: Կատարվել է 2011 թ. հունվար-փետրվար ամիսներին հեռուստասերիալներում ցուցադրված զգացմունքային, վերբալ և ֆիզիկական ագրեսիվ տեսարանների և զգացմունքային վերբալ դրական տեսարանների խմբավորում հետևյալ կերպ՝ «Ֆիզիկական ագրեսիայի տեսարաններ հակառակ սերի ներկայացուցիչների միջև», «Ֆիզիկական ագրեսիա արական սերի ներկայացուցիչների միջև», «Ֆիզիկական ագրեսիա հգական սերի ներկայացուցիչների միջև», «դաժանության տեսարաններ (արյուն, մարդկային տառապանք, ծեծ)», «վերբալ ագրեսիայի տեսարաններ հակառակ սերի ներկայացուցիչների միջև», «վերբալ ագրեսիայի տեսարաններ հգական սերի ներկայացուցիչների միջև», «վերբալ ագրեսիայի տեսարաններ արական սերի

Ներկայացուցիչների միջև», «սթրեսային, անկումային, ընկճվածության տեսարաններ (ընկճված ձայն, դեմքի ընկճված արտահայտություն, լաց, մոռայլ երածշտություն)», «չեղող տեսարաններ (խոսակցություն առանց որևէ զգացմունքի արտահայտման)», «դրական հույզերի տեսարաններ հակառակ սեռերի ներկայացուցիչների միջև», «դրական հույզերի տեսարաններ արական սեռի ներկայացուցիչների միջև» և «դրական հույզերի տեսարաններ իգական սեռի ներկայացուցիչների միջև»:


Նշված ժամանակահատվածում ուսումնասիրվել են ընտրված հեռուստասերիալների բոլոր սերիաները, գրանցվել են բոլոր դրվագներ՝ ըստ Վերոնչյալ խմբերի: Այն դրվագները, որտեղ առկա էին տարբեր, նույնիսկ իրար հակառակ սոցիալական դիրքորոշումների ծևավորմանն ուղղված տեսարաններ, գրանցվել են համապատասխան խմբերում:

Ստորև ներկայացնում ենք մոնիթորինգի ենթարկված սերիալներում ցուցադրվող դրվագների ընդհանրացված քանակական պատկերը:


17. 01. 2011 թ. - 12. 02. 2011 թ. ընթացքում «ԱՅՆա - 2» սերիալում առկա դրվագների տեսակները



17. 01. 2011 թ.-12. 02. 2011 թ. ընթացքում «Վերադարձ - 2» սերիալու առկա դրվագների տեսակները




17. 01. 2011 թ.-12. 02. 2011 թ. ընթացքում «Ժառանգներ» սերիալու առկա դրվագների տեսակները




Եթե հեռուստասերիալներում ներկայացված դրվագներն ընդհանրացնենք «ազրեսիվ», «ոչ ազրեսիվ (դրական)», «չեզոք», «ընկճվածություն» խմբներում, ապա կտացվի հետևյալ պատկերը.


17. 01. 2011 թ. - 12. 02. 2011 թ. ընթացքում «Անսա - 2» սերիալում առկա դրվագների տեսակները



17. 01. 2011 թ.-12. 02. 2011 թ. ընթացքում «Վերադարձ - 2» սերիալում առկա դրվագների տեսակները



17. 01. 2011 р.-12. 02. 2011 р. ընթացքում «Ժառանգներ» սերիալում
առկա դրվագների տեսակները



Մշակութային միջավայրը (սոցիոլոգիական տեսանկյունից մշակութի մեջ մտնում են խօսելու, հագնվելու վարքը, ընտանեկան կյանքի կանոնները, աշխատանքային ավանդույթները, կրոնական ծեսերը, ժամանցի անցկացման մեթոդները և այլն), որտեղ անցնում է անձի մանկությունն ու պատանեկությունը, ունենում է ուղղակի ազդեցություն մարդու պահվածքի վրա¹: Քանի որ հայաստանյան ընտանիքների մի մեծ հատված ամեն օր դիտում է հայկական սերիալները, դրանք չեն կարող երեխաների և պատանեների մոտ մշակութային ազդեցություն չունենալ, անկախ նրանից՝ երեխաներն անձամբ են դիտում, թե ուղղակի տանը հեռուստացույցը միացված է, և ծնողներն են դիտում: Ամեն օր մեր շրջապատում տեսնում ենք, թե ինչպես հանրածանաչ սերիալային (նաև որոշ հեռուստահաղորդումների) հերոսների մտքերը, բառապաշարն ու պահվածքը դառնում են հանրային կրկնօրինակման (հատկապես երեխաների ու պատանեների մոտ) առարկա: Այդ կրկնօրինակումները, սոցիալական դիրքորոշումների ձևավորման տեսությանը համապատասխան, ի վերջո առաջ կրերեն նաև վարքի, մտածելակերպի, արժեհամակարգի առավելախորքային փոփոխություններ:

Դիմնվելով դիտումով կրկնօրինակվող ագրեսիվ վարքի, ագրեսիվ մտքերի առաջացման գործընթացի տեսական բաժանման վրա՝ ներկայացնենք մշտադիտարկման ենթարկված հեռուստասերիալների դերն ագրեսիվ սոցիալական դիրքորոշումների ձևավորման հարցում.

- Ագրեսիվ պահվածքի ականատես լինելիս անձը հայտնաբերում, սովորում է ագրեսիայի նոր մեթոդներ: Մեր ուսումնասի-

¹ См. Гидденс Э., “Социология”, Москва, 2005, стр. 39.

² См. Берон Р., Ричардсон Д., Агрессия, изд. “Питер”, Москва, 1997, стр. 106.

- բաժ հայկական սերիալները, բազմից ցուցադրելով ֆիզիկական և վերըալ ագրեսիա հակառակ և միևնույն սեռերի միջն, լսարանին նատուրալ են ագրեսիվ պահվածքի նոր մոդելներ:
- Ցուցադրվող ագրեսիան ստիպում է վերանայել նախկինում կիրառվող ինքնասահմանափակումները: «Եթե ուրիշներն իրենց ագրեսիվ են պահում և չեն պատժվում, ապա են նույնպես կարող են այդպես վարվել»: Դայկական սերիալներում գրեթե բոլոր հերոսների կողմից կիրառվող ագրեսիան կարող է լսարանի, հատկապես երիտասարդների և պատանիների համար ագրեսիան զսպող սահմանափակումների բուլացնան կամ վերացնան պատճառ դառնալ:
 - Մշտապես ագրեսիա դիտելը կամ տեսնելը զգայական բթացում է առաջացնում: Այսինքն՝ հայկական սերիալների ագրեսիան կարեկցական զգացմունքների բթացում, այլոց ցավի նկատմամբ զգայական ընկալունակության կորստի պատճառ կարող է դառնալ: Սերիալների մշտական դիտողները կարող են ագրեսիան չդիտարկել որպես հատուկ վարքի ծև և նույնիսկ մի փոքր առիթի դեպքում ագրեսիա կիրառել:
 - Ագրեսիայի մշտական դիտումը փոխում է իրականության ընկալման անհատական զգայունակությունը: Դայկական սերիալներում ամեն օր ագրեսիվ պահվածքի ականատես լինելու դեպքում մարդիկ կարող են մշտապես լարված, ագրեսիվ վիճակում լինել և շրջակա աշխարհն ընկալել որպես առավել ագրեսիվ, քան այն իրականում է:

Բացի վերոնշյալ կետերից, սերիալներում ներկայացվող մոայլ, բացասական մթնոլորտը, գումարվելով երկրում տիրող սոցիալ-քաղաքական դժգոհություններին, կարող է ավելացնել բացասական տրամադրությունները: Մեր ուսումնասիրած սերիալների և նմանատիպ այլ հեռուստաարտադրանքի ազդեցությամբ ագրեսիվ սոցիալական դիրքորոշումների ծևավորման կամ եղածների ակտիվացման արդյունքում՝ շրջապատի նկատմամբ բացասաբար, դժգոհությամբ և ագրեսիվ կարող են տրամադրվել (դրան հետևող համապատասխան գործողություններով) նույնիսկ սերիալների լսարան հանդիսացող սոցիալապես ապահով խավի ներկայացուցիչները: Այդ ամենի արդյունքում կարող են ավելանալ կոնֆլիկտային իրավիճակները, որովհետև ագրեսիվ սոցիալական դիրքորոշումներն անձի կոնֆլիկտայնությունն ավելացնող գործոններից են:

Երկարաժամկետ հատվածում նման բովանդակությամբ սերիալների ագրեցությունն ավելի վտանգավոր է, քանի որ ագրեսիվ սոցիալա-

¹ См. Аицунов А. Я., Баклановский С. В., Конфликтология в схемах и комментариях, «Питер», Москва, 2007, стр. 57.

կան դիրքորոշումների ծևավորման արդյունքում կարող է շատերի մոտ փոխվել մարդկային շփումների սոցիալական մշակույթը: Վերոնշյալ սերիալներում միմյանց նկատմամբ ազրեսիհա էին դրսնորում սոցիալական և սեռական բոլոր խմբերը՝ երեխան ծնողների նկատմամբ, ծնողները՝ երեխաների, եղբայրը՝ քրոջ, դեկավարը՝ աշխատակցի, տղամարդը՝ կնոջ և այլն: Դետենանքը կարող է լինել այն, որ հաճրային որոշ շրջանակների, հատկապես երեխաների, պատանիների ու երիտասարդների մոտ կարող է ծևավորվել աշխարհընկալման մի համակարգ, որտեղ սոցիալական շփման հիմնական ուղին կլինեն ազրեսիհան, կոնֆլիկտը, իսկ ապասոցիալական վարքը կընկալվի որպես բնականոն պահկածք:

Դայկական սերիալների մեկ այլ առանձնահատկությունն է համատարած շքեղ կյանքի նկարագրությունը: Եթե այդ շքեղության ցուցադրությունը դիտարկենք Դայաստանում անապահով խավի հոժ զանգվածի տեսանկյունից, սերիալները կարող են նաև շքեղ կյանքն իդեալականացնող դեր ունենալ: Իսկ քանի որ Դ տնտեսությունը հնարավորություն չի տակա լայն զանգվածներին նման ապրելակերպ ունենալ, այդ դրվագների կրկնությունը կարող է շքեղ կյանքի հասնելու համար արտագաղթի կամ հակաօրինական գործողությունների պատճառ դառնալ:

Ամերիկացի գիտնակամները, ուսումնասիրելով երիտասարդների հանցագործությունները, ենթադրում են եզրակացության, որ այն համայնքներում ու ենթամշակույթներում, որտեղ կա առավել ապահով կյանքի ձգտում, բայց չկան օրինական ճանապարհով դրան հասնելու տնտեսական հնարավորություններ, աճում է երիտասարդների կողմից անօրինական գործողությունների և հանցավոր խմբավորումների թիվը¹: Ամերիկացի սոցիոլոգ Էլիոթ Քարրին ուսումնասիրությունների արդյունքում եզրակացրել է, որ ազատ շուկայական հարաբերությունների ընթացքում գովազդվող շքեղությունները սոցիալապես անապահով երիտասարդության շրջանում առաջանաւում են հիասթափություն, հուսալքություն ապագայի նկատմամբ, անկարողության գացցողություն և որպես հետևանք հանցագործությունների աճ²:

Ընդհանրացնելով ասվածը՝ կարելի է նշել մի շարք ոլորտներ, որտեղ հայկական արտադրության սերիալներն ունենում են իրենց բացասական ազդեցությունը.

- Լեզվամտածողության խեղումները: Սերիալներում հաճախ օգտագործվում է տարբեր ենթամշակույթներին (հիմնականում գողական ենթամշակույթի) հատուկ լեզու, իսկ վերբալ հաղոր-

¹ См. Гидденс Э., Социология, Москва, 2005, стр. 185.

² См. там же, стр. 295:

դակցությունը մեծ մասամբ ներկայացվում է ագրեսիվ դրսնությունով:

- Ընտանեկան ինստիտուտի խեղված պատկերի ներկայացում: Սերիալներում չկա դասական ընտանեկան հարաբերությունների օրինակ:
- Նյութապաշտական գաղափարների, շքեղ կյանքի քարոզ:
- «Գողական» ենթամշակույթի իդեալականացում: Դրական և քացասական հերոսներից շատերն ունեն օրինախախտ, հանցագործ վարք:
- Ոչ կառուցողական, լարված միջանձնային հաղորդակցության ներկայացում:
- Վերը և Ֆիզիկական վարքի ագրեսիվ մողելների քարոզ:

Եթե պետությունը նպատակ ունի կառուցել ազգային և համամարդկային արժեքներով ապրող, երկրի օրենքները հարգող հասարակություն, ապա այլ միջոցառումներին գուգահեր իրավիճակի բարելավմանը կօգնի ազդեցության լծակների ստեղծումը՝ լրատվամիջոցների (հատկապես՝ հեռուստատեսության) դաստիարակչական քաղաքականության վրա ազդեցություն ունենալու համար: Օրինակ՝ Եվրոպայում հանրային հեռուստաընկերությունները գործում են որպես այլընտրանք կոմերցիոն հեռուստաընկերություններին և փորձում են ազել դրանց քաղաքականության վրա, բարձրացնել կոմերցիոն հեռուստաընկերությունների քաղաքակրթական նշանակությունը¹: Հայաստանում, ինչպես տեսնում ենք սերիալների օրինակով, Հանրային և մասնավոր հեռուստաընկերությունների միջև տարբերություն չկա, իսկ Եվրոպական Միությունն ու ԵԱՀԿ-ն ամեն ինչ անում են, որ հանրային հեռուստաընկերությունները պահպանեն իրենց քաղաքակրթական նշանակությունը և չենթարկվեն շուկայական օրենքներին: Այդ նպատակների համար Ֆրանսիայում գործում է «Բարձրագույն առողջություն խորհրդ» (CSA), Մեծ Բրիտանիայում՝ «Կապի կառավարման» մարմինը (Ofcom) և այլն:

Ընդհանրապես, կոմերցիայի չարաշահումը թույլ չտալու համար աշխարհի բազմաթիվ պետություններ մասնակցում են հեռուստատեսության թերային քաղաքականության մշակման գործին²: 1993 թ. հանրային բողոքներից հետո ԱՄՆ-ի կոնգրեսում հեռուստատեսային ագրեսիայի թեմայով լսումներ կազմակերպվեցին, ինչի արդյունքում 1996-ին հեռուստացույց արտադրողներին օրենքով պարտադրվեց, այսպես կոչված, «V-չիպեր» արտադրել, որոնք թույլատրում են

¹ См. “Телевидение в Европе: регулирование, политика и независимость”, Институт открытого общества, Венгрия, 2006, стр. 21.

² См. Гидденс Э., Социология, 2005, стр. 397.

«փակել» անցանկալի հեռուստաալիքները¹: Նոր օրենքը նաև պարտադրում էր հեռուստաանկերություններին բոլոր ծրագրերին և ֆիլմերին տալ կարգեր և նշել, թե տարիքային որ խմբի համար է նախատեսված տվյալ հեռուստաարտադրանքը: Բրազիլական հեռուստասերիալների արտադրության ամենամեծ՝ «Գլոբո» ընկերությունում սցենարի վրա աշխատում են սոցիոլոգներ և հոգեբաններ, ովքեր սցենարը մշակում են լսարանի և ֆիլմարտադրողի պահանջներին համապատասխան²: Նույն կերպ կարելի է մշակել նաև հայկական հեռուստասերիալները, որպեսզի հնարավորինս նվազեցվի դրանց բացասական ազդեցությունը: Ներկա իրավիճակից ելք է նաև հեռուստատեսությունում առկա բացասական երևույթների հստակ սահմանումը և եթերում դրանց վերահսկողությունը:

¹ См. Брайант Дж., Томпсон С., Основы воздействия СМИ, "Вильямс", 2004, стр. 207.

² Сайт про Латинскую Америку, <http://latindex.ru/content/articles/2445/>

**Զարուիի Սարգսյան
Մամուլի պատմության և տեսության
ամբիոնի հայցորդ**

**ՂԵՌՈՒՍԱՍՏԱՆԻԱՆԵՐԻ ՎՃՂԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՂԵՌԱԴԱՍԻ
ԱՐԺԵՎԱՄԱԿԱՐԳԻ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ՎՐԱ**

Ղեռուստասերիալները հայաստանյան հեռուստաեթերով սկսեցին ցուցադրվել 1990-ական թթ.: Բրազիլական, արգենտինական, վենետուելական, ամերիկյան հեռուստապատումները միանգամից կարողացան մեծ լսարան նվաճել՝ միաժամանակ դաշնալով հասարակական քննարկման նյութը: Բանավոր քննարկումներում դատապարտվում էր դրանց ազդեցությունը հասարակական կյանքի վրա՝ որպես հասարակության համար անընդունելի նոր արժեքներ և գաղափարներ ներմուծողներ:

2003 թվականին եթեր հեռարձակվեց հայրենական արտադրության առաջին հեռուստասերիալը: Այսօր հայկական հեռուստաեթերում պարզապես սերիալների հեղեղ է: Ցուրաքանչյուր հեռուստապալիք նկարահանում և հեռարձակում է սեփական սերիալը, չնայած դեռ կան որոշ հեռուստաալիքներ, որոնք ցուցադրում են արտասահմանյան արտադրության սերիալներ:

Տեսաբաններն օճառային օպերաների տարածումը սերտորեն կապում են զանգվածային սպառման տարածման հետ¹: Փաստարկը հետևյալն է. թե՝ կենսակերպը, թե՝ ապրանքները, որոնք գուգորդվում են օճառային օպերաների հետ, ի հայտ են զալիս հիմնական (core) մշակույթից: Դրանք հաճախ դիտվում են որպես ամերիկանացման հոնմնից: Տեղական և ազգային արժեքները վտանգվում և քայլայվում են՝ երբեմն փոխարինվելով այլ ավանդույթներով ու արժեքներով: Այսպիսով, ստեղծվում է մրցակցության մի դաշտ, ուր պայքար է սկսվում ժամանակակից հարուստ կյանքի միակ մոդելը գտնելու համար:

Երկրորդ, նշվում է, որ օճառային օպերաները և դրանց հետ գուգորդվող սպառողական ապրանքները միտված են սիրելի դարձնել ու ժամանակավոր նորաձեւության վրա հիմնված մակերեսային վերաբեր-

¹ Daniel Miller, "The consumption of soap opera", To be continued... soap operas around the world, edited by Robert C. Allen, Taylor & Francis e-Library, 2001, p. 213-214.

մունքը մարդկանց ու իրերի նկատմամբ, հետևաբար առաջնորդել դեպի խորության բացակայություն:

Երրորդ, նոյս այս կենսակերպը նպաստում է այն ամենի ապրանքայինացմանը, ինչը նախկինում եղել է հուզիչ ու անծնական հարաբերությունների սահմանում և ծևավորվում է որպես ընդհանուր ուղղվածություն:

Դեռօւստասերիալների տարածման, նորամուծությունների և միանգամից մեծ լսարան գրավելու հետ կապված քննարկումները շարունակվում են նաև այսօր: Սակայն, եթե 90-ականներին սերիալի նորամուծությունները և թողած ազդեցությունը դիտվում էր որպես լոկալի կամ ազգայինի քայլայում այլ ավանդույթներ կրկնօրինակելու և կենսակերպ քարոզելու միջոցով, այսօր արդեն այդ ամենն իրականացվում է հայկական հեռօւստասերիալների միջոցով՝ ներկայացնելով որպես հայկական միջավայրին բնորոշ գծեր:

Սեր նպատակն է պարզել, թե ի՞նչ արժեքներ և հաղորդագրություններ են գալիս էկրանից, ի՞նչ հերոսներ կամ կերպարներ են ստեղծվում, որոնք կարող են ազդեցություն (լավ կամ վատ) ունենալ դիտողի վրա, արդյո՞ք կարելի է դրանցից ինչ-որ բան սովորել և վերջապես հասկանալ, թե ժամանակակից կյանքի նոր նողելը որոնելիս կամ ուրվագծելիս ինչ կերպարներ կամ կենսակերպ են առաջարկում հայկական սերիալները: սահմանելով լավն ու վատը, ընտանիք-հասարակություն, կինտղամարդ, դպրոց-աշակերտ-ուսուցիչ հարաբերությունները: Այդ նպատակով կատարել ենք հարցում 50 դեռահասի (12-16/ տարեկան) շրջանում: Նախապես հարցարերիկներ են կազմվել, որոնք լրացվել են վերջիններիս կողմից:

Դեռահասին հերոսներ են պետք

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ, սերիալային հերոսներն ազդեցություն ունեն դեռահասների լսարանի վրա: Ինչպես վերջիններս են նշում, այդ հերոսներից կարելի է ինչ-որ բան սովորել, ավելին, դրանք «երեխն օգնում են խնդիրներ լուծել»: Դարցվողները ծանոթներ ունեն, ովքեր «վարօվ, խոսելածնով, հագուկապով» նմանակում են սերիալային հերոսներին:

Շաղկութ Բրունստումնը խոսելով դիսկուլսների մասին, որոնք կառուցում և մեկնաբանում են օճառային օպերայի աշխարհը, նշում է. «Սերիալը կոչ է անում փորձել հիշողությունը, հիշել հեռօւստայնացված անցյալը նոյն կերպ, ինչպես հիշում ենք մեր սեփականը: Գիտակցման

նույն ձեր. «Օհ, նայիր, սա Խ-ն է: Դիշո՞ւմ ես: Նայիր հագուստին, սանրվածքին»¹:

Մեր կողմից ուսումնասիրած սերիալներում («Դրեշտակների դպրոցը» (Հանրային հ/թ), «Կարգին սերիալ» («Արմենիա» հ/թ), «Գերդաստան» («Ծանթ» հ/թ)) աշխատանքով գեղեցիկ և գիտելիքով ուժեղ լինելու գաղափարախոսությունը տեղի է տալիս սպառողական հոգեբանության առջև: Լավ ապրելու համար պետք չէ շատ աշխատել կամ շատ գիտելիքներ ունենալ. ահա հաղորդագրությունը, որ գալիս է «Կարգին սերիալից»: Լավ ապրողները «լավ տղաներն» են, ինչպիսիք են Վարդանը («Կարգին սերիալ»), Մանվելը «Դրեշտակների դպրոցը» և Վերջինիս շրջապատող մարդիկ: «Լավ տղաները» շրջապատից առանձնանում են որոշ գծերով. նրանք որպես կանոն հեղինակություններ են, բիզնես ունեն և ոչ թե աշխատում են, այլ «հարցեր են կարգավորում», խոսում են ժարգոնային բառապաշտություն, շրջապատված են աղջիկներով, վարում են բանկարժեք մեթենաներ և գրեթե միշտ բարերում կամ սեփական ակումբներում են լինում:

Սերիալներում այս «հեղինակություններին» հակադրվում է մտավորականի կերպարը. «Կարգին սերիալում» Վարդանի եղբայրն է՝ Արկադին, կամ ինչպես անվանում են նրան՝ Արիկը, որը մտավորականի չհաջողված կերպար է և կարող է դիտվել որպես ծաղր Վերջինիս հասցեին, «Դրեշտակների դպրոցում»՝ ֆիզիկայի ուսուցիչ Ղազարյանը: Այս սերիալներում ակնհայտ է հասարակության և մտավորականի բախումը, ինչն էլ պատճառ է դառնում, որ վերջիններս հաճախակի հայտնվեն ծիծաղելի ու հիմար իրավիճակներում: Ի տարբերություն նախորդ կերպարների, նրանք չեն կարողանում փող վաստակել:

Սերիալներում ծիծաղելի և անհամակրելի է ներկայանում քիչ վաստակող հայ մտավորականը: Անտեսված է մնում սոցիալական խնդիրների տակ կրացած հայ տղամարդը, որոնցից մեկն ընտրում է հեղինակություն դառնալու ճանապարհը (Լևոնի հայրը «Դրեշտակների դպրոցում»), մյուսը՝ երկրից հեռանալու ուղին (Միլենայի հայրը «Դրեշտակների դպրոցում»): Այս կերպարներին նմանվելու ցանկություն չի հայտնել և ոչ մի դեռահաս: «Ո՞ւմ կցանկանա նմանվել կամ սերիալային հերոսներից ո՞ւմ են կրկնօրինակում Ձեր շրջապատում» հարցին պատասխանելիս նշվում է «Կարգին սերիալի» Վարդանի անունը: Դարցվածներից մեկն էլ նշում է. «Ես անձամբ կրկնօրինակում եմ «հորս արև» ասող հերոսին»:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե հայկական սերիալներն իրենց նյութը վերցնում են հայ հասարակությունից: Ընդհանրապես

¹ Charlotte Brunsdon, Writing about Soap Opera: Television Mythologies: Stars, shows & signs, edited by Len Masterman, Taylor & Francis e-Library, 2005, p. 75.

սերիալների մասին գրեթե ողջ գրականության մեջ շեշտվում է լսարանի և կերպարի միջև նույնականացումը՝ որպես ժամանակակից կենտրոնական հատկություն։ Շատ կարևոր է, թե որտեղ են տեղի ունենում գործողությունները, ինչ հոգսեր, մտահոգություններ և խնդիրներ ունեն կերպարները։ Դայկական սերիալներ դիտելիս թե՛ կերպարները, թե՛ նրանց հոգսերն ու մտահոգությունները մեծ մասամբ հասկանալի ու ճանաչելի են լսարանին։ Նրանք կարող են օգտվել միևնույն խանութերից, կրել նույն հագուստները, հաճախել նույն ժամանցի վայրերը, նույն դպրոցը, տոնել նույն տոնները և այլն։ Այստեղ է, որ համապատասխանություն է առաջանում հեռուստատեսային կյանքի և հեռուստադիտողի կյանքի միջև։ «Այդ պահին մենք ասում ենք «սա է կյանքը», դուրս ենք գալիս ցուրտ պատմությունից և գնում դեպի առասպելի տաք միջավայրը, որ պատրաստված է մեզ համար»¹։

Արդյո՞ք սերիալի հերոսները վերցված են իրականությունից, թե հորինված են. հարցվածները միանշանակ պատասխանել են՝ մի մասը հորինված է, մյուսը՝ իրականությունից վերցրած։ Դժվար է տարբերակել կամ սահմանագծել, թե որ կերպարներն են հորինված, որոնք՝ իրական։ Տեսարանը իրականությունը սերիալում անվանում է «սերիալային ճշմարտություն», ինչն էլ սահմանվում է որպես «միֆի ռեալիզմ»²։

Սպառողական գաղափարախոսության մուտքը հայկական ընտանիք

Սպառողական հոգերանությունը կամ զանգվածային սպառման մուտքը հայկական ընտանիք վերահմաստավորում կամ նորովի է սահմանում հարաբերություններն այնտեղ։ «Շանք» հեռուստարանկերության հեռարձակած «Գերդաստան» սերիալը դիտվում է որպես պարողիա հայկական ավանդական գերդաստանին։ Վերջինս զրկվում է իր պատմությունից և լցվում նոր իմաստներով։ Արժեգրկվում են տեղական, ազգային արժեքներն ու ավանդույթները։ Իր հյուրասիրությամբ հայտնի հայկական գերդաստանում, ուր ընտանիքի յուրաքանչյուր անդամ գիտի իր տեղն ու դերը, տանտիկինը տիաճությամբ է ընդունում ամուսնու հարազատներին։ Ներկայացվում է մերօրյա հայկական մի «գերդաստանի» պատմություն, ուր ապրում և մտածում են սպառողական գաղափարախոսությամբ։

¹ Robin Gutch, "That's life", Television Mythologies: Stars, shows & signs, edited by Len Masterman, Taylor & Francis e-Library, 2005, p. 14.

² Daniel Miller, "The consumption of soap opera", To be continued... soap operas around the world, edited by Robert C. Allen, Taylor & Francis e-Library, 2001, p. 219.

Այսպես, գլխավոր հերոսը՝ Տիգրանը, պետք է մասնակցի «Լավագույն լրագրող» մրցության: Սկզբում նա հրաժարվում է, կասկածում է՝ արդյո՞ք ինքը լավագույնն է: Դարցնում է կնոջը:

- Իհարկե, չէ՞ որ դու ամենաթանկ կոստյումն ես հագնում,- պատասխանում է կինը:

Կամ՝ Տիգրանը ճանաչվել է տարվա լավագույն լրագրող, այդ մասին հայտնում է մորը.

- Պաշտոնս բարձրացրել են, ես գլխավոր խմբագիր եմ,-ասում է Տիգրանը:

- Իսկ աշխատավարձդ բարձրացրե՞լ եմ,- հարցնում է մայրը:

- Չէ, չեն բարձրացրել, բայց դրանով իմ պատիվն է բարձրացել:

- Չէ մի չէ, քո պատիվը, մի հատ մտի խանութ, տեսնեմ եռ քո պատվով կարող ա քեզ մի հատ հաց տան,-ասում է մայրը:

Սպառողական գաղափարախոսությունը ներխուժում է ամենուր և սկսում վճռորոշ դեր կատարել հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, մարդկային հարաբերություններում:

«Գերդաստան» հեռուստասերիալում ամուսինները՝ Տիգրանը և Նելլին, վիճում են: Վերջինս ամուսնուն մեղադրում է հոռետես լինելու համար: Որպես ապացույց մի խաղ է առաջարկում. ինքը բառեր է սկսում ասել, իսկ ամուսինը պետք է արագ պատասխանի ասի, թե ինչ է մտածում դրանց շուրջ: Այսպես՝ նոր տարի- անիմաստ ծախսեր, սուրճանկոչ հյուրեր, ամուսնություն-ամուսնալուծություն, երջանկություն-արցունքներ և այլն:

Կինն ամուսնուն լավատես է համարում այն ժամանակ, երբ նա սկսում է խօսել Ֆերարիից, Բուգատիից, Մարդիլյան կղզիներում երեք հարկանի վիլլայից, Աստոն Մարտինից: Ստեղծվում է ժամանակակից հարուստ կյանքի միակ մողելը: Այդ ամենն, իհարկե, զալիս է հիմնական (core) մշակույթից և հավակնում է դառնալ միակ լավը:

Լավը, լավ ապագան և դրա հետ կապված ամեն լավ բան Հայաստանից դուրս է: Ու սրա դեմ որևէ հակափաստարկ չի բերվում: «Դրեշտակների դպրոցում» Միլենայի մոր համոզունքն է՝ պետք է անպայման զնալ այս երկրից, որտեղ աղջիկը լավ ապագա չի կարող ունենալ: Վերջինիս այստեղ պահողը միան Լևոնն է: Նա հաճախ է մտորում, թե ինչ կարող է առաջարկել սիրած աղջկան: «Ինչ առաջարկելն» առաջին հերթին հասկացվում է նյութապես ապահովելը, նյութականը, որի համար ոինգում խաղարկում է իր կյանքը:

Սերիալներուն նախընտրելի են ոչ միայն արևմտյան կենսակերպը և ապրանքները, այլև առանձին գրավչությամբ է ներկայանում այն երկիրը, որտեղից գալիս է այդ ամենը: Հայաստանյան մերօրյա իրականության մեջ սա կարող է դիտվել որպես արտագաղթի քարոզ: Ավելին, լավ կյանքի մասին ունեցած պատկերացումները մարդկանց սովորեց-

նում են անտեսել և չընդունել այն գաղափարները, որոնք կապված են հայրենիքի, հողի, ազգի, հայրենի տան հետ:

Օճառային օպերաների ուսումնասիրությամբ գրադպող Շարլոթ Բրունսդոնը գրում է. «Ժանրի կենտրոնական գաղափարն այն է, որ հասարակությունները գոյություն ունենան հեռուստացույցից դուրս ճիշտ այնպես, ինչպես նրա մեջ են»¹: Դանիել Միլլերի կարծիքով՝ «Օճառային օպերան ճշմարտության բնույթի մասին մետամեկնաբանություն է: Այն իր պատմություններով գործընթացներ է ուսումնասիրում, որոնց միջոցով բնական ուժերը, ինչպիսիք են հեշտասիրությունը և բամբասանքը, կենցաղի մասին գլորալ դիմկուրսը բացում են իրական կյանքի խառնաշփորի ու անկարգության առաջ»²:

Դայկական հեռուստասերիալներն, անշուշտ, որոշակի կապ ունեն իրականության հետ: Նեռուստադիտողին ծանոթ և հասկանալի են այնտեղ քննարկվող խնդիրները, ընտանեկան վեճերի կամ հենց արտագողքի պատճառները: Իհարկե, կարող է և հասկանալի լինել, որ կյանքը հենց սա չէ, որ սերիալներում իրադարձություններն ու կերպարները պվելի ընդգծված ու դրամատիկ են, քան իրական կյանքում: Խնդիրն այս դեպքում, սակայն, հենց սա չէ, այլ է կրանից եկող ազդակները:

Սերիալներում ներկայացված ընտանիքները հիմնականում բաժանված են կամ բացասական լույսի ներք և ներկայացված: Պատկերն այսպիսին է «Դրեշտակների դպրոցում». Լևոնի մայրը մենակ է մեծացրել որդուն, հայրը լքել է ընտանիքը: Գևորգն առանց մոր է մեծացել: Նրա հայրը մեծահարուստ է, որդուն խլել է մորից, ինչն էլ վերջինիս խելագարության է հասցրել: Դայրը ապրում է երիտասարդ կնոջ հետ, ում միայն ամուսնու փողերն են հետաքրքրում: Սեղայի հայրը բռնակալ է ընտանիքում, աղջկան չեն հասկանում ծնողները, ինչն էլ պատճառ է դարձնում, որ նա ինքնասպանության փորձ կատարի: Արամի հայրը մահացել է, տան ողջ հոգսը մոր ուսերին է, որը վատ անցյալ է ունեցել և ամեն զնով փորձում է թաքցնել երեխաներից: Միլենայինց ընտանիքում, թվում է, ամեն ինչ կարգին է: Սակայն նրանք էլ միայն Դայատանից հեռանալու մասին են մտածում:

Դայկական ընտանիքի շուրջ հյուսվարդ այս առասպելը հեռվից եկող ազդակների արդյունք է: Եթե ուշադիր լինենք, սերիալներում շատ են կանայք, ովքեր ուժեղ են, խելացի, համակրելի, հրենց ուսերին են տանում ընտանիքի ողջ հոգսը: Ենտոնի Գիղենսը, խոսելով ընտանիքի ինստիտուտում տեղի ունեցող փոխակերպումների մասին, նշում է. «Ո՞րն է դեմոկրատիայի ամրապնդման և տնտեսական զարգացման

¹ Charlotte Brunsdon, "Writing about Soap Opera", *Television Mythologies: Stars, shows & signs*, edited by Len Masterman, Taylor & Francis e-Library, 2005, p. 75.

² Daniel Miller, "The consumption of soap opera", *To be continued... soap operas around the world*, edited by Robert C. Alen,, Taylor & Francis e-Library, 2001, p. 219.


կարևոր խթանը աղքատ երկրներում: Իհարկե, կանանց հավասար իրավունքներ տալը և նրանց կրթական մակարդակի բարձրացումը: Իսկ ի՞նչը պետք է փոխել, որպեսզի տանք նրանց այդ հնարավորությունը, առաջին հերթին ավանդական ընտանիքը»¹:

«Միֆոլոգիաներ» աշխատության նախարանում Ռոլան Բարտը գրում է, որ չի ընդունում այն ձևը, որով լրագրերը, ամսագրերը, ֆիլմերը կամ ցուցահանդեսները ներկայացնում են սոցիալական կառուցվածքները. «Կարծ ասած, ժամանակակից հանգամանքները հաշվի առնելով, ես զայրանում եմ՝ տեսնելով Բնությունը և Պատմությունը խառնված ամենուր, և ուզում եմ պատռել ու ցույց տալ այն գաղափարական չարաշահումը, որը, իմ կարծիքով, թաքնված է այդտեղ»²:


Ո. Բարտը սա գրել է 1950-ականներին: Շատ բան չի փոխվել այդ ժամանակներից: Այսօր՝ մեղիսայի գլոբալացման դարաշրջանում, սոցիալական կառուցվածքը ներկայացնելու և մեկնաբանելու ավելի ազդու և նոր ձևեր են ի հայտ եկել: Մեր կարծիքով, օճառային օպերաներն այդ ձևերիցեն:

¹ Гидденс Энтони, Ускользающий мир: как глобализация меняет жизнь, пер. с англ., М., 2004, ст. 80.

² Roland Barthes, *Mythologies*, New York, 1957, p. 10.



ՀՈԴՎԱԾՆԵՐ



**Դավիթ Պետրոսյան
Մամուլի պատմության և տեսության
ամբիոնի վարիչ, ք.գ.դ., պրոֆեսոր**

**ՀԱԿԱՌԱԿ ՀԵՇՈԱՆԿԱՐԻ ՍԿԶԲՈՒՆՔԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻԹ ԷՍՍԵԻՍՏԻԿԱՅՈՒՄ
(Ս. Գալշոյան և Վ. Աստաֆե)**

Հակառակ հեռանկարի սկզբունքը հիմնականում բնորոշ է գեղանկարչությանը:

Այն գիտական շրջանառության մեջ է դրվել 20-րդ դարասկզբին: Ուսւն նշանավոր փիլիսոփիա և աստվածաբան Պավել Ֆլորենսկին, իր մի շարք աշխատություններում (7, ս. 46-98, 8, ս. 1-175, 9, ս. 419-527) քննադատելով ուղիղ (գծային) հեռանկարի մասին դեռևս Վերածննդի դարաշրջանում ծևավորված տեսական դրույթները, խնդրին մոտենում է գեղագիտական այլ դիտանկյունից և առաջադրում հակառակ հեռանկարի սկզբունքը (6): Վերջինիս հանդեպ հետաքրքրություն այս շրջանում մեծանում է նաև եվրոպական տեսական գրականության մեջ (5, ս.320-329):

Հակառակ հեռանկարը՝ իբրև հեռանկարի տեսակ, գործնական կիրառություն ուներ դեռևս բյուզանդական և հին ռուսական գեղանկարչության մեջ, մասնավորապես սրբապատկերային արվեստում: Տեսարանները, այն բնութագրելիս, առանձնապես ուշադրություն են դարձնում հետևյալ իրողության վրա. «Հակառակ հեռանկարում արտացոլվելիս առարկաներն ընդարձակվում են դիտողից հեռացնելու դեպքում, ասես գծերի կենտրոնը գտնվում է ոչ թե հոյիգոնից վրա, այլ հենց դիտողի ներսում: Հակառակ հեռանկարը կազմավորում է ամբողջական վիճվոյիկ տարածություն, որ կողմնորոշված է դեպի դիտողը և ենթադրում է նրա հոգեկոր կապը խորհրդանշական պատկերների աշխարհի հետ: Նետևաբար, հակառակ հեռանկարը պատասխանում է Վերզգայական սրբազն բովանդակության տեսանելի, բայց նյութական որոշակի ձևից զուրկ մարմնավորման խնդրին» (3):

Ընդհանրական այս բնութագիրը փորձենք բացել թեմայի շրջանակներում. հնարավոր է արդյոք հակառակ հեռանկարի դրսենորումներ գտնել գրական-հրապարակախոսական ժամանքի ստեղծագործությունների մեջ: Ուսումնասիրության համար իբրև օրինակ ընտրել ենք հայ արձակագիր Մուշեղ Գալշոյանի «Ազրավարք», «Ո՞ւր, Ժերուկ» և ուս գրող Վիկտոր Աստաֆեի «Արշակ նշանների ներքո» («Поход по метам») և «Ինչպես բուժեցին աստվածութուն» («Как лечили богиню») էսսեները:

Երկու արձակագիրներն էլ ապրել և ստեղծագործել են հիմնականում խորհրդային տարիներին. Ս. Գալշոյանը մահացել է 1980-ին, Վ. Աստաֆիկը շարունակել է իր գրական գործունեությունը նաև հետևորհրդային շրջանում: Այս գրողները անձնական շփումներ չեն ունեցել. մեկն ապրել է Հայաստանում, մյուսը՝ Սիբիրում: Չնայած դրան, նրանց ստեղծագործական գործունեության մեջ կան ընդհանուր կողմեր. երկուսն էլ տարիներ շարունակ աշխատակցել են մամուլին, հանդես են եկել հրապարակախոսական հոդվածներով, էսսեներով և, որ կարևոր է, նրանց գեղարվեստական արձակի առանցքում հայրենիքն է, ազգային և համամարդկային հիմնախնդիրների հանդեպ առանձնակի ուշադրությունը ու մտահոգությունը:

Ս. Գալշոյանի և Վ. Աստաֆիկի հիշյալ էսսեները դիտարկենք երկու հիմնական ուղղություններով՝ տարածաժամանակային և կերպարաստեղծման, քանի որ հատկապես այս ոլորտներն են մեզ հուշում հակառակ հեռանկարի սկզբունքի ուշագրավ բացահայտումներ:

Նյութի տարածաժամանակային ընկալման առունով հետաքրքիր պատկերներ կան մասնավորապես Գալշոյանի «Ազրավաքրա» և Աստաֆիկի «Արշավ նշանների ներքո» էսսեներում: Դայ գրողը մեկնում է խորհրդային Հայաստանի հարավ՝ Սյունիքի մարզ, որտեղ խորհրդային կյանքի առօրյան, հազարամյակներով այստեղ նիրիած ժամանակը և Սյունյաց հպարտ լեռնաշխարհը դառնում են նրա էսսենտական կտավի հիմնական ատրիբուտները: Վ. Աստաֆին իր էսսեում հյուսում է ծննդավայրին բնորոշ տարածական միավորների (Ենիսեյ, մերձենիսեյյան լճակներ, տայգա), ժամանակային երկու հատվածների (անցյալ, ներկա) և իր մանկապատամեկան տարիներին առնչվող հուզիչ մի պատմության ընդհանրական պատկերը:

Եթե մի պահ պատկերացնենք, որ երկուսն էլ գրչի փոխարեն վրձին են օգտագործել, ապա այս էսսեներում մեր առջև կրացվի հակառակ հեռանկարին բնորոշ հայացքի բազմակենտրոնության սկզբունքը: Յայտնի է, որ այս սկզբունքի ջատագովուները և առաջին հերթին Պավել Ֆլորենսկին գտնում էին, որ նկարիչը ոչ միայն տեսողական ընկալման, այլև հոգևոր հայացքի տարբեր կետերից պետք է ներկայացնի աշխարհը, իրերն ու երևույթները, ինչն էլ հանգեցնում է այդ հայացքի բազմակենտրոն ուղղվածության: Նման ընկալումը փոխանցվում է նաև նկարը դիտողին (6):

Ս. Գալշոյանն ու Վ. Աստաֆին ըստ էության հենց այս մոտեցմամբ էլ մատուցում են իրենց նյութը: Նրանք շարունակ փոխում են իրենց և պատկերվող օբյեկտների դիրքը: Արդյունքում՝ առարկաները, դեպքերն ու երևույթները, անկախ նրանց ժամանակային ու տարածական հեռավորությունից, հայտնվում են ընթերցողի մտապատկերում խոշոր պլանով: Դրա հետ մեկտեղ նրանցից յուրաքանչյուրը օբյեկտի խոշորաց-

ման սեփական մտահղացումն ու քայլերն ունի: Մասնավորապես Գալշոյանի մոտ առավել ակտիվ են այսպես կոչված ժամանակային խոշորացումները, իսկ Աստաֆևի գրողական հայացքը նույր վրձնահարվածներ է կատարում ծկնորսական խմբի անցած ճանապարհի, այսինքն՝ տարածության հատվածներում:

«Ագրավացար» էսեում Գալշոյանն ընթերցողին շարունակ տեղափոխում է ժամանակային տարրեր հարթություններ, ընդ որում՝ անկանոն հերթականությամբ. մի դեպքում հայացքի առջև 20-րդ դարասկիզբն է, այնուհետև քեզ կարող ես գտնել 5-րդ դարում, քիչ հետո՝ հայտնվել 18-րդ դարի հայ քաղաքական գործիչների կողմին, ապա նորից հեռանալ դարերի խորքը, և այսպես շարունակ: Դետաքրքիր է, որ փոքրիկ մի տարածքի վրա Գալշոյանը կարող է հյուսել նույն գյուղի հին և նոր ժամանակների հուզիչ պատմությունը, որն իր համադրության մեջ այնուհետև վերածվում է միհֆական ժամանակի:

Վ. Աստաֆևի էսեում, որտեղ, ինչպես նշեցինք, ակտիվ են տարածության ընկալումն ու պատկերումը, գրողը կարողացել է գտնել հակառակարին բնորոշ՝ առարկայի խոշորացման գեղարվեստական ուրույն մի հնարանք: Նրա էսեիստական կտավի վրա խոշոր պլանում ոչ թե Ենիսեյն է, նրա շուրջ տարածված լճակները կամ տայգան, այլ խիտ անտառներում ծառերի վրա արված այն նշանները, որոնք կողմնորոշում են անցորդներին: Փօքրիկ հերոսը, մնալով մենակ, անպայման կմոլորվեր, սակայն՝ «Եղևնիների, մայրիների, - այդ վայրերուն սոճիներ չեն աճում, - թխավուն բներին մեղրի կարիների պես կայծկլտացող սպիտակավուն, երկարուկ նականշանները ինձ մղում էին առաջ ու առաջ և ինձ համար ինչ-որ մտերմիկ, հարազատ էին առջևում լուսատտիկների պես առկայժող թերը» (2, c. 15):

Առարկաների, երևույթների տարածաժամակային խոշորացումներն իրենց հերթին ակտիվացնում են այն երեք չափումները, որոնք ի հայտ են զալիս հակառակ հեռանկարի սկզբունքով առաջնորդվող նկարիչների կտավներում: Արվեստի տեսաբանների կարծիքով՝ այդ չափումներն են շարժումը, հույզերը և գաղտնիքի առկայությունը (5, 320-329): Թերեւս հենց դրամք էլ ընդգծված դրսենորումներ ունեն Գալշոյանի ու Աստաֆևի էսեներում: Գալշոյանի մոտ շարժումը ակտիվ է հատկապես ժամանակային, Աստաֆևի մոտ՝ տարածական տեղաշարժերում: Ընթերցողին հույզերի փոխանցման առումով թե Գալշոյանի և թե Աստաֆևի վարպետությունը կասկած չի հարուցում: Ուշագրավ է նաև, որ երկու էսեներում էլ ավարտը գաղտնիքի որոշակի տարրեր է պարունակում: Գալշոյանի մոտ այն ավարտվում է երազով, որն առանձին մեկնաբանության կարիք ունի. «Սարսափած բացում եմ աչքերս, կողքիս մարդը քնի մեջ փացնում է, և նրա քնած ու ծանրացած գլխի տակ արդեն անզգայացել է ծախս» (1, c. 73): Աստաֆևը եգրափակում է

իր էսսեն վիրավորված մանկան արցունքների և «սպիտակ նշանների», խորհրդավոր միահյուսմամբ. «Դայըս գոռում էր, որ ես գոնե բաճկոնն համեմ, բայց ես նրան չէի լսում. անզուսպ, խղճալի, ամներող արցունքները մաքրում էի սառը ջրով, իսկ ջղածգված, կարմրատակած թարթիչներիս տակ փայլվում, գրգռիչ կերպով ուրվագծվում էին սպիտակավուն նշանները» (2, c. 16):

Դակառակ հեռանկարի սկզբունքը, տարածաժամանակայինից բացի, յուրահատուկ դրսերումներ ունի նաև կերպարաստեղծնան ոլորտում: Ե՛վ Գալշոյանը, և Աստաֆել իրենց էսսեններում ստեղծել են բազմաթիվ հետաքրքիր կերպարներ: Մենք կանգ կառնենք միայն նրանց վրա, որոնց տեսաբանները բնութագրում են իրեն հակառակ հեռանկարի մարդ (չելուեկ օբրատոյ որը ուրութեական): Կերցինս առանձնանում է շրջապատից իր անսովոր աշխարհընկալմամբ ու պահվածքով, երևույթների ինքնատիպ մեկնաբանությամբ և այլն: Նման մարդիկ հասարակության մեջ սովորաբար ստանում են «խենթ» մականունը: Դակառակ հեռանկարի սկզբունքի դիտանկյունից և. և. Ուստովան հետաքրքիր գուգահեռներ և անցկացնում սրբապատկերի և խենթի միջև. «Սրբապատկերի հմաստն այն է, որ կրում է բարձրագույն ծշմարտությունը, ի հայտ բերում այն: Օգտագործելով առկա աշխարհի տարրերը՝ ներկեր, տախտակ և, զլխավորը, երկրային կերպարներ, այն վկայում է չափածի, աստվածային իրականության, անհնարինի աշխարհի մասին և դրա համար էլ իր պատկերացումներում թեկվում է հակառակ հեռանկարի: Նույն կերպ ներքին փորձին և ներքին ոչ կանխակալ գիտելիքին միտված սրբապատկեր-մարդը օգտագործում է խորհրդանշանների լեզուն, գաղտնիքները, այսինքն՝ այն, որի ըմբռնան համար անհրաժեշտ է գործակցություն, մասնակցություն: Միայն գաղտնիքի տարածքը մտնելուն է բացահայտում ծշմարտությունը: Եվ նման այն բանին, ինչպես հնարավոր չէ սրբապատկերը ըմբռնել առանց աղոթքով նրան դիմելու, պաշտամունքից դուրս, այդպես էլ պակասամիտի սրբապատկերային վարքը մատչելի չէ արտաքին, ապակորոնականացված դիտողին, որի նակերեսային հայացքը հնարավոր է դարձնում պակասամիտին համեմատելու սովորական թշվառի, շնելագարի, ցինիկի հետ և այլն...» (3, c. 107):

Ս. Գալշոյանի «Ո՞ւր, ծերուկ» էսսենում այդպիսի մի կերպար կա, որին հեղինակը կնքել է Մաեստրո անունով: Կերցինս «Սի անգամ Արտակի հետ երկու-երեք ժամ նստել է ռեստորանում, խմել է, ծխել, լռել, խմել է, ծխել, լռել, հետո մատներով թխկթխկացրել է սեղանին և ասել այսքանը.

- Է՛տ անտեր ժամանակն ու երաժշտությունը ոնց որ նույն մարմինն ունեն» (1, c. 115):

Ողջ էսեում Մահստրոյի կերպարը շարունակ լրացվում է նրա տարօրինակ վարքի նոր դրսնորումներով:

Վ. Աստաֆիկի «Ինչպես բուժեցին աստվածութուն» էսեում համանան կերպար է ուզբեկ Արդուաշխտովը, որը պատերազմի օրերին, ռումբերի տարափի տակ փորձում է վերանորոգել գրսայգում բոլորի կողմից լքված ու մոռացված Կեներա աստվածութու արձանը: Ուզբեկի տարօրինակ վարքը մտահոգում է հեղինակին: «Ես նրան հարցրի՝ մի բան կերե՞լ է, թե՝ ոչ: Արդուաշխտովը չուց սկ-տարակուսած աչշերը. «Դուք ի՞նչ ասացիք»: Ես ասացի, որ նա գնդակոծության ժամանակ գոնե թաքնվեր, ախր կսպանեն, իսկ նա օտարուտի հայացքով, վատ թաքցրած սրտմտությամբ նետեց. «Դա ի՞նչ նշանակություն ունի» (2, ս. 79):

Երկու կերպարների վարքը երկրային կյանքով ու աթօրյայով ապրողներին անհասկանալի է: Նրանց հայացքն առավելապես ուղղված է դեպի ներս: Կերպարներից առաջինը՝ Գալշոյանի Մահստրոն, ներքին երկխոսության մեջ է ժամանակի հետ: Նա փորձում է ընկալել երկնային կյանքի գաղտնիքները և ընթերցողին իր հետ հաղորդակցելու համար խոսքի մեջ ակնարկում է ժամանակի ու երաժշտության՝ նույն մարմին ունենալը: Այլ խոսքով՝ կերպարն իր ներքին տեսողությամբ, մտորումներով, հակառակ հեռանկարի սկզբունքին համաձայն, ընթերցողին փորձում է մոտեցնել նոումենալ աշխարհի սահմաններին:

Վ. Աստաֆիկի հերոսը, որ արվեստի սիրահար է և գիտակ, ընկերոջ հետ զոհվում է ռումբերից վնասված աստվածութու ոտքերի տակ: Նրա մահը արվեստի՝ իբրև բարձրագույն արժեքի փրկության միջն է, որով հեղինակն ընթերցողին կրկին մատնացուց է անում հավերժի ու անմահության ճանապարհը:

Կերջում՝ մի կարևոր իրողության մասին ևս. թե տարածաժամանակային և թե կերպարաստեղծման ոլորտների քննությունը հակառակ հեռանկարի սկզբունքի տեսանկյունից մեզ շարունակ առերեսում է քննկող էսեներում խոսքի և հիշողության գործառութային համադրությանը:

Սրբապատկերներում հաճախ կարելի է հանդիպել Սուրբ Երրորդությանը՝ ոսկեգույն լուսապսակներով: Լուսապսակը, իսկ երկրաչափորեն՝ շրջանը, Աստծո պատկերն է. «Ինչպես որ շրջանագիծը չունի ոչ սկիզբ, ոչ վերջ, այդպես էլ Աստված անսկիզբ է և անվերջ» (6): Շրջանի՝ Աստծո պատկերի երկրային համարժեքներից մեզը գրող-արարիչն է իր ստեղծագործությամբ, որը նաև աստվածային Բանի՝ խոսքի առաջըալն է երկրում: Եթե Գալշոյանի և Աստաֆիկի գրական արվեստը համարենք արարչական շրջանի մանրակերներ, ապա նշված էսեներում դրանց շառավիղների դերում, իբրև հակառակ հեռանկարի սկզբունքի կրող, կարող է հանդես գալ հիշողությունը: Երկու գրողներն էլ իրենց ստեղ-

ծագործական որոնումները հիմնականում կառուցում են հիշողության հիմքի վրա: Դակառակ հեռանկարի համանմանությամբ, գեղարվեստական արտահայտչականության ուժով նրանք էսսեիստական կտավի վրա խոշոր պլանով հայտնվող պատկերները մի դեպքում են երկրային և նոումենալ /երկնային/ աշխարհների սահմանագծին, մյուս դեպքում տեղափոխում են դրանք ընթերցողի հոգևոր տարածք՝ երկու դեպքում էլ հաղորդակցական գլխավոր գործառույթը Վերապահելով սեփական ստեղծագործական հիշողությանը: Թերևս սխալված չենք լինի, եթե հիշյալ էսսեներում հիշողությունը բնութագրենք իբրև հակառակ հեռանկարի սկզբունքը հանարժեքորեն մարմնավորող գեղարվեստական միավոր:

Էսսեում, ինչպես նաև գեղարվեստական-հրապարակախոսական մյուս ժանրերում հակառակ հեռանկարի սկզբունքի դրսորման ոլորտները լայն են: Դուսով ենք՝ դրանք կշարունակեն մնալ հետազոտողների տեսադաշտում և գիտական նոր իմաստավորումների ու բացահայտումների բազմաթիվ առիթներ կտան:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- 1 **Սուշեղ Գալշոյան, Ազարաքար, Եր., «Դայաստան», 1990.**
- 2 **Виктор Астафьев, Затеси, Собрание сочинений в пятнадцати томах. Том 7. Красноярск, "Офсет", 1997 г., <http://www.fro196.narod.ru/library/astafiev/astafiev.htm>**
- 3 **Перспектива, <http://ru.wikipedia.org/wiki>**
- 4 **Н.Н. Ростова, Человек обратной перспективы как философско-антропологический тип (исследование феномена юродства). Вестник ТГПУ. 2007. Выпуск 11 (74). Серия: гуманитарные науки (философия), с. 105-111. Մորապատկերներուն հակառակ հեռանկարի սկզբունքի կիրառման մասին տես նաև Ֆլоренский П. А. Иконостас. Избранные труды по искусству. СПб.: Мифрил-Русская книга, 1993. – с. 1-175.**
- 5 **Тания Штеплер. Обратная перспектива: Павел Флоренский и Морис Мерло-Понти о пространстве и линейной перспективе в искусстве Ренессанса. Историко-философский ежегодник-2006 / Ин-т философии РАН. - М.: Наука, 2006, с. 320-329.**
6. **«Դակառակ հեռանկար» եզրույթը առաջին անգամ կիրառել է գերմանացի արվեստագետ Օւկար Վուլֆը 1907 թ., տես Օ. Գ. Սլյանով. Օկно в ноуменальное пространство: обратная перспектива в иконописи и в эстетике О. Павла Флоренского. Открытый научный семинар: “Феномен человека в его эволюции и динамике”, 15 февраля 2006 г. <http://www.synergia-isa.ru/deyat/download/sem08.doc>.**
- 7 **Տես՝ օրինակ, Флоренский П. А., Обратная перспектива, Соч. в 4-х тт. - Т.3(1). - М.: Мысль, 1999. - с. 46-98.**
- 8 **Флоренский П. А. Иконостас. Избранные труды по искусству. СПб.: Мифрил-Русская книга, 1993. – с. 1-175.**
- 9 **Флоренский П. А. Соч. в 4-х тт. - Т. 2. - М.: Мысль, 1999. - с. 419-527.**

ՀՈՒՅԱՆ ԴՊՁՂԵԱՆ
Մամուլի պատմության և
տեսության ամրիոնի դոցենտ, բ.գ.թ.

**ՑԱՆՑԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ
ՍԱՐՏԱՐԱՎԿԵՐՆԵՐԸ**

Ինտերնետային մամուլը դարձել է ազատ արտահայտվելու առանցքային գործիքներից մեկը: Այն ներառում է և կարծիքն ազատորեն արտահայտելու, և ազատորեն տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու բոլոր իրավունքների իրականացման անսպառ հնարավորություն յուրաքանչյուրի համար՝ անկախ սեռից, ազգությունից, մասնագիտությունից: Ինտերնետը հնարավորություն է տալիս յուրաքանչյուրին օգտվել իր սահմանադրական իրավունքներից՝ նվազագույն ջանքերով:

Չետևաբար, ինտերնետում ավանդական լրագրության երիկական և իրավական հարցերմ արդեն դուրս են գալիս գուտ մասնագիտության շրջանակներից և առնչվում են բոլորին՝ առանց բացառության: Այս ինաստով ինտերնետը բացառիկ է և անփոխարինելի:

Չենց իր բազմազան բովանդակության և հեշտությամբ օգտվելու հատկանիշների պատճառով է, որ ինտերնետի բովանդակությունը վիճելի է նաև երիկայի և օրենքի տեսանկյունից: Այն կարող է օգտագործվել ամենատարբեր նպատակներով: Մի կողմից՝ յուրաքանչյուրին հնարավորություն է տալիս անհապաղ ու անմիջապես լրատվություն տարածել, անկախ պետական սահմաններից, մյուս կողմից, սակայն, կարող է պարունակել անօրինական և ոչ երիկական բովանդակությամբ լրատվություն, և որ ամենակարևորն է՝ անվերահսկելի լրատվություն: Այսիմքն, մի կողմից ինտերնետում առանց միջամտության և կարգավորման կարող է իրացվել յուրաքանչյուրի՝ ազատ արտահայտվելու իրավունքը իր բոլոր դրական հետևանքներով, մյուս կողմից, սակայն, այդ անվերահսկելիությունը կարող է հանգեցնել խոսքի ազատության իրավունքի չարաշահման դիտավորյալ կամ անփութորեն:

Սկզբունքը հետևյալն է. յուրաքանչյուր ոք ունի ազատ արտահայտվելու իրավունք, սակայն այդ իրավունքը բացարձակ չէ և որոշ դեպքերում կարող է սահմանափակվել բացառապես օրենքով, եւրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածում նշված օրինական նպատակների պաշտպանության համար: Ընդ որում սահմանափակումը պետք է անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությանը: Ինչ վերաբ-

րում է լրագրողական եթիկային, ապա այն, ըստ էության, խարսխվում է մեկ հիմնարար սկզբունքի վրա՝ մի վճասիր: Մնացյալ սկզբունքներն արդեն ածանցվում են այս սկզբունքից:

Սակայն, պայմանավորված ինտերնետի անվերահսկելիությամբ, այնտեղ տարածում են գտնում արգելված բովանդակությամբ նյութեր, օրինակ՝ զրպարտություն և վիրավորանք, ներխուժում մարդկանց անձնական լյանք, բռնության ջարող, պոռնոգրաֆիա և այլն: Նման բովանդակությամբ նյութերի հրապարակումը առաջ է բերում եթիկական և իրավական պատասխանատվության հարց՝ անկախ նրանից, դրանք հրապարակվել են տպագիր, էլեկտրոնային, թե՝ ցանցային ԶԼՄ-ներում: Իրավական և եթիկական հարցերը նույն են ամենուրեք:

Կարևորագույն հարցը, այսպիսով, ժամանակակից աշխարհում մնում է ինտերնետի անսահմանափակ հնարավորությունների արդարացի օգտագործումը. բլոգները, սոցիալական ցանցերը, ինտերնետային մամուլը, ֆորումներում արտահայտված կարծիքները որքանով են համապատասխանում լրագրության արդարացի օգտագործման պահմին:

Արտահայտվելու ազատությունն ընդդեմ մարդու պատվի և արժանապատվության:

Սարդու արժանապատվությունը հօչակված է որպես բարձրագույն արժեք և մարդու իրավունքների հիմք: Սա, թերևս, մամուլում՝ ներառյալ ցանցային, ամենահաճախ հանդիպող ուժնահարումներից է, եթե արտավորվում են մարդու պատիվն ու արժանապատվությունը, նրան մեղադրում են անօրինական գործողություններ կատարելու մեջ՝ առանց պատասխանի հնարավորություն ընծեռելու և/կամ առանց որևէ փաստական հիմքի: Մինչդեռ եթիկայի կարևորագույն սկզբունքներից է մարդկային արժանապատվության նկատմամբ հարգանքը: Որևէ մեկին որևէ բանում մեղադրելուց առաջ պետք է նրան պատասխանի հնարավորություն ընծեռել:

Ինտերնետում մարդիկ հնարավորություն ունեն գրել այն ամենը, ինչ մտածում են: Եվ ամենակարևորը, ինտերնետում հրապարակվածը հասանելի է դառնում անբողջ աշխարհում: Սա նաև առաջ է բերում իրավական խնդիր իրավական հետևանքներով: Որպես անձի պատվի և արժանապատվության պաշտպանության սահմանադրական իրավունքի ապահովման երաշխիք՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Անձի պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավը ենթակա են պաշտպանության այլ անձի կողմից իրապարակայնորեն արտահայտված վիրավորանքից և զրպարտությունից»:

Ստացվում է, որ զրպարտչական և վիրավորական օնլայն իրապարակունքների հեղինակների դեմ նույնպես կարելի է դատական գործըն-

թաց սկսել գրպարտության և վիրավորանքի հոդվածների համաձայն (Քաղ. օրենսգիրք, 1087.1 հոդված): Ի դեպ, քաղաքացիական օրենսդրությունը գրպարտության և վիրավորանքի հասկացությունները սահմանելիս չի առանձնացնում՝ իրապարակողը լրագրող է, թե այլ քաղաքացի:

Նշենք, որ այսօր արդեն երկու ինտերնետային թերթ ներգրավվել են դատական գործընթացների մեջ՝ news.am և report.am: Report.am-ի գործի պարագայում թերթի դեմ դատական հայց ներկայացնողը հենց լրագրող է «Իրավունք» թերթի խմբագրական խորհրդի նախագահ, նաև քաղաքական գործիչ Յայկ Բարուխանյանը, ով պահանջում է 6 մլն դրամ փոխհատուցում իրեն պատճառված բարոյական վճարի համար:

Report.am լրատվամիջոցում եղիկ Անդրեասյանի հեղինակած ««Իրավունք» իրավունքը Յայկ Բարուխանյանի թիվ ծայրին է» հոդվածում վերլուծաբանն անդրադարձել է ՄԻՄ կուսակցության նախագահ Յայկ Բարուխանյանի գործունեությանը, որով պատասխանել է «Իրավունք» թերթում իրապարակված Դ. Օրդույանի հոդվածին՝ նշելով, որ Դ. Օրդույանը հենց Յայկ Բարուխանյանի կեղծանունն է: Վերջինս չի օգտվել պատասխանի կամ հերքում տպագրելու իրավունքից և միանգամից դիմել է դատարան՝ պահանջելով ստիպել լրատվամիջոցին ու հեղինակին հերքել իր պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող տեղեկությունները, իրապարակային ներողություն խնդրել իրենից, իրապարակել դատարանի վճիռը նոյն լրատվամիջոցում, ինչպես նաև փոխհատուցել դատական ժախսերը: Օրինակ՝ Յայկ Բարուխանյանը վիրավորական է համարել իր հասցեին հնչեցրած այն միտքը, թե «քաջարի» գորավարի մոտ լավ են ստացվում ներկուսակցական հեղաշրջումներն ու կուսակցական կնիքի համար մղվող մենամարտերը»: Յայցվորը գրպարտություն է համարել նաև իր մասին ասված «կուսակցություն քանոնելու» «մեղադրանքը», վիրավորական է համարել հեղինակի հարցադրումը. «Յասկանում ենք, որ ընտրություններ են մոտենում: Բայց մի՞ն կարելի է ընտրվելու համար ինքնավաճառվել և այն էլ այդքան էժան գնով»:

Պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության համար մյուս գործը հարուցված է News.am լրատվական կայքի դեմ Յայաստանի առիթմոլոգիական սրտաբանական կենտրոնի կողմից: 2010 թ. նոյեմբերի 23-ին կայցը հոդված էր իրապարակել «Սրտի արատով հիվանդին առիթմոլոգիական սրտաբանական կենտրոնում «ֆռուացրել» են ու այլ սարք տեղադրել» վերնազրով: Այնտեղ ասվում է, որ քաղաքացի Յովհաննես Կարոջյանը News.am-ի խմբագրությանը պատմել է, թե իրեն խարել են և 10 տարի շահագործման ժամկետով էլեկտրակարողիխթանիշի փոխարեն էժանագին սարք են տեղադրել:

Ի դեպ, գրապարտության և վիրավորանքի համար նախատեսվող առավելագույն տուգանքների չափերը կարող են կազմել՝ 2 մն՝ գրապարտության և 1 միջին՝ վիրավորանքի դեպքում: Միևնույն ժամանակ, հայաստանյան ինտերնետային տասնյակ կայքերում հաճախ ենք հանդիպում այնպիսի բովանդակությամբ իրապարակումների, որոնց կարող են հանգեցնել հրավական պատասխանատվության:

Արտահայտվելու ազատությունն ընդդեմ մարդու անձնական կյանքի գաղտնիության իրավունքի:

Ինտերնետային կայքերում կարելի է անսահմանափակ և բազմապիսի տեղեկություններ գտնել տարբեր քաղաքական և հանրային գործիչների, հայտնի ու անհայտ մարդկանց կյանքի մանրամասների վերաբերյալ: Սարդկանց ինտիմ կյանքի, ընտանեկան, առօդքական վիճակի մանրամասները դառնում են հանրային քննարկման առարկա, ինչն ուղղակիորեն ոտնահարում է մարդկանց անձնական կյանքի գաղտնիության իրավունքը՝ հռչակված սահմանադրությամբ: Առանցքային է հետևյալ հարցը՝ ինտերնետում հրապարակվող տեղեկատվություններ ծառայում է հասարակության շահի՞ն, թե՝ պարզապես բավարում է նրա հետաքրքրասիրությունը: Դասարակական շահի պաշտպանության կարևորագույն գործոնը հաշվի առնելով՝ մասնավոր կյանքի, ինչպես և մարդու պատվի, արժանապատվության գործերում պետք է տարբերակել հասարակ քաղաքացի և հանրային-պետական գործի հասկացությունները: Կերպիններս պետք է առավել հանդուրժող լինեն իրենց հասցեին ինչող քննադատություններին, համակերպեն այն մտքի հետ, որ իրենց կյանքը ավելի բաց է մամուլի և հասարակության զննող հայացքի առաջ: Մամուլի ազատությունը և մարդու անձնական կյանքի իրավունքը հավասարակշռելու առումով կարևոր երաշխիք է պարունակում «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը, որի համաձայն՝ «գաղտնի տեսածայնագրմանը ծեռք բերված, ինչպես նաև մարդու անձնական և ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկությունների տարածումը թույլատրվում է, եթե դա անհրաժեշտ է հանրային շահերի պաշտպանության համար»: Բայց սա միայն պետական պաշտոնյաների և հանրային գործիչների պարագայում մասնավոր քաղաքացիների անձնագան կյանքի մանրամասների իրապարակում չի թույլատրվում:

Սարդիկ ունեն հավաստի և ծզգրիտ տեղեկատվություն ստանալու իրավունք: Լրատվության հավաստիությունը և արժանահավատությունը հաջորդ կարևոր հիմնախնդիրն է ինտերնետային մամուլում: Շատ դեպքերում տեղեկատվությունը հրապարակվում է առանց լրատվության աղբյուրներին կամ սկզբնաղբյուրներին պատշաճ հղումներ կատարելու: Եթիկական սկզբունքն ասում է, որ լրագրողը պետք է

հաղորդի բացառապես ճշգրիտ, անկողմնակալ լրատվություն և ստուգված լուրեր:

Տեղեկատվության աղբյուրի նշումը վստահելի է դարձնում նյութը: Իհարկե, արիեստավարժ լրագրության մեջ երեխն օգտագործվում են նաև անանուն աղբյուրներ՝ կարևոր տեղեկատվությունը հասարակությանը հասցնելու համար, երբ աղբյուրը համաձայնում է տեղեկատվությունը տալ միայն գաղտնի մնալու պայմանով: Մեզանում, սակայն, առանց լրատվության աղբյուրի նյութերը երեխն բամբասանքը որպես լուր ներկայացնելու խնդիր են լուծում:

Որոշ դեպքերում ակնհայտ է դառնում, որ կեղծ, չստուգված ապատեղեկատվությունը տարածվել է միտումնավոր, այսինքն՝ կոնկրետ նպատակով որևէ անծի, անծանց, խմբի հեղինակությունը, պատիվն ու արժանապատվությունը ստորացնելու միտումով: Մինչդեռ լրագրային եթիկան հռչակում է, որ լրագրողը պետք է ծեռնպահ մնա անհիմն, մոլորեցնող կամ խեղաթյուրված նյութերի հրապարակումից: Ինտերնետային մանուկի անվերահսկելիության պայմաններում գործում է լրագրության կարևորագույն կանոնի խեղաթյուրված տարբերակը: Եթե ավանդական մանուկում կիրառվում է՝ «Ստուգիր, հետո հրապարակիր», ապա ինտերնետում կիրառվում է «Դրապարակիր, հետո ստուգիր» կանոնը: Երբեմն նույնիսկ գործում է «Ընդհանրապես մի ստուգիր» տարբերակը:

Գրագողության հարցն ինտերնետում

Սա թերևս ամենաաններելի մեջքն է լրագրության մեջ: Լրատվական նյութերը պետք է ունենան պատշաճ հղումներ իրական հեղինակին: Այս խախտումը տարածված է հատկապես միջազգային լրահոսում, երբ հայկական լրատվական կայքերը գրում են միջազգային անցութարծի մասին՝ առանց հղում անելու սկզբնաղբյուրին: Այն տպափորությունն է ստեղծվում, որ հայկական ինտերնետային կայքի լրագրողը հենց նոր է հարցադրուց վերցնել, օրինակ, ճապոնիա հյուրախաղերի մեկնող Լեդի Գագայից:

Լեզվի հարցը նույնպես օրախնդիր է: Թեև ինտերնետային մանուկի լեզուն ավելի անմիջական է ու ընկալելի, սակայն որոշ դեպքերում վիրավորող է, սարողո, անճաշակ ու ոչ գրագետ:

Պետք է նկատի ունենալ, որ որոշ դեպքերում եթիկական և իրավական խախտումներ կարող են ունենալ անդրսահմանային խնդիրներ, ինչպես, օրինակ, միևնույն բովանդակությունը մի երկրում, որտեղ այն տեղադրվում է ինտերնետ, օրինակամ է, իսկ մեկ այլ երկրում, որտեղ ներբեռնում են, ապօրինի: Օրինակ՝ պարունակում է տվյալ երկրի

համար հեղափոխական կամ սահմանադրական կարգի տապալմանն ուղղված կոչեր:

Նկատենք, որ եթե ինտերնետային կայքն իրեն ճանաչել ու իռջակել է որպես ԶԼՍ, որպեսզի օգտվի ՀՀ ՁԼ մասին օրենքով լրատվության միջոցների ներկայացուցիչներին ընծեռված իրավունքներից, ապա պետք է կրի նաև վերջիններիս պարտականությունները, քանի որ իրավունքները գոյություն ունեն բացառապես պարտականությունների հետ համատեղ: Լրագրողների բացառիկ իրավունքներից է, օրինակ, ՁԼ մասին օրենքի 5-րդ հոդվածով՝ լրագրողի տեղեկատվության աղբյուրը գաղտնի պահելու իրավունքը, ինչը չունեն այլ քաղաքացիներ: Օրենսդրությունը հատուկ պաշտպանության տակ է առել լրագրողի այս իրավունքը, որպեսզի վերջիններս կարողանան իրականացնել իրենց առաքելությունը: «Լրատվական գործունեություն իրականացնողները և լրագրողները պարտավոր չեն բացահայտել տեղեկատվության աղբյուրը», - նշվում է օրենքի 5-րդ հոդվածում: Քննարկման հարց է՝ կարո՞ղ է տարածվել այս իրավունքը նաև բլոգերների վրա:

Օնլայն լրագրությունը մի ոլորտ է, որի կարգավորման լավագույն մեխանիզմներն առայժմ գտնված չեն ամբողջ աշխարհում: Կարգավորման փորձերը հանգեցնում են ազատությունների սահմանափակման և գրաքննության, մյուս կողմից ոլորտն առանց կարգավորման թողնելու պարագայում մարդու իրավունքների և ազատությունների դեմ ստանում:

Դաշվի առնելով վերոնշյալը՝ մենք այն կարծիքին ենք, որ ոլորտը պետք է գնա ինքնակարգավորման ճանապարհով: Բլոգերների հանրությունը Դայաստանում կարող է հանդես գալ մեկ միասնական էթիկական վարքագիծի կանոններ ընդունելու նախաձեռնությամբ, ինչն այդպես էլ չհաջողվեց ներ ավանդական ԶԼՍ-ներին: Ինտերնետի հիմնարար սկզբունքը բացությունը, նպաստում է ազատ արտահայտվելու իրավունքի իրականացմանը, խթանում է տեղեկատվության, գաղափարների և գիտելիքի ազատ հոսքը, սակայն միևնույն ժամանակ, սպառնում մարդկանց իրավունքներին ու շահերին, ազգային անվտանգությանն ու հանրային շահին, որոնք պաշտպանված են ազգային և միջազգային օրենսդրությամբ:

Վարդուիի Պետրոսյան
Մամովի պատմության և տեսության
ամբիոնի ասիստենտ, բ. գ. թ

**ՂԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՎ ՂԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՂԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Ղեղինակային և հարակից իրավունքները մարդու իիմնարար ազատություններից են, որոնք սահմանվում են ինչպես երկրի ներքին օրենսդրությամբ, այնպես էլ միջազգային իրավական փաստաթղթերով ու նորմերով: Տեղեկատվական հասարակության զարգացմամբ առաջ եկած խնդիրները և դրանց ազդեցությունները հեղինակային և հարակից իրավունքների համակարգերի վրա ավելի շատ նկատելի են օն-լայն միջավայրում: Ուստի օրեցօր զարգացող տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջանում էլ ավելի է կարևորվում այս հարաբերությունների իրավական կարգավորումը:

Ղեղինակային իրավունք ասելով՝ հասկանում ենք այն իրավունքները, որոնք ստեղծագործության հեղինակին վերապահվում են օրենքով սահմանված կարգով: Իսկ հարակից իրավունքները կատարողների, հնյունագործ, ֆիլմ, դրանք հեռարձակող կազմակերպությունների, հրատարակիչների, տվյալների բազաների պատրաստողների իրավունքներն են իրենց արտադրանքի նկատմամբ:

Ղեղինակային և հարակից իրավունքների մասին առաջին իրավական փաստաթուղթը 1886 թ. սեպտեմբերի 9-ին ընդունված Բեռնի Կոնվենցիան է, որին այսօր անդամակցում է ավելի քան 164 պետություն: 1952 թ. հոկտեմբերի 6-ին ժնևում ևս ընդունվեց այսպիսի համաձայնագիր¹:

Մեզանում համանում օրենք ընդունվեց դեռևս 1998 թ., քայլ ուժը կորցրած ճանաչեց, երբ 2006 թ. ընդունվեց այս իրավունքները սահմանող նոր օրենք: Սույն օրենքի համաձայն՝ «Ղեղինակ է ճանաչվում այն անձը, ով ստեղծել է ստեղծագործությունը»²: Օրենքի ուսումնասիրությունը պատկերացում է տալիս հեղինակային իրավունքի օրինակությունը հանդիսացող հասկացությունների մասին: Դրանք են՝ գրականության,

¹ Силке фон Левински, Роль и будущее Всемирной конвенции об авторском праве, Бюллетень ЮНЕСКО по авторскому праву, № 4 октябрь–декабрь, 2006, с. 5.

² ՀՀ օրենքը «Ղեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», Հոդված 6, 2006:

գիտության, արվեստի տարբեր բնագավառների, տեքստով կամ առանց տեքստի եղածշտական ստեղծագործությունները, տեսալսողական ստեղծագործությունները (կինո-հեռուստաֆիլմերը, անիմացիոն և մուլտիպլիկացիոն կինոնկարները, գովազդային, փաստավավերագրական, փաստագրական ֆիլմերը): Դետաքրքիր է այն փաստը, որ չնայած մեդիա դաշտին վերաբերող որոշ արտադրանքներ հեղինակային իրավունքի պաշտպանությունն են վայելում, այդուամենայնիվ, «օրվա նորությունների կամ ընթացիկ իրադարձությունների և փաստերի մասին տեղեկատվությունն»¹ այդ ցանկից դուրս է:

Դեղինակային և հարակից իրավունքները դրանց տնօրինողին հնարավորություն են տալիս արտոնելու կամ արգելելու գործերի և պաշտպանվող այլ առարկաների օգտագործումը, վերարտադրությունը և նմանատիպ այլ գործողություններ: Լրատվության ոլորտին առնչվող հետաքրքիր դրույթներ է պարունակում Օրենքի 32-րդ հոդվածը, որով սահմանվում է հարցագրույցի նկատմամբ հեղինակային իրավունքը, ըստ որի՝ հարցագրույցի համար պատասխանատու են հեղինակը և գրուցակիցը, և այն հրապարակելու թույլտվությունը պատկանում է նրանց երկուսին: Այս օրենքի պահանջին այսօր տեղեկատվական հասրակությունն ավելի է հետևում:

Չնայած օրենսդրական սահմանումներին՝ իրականում հեղինակային և հարակից իրավունքների խախտման երկու տարբերակ կա: Դրանցից մեկը վերաբերում է հեղինակի գույքային իրավունքի խախտմանը, որն առավել հայտնի է «պիրատություն»² անվամբ, իսկ մյուսն առնչվում է գույքային իրավունքի խախտմանը: Սա էլ հայտնի է գրագորություն անվամբ: Եթե առաջին խախտումն ավելի շատ հեղինակային իրավունքի սուբյեկտ հանդիսացող անձանց մտահոգությունն է, ապա երկրորդը՝ մեր՝ լրագրողներիս: Դամացանցն ստեղծել է թոլոր պայմանները այս խախտումների տարածման համար: Պետք է արձանագրենք, որ այսօր լրագրողական հանրության թիվ մեկ մտահոգությունը հենց «copy past» կոչվածն է: Այս խնդրին իրենց ամենօրյա աշխատանքի ընթացքում առնչվում են գրեթե թոլոր լրագրողները, որոնց հեղինակած նյութերը հեշտությամբ հայտնվում՝ են տարբեր կայքերում՝ առանց հղման կամ, լավագույն դեպքում, մասնակի հղմանը: Այնինչ ակտիվ հղումը կայքին կամ ավանդական լրատվամիջոցի ցանկացած տեսակին պարտադիր է: Կարծում ենք՝ ակտիվ հղման հարցում ևս կա մի կարևոր սկզբունք, այն է՝ չի կարելի հղման այս ծեփն դիմելով՝ ամբողջությանը օգտագործել որևէ լրագրողի նյութ: Եթե փաստերի փոխառնա հանգամանքն ավելի դժվարապացուցելի է և կարող է չհամարվել գրա-

¹ Նույն տեղում, Հոդված 3:

² Близищец И. А., Леонтьев К. Б., Авторское право и смежные права, М., 2009, с. 312.

գողություն այն պարզ պատճառաբանությամբ, որ այդ փաստն ինչ-որ լրատվամիջոցի ավելի վաղ է հայտնի դարձել, ապա թեմաների, դրանց մեկնաբանությունների դեպքում՝ ճիշտ հակառակը: Դարավոր չէ, որ նույն երևույթի միաժամանակյա ներկայացման հարցում տարբեր լրագրողներ ունենան նույնատիպ մոտեցում, նույնաբովանդակ մեկնաբանություն:

Լրատվությունը հեղինակային իրավունքի օրեկտ չէ ոչ միայն օրենքի, այլև նտավոր սեփականության տեսանկյունից (1967թ. հուլիսի 14-ին Ստավոր սեփականության համաշխարհային կազմակերպության հիմնած Ստոկհոլմյան Կոնվենցիան¹ սահմանում է այդ սեփականության օրյեկտները, որոնք նույնական են հեղինակային և հարակից իրավունքների օրյեկտներ հանդիսացող հասկացությունների հետ):

Գրագողությունը մարդու այլ իրավունքների խախտման նման համարվում է քրեորեն պատճեխ արարք և կարգավորվում է ՀՀ Զրեական օրենսգրքի 158-րդ հոդվածով. «Հեղինակային կամ հարակից իրավունքի օրյեկտն ապօինի օգտագործելը կամ հեղինակությունը յուրացնելը, եթե այդ արարքը խոչըր վնաս է պատճառել, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով»²: Լրագրողների՝ նման իրավիճակներում չհայտնվելու միակ երաշխիքը տեղեկատվության աղբյուրի վկայակոչումն է: Սակայն հայատանյան դատական պրակտիկան ցույց է տալիս, որ դատական հայցերը, կապված գրագողության հետ, չափազանց քիչ են: Հակառակը, վերջին տարիներին համեմատաբար ավելացել են տեսալսողական ստեղծագործությունների. Կորպորատիվ ընկերությունների ապրանքանիշների հեղինակային իրավունքի խախտման հայցերը:

Այս խնդրին առնչվող գործեր ևս ուսումնասիրում է ինքնակարգավորող սուրբեկտ հանդիսացող Դիտորդ մարմինը:

Կանածորից ազատ լրագրող Գայանե Յովսեֆյանը դիմել էր Դիտորդ մարմին՝ բողոքելով «Դրապարակ»³ թերթի դեմ՝ վերջինիս կողմից իր հեղինակային իրավունքների խախտման կապակցությամբ: Դիտորդ մարմինը թերթին առաջարկեց վեճում հանդես գալ որպես միջնորդ, բայց արձագանք չեղավ: Պատճառը «Դրապարակ»-ի՝ ինքնակարգավորման նախաձեռնության անդամ չլինելն էր: Իսկ ահա հեղինակային իրավունքի խախտման մեկ այլ դեպքում («Դետաքննող լրագրողներ» 74-ի անդամ Սառա Պետրոսյանը բողոք էր ներկայացրել Դիտորդ մարմին «Փակագիծ» թերթի դեմ՝ իր հեղինակային իրավունքի խախտման

¹ «Մտավոր սեփականության պահպանության ուղեցույց», Երևան, 2007, էջ 11:

² «Երավական ուղեցույց հեռարձակողների համար», Երևան, 2004, էջ 83:

³ www.ypc.am

համար) Մարմնի առաջարկությունն ընդունվեց «Փակագիծ» թերթի կողմից, և վերջինս հրապարակեց համապատասխան ուղղումը:

Գոյություն ունեն մի շարք առանցքային հասկացություններ ու սկզբունքներ, որոնք ընդհանուր են հեղինակային և հարակից իրավունքների վերաբերյալ օրենսդրական համակարգերի մեջ մասի համար: Չնայած հաճախ դրանց կիրառման եղանակները, մեկնաբանման ձևերը տարբեր են: Դրանք ևս պայմանավորված են նոր տեղեկատվական տեխնոլոգիաների գոյությամբ: Օրինակ՝ մուլտիմեդիա արտադրանքի ստեղծմանն այսօր ավելի շատ մասնագետներ են մասնակցում: Սա արդեն կոլեկտիվ ստեղծագործական աշխատանք է, և այս համագործակցության արդյունք հանդիսացող գործերը՝ հանրագիտարանները, հանրագիտարանային բառարանները, գիտական աշխատությունները պարբերական և շարունակական ժողովածուները, թերթերը, ամսագրերը և պարբերական հրատարակությունները ևս վայելում են հեղինակային ու հարակից իրավունքների պաշտպանությունը: Մյուս կողմից քվարկված ստեղծագործությունները համարվում են ազատ օգտագործման օբյեկտներ՝ ստեղծագործության սկզբնաղբյուրի պարտադիր նշումով: Օրենքի 22-րդ հոդվածի դրույթներն այսօր հիմնականում պաշտպանում են թե՛ ավանդական լրատվամիջոցներում, թե՛ տեղեկատվական կայքերում: Խոսքը մասնակի տեսության ձևով թերթերի, ամսագրերի հոդվածներից, տարբեր կայքերի հրապարակումներից քաղվածքների վերարտադրության, հրապարակավ արտասանված ելույթների, հայտարարությունների և նմանօրինակ այլ ստեղծագործությունների՝ մեղիադաշտում հայտնվելու և հեռարձակման մասին է:

Այսպիսով, հեղինակային և հարակից իրավունքի պաշտպանությունը այլ իրավունքների կողքին հանդիսանում է քաղաքացիական հասարակության զարգացման հիմնաքարը: Խնդիրը պարզապես այդ իրավունքների զանգվածային գիտակցումն է և դրանց ճիշտ կիրառությունը, հասրակական հարաբերությունների արդյունավետ կազմակերպումը:

Առհասարակ, մտավոր սեփականության իրավունքների պատշաճությունը պահպանությունը հանդիսանում է ոչ միայն տարբեր խախտումների և բախումների կանխարգելման միջոց, այլև ներդրումների, տեխնոլոգիաների փոխանցման, ստեղծագործության, մշակույթի մրցակցության գործիք: Նեղինակների ինքնարտահայտման համար պետք է սահմանվեն ընդհանուր բնույթի պարտադիր կանոններ, որոնք կստեղծեն կայուն և կանխատեսելի վիճակ ինչպես հեղինակների, այնպես էլ նրանց ստեղծագործություններն օգտագործողների համար:

**Գայանե Վարդանյան
Մամուլի պատմության և տեսության
ամրիոնի հայցորդ**

**ԹԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՎԱԶԴՐԸ ԿԱՅԱՍՏԱՆՈՒՄ
(Դամառու ուրվագիծ)**

Աշխարհի բոլոր երկրներում սովորական առևտրային գովազդն իր բնույթով խիստ տարբերակվում է քաղաքական գովազդից, որի հիմնական նպատակն է քաղաքական գործչին հասարակությանը ներկայացնել միայն լավ կողմերով։ Այդ ժամութության առանձնահատկություններից է նաև այն, որ գովազդի հասցեատերը պետք է շատ լավ հիշի ներկայացվող անհատին և նրա մոտ տվյալ մարդու հանդեպ պետք է ծևավորվի դրական կարծիք։ Օրինակ՝ պատօնամավորության թեկնածուի ճանաչվածությունը քարոզարշավի ամենակարևոր փուլերից է. եթե այդ ընթացքում ընտրողը նրան չիշեց, չի հիշի նաև քվեախցում։ Քաղաքական գովազդում նշվում է, թե հասարակության ո՞ր խնդիրներն են թեկնածուի համար կարևոր, բնականաբար դրանք պետք է լինեն այն հիմնախնդիրները, որոնցից թեկնածուն քաջատեղյակ է և հնարավորություն ունի դրանք բարձրածայնել կամ լուծել։ Քաղաքական գովազդը ենթադրում է նաև թեկնածուի ինիցի ստեղծման անհրաժեշտություն, մի բան, որը մեր իրականության մեջ նոր-նոր է ծևավորվում։ Քաղաքական գովազդը խիստ անհատական է, թերևս դժվար է ասել՝ սա է քաղաքական գովազդի դասական տարրերակը։ Սովորաբար գովազդներում ներկայացնում են թեկանծուին որպես ընտանիքի հայր, լավ ամուսին, հոգատար ժնող։

Մի շարք երկրներում քաղաքական գովազդը սահմանափակված է՝ բացառությամբ նախընտրական արշավների ժամանակահատվածի (օրինակ՝ Գերմանիայում, Իսպանիայում): Այլ երկրներում (օրինակ՝ Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում) սահմանափակումները նախատեսված են միայն նախընտրական արշավների ժամանակաշրջանների համար։ Ֆրանսիայում ընտրություններին նախորդող երեք ամիսների ընթացքում արգելված է ցանկացած վճարովի քաղաքական գովազդը մանուլում, ուղղոյվ և հեռուստատեսությամբ։ Մեզ մոտ, իհարկե, նման սահմանափակումներ չկան։

Քաղաքական գովազդի հետ կապված հարաբերությունները ՀՀ «Գովազդի մասին» օրենքով չեն կարգավորվում, այդ մասին նշված է

նաև Օրենքի 1-ին հոդվածի 4-րդ կետում: Դրանց մասին որոշակի սահմանափակումներ են ամրագրված Ընտրական օրենսգրքում:

Ընդհանրապես ընտրությունները արդի աշխարհում քաղաքականության կարևորագույն բաղադրամասն են: Դրանք քաղաքացիների քաղաքական կամքի արտահայտման օգնությամբ իշխանության և կառավարման մարմինների ծևավորման միջոց են: Ժամանակակից աշխարհում ընտրությունները ժողովրդավարության առանցքային մեխանիզմն են, ժողովրդի ինքնիշխանության և քաղաքական կամքի դրսերման գլխավոր ձևը: Ընտրությունների ազատությունը ենթադրում է քաղաքական, վարչական, սոցիալ-տնտեսական, հոգեբանական և տեղեկատվական ճնշման բացառում ինչպես ընտրողների, այնպես էլ թեկնածուների և ընտրությունները կազմակերպողների վրա: Բայց այդ, ընտրությունների ազատությունը ենթադրում է ազատություն օրենքի շրջանակում՝ հաշվի առնելով նաև նախընտրական քարոզչության եթիկական սահմանափակումները: Տարբեր քաղաքական ուժեր պետք է հնարավորություն ունենան պայքարել ընտրողների վստահության քվեն ստանալու համար, վերջիններիս ծանրացնելու իրենց նախընտրական ծրագրերին և հավատացնելու, որ իրենց ծրագիրն առավելություն ունի մրցակցի ծրագրի նկատմամբ, ցույց տալու մրցակիցների քաղաքական ծրագրերի թերությունները: Բայց այդ ամենը պետք է արվի ընտրական օրենսգրքում ամրագրված ձևերի շրջանակներում, ճիշտ նախընտրական քարոզչություն տանելու, քաղաքական գովազդների և այլնի միջոցով: Սակայն ՀՀ-ում նախընտրական քարոզչությունը երբեմն վերածվում է միմյանց հայիոյելու արվեստի, երբ նախընտրական շրջանում թեկնածուները այս կամ այն հաղորդմանն են մասնակցում, իրենց ընծեռված հնարավորությունը, շանսը վատնում են մրցակիցներին սկացնելու, վատաքանելու վրա, րոպեները ճիշտ չեն ծախսում, արդյունքում հեռուստադիտողը, ռադիուստանուայի արվեստ է չի կողմնորոշվում՝ ու՞ն ընտրել, թեև թեկնածուների գովազդներում հիմնականում փողոցում անցկացրած հարցումները ցույց են տալիս, որ մարդը կստահ գնում է ընտրելու հենց այդ թեկնածուին, բայց անկախ հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ քաղաքացիների մի մասը մինչև ընտրությունների օրը կողմնորոշված չի լինում: Դայտնի է, որ ճշմարտությունը ծնվում է բանավեճում: Եվ այս ինաստով «քաղաքական ճշմարտություն» այսինքն՝ քաղաքացիների մեծամասնության համար ընդունելի ծրագրերը, քաղաքական կուսակցությունները կամ թեկնածուները, սովորաբար ներկայացվում և հիմնավորվում են նախընտրական բանավեճերում: Արևմտյան ժողովրդավարական հասարակագերում քաղաքական չափազանց սուր մրցակցությունը «զսպվում» է կոռեկտության սկզբունքի շնորհիվ, որը պարտավորեցնում է համբերատարությամբ, առանց էթիկական նորմերը խախտելու վերաբերվել

քաղաքական մրցակիցներին, թույլ չտալ վիրավորանք, կեղծիք, զրպարտություն նրանց հասցեին: Մեզնում, ցավոք, այնքան էլ այդպես չեւ:

Չե՞ որ պետք է գիտակցել՝ քաղաքական գովազդը ընդամենը տեղեկացնում է այն մասին, թե որ խնդիրներն են առավել կարևոր տվյալ թեկնածուի համար (Schleuder, McCombs & Wanta, 1991): Դավանաբար, թեկնածուն կփորձի լուսաբանել այն հարցերն ու թեմաները, որոնցից ինքը քաջատեղյակ է: Օրինակ՝ գործող նախագահը, որի հաջողությունները արտաքին քաղաքականության ոլորտում ակնհայտ են, իսկ տնտեսական ծեռքբերումները՝ ոչ այնքան, իր քարոզարշավի գլխավոր կետերից կհօչակի արտաքին քաղաքականությունը տնտեսական խնդիրների լուծումը համարելով օրվա հրանայական:

Քաղաքական գովազդը նաև նպատակ ունի ստեղծել թեկնածուի նոր իմիջ, որը կօգնի ուժեղացնելու, մեղմելու կամ վերագնահատելու նախորդը: Դատկապես արդյունավետ է այդ իմիջը ստեղծել հեռուստատեսության միջոցով (Ը. Դը Գոլն ասում էր. «Քաղաքական գործիքները ընտրությունները շահում կամ տանուլ են տալիս հեռուստաէկրաններին»): Ինչպես փաստում են տեսաբանները՝ իմիջի ստեղծման արդյունավետ միջոցներից մեկը հեռուստադիտողի հուզական արձագանքի արթնացումն է:

Կան իհարկե ԶԼՄ- ների միջոցով ազդելու սահմանափակումներ. քաղաքական թեկնածուն իրեն այդքան էլ կստահ չի գումար «ծիռութամբին», հանդես գալով այն քաղաքական գովազդում, որն ուղղված է օրինակ գյուղաբնակներին: Նաև չի կարելի ենթադրել, որ բոլոր ընտրողները նույն կերպ կընկալեն գովազդը: Միևնույն գովազդի արդյունքում ծևափորպող իմիջը կարող է միանգամայն տարրեր լինել՝ պայմանավորված հեռուստադիտողների փորձի և նախընտրությունների տարրերություններով: Այն, ինչը մեկը կարող է համարել անկեղծ հետաքրքրվածություն հասարակ նարդկանց կյանքով, մյուսին կարող է շինու և պատեհապաշտական թվալ:

Ժամանակ առ ժամանակ գովազդը նրբործն ակնարկում է թեկնածուի՝ այս կամ այն հարցի հանդեպ վերաբերմունքի մասին: Այդպիսի գովազդը ավելի հարմար է տպագիր ԶԼՄ-ների համար:

Ընդհանրապես հարկ է փաստել, որ գոյություն ունեն քաղաքական գովազդի տարրեր մերոդներ: Օրինակ՝ հոգեբանական մերոդները բավկան տարածված են: Անվտանգության հարցերը շոշափելիս գործի են դրվում այնպիսի ծևակերպումներ, ինչպիսիք են «ազգի ամրակուռ պաշտպանություն», «օրենքի և կարգուկանոնի» երաշխիքներ և այլն:

Դայրենասիրական կոչերը, բնականաբար, առավել հաճախ են հանդիպում քաղաքական գովազդում, ընդ որում՝ որոշ խորհրդանիշներ, այնպիսիք, ինչպիսին դրոշը, համարյա միշտ առկա է քաղաքական

գովազդում, նույնիսկ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության ժամանակ: Հայնորեն օգտագործվում են նաև այլ պատկերներ, օրինակ, հասարակական շենքերը, ազգային-պատմական խորհրդանշներ և այլն:

Ընտանեկան արժեքների թեման հաճախ արժարժվում է թեկնածուի ընտանեկան նկարով տիպիկ գովազդում, որի վրա նա պատկերված է ժպտացող կնոջ և երեխաների հետ (կարծես ընտանեկան դրությունը կամ ծննդները ինչ-որ չափով հավաստում են նրա քաղաքական կարողությունները): Եթե զուտ տրամարանորեն դատենք, կարելի է մտածել, որ առավել մեծ հաջողություն կարող է բերել ամուրի թեկնածուի ուղերձը, որն ասում է. «Ես չունեմ ընտանեկան պարտավորություններ, ես կարող եմ իմ ամբողջ ժամանակը անցկացնել գրասենյակում, աշխատելով ծեզ համար»: Իրականում այդպիսի ուղերձը, ըստ ամենայնի, կավարտվի բացարձակ ձախողմամբ:

Դամախ օգտագործվում են «թեկնածուի կողմնակիցների» անձնական վկայությունները, որոնք հանդես են գալիս թեկնածուի օգտին: Երբեմն հակառակ՝ փողոցի «պատահական անցորդը» պատմում է այն մասին, թե ինչքան են նա հավաստում, որ թեկնածուն պաշտպանելու է իր շահերը:

Թերևս նպատակը մեկն է՝ որքան հնարավոր է մեծացնել քաղաքական գովազդի ազդեցությունը: Իսկ գովազդի ազդեցությունները, ինչպես ԶԼՄ-ներում քաղաքական հաղորդակցության այլ ձևեր, կարող են մի քանի տեսակի լինել:

Չնայած այն պատկերացմանը, որ քաղաքական գովազդի կարևորագույն նպատակն է փոխել ընտրողների կողմնորոշումները, համեմատաբար քիչ քաղաքական գովազդային հոլովակներ են ազդում գիտակցության վրա այն աստիճան, որ մարդիկ փոխեն իրենց ընտրությունը: Քաղաքական գովազդը օգնում է գտնել, բյուրեղացնել առևկա կողմնորոշումները և ճշգրտել դրանք:

Քաղաքական գովազդը կարող է ամրապնդել գոյություն ունեցող կողմնորոշումները դեռ չկողմնորոշված ընտրողին կողմնակիցների «շարքերում» պահելու համար: Այդպիսի կողմնորոշումը ամրապնդվում է ավելի շուտ ընտրությունների օրը կիրառելու համար և ի հակառակի հակառակորդ թեկնածուի փորձերի՝ փոխել գոյություն ունեցող վիճակը: Քաղաքական ստրատեգները միշտ անհանգստանում են, որ իրենց թեկնածուին պաշտպանող և հավատարիմ ընտրողներին չափազանց «մեղմ» են ուղղորդում: Շատ գովազդային հոլովակներ նախատեսված են հենց այդպիսի մարդկանց համար:

Երբեմն քաղաքական գովազդը կարող է իրոք վաճել ընտրողին թեկնածուից՝ հօգուտ մեկ այլ թեկնածուի: Դատկապես, եթե նկատի ունենանք գովազդի լեզուն: Ցավալի փաստ է, որ հայոց լեզուն խաթ-

րող Վարակի աղբյուրի են վերածվել տարբեր, մասնավորապես հեռուստատեսությամբ եթեր տրվող որոշ գովազդներ, մինչդեռ հենց հեռուստաընկերությունները պետք է լինեն հայոց լեզվի անաղարտության օրենսդրական պահանջները հարգող-կիրառողների առաջին շարքում։ Դամաձայն «Գովազդի մասին» ՀՀ օրենքի, գովազդը կոչված է ծևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը ապրանքների, ժառայությունների կամ նախաձեռնությունների նկատմամբ։ Բայց մի՛թե սա նշանակում է, որ գովազդներում կարելի է օգտագործել ցանկացած պատկեր, արտահայտություն կամ նախադասություն, այն էլ՝ աղավաղված հայերենով, ժարգոնային ու փողոցային արտահայտություններով, ոճական և լեզվական, հաճախ նաև՝ տառասխալներով։ Միշտ չէ, որ նպատակն արդարացնում է միջոցները, առավել նև, եթիւ խոսքը վերաբերում է ընտրական գործընթացներին։

ԱՅՆ ԱԿՐԻՏԻՋՅԱՆ
Մամուլի պատմության և տեսության
ամրիոնի հայցորդ

**ԴԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՈՒ.
ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՏՎԱԾԱՅԻՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ
ԱՆԴՐԱՇԱՐՁՅ ԺԱՄԱՆԱԿԻ ՍԱՍՈՒԼՈՒ**

Արցախյան շարժումն անակնկալի բերեց Հայաստանի գիտական, գաղափարախոսական և լրատվական համակարգերը, որոնք կարծեն պատրաստ չեն և ոչ էլ կարողություն, ինարավորություն ու հաճախ նաև մտադրություն ունենալ հակազդելու ու խափանելու հակառակորդի սանձազերծած լրատվական ագրեսիան, ճեղքելու տեղեկատվական շրջափակումները, ազատվելու նաև ներքին կապանքներից:

1988-ի փետրվարից դարաբաղյան խնդրի շուրջ լրատվական դաշտի ընդհանուր պատկերն աստիճանաբար սկսեց փոխվել: Ղարաբաղյան շարժման հենց սկզբից ամբողջ սրությամբ ծառացել էր ԼՂԻՄ-ի լրատվական շրջափակումը ճեղքելու հիմնախնդիրը: Այն լուծելու գործում առաջնակարգ դերը, բնականաբար, Հայաստանին էր Վերապահված: Այդ իսկ պատճառով Հայաստանը փորձեց աշխուժացնել (ինչ-որ չափով) իր դերն իրեւ Լեռնային Ղարաբաղի իրադարձությունները լուսաբանելու առումով «դրսի աշխարհի» վրա լրատվական ազդեցության սուբյեկտ: Այդ առաջնակարգ դաշտությունն ի սկզբան իր վրացրեց «Արմենպրես» պետական լրատվական գործակալությունը: Սոսկվայի հետ ուղղի կապ ունենալուն զուգընթաց՝ «Արմենպրես»-ին իրավունք էր վերապահված նաև, շրջանցելով ՏԱԱՍ-ը, լրատվություն հաղորդել մի շարք երկրներ, ուր հայկական համայնքներ կային: Այսպիսով՝ Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների մասին լրատվություն սկսեց տարածվել ինչպես ԽՍՀՄ-ում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Դրանով իսկ ԼՂԻՄ-ի մասին հասարակական կարծիքի ծևավորնան կառուցվածքը շարժման սկզբից սկսեց խարսխվել ԼՂԻՄ-ի, Հայաստանի, Ադրբեյջանի, ԽՍՀՄ-ի և «դրսի աշխարհի» վրա: Իրենց հերթին կերպափոխվեցին Խորհրդային Սիոնթյան և «դրսի աշխարհի» գործառական առանձնահատկությունները¹:

¹ Տես Գրիգորյան Ալ., Ղարաբաղյան հիմնահարցը հակամարտող և 3-րդ կողմերի ՁԼՍ-ներում, Երևան, 1999, էջ 4:

Խորհրդային Հայաստանի պաշտոնական մամուլում արցախահայության պահանջատիրությանն առաջինն անդրադարձավ «Ոզնի» երգիծական հանդեսը՝ տպագրելով Զորի Բալայանի «Դիմա՝ էլ լոենք» ծավալուն հոդվածը։ Դոդվածագրին անհանգստացնում էր, որ հայ գրողների թթապանակները դատարկ են հենց այն ժամանակ, երբ «ժողովուրդն ու ժամանակը զգում են ճշմարտացի ու կրօնու խոսքի կարիքը։ Ասես մեզ հայտնի չէ, որ ազգային հարցը մեր երկրում խեղաքյուրվել է անձամբ Ստալինի կողմից, որը կամայականորեն որոշել էր, թե որ ժողովուրդն ինչ սահմաններ պիտի ունենա...»¹։ «Ով է մեզ իրավունք տվել լոելու», -եզրակացնում է Զորի Բալայանը, ով պիտի դառնար Արցախյան շարժման դեկավարներից և ում անունը պիտի նույնացվեր այդ շարժման հետ։ Երգիծաթերթի այս համարձակ հրապարակումը հանդեսի համար անհետևանք չձնաց. այդ մասին հետագայում գրեց գլխավոր խմբագիրը²։

Արցախահայության համար ժամանակը նոր հուն էր մտնում, մինչեռ ժամանակի մամուլը կրավորական դիրք էր գրավել՝ խորհրդային ապատեղեկատվություն տարածելով կամ լավագույն դեպքում՝ լոելով։

Զանգվածային լրատվության միջոցների պետական-կուսակցական մենաշնորհի պայմաններում խորհրդային Հայաստանի հասարակությանը շարժման մեջ դնելու հիմնական միջոցներից մեկը ոչ պաշտոնական մամուլն էր։ ԼՂԻՄ-ը Հայաստանի հետ վերամիավորելու շարժման առաջանարտիկ «Միացում» կազմակերպությունը, Խգոր Մուրադյանի դեկավարությամբ, դեռ 1987-ի վերջին պարբերաբար թողարկում էր համարակալած թուղթիկներ՝ հայերեն և ռուսերեն անջատ տարրերակներով։ Մեկ էջանոց այդ թերթիկները կարևոր դեր խաղացին հատկապես մտավորականությանը և ուսանողությանը ուղիղ հանելու գործում³։

1989 թվականը ինքնահրատ մամուլի աննախաղեա «պայթյունի» տարի էր խորհրդային Միության սահմաններից ներս։ Սոտավոր հաշվարկներով՝ տարվա միայն առաջին տասն ամիսներին ամբողջ երկրում լույս էր տեսնում 750-800 անուն ինքնահրատ պարբերական, որոնց «կեսից ավելին հասարակական-քաղաքական ուղղվածության հանդեսներ են»⁴։ Խորհրդային Հայաստանի համար այդ թիվը մոտ է

¹ «Ոզնի», հուլիս, 1987 թ.։

² Արամայիս Սահակյան, Մեր ծիծաղելի վիճակը... Փորձեր և փորձանքներ («Ոզնու» գլխին եկած փորձանքներից մի քանիսը), «Ոզնի», մայիս, 1990, էջ 4։

³ Գեղրդ Եազրնեան, Հայաստանի 1985-1991 թթ. պարբերական մամուլը, Անքիլիաս, 2004, էջ 48։

⁴ Տես Ալեքսանդր Սուետնով, Ոչ ավանդական հրատարակություններ, Սոսկվա, ապրիլ 1992 թ., էջ 11։

90%-ի¹: Դրանցից էին՝ «Դաշինք», «Միացում», «Ազատ Հայք» թերթերը (ԵՊՀ մի խումբ ուսանողներ հիմնում են «Դայ ուսանողության դաշինք» ուսանողական, արտոնություն չունեցող կազմակերպություն, որը 88-ի աշնանը հրատարակում է «Դաշինք» ինքնահրատ պարբերականը: 1989-ի գարնանը լույս է տեսնում Լեռոյի անվան դպրոցի «Միացում» թերթը: Թերթն աչքի էր ընկնում ծայրահեղ քաղաքական բովանդակությամբ ու վարչակարգի խստագույն քննադատությամբ: Իսկ 1989-ի մայիսին «Ազգային միասնության ուխտ» կազմակերպությունը հրատարակում է «Ազատ Հայք» ինքնահրատ շաբաթթերթը): Սա լիովին հասկանալի է ու նաև բացատրելի: Խորհրդային Հայաստանում այդ տարիներին գուգահեռաբար երկու ուղղությամբ քաղաքական պայքար էր ընթանում՝ անկախություն և Արցախի Վերամիավորում Մայր Հայաստանին:

Արցախյան տարեգրության մեջ 1988 թ. փետրվարի 20-ը պատմական է, բայց ոչ մամուլի տեսանկյունից: Դարաբարձր դարձավ հայությանը միավորող ազդակ, մինչեւ համազգային իրադարձությունները լուսարանելու հարցում խորհրդային կենտրոնական և Հայաստանի մամուլը միակողմանի էր կամ սակավախոս: Այդ օրը գումարվեց ժողովրդական դեպուտատների ԼՂԻՄ 20-րդ գումարման սովետի արտահերթ նստաշրջանը, որը ԽՍՀՄ պատմության մեջ աննախադեպ որոշում կայացրեց: Կիրակի օրը, ժամանակացույցից դուրս, լույս է տեսնում ինքնավար մարզի գլխավոր թերթի արտահերթ համարը², ուր զետեղվում է Լեռնային Ղարաբաղը Հայաստանին Վերամիավորելու մասին ԼՂԻՄ մարզխորհությի որոշումը³: Հարկ է նկատել, որ մինչ այդ «Սովետական Ղարաբաղ»-ը որևէ ծնով չեր անդրադարձել նախորդ շաբաթվական իրադարձություններին:

«Սովետական Հայաստան»-ում և այդ օրերին լույս տեսնող մեծ տպաքանակ ունեցող մյուս թերթերում ոչ մի տեղեկատվություն չկատարած բազմահազարանոց միտինգի վերաբերյալ:

Արցախում կատարվող իրադարձություններին խորհրդային Հայաստանի մամուլը արձագանքում էր բացառապես հաղորդագրու-

¹ Տես՝ Գեղրդ Եսզրմեան, Հայաստանի 1985-1991 թթ. պարբերական մամուլը, Անթիկաս, 2004, էջ 78:

² «Սովետական Ղարաբաղ», 21 փետրվարի, 1988 թ., Ստեփանակերտ:

³ «Ընդառաջելով ԼՂԻՄ աշխատավորների ցանկություններին, խնդրել Ադրբեյջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին՝ ցուցաբերել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իդենտի խոր ըմբռնման գգացում և լուծել ԼՂԻՄ-ը Ադրբեյջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ տեղափոխնելու մասին հարցը, միաժամանակ ԽՍՀ Միության Գերագույն խորհրդի առաջ՝ միջնորդել ԼՂԻՄ-ը Ադրբեյջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմի մեջ անցնելու հարցի դրական լուծման մասին»:

բյունների տեսքով: Մամուլի ազատականացման առաջին քայլերը խիստ գգուշավոր էին: Բազմահազարանոց ցույցերը պատկերող ոչ մի լուսամկար տեղ չի գտել այդ օրերին լուս տեսնող խորհրդահայ մամուլի էջերում: Լեռնային Ղարաբաղ անունը միայն հանդիպում է որոշումների, բանաձևերի տեքստերում, որոնք տպագրվում են լուրի ժանրով կամ ուղղակի հաղորդագրության տեսքով՝ առավելապես ՏԱՍՍ լրատվական գործակալության միջոցով¹: Եվ ընդհանրապես խորհրդային Դայաստանի պարբերական մամուլի տեղեկատվության հիմնական աղյուրներն էին կենտրոնական «ՏԱՍՍ» և «Նովոստի», հանրապետական «Արմենպրես» պետական լրատվական գործակալությունները:

Ղարաբաղյան շարժման հզոր ալիքի ու Սումգայիթում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների մասին տեղեկությունները ցնցում են անգամ ամերիկյան մամուլը, բայց ոչ տեղականը: Ամիսներ անց՝ հուլիսին, նոյեմբերին անգլիական հեղինակավոր «Գարդիան»-ը գրեց, որ «26 հայ են սպանել, իսկ աղբքածանական ոստիկանությունն այս ամենի համար ոչինչ չի արել»: Ավելի ուշ Ֆրանսիական գրեթե բոլոր գլխավոր թերթերը նոյեմբերի անդրադառնում են Սումգայիթի իրադարձություններին և Երևանի փետրվարյան ցույցերին՝ նշելով Վերջիններիս բացառիկ կիրք բնույթը²: Իսկ Սումգայիթի ոճրագործության, «փետրվարյան ցույցերի բարձր կազմակերպվածության»³ մասին տեղական մամուլը խոսում է ամիսներ անց միայն:

Ամբողջ մարտ ամսվա ընթացքում զանգվածային տեղեկատվության բոլոր միջոցներում ՏԱՍՍ-ի թղթակիցները տպագրում էին հավասարության սկզբունքներով հայերից և աղբքածանիներից վերցրած հարցագրույցներ: Այդ օրերի հայրենական մամուլի կրավորական դիրքն ու լրությունը զարմանք էր պատճառում մինչև իսկ մոսկովյան «Մոսկովսկի նովոստի» շաբաթաթերթին, որը գրել է. «Եթե փետրվար և մարտ ամիսների թերթերին նայենք, կարելի է եզրակացնել, որ ամենից խաղաղ ժամանակը փետրվարի վերջն է: Դայաստանի և Աղբքածանի մամուլում տպագրվում են միայն ժողովուրդների բարեկամությանը նվիրված նամակներ և երկու հանրապետությունների աշխատավորների և կոլտնտեսականների «հերոսական նվաճումների» մասին ակնարկներ: Որևէ հաղորդագրություն չկա Երևանում տեղի ունեցած ցույցերի և հավաքների մասին, մինչդեռ հարյուր հազարավոր մարդիկ փողոց էին դուրս եկել»⁴: «Ոզնի»-ն տպագրում է կոչ-մադրանք, որտեղ ասվում է, որ «Վերակառուցման և հրապարակայնության այս հեղափո-

¹ «Առվետական Դայաստան», 24-25 փետրվարի, 1988 թ., Երևան:

² «Անկախություն», 1988 թ., Երևան:

³ «Գրական թերթ», 24 հունիսի, 1988 թ., Երևան:

⁴ «Московские новости», М., 1988, № 14.

խական շրջանում ամբողջ երկրում (նաև Հայաստանում) մարդիկ «քարե-քարի լուսի» փոխարեն իրար համդիպելիս ասում են՝ «Կարդացի՞ր... Լսեցի՞ր... Տեսա՞ր», այսինքն՝ նկատի ունեն կենտրոնական մամուլի, ռադիոյի և հեռուստատեսության հետաքրքիր, սուր և համարձակ հոդվածները, ելույթները (թեև մտերմաբար ասած՝ միշտ չէ, որ միշտ է արտացոլվում մեր հանրապետության կյանքը): Բայց կենտրոնական մամուլը ճիշտ է այն բանում, որ հայկական մամուլը հետ է մնում, նույնիսկ ավելի, քան վերակառուցումից առաջ: Սուր և համարձակ հոդվածները քիչ են, պատճառները՝ ... շատ¹:

Ժամանակի մամուլից միայն «Անկախություն»-ն է համարձակություն ունենում խոստովանելու, որ «Խորհրդային Հայաստանի լրատվական միջոցները տնօրինում է Կրեմլը: Ոչ մի լուր ու հոդված, ոչ մի երաժշտական ու գրական երկ չի տպագրվում կամ հաղորդվում առանց կրեմլի համապատասխան պաշտոնյաների թույլտվության: Լրատվամիջոցների համար արգելված են ՏՍՍՍ-ի որոշ հաղորդագրությունները կամ այդ հաղորդագրությունների որոշ հատվածները»²: Ասվածին իրը ապացույց «Անկախություն»-ը համարձակորեն գրում է, թե ինչպես է խորհրդային քարոզչությունը, ավելի ճիշտ ապատեղեկատվությունը բողոքի ալիքը հանդարտեցնելու նպատակով դիմում տարրեր հնարքների: Այդպես մարտի 6-ին Մոսկվայից ստացվում է ՏՍՍՍ-ի հաղորդումը, որը գարմանք է պատճառում իր բարյացական երանգով: Լրատվական գործակալության թղթակիցը, մեկնաբանելով Ղարաբաղում և Խորհրդային Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունները, նշում է, որ այդ պայքարն արդարացի է, և ժամանակն է շտկել Ստալինի սիսալները: Լուրը տարածվում է մայրաքաղաքում, բայց խարենքությունն արագ բացահայտվում է: Բանն այն է, որ հեռագիրը ստացվել էր խիստ հրահանգով՝ «Միմիայն Սփյուռքի համար»³: Ի դեպք հետաքրքրական է ԼՂԻՄ-ի «Սովետական Ղարաբաղ»⁴ թերթի հետաքրքիր խոստովանությունը, ըստ որի «թերթի 44-ից 46-րդ հանրաները տպագրվել են ոչ թե Ստեփանակերտում, այլ Բաքվում»⁵:

Ընթերցողները սպասում էին տեղեկատվության ու հետևում էին մամուլի հրապարակումներին, միաժամանակ գիտակցում էին, որ թերթերը դարձել են ապատեղեկատվություն տարածող ու շինուալ իրականության պատկեր ստեղծող օրգաններ: «Մարտի 20-ին մոտ երեք հազար ցուցարարներ, հանրապետությունում լույս տեսնող լրագրերը ծեղզներին, հավաքվեցին Մամուլի տան մոտ և ի նշան բողոքի՝ լրագրե-

¹ «Ոզնի», թիվ 9, մայիս, 1988 թ., էջ 7, Երևան:

² «Անկախություն», շաբաթաթերթ, 7 մարտի, 1988 թ., Երևան:

³ Նույն տեղում:

⁴ «Սովետական Ղարաբաղ», 15 մարտի, 1988 թ., Ստեփանակերտ:

⁵ «Անկախություն», 21 մարտի, 1988 թ., Երևան:

ըսթ քափեցին գետնին և վանկարկեցին՝ ամոք: Դետո բոլորը շարժվեցին դեպի Ռադիոտուն, որտեղ կայացավ հանրաժողովը: Բողոքի այդ ցույցն ուղղված էր Դայաստանի ու ՍՍԴՄ մամուլի ու հեռուստատեսության դեմ, որոնք ոչ մի ճշգրիտ տեղեկություն չեն հաղորդում... Ոչ մի լուր չեն տալիս մեկ ամսից ավելի հայության կյանքը փոթորկող իրադարձությունների մասին»:

Արցախյան հիմնախնդրին հետևողականորեն անդրադառնում է «Ոզնի» հանդեսը, եթե ոչ հրապարակման միջոցով, ապա երգիծանկարյին հանելուկի², երկտողի³ տեսքով: Երբեմն հանդեսում արցախյան թեման անհետանում է⁴, ինչը նշանակում է՝ ճնշումներ են եղել: Դետո, երբ իրավիճակը ընրից սրվում է Երևանում, «Ոզնի»-ն դարձյալ հանդես է գալիս բացահայտ՝ գրելով սումգայիթյան եղեռնագործության ու Արցախի մասին: «Ազգին անհապաղ պետք է Ղարաբաղ», - ասում է «Ոզնի»-ն ու հավելում. «Եթե ոչ այսօր, վաղը մերն է լինելու Ղարաբաղը»: Այս «մեղքի» համար «Ոզնի»-ն հերթական անգամ հալածանքի է ենթարկվում: Դրա վկայությունն է հանդեսի հաջորդ համարը, որտեղ դարձյալ արցախյան թեման բացակայում է: Երկու քարի արանքում հայտնված «Ոզնի»-ն գրում է. «Սեր ընթերցողներից Ան. Տեր-Ղարաբաղցյանը⁵ հարցնում է, թե ինչու «Ոզնի»-ն ոչինչ չի գրում դարաբառյան իրադարձությունների մասին»: Այնուհետև, պատասխանելով հարցին, խմբագիրը թվարկում է նախորդ ամիսներին հանդեսում լույս տեսած այն հրապարակումները, որոնք վերաբերում են Արցախին՝ միևնույն ժամանակ ընթերցողներին հասկացնելով, որ այդքանի համար հետևողականորեն հալածվում են⁶:

«Մամուլին չենք հավատում, դուք ճշմարտությունը չեք գրում»⁷. այսպիսի խոսքեր են առիթ ունեցել լսելու կենտրոնական և հանրապետական թերթերի թղթակիցները, որոնք տեղեկություն են հաղորդում ԼՂԻՄ-ից, Դայաստանից և Ադրբեյջանից: Թերթը պատասխանում է. «Գուցե մամուլ իսկապես խեղաթյուրում է փաստերը՝ դրանով իսկ վիրավորելով երկու եղայրական հանրապետությունների քաղաքացիների ազգային գգացնունքները»:

Ամիսներ անց խորհրդային զանգվածային լրատվամիջոցների հակահայկական գրգռության դեմ հայոց ժողովրդային ցասումը արտա-

¹ «Անկախություն», 21 մարտի, 1988 թ., Երևան:

² «Ոզնի» N 8, 1988 թ., Երևան:

³ Նոյեմ տեղում, N 9, 1988 թ., Երևան:

⁴ «Ոզնի» N 11, 1988 թ., Երևան:

⁵ Բառախաղ՝ Անտեր Ղարաբաղցի-յան:

⁶ «Ոզնի» N 19, «Դարձնում են, պատասխանում ենք», Խոկտեմբեր, էջ 2, 1988 թ., Երևան:

⁷ «Սովետական Դայաստան», 5 ապրիլի, 1988 թ., Երևան: Արտառապությունը «Պրավդա»-ից, 4 ապրիլի, 1988 թ.:

հայտվում է նաև այս կերպ: «Օպերայի հիմնական նույթի վերնամասում հայտնվում է այծի մի մեծ գժանկար, այծը «Մասմուլ» էր մայում»¹:

«...Միությունում հարյուր հազարավոր թերթեր ու ամսագրեր են լույս տեսնում. կարելի է, օրինակի համար միայն «ՊրաՎդա»-ն լույս ընծայել, իսկ մյուս թերթերն էլ գրեն «տես «ՊրաՎդան»²:

Ուզմիկ Դավոյանը «Արդարության ճանապարհին» հրապարակման միջոցով ընթերցողներին հիշեցնում է, որ «Ղարաբաղի իրադարձությունների առաջին օրերին, ինչպես «Սովետական կուլտուրա» թերթում նշեց Ալեքսանդր Գելմանը՝ «Ղրանդը դրամատիկական իրադարձությունները մարդկայնորեն և ազնավարար լուսաբանելու՝ ինֆորմացիայի մեր միջոցների անդադառնում է նաև «Ղիրքորշում» հաղորդման հեղինակ, գրող Դենրիխ Բորովիկի ապրիլի վերջին Կենտրոնական հեռուստատեսությամբ ցուցադրված 1.5 ժամանց հաղորդումը՝ նվիրված Լեռնային Ղարաբաղի իրադարձություններին: Այս հաղորդմանը թերթը անդադառնում է նաև հաջորդ համարում³:

Ղարաբաղյան շարժման ընթացքն անշրջելի էր, մինչդեռ դրա արձագանքները՝ գգուշավոր: Աստիճանաբար մամուլի որոշ օրգաններ սկսում են տպագրել զգացմունքային տողեր, Ղարաբաղը ոգեշնչում է բանաստեղծներին: «Ասում են՝ Ղարաբաղը մեր հանրապետության սիրտն է. մենք ո՞նց ապրենք առանց սրտի...»⁴: «Փետրվարյան օրեր», «Թույժի օրերին»⁵, «Արցախյան քնար»⁶, և այլն: «Ոզնի»-ն իր էօնք տրամադրում է արցախցի գրողներին և ընթերցողներին, որոնք ներկայացնում են իրենց բանաստեղծությունները⁸:

1988-ի մայիսից հետո «Ավանգարդ»-ը բավական թոթափեց ժողովուրդների բարեկամության քարոզչությունը և սկսեց թթակցություններ տպագրել թատրոնական հրապարակի ուսանողական նստացուցերի մասին: Այս ու նաև «Երեկոյան Երևան»-ում կենտրոնական լրատվամիջոցների հակահայկական լուրերը գրեթե տեղ չէին գտնում: Տեղի տալով ճնշումներին՝ «Ավանգարդ»-ն ու «Երեկոյան Երևան»-ը նախընտրեցին լոել: Իրենց բովանդակությամբ շուտով աչքի ընկան «Գարուն» ամսագիրը (խմբագիր՝ Մերուժան Տեր-Գուլանյան), «Երեկոյան

¹ «Կոմսոմոլեց», 13 հոկտեմբեր, էջ 2, 1988, Մոսկվա:

² «Ոզնի», նոյեմբեր N 22, 1988 թ., Երևան:

³ «Գրական թերթ», 20 մայիսի, 1988 թ., Երևան:

⁴ Նոյն տեղում, 3 հունիսի, 1988 թ., Երևան:

⁵ «Գարուն», N 7, 1988 թ., Երևան, էջ 51, Ղավիթ Պետրոսյան:

⁶ «Ոզնի», 14 հուլիսի, 1988 թ., Երևան, Երվանդ Պետրոսյան:

⁷ «Հայրենիքի ծայն», 16 նոյեմբերի, 1988 թ., Երևան, Գուրգեն Գարրիելյան:

⁸ «Ոզնի», դեկտեմբեր N 23-24, 1988 թ., Երևան:

Երևան» թերթը (Խմբագիր՝ Կամո Վարդանյան) և «Ոզնի» երգիծական հանդեսը (Խմբագիր՝ Արամայիս Սահակյան):

Իրադրության նման գերլարված պայմաններում ղեկտեմբերի 7-ին Խորհրդային Դայաստանի հյուսիսային շրջաններին հարվածեց տարերային աղետը: Օգտվելով աղետի հետևանքով ստեղծված խուժապից ու հոգեբանական անկման վիճակից՝ իշխանություններն ու իրեն ծառայող մանուլը վճռական գրոհի անցան արցախյան շարժման դեմ: «Սովետական Դայաստան» և «Կոմունիստ» պաշտոնաթերթերում տպագրվում է «Դժբախտության ժամ և պատասխանատվության ժամ» վերնագրով անստորագիր հոդվածը¹, որն «Ավանգարդ»-ն արտատպում է իր հաջորդ օրվա համարում: «Դայ ժողովրդի անցած ողբերգություններին նոր ողբերգություն է գումարվել...»²:

Խորհրդային Միության Նախարարների խորհրդի 3 ղեկտեմբերի 1988 թ. գաղտնի որոշման պահանջները հայրենական պաշտոնական մամուլում լրիվությամբ չեն կատարվում՝ հակառակ գրաբննության խստացմանը: Երկրաշարժից ընդամենը մի քանի օր անց (ղեկտեմբերի 13) Խորհրդային Դայաստանի Նախարարների խորհրդը քննարկում է գրաբննությունը խստացնելու հարցը ու որոշում է ընդունում «խստագույնս գրաքննության ենթարկել մամուլով ու եթերով հրապարակվող բոլոր նյութերը, իսկ այն դեպքում, եթե անհնար է գրաքննության ներկայացնել, համապատասխան հրատարակությունը դադարեցնել»³: Որոշման ընդունումից հետո «պատմվում են մեղավորները»⁴: «Որոտան»-ի խիստ զնահատականին մամուլի վարած քաղաքականության վերաբերյալ, թե «Ինչքա՞ն կարելի է թաղումը հարսանիք ներկայացնել, ողբերգությունը՝ խրախճանք», արծագանքում է նույնիսկ «Սովետական Դայաստան»-ը՝ որակելով այն վնասակար:

«Սովետական Դայաստան»-ի, «Երեկոյան Երևան»-ի 1989-ի հունվար-փետրվարին լուս տեսած գրեթե բոլոր համարները նվիրված են երկրաշարժի տարելիցին, իսկ մարտ-ապրիլ ամիսներին կարծես մոռացության են մատնում դարաբաղյան թեմատիկան: Դարաբաղին ու դարաբաղյան շարժմանը վերոնշյալ թերթերն անդրադառնում են հետագա ամիսներին:

Դետաքրքրական հրապարակում է տեղ գտնում մամուլում. ՏԱՍՏ-ի թղթ. Վ. Ռուդենկոն Ստեփանակերտից հաղորդում է, որ «ԼՂ-ի բնակիչները նյարդային համակարգը հանգստացնող հինգ անգամ ավելի շատ

¹ «Սովետական Դայաստան», 13 ղեկտեմբերի, 1988 թ., Երևան:

² «Երեկոյան Երևան», 30 ղեկտեմբերի, 1988 թ., Երևան:

³Տես՝ Գեղրդ Եազրման, Դայաստանի 1985-1991 թթ. պարբերական մամուլը, Անթիւսա, 2004, էջ 72:

⁴ «Ոզնի» N 22, 1988 թ., «Սովետական դպրոց», 4 օգոստոսի, 1988 թ., «Պիոներ կան», 2 ղեկտեմբերի, 1988 թ., Սիսիանի «Որոտան» շրջ. թերթ, N 142-143, 1988 թ.:

դեղամիջոցներ են սկսել օգտագործել անցյալ տարվա ձմեռվանից... Բժիշկները նշում են պերիֆերիկ նյարդային հիվանդությունների, ներոզների և ինսուլտների աճը: Դաճախ որևէ չափազանց հուզական հեռուստահաղորդումից կամ լրագրային հոդվածից հետո ավելանում է շտապ օգնության աշխատանքը: ...Բժիշկները տևական ստրեսի մթնոլորտում իրենցից կախված ամեն ինչ անում են հիվանդների առողջությունը վերականգնելու համար, բայց գլխավոր կազդուրիչ գործոնը՝ ինքնավար մարզում անդորրի վերահաստատումը, գտնվում է բժշկության իրավասության սահմաններից դուրս, սոցիալ-քաղաքական ոլորտում...»¹:

Նախորդ ամիսների համեմատությամբ աստիճանաբար սկսում են ավելի շատ հաղորդագրություններ, լուրեր, երեմն էլ ռեպորտաժներ հայտնվել թերթերում, բայց ժամանակին ու հավաստի տեղեկատվություն ստանալու պահանջը դեռևս ցանկություն էր, որի մասին բարձրածայնում է Ազատ Եղիազարյանը. «Դասարակության բոլոր խավերը պետք է պարբերաբար տեղեկություններ ստանան պետության կյանքի կարևորագույն խնդիրների շուրջ»²:

«Ղարաբաղում ճգնաժամը հասել է ըստ էության չհայտարարված պատերազմի փուլին», - ասում է ժողովադատաւությունը. «Վալայանն ու Ֆկատում. «Կանխել կարելի է ծշմարտությամբ»³:

Խորհրդային Դայաստանի պաշտոնական տեսակետն արտահայտող համանուն թերթն այս շրջանում պարբերաբար անդրադառնում է ԼՂԻՄ-ում կատարվող իրադարձություններին՝ գրեթե ամեն համարում հաղորդագրության տեսքով ներկայացնելով «ԼՂ-ի իրադրության մասին»⁴:

Սկսվում են զանգվածային հակահայկական ջարդերը և կոտորածները (Սումգայիթ, Բաքու, Կիրովարաղ), Լեռնային Ղարաբաղի, Դայաստանի շրջափակումը, արտակարգ դրույթունը, խաղաղ բնակչության դեմ ուղղված պարբերական ռազմական գործողությունները, տեղահանումները, հալածանքները շարժման առաջամարտիկների և ժողովրդական պատգամավորների նկատմամբ, խստագույն գրաքննությունը, զանգվածային ինֆորմացիայի կենծարարությունը:

Նախկինում հաղորդագրությունների տեսքով տպագրվող որոշումների ու ելույթների տեքստերին գալիս են լրացնելու հարցազրույցները, ռեպորտաժներն ու ակնարկները: Այսպես. «ներքին լարվածությամբ ու կասկածելի լուրթյանը լցված»⁵ դարաբառյան գիշերների մասին և

¹ «Խորհրդային Դայաստան», 3 հունիսի, 1989 թ., Երևան:

² Նոյեմ տեղում, 11 հուլիս, 1989 թ., Երևան:

³ Նոյեմ տեղում, 8 օգոստոսի, 1989 թ., Երևան:

⁴ Նոյեմ տեղում, 9 օգոստոսի, 1989 թ., Երևան:

⁵ «Երեկոյան Երևան», 23 սեպտեմբերի, 1989 թ., Երևան:

գրում թերթի սեփական թղթակիցը՝ Ստեփանակերտից: Թերթը նաև եղակացնում է, որ «Ազգային հարցը խորհրդային Սիությունում վերջին ժամանակներին բացառիկ սրություն է ստացել...»¹: Պարբերականի հաջորդող համարներում ներկայացվում է Արցախի գյուղատնտեսությունը, էկոնոմիկան, տեղեկություններ է հաղորդվում բռնագաղթի ու արտագաղթի մասին: Արցախու տրամադրությունները, հույսերն ու ակնկալիքները փոխանցում է Ստեփանակերտի սեփական թղթակիցը: Զուգահեռաբար անդրադարձ է կատարվում պատմությանը՝ ցուց տալով «Ղարաբաղի ողբերգությունը» ականատեսի օրագրից հատվածներ տպագրելով, որոնք, ի դեպ, վերաբերում են 1919 թվականին²:

Դենվելով ազգերի հնքնորոշման համամարդկային սկզբունքների վրա և արծագանքելով հայ ժողովրդի՝ բռնի ուժով բաժանված երկու հատկածների վերամիավորման օրինական զգտմանը, Հայկական ԽՍՀ գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը 1989 թվականի դեկտեմբերի 1-ի համատեղ նիստում որոշում են Լեռնային Ղարաբաղը վերամիավորել Հայկական ԽՍՀ-ի հետ³: Արցախինները հավատում էին, որ հարցը օրենքի շրջանակում լուծում կատանա, այլ ոչ թե զենքի ուժով, թեպետ կրակոցներ արդեն լսվում էին. հաճախակիանում էին նաև մամուլի արձագանքները:

Ուսումնասիրվող ժամանակահատվածի մամուլը կարելի է բաժանել երեք շրջանների՝

- 1985-1989 թթ.: Վերակառուցման քաղաքականության հոչական, ոչ պաշտոնական մամուլի սկզբնավորման և որոշ չափով ինքնահաստատման շրջան:
- 1990-1991 թթ.: պաշտոնական մամուլի վերափոխման ու ազատ մամուլի ծննդյան ժամանակաշրջան: Այն ավատվեց անկախության հոչակումով:
- 1991-ից հետո՝ անկախ երկրի մամուլի հաստատում:

Բացի հայության համախմբումից, խորհրդային ապատեղեկատվության կազմակերպած արշավը երկորդ դրական կողմ ուներ. այն պետք է հրատապ ու անհրաժեշտ դարձնեց ազատ մամուլի նոր անունների ծննդողը⁴: Բացի այդ՝ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի շուրջ լրատվական դաշտը որակապես նոր բռվանդակություն ստացավ: 1991-ի օգոստոսի 30-ին Աղրբեջանական ԽՍՀ գերագույն խորհուրդը հռչակագիր ընդունեց 1918-20 թթ. Աղրբեջանական Հանրապետության պետական անկախությունը վերականգ-

¹Նույն տեղում, 1989 թ., Երևան:

²Նույն տեղում, 26 սեպտեմբերի, 1989 թ., Երևան:

³«Սովետական Հայաստան», 3 դեկտեմբերի, 1989 թ., Երևան:

⁴ Տե՛ս Գերգ Եազնենան, Հայաստանի 1985-1991 թթ. պարբերական մամուլը, Անրիիս, 2004, էջ 59:

Նելու մասին: Ըստ էության Ադրբեջանն այդ քայլով դուրս եկավ ԽՍՀՄ-ի կազմից, քանի որ ԽՍՀՄ իրավական դաշտից դուրս էր հայտնվել: Մի քանի օր անց՝ 1991 թ. սեպտեմբերի 2-ին հրապարակվեց ԼՂԴ-ի մասին հոչակագիրը: Այդ քայլը ծեռնարկվել էր ի պատասխան 1918-20 թթ. Ադրբեջանական Դանրապետության պետական անկախությունը վերականգնելու մասին որոշման և նշանակում էր Ադրբեջանի ենթակայությունից Լեռնային Ղարաբաղի դուրսերում: ԼՂ-ի որոշումը սահմանադրական բնույթ էր կրում, քանի որ ընդունվել էր ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու լուծման կարգի մասին ԽՍՀՄ օրենքին համապատասխան: Լեռնային Ղարաբաղը, ԽՍՀՄ փլուզումից հետո 1992-ի հունվարի 6-ին, հիմք ընդունելով 1991 թ. դեկտեմբերի 10-ին անցկացված հանրապետական հանրաքվեի արդյունքները, հոչակեց իր անկախությունը: 1992-ի աշնանն արցախյան հիմնահարցը միջազգայնացվում և դիմովում է ԼՂ-ի հակամարտություն, որի կաղզավորումն անցնում է նախ ԵԱՀԽ-ի, ապա ԵԱՀԿ-ի հովանու ներքո, այդ կազմակերպության Մինսկի խմբի շրջանակներում:

Հիյիթ Դակորյան
Ռադիոհեռուստատեսային
Ժուլմալիստիկայի ամբիոնի հայցող

**ԶՐՈՒՑԱՎԱՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԱՅՆԵՐԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ- ԺԱՄԱՆՅԱՅԻՆ
ՀԵՇՈՒՏԱՐԱԴՐՈՂՈՒՄՆԵՐՈՒՄ**

Վերջին տասնամյակում գլոբալացման գործընթացների հետ կապված զարգացման դրսնորումը ՀՀ ՁԼՍ-ում արևուտքում նշակված մեղիածեաչափերի՝ (հեռուստատեսային նորություններից մինչև սերիալներ ու թոք-շոուներ) լայն տարածումն է: Արևոտյան նշակութային պարտադրանքը այս դեպքում կատարվում է ձևաչափերի կրկնօրինակաման միջոցով: Մեղիածեաչափեր, որ ձևավորում են տեղական լսարանը՝ նոր ձևերով ենթարկելով սպառողականության տրամաբանությանը: Մեղիա բովանդակություն ստեղծողների համար լսարանն առավելապես բաղկացած է սպառողներից, այլ ոչ թե քաղաքացիներից: Գլոբալ մեղիայի ազդեցությամբ ի հայտ եկող նոր մեղիածեաչափերը Դայաստանում ձևավորում են որակապես նոր էլեկտրոնային զանգվածային տեղեկատվաշուկա, ժամանակակից լսարանի պահանջարկին համապատասխան: Այսօր համացանցի տարածման ու նատչելիության հետ մեկտեղ հեռուստատեսությունը՝ որպես տեղեկատվության միջոց, աստիճանաբար զիջում է իր գերիշխող դիրքը և վերածվում է զվարճանքի ու ժամանցի միջոցի: Արևուտքից մեղիածեաչափերի կրկնօրինակումը պարզորոշ երևում է հեռուստաէկրանից :

Մեր խնդիրը հետևյալն է՝ առանցքային գծերով ներկայացնել տվյալ մեղիածեաչափի՝ առավոտյան տեղեկատվական-ժամանցային ծրագրի՝ (իբրև հեռուստաարտադրանք), բնույթը, երթյունը, առանձնահատկությունները, ինչպես նաև զրուցավարի դերը և գործառությունները տեղեկատվական-ժամանցային այդ տեսակի հեռուստահաղորդման կայացման գործընթացում: Այսօր մեր հեռուստաշուկայում տեղեկատվական-ժամանցային բնույթի հեռուստահաղորդումներում բացակայում է տեղեկատվական գործառությը և դրանք վեր են ածկում նիսայն ժամանցային՝ զվարճանքի, գումար վաստակելու և գովազդի համար նախատեսված հեռուստածրագրերի:

Միևնույն թեմատիկայով, անփոփխ հյուրերով՝ և զրուցավարներով առավոտյան հեռուստահաղորդումները մեծ նասանք նույն ձևաչափն ունեն (ամեն ինչից քիչ-քիչ, արագ-արագ ու անբօնազբոս): Առավոտյան տեղեկատվական-ժամանցային հաղորդումները հիշեցնում են հանդի-

սատեսին, որ նա առաջին հերթին գովազդ սպառող է: Գաղտնիք չէ, որ մեր հեռուստաընկերությունները ջանում են էլ ավելի թերև, արագաշարժ ու չիոգնեցող լինեն: Եթե յուրաքանչյուր դիտող պոտենցիալ սպառող է (ապրանքների, ծառայության, քարոզի) ստացվում է, որ հեռուստատեսությունը տարածք է, որտեղ սպառողը հանդիպում է գունավոր պատկերների, թերև ու զվարք խոսքի, գովազդային առաջարկների:

1. Այդ տրամաբանությունը հատկապես ընդգծվում է առավոտյան տեղեկատվական ժամանցային հաղորդումներում: Առավոտյան տեղեկատվական ժամանցային ծրագրերում հաճախ հանդիպում ենք այնպիսի ռեպորտաժների, որոնցում առկայժող տեղեկատվությունը, պատկերների դասավորումն ու օգտագործվող բառապաշարը միանգամից հուշում են՝ դա ոչ թե համրային ուշադրությանը ուղղված լրագրողական աշխատանք է, այլ գովազդային հոլովակ: Գովազդային խորության ու տեղեկատվական թերթության առաջատարը մեր հեռուստաեթերում անկասկած, «Արմենիա» հեռուստաընկերության «Բարի լուս, հայեր» ամենօրյա տեղեկատվական-ժամանցային հաղորդումն է: Այն կարծես սկիզբ է առել հենց գովազդատուների՝ գովազդներ տեղադրելու ցանկությունից, այլ ոչ թե առավոտյան արթնացած մարդուն տեղեկատվություն փոխանցելու մղումից: Դաղորդումը սկսվում, ընդմիջվում ու շարունակվում է գովազդային բլոկներով այնքան առատորեն, որ այլ բան ասելու ժամանակ գրեթե չի մնում: «Բարի լուս հայեր» հաղորդումն ունի խորագրեր (բժշկական, խոհարարական և այլն), իսկ յուրաքանչյուր խորագիր ունի իր գովազդատուները: Գովազդը դառնում է հաղորդման բովանդակությունը, իսկ մնացածը (հյուրերի հետ գրուցելու, թերև լուրեր հաղորդելը) գովազդային մեծ փաթեթի կցորդն են: Դարկ եմ համարում որոշակի դիտարկումներ անել. տեղեկատվական-ժամանցային բնույթի հեռուստահաղորդումները ունեն շատ կարևոր գործառույթ՝ տեղեկատվություն հաղորդել, միևնույն ժամանակ ապահովելով բարձր տրամադրություն և հաճելի ժամանց՝ այդախով կատարելով հեռուստատեսության ժամանցային գործառույթը: Երբ այդ գործառույթն իրականացնում է արիեստավարժ գրուցավար՝ իր գործին քաջատեղյակ անձնավորություն, կարելի է ասել, որ լիարժեք արդյունքն ապահովված է: Նա հստակ գիտի, թե ինչ տեղեկատվություն է ցանկանում ստանալ գրուցակցից, գիտակցում է ժամանակի սղությունը, փորձում է առավելագույն տեղեկատվություն լսարանին հաղորդել հատկացված ժամանակում, մի խոսքով՝ հասնել նպատակին: «Լավ հարցեր պատրաստելը գրույցի կարևորագույն մասն է: Յուրաքանչյուր թեմա ունի իրեն յուրահատուկ տարրեր առանցքներ: Զրուցավարները պետք է գտնեն իրենց համար նպատակահարմար մի առանցք ու

այդտեղից էլ կծնվեն հարցերը¹: Առավոտյան տեղեկատվական հեռուստահաղորդումների դեպքում շատ կարևոր է նաև անհրաժեշտ ժամանակը՝ հաղորդման տևողությունը: Եթե գրուցավարին առաջարկում են վարել հաղորդում, առաջին և ամենակարևոր հարցը հետևյալը պետք է լինի. ի վիճակի՝ է գրուցավարը այդ րոպեները լսարանին հետաքրքրող տեղեկատվությամբ «լցնել»: Առանձին ուսումնասիրության առարկա է առավոտյան տեղեկատվական ժամանցային հաղորդումների գրուցավարների նկատմամբ լսարանի մեծ հետաքրքրությունը: Բանն այն է, որ այստեղ գրուցավարները մասնագիտական և դերասանական հմտությունների դրսերման և հոգեբանական ազդեցության միջոցներ օգտագործելու հարցերում ավելի «ազատ» են: Կա նաև երկու այլ հանգամանք: Առաջին՝ նման հաղորդումներում հեռուստադիտողները առավել ակտիվ են. չե՞ն որ, ի տարբերություն տեղեկատվական հաղորդումների, նրանք հեռախոսագորույցների, հաղորդագրությունների, ինտերնետային նամակների միջոցով հնարավորություն ունեն դառնալ հաղորդման մասնակիցը: Մեր օրերում սրանք լսարան գրավելու ամենատարածված հնարաններն են: Երկրորդ՝ առավոտյան տեղեկատվական ժամանցային հաղորդումների գգալի մասը ճանչված մարդկանց՝ երգիչների, դերասանների հասարակական և մշակութային գործիչների մասին են, կամ վերջիններս դրանց մասնակիցներն են:

2. Ուշադրության արժանի է նաև մեկ այլ տարածված երևոյթ: Դիմնականում առավոտյան ծրագրերը վարում են ճանաչված մշակութային գործիչներ: Ծատ մասնագետներ սա միանշանակ համարում են բացասական երևույթ, քանի որ հաղորդումը պարզապես դառնում է PR-ի գործիք: Որոշ մշակութային գործիչների հեռուստաէկրանին հայտնվելու փաստը ավելի շատ ինքնագովազդ է, ինքնացուցադրում, քան ինչ-որ բան հաղորդելու անշահիսնդիր մղում:

3. Այս կամ այն հաղորդատեսակի ժնունդն ու զարգացումը պայմանավորված է հասարակության, տվյալ դեպքում՝ լսարանի պահանջնունքով: Սակայն ինչ ժանրով էլ լինի հաղորդումը, մատուցվող նյութը և ասելիքը պետք է ակնհայտ լինեն: Նման հաղորդումները պահանջում են բոլոր հեռուստատեսային մասնագիտությունների աշխատանքի փոխներիյուսում: Դեռուստահաղորդման հաջողությունն էապես պայմանավորված է այն հանգամանքով, թե հեռուստահաղորդումը ինչ մակարդակ ու որակ է ապահովում: Տեղեկատվական ժամանցային հաղորդման ստեղծումն ու գործունեությունը, ըստ էության, փաստում է գրուցավարի հմտությունների մասին: Զրուցավարի բարդ և չափազանց պատասխանատու գործառույթը պահանջում է կանոնակարգված ու հետևյալական նախապատրաստական աշխատանք: Զրուցավարը

¹ John R. Bender, Lucinda D. Davenport,, Michael W. Drager, Fred Fedler §Reporting for the media!, seventh edition, New York, Oxford University Press 2005 /p.249/

պարտավոր է ցուցաբերել համակարգային մտածողություն, պետք է կարողանա հաղորդման շրջանակներում, թե՛ ձևի, թե՛ թեմատիկայի առումով ճիշտ և հեշտ կողմնորոշվել: Դժտարկումներ կատարենք ու մատնանշենք ՀՀ հեռուստաեթերում առկա հիմնական թերացումները: Տեղեկատվությունը առավոտյան տեղեկատվական ժամանցային հաղորդումներում հեռուստատեսային արտադրանք պետք է դառնա և էկրանային տեսք ստանա: Առավոտյան տեղեկատվական ժամանցային հաղորդումներում անտեսված է նախապատրաստական աշխատանքը զրուցավարների կողմից: Առավոտյան տեղեկատվական ժամանցային հաղորդումներում թեմաները, հերոսներն ու հյուրերը չեն ուսումնասիր-վում զրուցավարի կողմից, նա նախապատրաստական աշխատանքը կատարում է հենց եթերում՝ տեսախցիկի առաջ: Բացակայում է «էկրանային նյութ» ասվածը՝ որոշակի ընթացքով: Իսկ խոսքի, մտածողության ու վարքագիծ՝ առօրյային բնորոշ լեքսիկոնն ու տոնայնությունը տեղափոխված են էկրան առանց մասնագիտական «միջամտությունների»: Այսօր եթերում նկատելի են դասականից շեղվող, անսովոր դիմագիծ, մատուցելած ունեցող զրուցավարներ, ինչը նատուրացվող նյութին ինքնատիպություն է հաղորդում՝ բավարարելով ժամանակակից լսարանի պահանջները: Ինչ վերաբերում է լրագրողական աշխատանքին, ապա շեշտենք, որ սա ամենին չի նշանակում թեք աշխատանք կամ «հում» հյուրի նատուրացում, ընդհակառակը՝ ստեղծագործական աշխատանքն ավելի խստապահանջ է դառնում: Տեղական հեռուստաալիքներում (առավոտյան տեղեկատվական ժամանցային հաղորդումներում մասնակորապես) անպատրաստ եթերը նույնացվում է բնական ու կենդանի եթերի հետ:

4. Այս ձևաչափում ամեն ինչ ներկայացվում է «շարժման» մեջ, այսինքն՝ հյուրի և զրուցավարի հանդիպումը մի պահ թվում է «անպատրաստ» ու խիստ իմպրովիզացված, բայց իրականում պետք է կատարված լինի գրագետ լրագրողական նախապատրաստական աշխատանք և միայն այդ դեպքում հնարավոր է իսկապես բնական ու կենդանի արդյունք ստանալ: Բայց երբեմն տեղական առավոտյան հեռուստածրագրերի զրուցավարների երկար-բարակ մտորումները, որոնք հեռացնում են նյութից, ծանծրալի են ոչ տեղին: Ինչպես նշում է հեռուստատեսարան Ն. Վարդանյանը, «Երբ ամեն ինչ պրոֆեսիոնալ գիտելիքների շրջանակում ու մասնագիտական սկզբունքներին հավատարիմ, չափազանց գրագետ ու անթերի է արված, արդյունքն էկրանին չափից ավելի բնական է թվում»¹:

5. Եկա մեկ կարևոր որույթ, որը գրեթե անվիճելի է. պրոֆեսիոնալ զրուցավարը պետք է ունենա գեղեցիկ հաղորդավարական խոսք.

¹ Նանե Վարդանյան, Մտորելիք է, այնպես չէ. հայրենական հեռուստաթերթերի հետքերով, Երևան, 2008:

անհրաժեշտ հաղորդավարական հմտություններ : Առավոտյան ծրագրերում զրուցավարի աշխատանքում կարևորում ենք պատրաստվածության երեք հիմնական պահանջներ:

1. Մասնագիտական կրթությունը՝ որպես պատրաստվածության գրավական:
2. Եթերային պահվածքին ներկայացվող պահանջներ (իմիջի ստեղծում, բանավոր խոսք, միմիկայի և ժեստերի «լեզու»):
3. Եթերում փոփոխվող իրավիճակներին արագ արձագանքելու ունակություն (ուղիղ եթեր):

Ընդհանրապես առավոտյան տեղեկատվական ժամանցային հաղորդումները դիտարկելով իբրև ստեղծագործական միավոր իր ինտելեկտուալ արտադրանքով, զրուցավարի աշխատանքի մեթոդաբանական ցուցումը, կարծում ենք, հետևյալն է՝

1. նպատակի սահմանում,
2. հասցեականության որոշում,
3. հաղորդման տևողության որոշում,
4. տեղեկատվության աղբյուրների ընտրություն,
5. հարցերի ընտրություն :

**Արևիկ Չափարյան
Մամայի պատմության և տէսության
ամբիոնի եայցը**

**ՃՇՈՒԿՆԵՐՆ ՈՒ ԱՍԵԿՈՍԵՆԵՐԸ ՄԱՍՈՒԼՈՒՄ՝ ՈՐՊԵՍ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ – ԴՐԳԵԲԱՆԱԿԱՆ ՆԵՐԱԶԱՄԱՆ ՄԻՋՈՑ**

Այն, որ լրատվամիջոցները մեծ դեր ունեն հասարակական կարծիքի ձևավորման գործում և որոշակի ազդեցություն լսարանի վրա, թերևս անվիճելի է: Իսկ նման արդյունքի նրանք հասնում են տարբեր ճանապարհներով, այդ թվում նաև՝ տեղեկատվական-հոգեբանական ներազոման միջոցով: Կիրառելով զանազան մանիպուլյացիոն հնարանքներ՝ ԶԼՄ-ները փորձում են ազդել իրենց լսարանի հայացքների, նտածելակերպի վրա, կոտրում են կարծրատիպեր, ստեղծում նորերը, որոշակի ազդեցություն ունենում անգամ նրանց վարդի վրա:

Հշուկներն ու ասեկոսեները ինֆորմացիայի փոխանցման յուրապիտուկ տեսակ են, որ ունեն հազարամյակների պատմություն և չնայած հաղորդակցության տեխնիկական միջոցների արագընթաց զարգացմանը, մինչ այժմ տարածված են հասարակության մեջ: Դրանք տեղեկատվական-հոգեբանական ներազոման յուրահատուկ միջոցներ են: Տպագիր մանուլի էջերում հայտնվելով՝ շշուկները դադարում են գուտ ասեկոսե լինելուց, մինչև իսկ դառնում են լրագրողական նյութ, ինչ-որ առումով վերահիմաստավորվում են և առավել մեծ թափով մեծ սկսում տարածվել:

Ասեկոսեներն իրենց բնույթով բաժանվում են երկու իրար հակադիր խմբերի՝ տարերայնորեն ծագած և արիեստականորեն առաջացած: *Առաջինները*, այսպես կոչված, «ազգային կոլեկտիվ ստեղծագործության» արդյունք են և վերաբերում են կենսական անհրաժեշտություն ունեցող թեմաներին: Երկրորդ խմբին պատկանող ասեկոսեները համեմատաբար ավելի երիտասարդ են, դրանք նախ և առաջ տեղեկատվական պատերազմների և 20-ոդ դարի քարոզչության արդյունք են: Ստեղծողները հատուկ պատրաստված մասնագետներ են, որոնք հաշվարկում են բոլոր հնարավոր գործոնները մինչ իրենց «ստեղծագործությունը» լույս աշխարհ հանելը: Նրանք ասեկոսեների ազդեցության

¹ Стю Назаретян А. П., Агрессивная толпа, массовая паника, слухи: лекции по социальной политической психологии, СПб., 2003.

միջոցով նպատակ ունեն որոշ խնդիրներ լուծելու: Այս կերպ ազդում են մարդկանց պահվածքի, հույզերի, արժեհամակարգի վրա: Այդ ամենի արդյունավետությունը գիտակցում են նաև տարրեր լրատվամիջոցների ղեկավարները և հատկապես վերջին տարիներին մեծ տեղ են հատկացնում ասեկուսեներին: Դասկանալի է, որ դա արվում է ինչպես ընթերցող գրավելու, այնպես էլ առավել հեռուն գնացող նպատակների հասնելու համար:

Քանի որ ասեկուսեներն այսպես թե այնպես ոչ հավաստի ինֆորմացիա են, ապա դրանք դասակարգում են ըստ իրենց պարունակած ինֆորմացիայի հավաստիության: Ըստ այդմ լինում են՝ բացարձակ անհավաստի, պարզապես անհավաստի, հավաստի և իրականությանը մոտ ասեկուսեներ¹: Օրինակ՝ գերբելյան քարոզչության կանոնները պահանջում են, որ սուտը լինի հսկայական, նույնիսկ «հրեշավոր»: Այդ ժամանակ մարդիկ ավելի հսկած կլինեն դրան հավատալու: Մեր օրերում ճիշտ հսկառակն է, ապատեղեկատվությունը պետք է խիստ չափավորվի: Դայտնվելով որպես համեմատաբար ճշմարտանման՝ այն աստիճանաբար վստահություն է ծեռք բերում և միայն սրանից հետո է սկսում ուօճանալ մանրամասներով, ապա դանդաղ առաջ է գնում դեպի «բացարձակ անհավաստի»-ի սահմանը: Այդ իսկ պատճառով էլ բամբասանցներին մեծ տեղ հատկացնող լրատվամիջոցները հաճախ իրենց տարածած տեղեկատվությունը հավաստի կամ գոնե ճշմարտանման դարձնելու համար վկայակոչում են անանուն, աղբյուրներին: Իսկ դա, բնականաբար, տալիս է իր դրական արդյունքը:

Մեր ուսումնասիրած գրեթե բոլոր լրատվամիջոցներում / «Առավոտ», «Դայոց աշխարհ», «Դայկական ժամանակ», «Դետք» / կիրառվում են ասեկուսեների որոշակի տարրեր, իսկ առաջատարները «Դայոց աշխարհ» և «Դայկական ժամանակ» օրաթերթերն են:

Դուգակամ բնութագրի տեսանկյունից առանձնացնում են ասեկուսեների երեք հիմնական տեսակ²:

«Ծոլուկ-ցանկություն»: Այս բամբասանքը պարունակում է հուզական ուժեղ ցանկություն, որն արտացոլում է այն լսարամի պահանջմունքները, որտեղ տարածվում է: Ծոլուկի այս տեսակը մեր ուսումնասիրած թերթերից առավել հաճախ օգտագործում է «Դայկական ժամանակ» օրաթերթը: Պարբերականում հաճախ տեղ են գտնում այնպիսի հրապարակումներ, որոնցում շեշտվում է, որ «մեր երկրում իշխողներին քիչ է մնացել», որ «շուտով գալու են լավ ժամանակներ», «իշխանափոխությունը մոտ է» և այլն:

¹ Ste'v Nazaretian A. P., Агрессивная толпа, массовая паника, слухи: лекции по социальной политической психологии. СПб., 2003.

² Ste'v Karajany A. G., Слухи как средство информационно-психологического противодействия, Психологический журнал, 2003, т. 24, № 6, стр. 52.

«Ծշուկ - Խրտվիլակ»: Սա շշուկ է, որն իր մեջ պարունակում է բացասական տրամադրություններ, վախի ու սարսափի հուզական վիճակներ և արտահայտում է այն լսարանի՝ որոշ առումներով արդիական, բայց ծայրահեղ անցանկալի սպասելիքները, որտեղ դրանք ժագում և տարածվում են: Նմանատիպ շշուկներ են տարածվում հատկապես մեր բանակի, հրադադարի ռեժիմի խախտումների, նոտալուտ պատերազմի վտանգի հետ կապված:

«Ազրեսիվ շշուկ»: Սրանք ոչ միայն առաջացնում են բացասական տրամադրություններ և վիճակներ, արտացոլում հանրության անցանկալի սպասելիքները, այլև ուղղված են խթանելու ազրեսիվ հուզական վիճակները և համապատասխան պահվածքային «պատասխան» ունեն: Նմանատիպ շշուկներ տարածում են և դիմադիր, և ընդդիմադիր թերթերը՝ յուրաքանչյուրն իր կողմնակիցների «մարտական ոգին» բարձրացնելու նպատակով:

«Անհերեր շշուկներ»: Սրանք հատուկ են վերոնշյալ բոլոր տիպերին: Կարող են լինել և ցանկալի, և վախսեցնող, անգամ ագրեսիվ, սակայն գլուխավոր ներկայացվածի ակնհայտ անհերեր լինելն է: Այդպիսի լուրերը հաճախ հայտնվում են ինքնաբերաբար, որպես խառնաշփոթի արդյունք և հաճախ հայտնվում են նաև լրատվամիջոցների էջերում:

Առավել հաճախ ասեկուսների թիրախ են դառնում քաղաքական գործիչները և հանրային հետաքրքրություն ներկայացնող անձինք: Բնականաբար, դիմադիր ու ընդդիմադիր լրատվամիջոցները տարատեսակ ասեկուսների համար որպես թիրախ ընտրում են քաղաքական հակառակ ճամբարի առաջնորդն կամ նրա հարազատներին: Այս մեթոդից հիմնականում օգտվում են «Յայկական ժամանակ» և «Յայոց աշխարհ» օրաթերթերը: Վերջիններս, վկայակոչելով իրենց անանուն, բայց «հավաստի» աղբյուրները, ամբողջ նյութը կառուցում են ասեկուսների վրա: Իսկ հասարակ մի բանքասանք կարող է տեղեկատվական-հոգեբանական ներազնան գենք դառնալ:

Սկզբունքորեն բամբասանքը պատկանում է ոչ գրավոր հաղորդակցությանը: Այն տարածվում է բանավոր կերպով և կորցնում է իր շատ հատկանիշներ, երբ հայտնվում է լրատվամիջոցների էջերին:

Խոսելով շշուկների մասին՝ տարբեր մասնագետներ դրանց մեջ տարբեր բովանդակություն են տեսնում և տարբեր ձևակերպումներ են տալիս:

Կ. Գ. Յունգն իր պրակտիկ գործունեության ընթացքում բախվելով «շշուկներ» երևույթի հետ, դրանք բնորոշում է հետևյալ կերպ: «Ծշուկը կոլեկտիվ անգիտակցականի, որոշակի արքետիպերի անուղղակի արտահայտումն է: Դա անհանգստացնող կոլեկտիվ սպասելիքների

պատասխանն է, որը կա յուրաքանչյուրի մեջ¹: Ըստ նրա՝ շշուկները նաև «հաղորդակցության շրջանառություն կատարող ծևն են, որի օգնությամբ մարդիկ գտնվելով ոչ միանշանակ իրավիճակում, համախմբվում են, ստեղծում դրա ողջամիտ մեկնաբանությունը և այն հաղորդելով՝ օգտագործում են իրենց ինտելեկտուալ հնարավորությունները»:

Գ. Շիրուտանիի տեսակետի համաձայն՝ «ասեկոսեների հիմքում ընկած է իրադարձություն, որն օժտված է երկու հատկանիշներով՝ կարևորություն և անորոշություն: Եթե իրադարձությունը կարևոր չէ և «օժտված» չէ անորոշությամբ, ապա դրա վերաբերյալ շշուկներ չեն լինի»²:

Բոլոր ծևակերպումներն ել իրենց մեջ այս կամ այն չափով ճշմարտություն են պարունակում: Ու թեպետ հնարավոր չէ միանշանակ ծևակերպել, թե ինչ է բամբասանքը, մի բան ակնհայտ է. այն հաղորդակցության համակարգ է, որը գործում է պաշտոնական աղբյուրին զուգահեռ:

Կան պարբերականներ, որոնք անդրադառնալով այս կամ այն բամբասանքին, փորձում են պարզել նաև դրա ճշմարտացիությունը: Այս սկզբունքով է աշխատում «Դետք» պարբերականը: Վերջինս անդրադառնում է հասարակության մեջ տարածված շշուկներին, սակայն տարբեր աղբյուրների միջոցով փորձում է պարզել նաև, թե որքանով են դրանք հավաստի՝ եզրակացությունները բողնելով ընթերցողներին: Նշենք, որ բամբասանքին բնորոշ է միանգամյա արտաքերումը տվյալ ունկնդրի, մեր պարագայում՝ ընթերցողի առջև: Երկրորդ անգամ նույն մարդու ներկայությամբ տվյալ բամբասանքը չի վերապատճենվում: Այդ պատճառով շատ լրատվամիջոցներ նույն տեղեկատվությունն երկրորդ անգամ շրջանառելու արդարացնելու համար մի փոքր նորություն են դրան հաղորդում և ընթերցողի հիշողությունը քարմացնելու նպատակով նշում, որ իրենց նախորդ համարներից մեկում արդեն անդրադարձել են այդ հարցին: Մեկ անգամ ևս վկայակոչելով նույն անհայտ, բայց հավաստի աղբյուրը՝ հոգեբանորեն փորձում են ազդել ընթերցողի վրա՝ այս կերպ նրան մեկ անգամ ևս վստահեցնելով, որ ինֆորմացիան ստույգ էր, իսկ խնդիրը շարունակում է մնալ արդիական:

Հաճախ կարելի է լսել կամ տեսնել լրատվամիջոցներում. «Ի՞նչպես կմեկնաբանեք շշուկներն այն մասին «որ....» արտահայտությունը, որին հետևում է այն մարդու մեկնաբանությունը կամ բացատրությունը, որի հասցեին հնչել է տվյալ բամբասանքը: Այս մեթոդից առավել հաճախ օգտվում է «Առավոտ» օրաթերթը՝ դրանով իսկ ավելի հետաքրքիր դարձնելով նյութը ընթերցողների համար:

¹ Юнг К. Г., «О современных мифах». М., 2003, стр. 50-75.

² Шибутани Г., Социальная психология. М., Прогресс. 1969. стр. 110.

Որքան էլ մասնագետները փաստում են, որ ժուռնալիստիկայում նման մոտեցումը, մեղմ ասած, ոչ պրոֆեսիոնալ է, այնուամենայնիվ առանց ասեկուսեների, տարատեսակ շշուկների կամ չճշտված լուրերի դժվար է պատկերացնել մեր լրատվական դաշտը: Ի վերջո ո՞րն է անանուն ինֆորմացիայի գրավչության գաղտնիքը, որը տարածվում է «բերանից թերամ»: Ստորև փորձենք ներկայացնել հարցի հնարավոր պատասխաններից մի քանիսը:

Առաջին, ասեկուսեն երբեք չի կրկնօրինակում կամ չի տալիս ինֆորմացիա «բոլորի համար», ինչը անում են պաշտոնական աղբյուրները:

Երկրորդ, պարունակում է պատասխաններ մարդկանց անհանգստացնող սպասելիքների վերաբերյալ: Օրինակ՝ սպասելիքներ հերթական քաղաքական որոշման հետ կապված:

Երրորդ, կարող է պատասխան լինել որոշ հասարակական ցանկության, պատկերացման: Ասենք՝ պարունակում է ինֆորմացիա որևէ պաշտոնայի հնարավոր այցի մասին:

Չորրորդ, կարող է պարունակել տեղեկություններ հայտնի քաղաքական գործի մասին: Նմանատիպ թեմաները մեծ հետաքրքրություն են ներկայացնում լսարանի համար:

Բացի այդ, բամբասանքները սկզբունքորեն անամում են: Ինֆորմացիայի անանունությունը որոշակի «ժողովրդականություն» է ստեղծում: Անանուն բամբասանքը ինքնատիպ խոսակցություն է կողեկտիվ գիտակցության և դարձյալ կողեկտիվ գիտակցության միջն՝¹: Գուցե դա է պատճառը, որ շատ լրատվամիջոցներ տեղեկատվությունը տրամադրելով, նշում են, որ այն իրենց հաղորդել է գաղտնի, բայց հավաստի աղբյուրը: Այս դեպքում անգամ ամենանհավանական շշուկին հավատում են, մտածելով, թե այդ աղբյուրն ինչու պետք է ստեղ:

Ասեկուսեների տարածման որոշիչ գործոններ են աղբյուրները, այլ ցմտրանքային բռվանդակությունը, անհարմարավետությունը և հերքմանն ավելի նպաստելը.

Նախ, որպեսզի տեղեկատվությունը հասնի նպատակային լսարանին, կարուոր է ուշադրություն դարձնել, «քե որտեղից պետք է լինի «տեղեկատվության հոսքը»: Սա կարող է հնարավորություն տալ հեշտ հասնելու ցանկալի արդյունքի: Դաճախ ընդունադիր թերթերը ինֆորմացիայի հավաստիության համար շեշտում են, որ դա իրենց փոխանցել է, ասենք, «կառավարությանը մոտ կանգնած» կամ «այդ համակարգում աշխատող» իրենց աղբյուրը: Առաջին հայացքից կարող է պարագության թվականը այն, որ ընթերցողին մեծ հավատ է ներշնչում անանուն

¹ Stein Karayann A. G., Слухи как средство информационно-психологического противодействия, Психологический журнал, 2003.

աղբյուրի հաղորդած տեղեկատվությունը, բայց այդ աղբյուրն ինքնին հեղինակություն է համարվում, քանի որ պատահական մեկը չէ, այլ հակառակ թեում գտնվող հայտնի, բանինաց անձնավորություն, որի անունը, ըստ հավատարիմ ընթերցողների, «հարգելի պատճառներով» գաղտնի է պահպում: Եվ, փաստորեն, ընթերցողի հոգեբանության վրա դա ցանկալի կերպով է ազդում: Այս հնարանքին գրեթե միշտ դիմում է «Հայկական ժամանակը»:

Հակառակ թեում «հավաստի աղբյուրներ» ունեն նաև «Հայոց աշխարհի» լրագրողները, ովքեր ոչ այնքան հաճախ, որքան «Հայկական ժամանակ»-ի աշխատակիցները, բայց այնուամենայնիվ վկայակոչում են ԿԱԿ-ի իրենց «հավաստի» աղբյուրներին:

Բնականաբար շատ ընթերցողներ նույնիսկ չեն ել կասկածի, որ «մեր հավաստի աղբյուրներ» արտահայտությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ տարատեսակ բամբասանքներին հավաստիության երանգ հաղորդելու միջոց:

Սա ամենահին չի նշանակում, որ բոլոր «հավաստի աղբյուրների» ճշմարտացիությունը պետք է կասկածի տակ առնել, սակայն պետք չէ նաև կուրորեն հավատալ, որ բոլոր ասեկոսեների ու շշուկների հետևում իսկապես հավաստի ինֆորմատոր է կանգնած:

Ասեկոսեների արդյունավետության եղկրորդ պատճառը կապված է նրանց բովանդակության հետ: Առավել արդյունավետ է բացահայտ արգելված, այլընտրանքային տեղեկատվությունը, որը պարունակում է հերքման կամ բացառման տարրեր բոլորի համար հասանելի ինֆորմացիայի նկատմամբ: Այստեղ ընթերցողներին հոգեբանորեն առաջնորդում է ցանկությունը տնօրինելու մեկ այլ, ոչ սովորական, ոչ «քույլատրելի» տեղեկատվության:

Երրորդ, ասեկոսեները հաջողության են հասնում, եթե պարունակում են ամիարմարավետություն առաջացնող ինֆորմացիա, այսինքն՝ այնպիսի մի բան, որը կառաջացնի վախ, տագնապ, տարակուսանք, կիսախտի իրադարձությունների սովորական ընթացքը: Փորձը ցույց է տալիս, որ բացասական ասեկոսեների ազդեցությունն ավելի մեծ է, քան դրականներինը: Սպառնացող վտանգների և բացասական երևույթների նասին շշուկներն ավելի շատ ու ավելի երկար են պտտվում ԶԼՄ-ներում և առհասարակ հասարակության շրջանում, քան ոչ բացասական երանգ պարունակող բամբասանքները:

Եվ Վերջապես՝ չորրորդ գործոնը, որ արդեն դիտարկել ենք, այն է, որ այն հերքում է բոլոր տեսակի հերքումները: Ինչ-որ մեկն անգամ կատակել է, որ ասեկոսեներին չեն հավատում այնքան ժամանակ, քանի դեռ չեն սկսել դրանք հերքել:

Ամփոփելով՝ մեկ անգամ ևս նշենք, որ ասեկոսեները և զանազան շշուկները ինչպես հաղորդակցության յուրօրինակ միջոցներ, այնպես ել

տեղեկատվական-հոգեբանական ներազդման արդյունավետ մեթոդներ են: Դրանք իրապուրիչ են, գրավում են ընթերցողներին, հաճախ ազդում են ոչ թե նրանց գիտակցության, այլ գույտ հոգեբանության վրա և այդպիսով հեշտությամբ մանիպուլացնում են նրանց: Ուսումնասիրված հոդվածներից կարելի է ենթադրել, որ մեր դիտարկած պարբերական ների մեջ մասի պարագայում այդ ասեկուսներն ինքնանպատակ չեն շրջանառվում, ունեն հատուկ քաղաքական ենթատեքստ և հստակ դրված նպատակ: Իսկ ցանկալի արդյունքի հասնելու համար ասեկուսների կիրառումը արդյունավետ մեթոդ է այնքանով, որ դրանց «խայծն ընդունելը» սովորական ընթերցողից մեջ ջանքեր չի պահանջի:

ՂԱՍՏԱՑՅԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԸ
ԼՐԱԳՐՈՒԴԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒԵՌՅԱՆ ՄԵԶ

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների արագընթաց զարգացումը լուրջ փոխակերպումներ առաջացրեց ժամանակակից հասարակության տարբեր բնագավառներում: Ուսումնասիրողները կարծում են, որ «Տեղեկատվական ոլորտի քանակական փոփոխությունները բերեցին սոցիալական կառուցվածքի որակապես նոր ձևի՝ տեղեկատվական հասարակություն առաջացմանը»¹: Մալուխային և արքանյակային հեռուստատեսության, անհատական համակարգիչների, հաճացանցի և բջջային հեռախոսների առաջացումը և զարգացումը հնարավորություն ստեղծեցին աննախադեպ ծավալով ու արագությամբ տարածելու լրագրողական նյութերը:

Սակայն հիմնական փոփոխությունները տեղի չունեցան միայն ԶԼՄ-ների գործառույթների և տեղեկատվության տարածման տեսակետից: Տեխնոլոգիաների զարգացման և ԶԼՄ-ների կոնվերգենցիայի (այսուհետ՝ հարամիտում) դարաշրջանում զգալի փոխակերպումների ենթարկվեց հենց լրագրողի մասնագիտությունը: Ավելի ու ավելի շատ են խոսում ունիվերսալ լրագրողի մասին, որի գործունեության մեջ տեղեկատվական տեխնոլոգիաների գործածության կարողությունը դառնում է կարևորագույն հատկանիշ:

¹ Յանչեր Փ. Թեորия информационного общества. М., 2004. С. 14.

Կոնվերգենցիա եզրույթ (լատիներեն convergo՝ մոտենում եմ, մերժենում եմ), որն արդեն վաղուց իր կիրառությունն է գտնել կենսաբանության, ազգագրության, լեզվաբանության բնագավառներում սերտաճման, փոխադարձ օգտագործման, նոյնանման գործընթացներն անվանելու համար: Այդ նոյն ինստիտուտությունը՝ 1950-ական թվականներին Արևմուտքի փիլիսոփաներն ու սոցիոլոգները կոնվերգենցիա հասկացությունը սկսեցին գործածել հասարակական-քաղաքական գիտություններում: ...Խոկ 1970-ական թվականներին այս հասկացությունը գնալով հաճախակի է օգտագործվում տեղեկատվական տեխնոլոգիաների հարթակների (պլատֆորմա՝ համակարգիչների, հեռախոսների, հեռուստացույցների ինտեգրացումն անվանելու համար (Աղրյուր՝ Վարդանով Ե. Լ., Կոնвергенция как неизбежность: о роли технологического фактора в трансформации современных медиа-систем // От книги до Интернета. Журналистика и литература на рубеже тысячелетий / Отв. Ред. Засурский Я. Н. и Варданова Е. Л. - М.: Изд-во Моск. Ун-та, 2000. - стр. 37-38):

Համացանցը հաղորդակցության «ամենաարագ» միջավայրն է երբեք գոյություն ունեցողների մեջ՝ թե՝ իր աճի տեսակետից և թե՝ տեղեկատվություն տարածելու կարողությամբ։ Այն կոտրեց ոչ միայն լսարանին տեղեկատվություն փոխանցելու ավանդական միջոցների մասին պատկերացումները, այլ նաև լրագրողների տեղեկատվության ստացման աղբյուրների և գործիքների մասին պատկերացումները։

Լրագրողներն իրենք ել են ընդունում իրենց մասնագիտության փոխակերպումները, վերջինիս սահմանների ընդլայնումը՝ պայմանավորված տեղեկատվության փոխանցման արագացմամբ, տեղեկատվության ամնախաղեպ ծավալների ավելացմամբ, տեղեկատվության նոր կրիչների ի հայտ գալով, չափազանց ընդլայնված լսարանի մատչելիությամբ և այլն։

Փոփոխությունների ծավալը գնահատելու համար բավական է հիշել, թե ինչպիսին էին լրագրողական գործունեության գործիքները դեռ երկու տասնամյակ առաջ։ Դաղորդակցության տեխնիկական միջոցներից լրագրողներին մատչելի էին հեռախոսը, փոստային կապը և ֆաքսը։ Բջջային հեռախոսակապը մեր երկրում հայտնվեց միայն 1990-ականների կեսերին, իսկ լայն տարածում գտավ դարավերջին։ Տեղեկատվության աղբյուրին հասնելու համար լրագրողն ավանդաբար օգտագործում էր սեփական ուժերը, երբեմն էլ խմբագրության կողմից տրամադրված փոխադրամիջոցը։ Մեր օրերում հին ֆիլմերում կարելի է միայն տեսնել, թե ինչպես է լրագրողը, ստանալով աղմկահարույց տեղեկատվություն, վագում է դեպի մոտակա հեռախոսը՝ ծգտելով ամեն գնով առաջ անցնել մրցակիցներց ու առաջինը հայտնել այդ լուրը իր խմբագրություն։ Այսպիսի պատկերը ժամանակակից լրագրողի մոտ, որը «զինված» է բջջային հեռախոսով և համացանց մուտք գործելու հնարավորություն ունեցող շարժական համակարգով, միայն հեգնական ժայիտ կառաջացնի։

Իհարկե, իսկական ռեալորտաժ պատրաստելու համար միևնույնն է՝ պետք է վազել և ընթանալ։ Սակայն այսօրվա տեղեկատվական հոսքն այնքան մեծ է, որ լրագրողը պարզապես ի վիճակի չէ հասնել յուրաքանչյուր կարենոր տեղեկատվության հետևից։ Եվ դրանում իրական անհրաժեշտություն էլ չկա։ Այսպես, ինչպես անչպես անհրաժեշտություն չկա վազել գրադարան Լիրիայի մայրաքաղաք ճշտելու համար, կամ ժամերով հեռախոսվ ճշտել որևէ նախարարի ծննդյան տարեթիվը։ Այսօր լրագրողը համացանց օգտագործում է ամեն օր, այնպես, ինչպես նախկինում զանգահարում էր հեռախոսով և ընդունում հաղորդագրություններ ֆաքսով։ Համացանցը վաղուց դադարել է խաղալիք լինելուց, այն դարձել է լրագրողի հիմնական գործիքներից մեկը։

4. Կիխտանի «Տեղեկատվական տեխնոլոգիաները ժուռնալիստիկայում» գրքում բերված են խմբագրություններում աշխատող լրագրողների հարցման արդյունքները: Ուսումնասիրությունը պարզել է, թե ինչպես են նոր տեխնոլոգիաները մտնում լրագրողների մասնագիտական գործունեության մեջ¹: Ընդհանրացնելով հարցման արդյունքները կարելի է ասել, որ լրագրողներն համացանցն առաջին հերթին համարում են հետխորհրդային տարածության ժուռնալիստիկան միջազգային հանրության հետ կապող գլխավոր կամուրջ: Այլ առավելությունների հետ մեկտեղ, նրանք նշել են, համացանցը բերեց նոր մտածելակերպ, լրագրողական աշխատանքի նոր կազմակերպում և հմտություններ, տվեց համաշխարհային տեղեկատվական ռեսուրսներ մուտք գործելու հնարավորություն, անկախ այն բանից, թե որտեղ՝ մայրաքաղաքում, թե մարզկենտրոնում է գտնվում խմբագրությունը, նաև դարձավ շփման նոր միջոց: Այսպիսով համացանցն օգտագործելու կարողությունը լրագրողին անհրաժեշտ հմտությունների ցանկում առաջնային տեղ է գրավում:

Ժամանակակից լրագրողը՝ միայն առցանց լրագրող չէ, այլ իրազեկ լրագրող, որն ունի բազմակողմանի և ամբողջական տեղեկատվություն և խորապես զարգացնում է յուրաքանչյուր թեմա: «Տեղեկատվության ամբողջականությունը ծնունդ է լիարժեք մտահղացումներ, իսկ դրանք իրենց հերթին՝ խնդիրների լուծման արդյունավետ ալգորիթմներ»²:

Ժամաշխարհային սարդոստյանը ընդլայնեց լրագրողի հնարավորությունների սահմանները՝ ընծեռելով նրան ոչ միայն տեղեկատվության որոնման սկզբունքորեն նոր հնարավորություններ և տեղեկատվության աղբյուրների անսահմանափակ քանակ, այլ լսարանի հետ մասնագիտական հաղորդակցության և ինտերակտիվ շփման համար նախատեսված սկզբունքորեն նոր գործիքներ, ինչպես նաև լրագրողի մասնագիտական զարգացման և ինքնակատարելագործման արդյունավետ միջոցներ:

Լրագրողի համար տեղեկատվության աղբյուր է ցանկացած օբյեկտ, որը պարունակում է տեղեկություն փաստերի, իրադարձությունների, շրջակա երևույթների իրականության մասին:

Որոշակի տեղեկատվական ռեսուրսը կարող է իր մեջ ներառել աղբյուրների տարրեր տեսակներ, տալ տարրեր մակարդակի տեղեկատվություն, ենթադրում է մի շարք մեթոդներ վերջինիս օգտագործման համար: Ռեսուրսներից յուրաքանչյուրն ունի իր առավելությունները, մուտք գործելու հնարավորությունների առանձնահատկությունները, մուտք գործելու հնարավորությունների առանձնահատկությունները:

¹ Стю Клэктан В. В., Информационные технологии в журналистике. Ростов на Дону, 2004.

² Фролова Т. И., Человек и его мир в информационной повестке дня. Гуманистические технологии в журналистике. М., 2009. стр. 210.

րը, սահմանափակումներն ու արգելվները: Լրագրողական գործունեության կանոնների համաձայն գոյություն ունեն տեղեկատվական աղբյուրների երեք հիմնական տեսակներ՝ փաստաթուղթ, նարդ և առարկայական-նյութական միջավայր¹:

Դամացանցը մժվար է միանշանակ վերագրել այս երեք տեսակներից մեկին: Իսկապես ցանցը պարունակում է փաստաթորթերի ահեղիքանակություն, որոնք ել իրենց հերթին պարունակում են տեքստային, տեսաձայնային, գրաֆիկական և տեղեկատվության այլ տեսակներ: Մակայն, հաշվի առնելով համացանցի առանձնահատկությունը և տեղեկատվության ստացման տեսակների անսահմանափակությունը, այն կարելի է անվանել համապարփակ աղբյուր: Էլեկտրոնային փոստը, բլոգները, սոցիալական ցանցերը և այլն, հնարավորություն են տալիս տեղեկատվություն ստանալ անմիջապես մարդուց օգտատերից: Բացի այդ, գրեթե բոլոր նորություն ստեղծողները՝ ինչպես անհատները, այնպես էլ կազմակերպությունները, ունեն սեփական կայքեր, որոնք պարունակում են ինչպես առցանց, այնպես էլ անհատական տեղեկատվություն, որը հաճախ վերացնում է անմիջապես շփման անհրաժեշտությունը: Օրինակ, ինչպես Երևանի այնպես էլ աշխարհի քաղաքների առօրյա կյանքը առցանց եղանակով, վեբ-տեսախցիկների միջոցով նկարահանող, հեռարձակող կայքերը թույլ են տալիս իրական ժամանակում հետևել շրջապատող իրականությանը².

Տեղեկատվության տեսակները նույնպես կարող են տարբեր լինել: Լրագրողի մասնագիտական գործունեության մեջ տեղեկատվության օգտագործման տեսակետից կարելի է առանձնացնել. օպերատիկ տեղեկատվությունը (նոր փաստեր, մեկնաբառնություններ և կարծիքներ, դիմումներ և այլն), ենթատեքստային տեղեկատվությունը (օգտակար է ընդհանուր առնամբ իրավիճակը հասկանալու համար), հիմնական տեղեկատվությունը (խնդրի ինցիդուններ ծևազորող և կարգավորող) և այլը³:

Տեղեկատվության որոշ տեսակների և դրանց օգտագործման յուրահատկությունների մասին խոսենք ավելի մանրամասն:

Լրագրողի հիմնական խնդիրներից մեկը վերջին իրադարձություններին միշտ տեղյակ լինելու է: Նորությունների պարբերաբար մշտադիտարկումը անհրաժեշտ է նույնիսկ այն դեպքում, եթե դա չի մտնում վեցինիս խմբագրական պարտականությունների մեջ: Դամա-

¹ Ст. Лазуткин Г. В., Основы творческой деятельности журналиста, 2-е изд., М., 2004.

² Ст. <http://www.myyerevan.am/camera/>, <http://www.webcamworld.com/>

³ Ст. Смирнова О. В., Фролова Т. И., Достоверность информации о террористическом конфликте: грани проблемы // Журналистика и СМИ против террора. М., 2009.

շանցի շնորհիվ լրագրողը կարող է հետևել նորությանը, նրա զարգացման ընթացքում: Նորությունների ժամանակաշրջանում հանդիսանում են օպերատիվ տեղեկատվություն, ինչպես նաև ենթատեքստային տեղեկատվություն, վերլուծական և այլ նյութերի համար թեմաների և մտահղացումների աղբյուր: Օպերատիվ տեղեկատվություն ազատ մուտք գործելու հնարավորություն տալիս են գրեթե բոլոր լրատվական գործակալությունների և այլ ԶԼՍ-ների կայքերը: Սակայն կարևոր է օգտագործել այն աղբյուրները, որոնք առաջարկում են բացառիկ, այլ ոչ թե երկրորդական տեղեկատվություն:

Բացառիկ տեղեկատվության պրոֆեսիոնալ արտադրողները, ինչպես միշտ, հանդիսանում են լրատվական գործակալությունները: Դեղինակավոր հայկական լրատվական գործակալություններից կարելի է նշել Արմենպրես, Մերիհամաքս, Նոյյան Տապան և այլն, ոռւսականներից ԻТАՐ-ՏԱՅՍ, Ինտերֆակս, ՌԲԿ² և այլն, արտասահմանյան՝ Reuters, France-Presse, Associated Press³ և այլն: ԶԼՍ-ների խմբագրությունների մեջ մասը բաժանորդագրված են նորությունների ամբողջական ժապավեններին և խոշորագույն լրատվական գործակալությունների անոնսներին: Սակայն լրագրողը կարող է նաև ինքնուրույն բաժանորդագրվել նորությունների բաշխմանը՝ որը ընդհանուր պատկերացում է տալիս տեղեկատվական պատկերի մասին և զգալիորեն կրծատում են նորությունների որոնման ժամանակը և պայմանները: Լրագրողը պետք է ունենա այն գործակալությունների ցուցակը, որոնց հաղորդագրությունները նա պարբերաբար կարդում է: Այս ցուցակում պետք է ներառել նաև տպագիր պարբերականների կայքերը. դրանց հաճախ հանդիսանում են միայն տվյալ թերթի լուագրողից ստացված բացառիկ տեղեկատվության աղբյուրներ:

Մշտադիտարկնան համար արդյունավետ են նաև նորությունների որոնողական կայքերը, օրինակ, HengyusSearch⁴ հայկական որոնողական կայքը, ոռւսական Яндекс. Խօստի-ին կամ անգլալեզու Google.News-ը⁵: Նրանք թույլ են տալիս ոչ միայն ստանալ տեղեկատվություն, այլ նաև տեսնել, թե որքանով է այն «քարո՞» և որ խմբագրություններն են տվյալ նորությունը արդեն հրապարակել: Եթե անհրաժեշտություն կա որոշակի թեմատիկայով պարբերաբար տեղեկատվություն ստանալ, այդ դեպքում կարելի է բաժանորդագրվել RSS հոսքին նո-

¹ Տե՛ս <http://armenpress.am/>, <http://www.mediamax.am/>, <http://www.noyan-tapan.am/>

² Տե՛ս <http://www.itar-tass.com/>, <http://www.interfax.ru/>, <http://www.rbc.ru/>

³ Տե՛ս <http://www.reuters.com/>, <http://www.afp.com/>, <http://www.ap.org/>

⁴ Տե՛ս <http://www.hsearch.am/>

⁵ Տե՛ս <http://news.yandex.ru/> և <http://news.google.com/>

RSS հոսք - օգլուագրված է համացանցի բովանդակության հավաքագրման նպատակով, որի միջոցով հնարավոր է ստանալ բլոգում կամ լրատվական-վերլուծական

բությունների որոնողական համակարգերում: Բացի այդ, կարելի է օգտագործել հարմարանքներ, որոնք թույլ են տալիս բաժանել նորություններն ըստ աղբյուրների: Օրինակ, այնպիսի կայքերում, ինչպիսիք են Drudgereport-ը կամ Breitbart-ը¹, կարելի է ստանալ համաշխարհային խոշորագույն լրատվական գործակալությունների ամենավերջին հաղորդագրությունները, ինչպես նաև բացառիկ նորություններ:

ՁԼՍ-ների և լրագրողների համար անոնսների, մամլո-հաղորդագրությունների աղբյուր են հանդիսանում առաջին հերթին լրատվական գործակալությունները, ինչպես նաև պետական ու հասարակական կազմակերպությունների և անհատների կայքերը: Դրանցում կարելի է գտնել և մամլո ասուլիսների սղագրությունները, և պետական գործիչների ու այլ հայտի անհատների ամբողջական ելույթները:

Կազմակերպությունների կայքերը լրագրողների համար պաշտոնական տեղեկատվության կարևորագույն աղբյուր են. այստեղ կարելի է ստանալ անոնսներ և մամլո-հաղորդագրություններ, տեղեկատվություն կառավարության անդամների մասին, օրենքների և այլ պաշտոնական փաստաթղթերի տեքստեր, լուսանկարներ և տեսանյութեր: Բացի այդ, կազմակերպությունների կայքերում տեղադրվում է տեղեկատվություն այն մասին, թե ինչպիսին է տվյալ համակարգի փոխհամագործակցումը զանգվածային լրատվամիջոցների հետ. ինչպես կազմակերպել հարցազրույց, ինչպես և որտեղ պետք է ուղարկել տվյալ կազմակերպության մասին տեղեկատվական նյութեր ստանալու համար հարցումը, ինչպես բաժանորդագրվել տեղեկատվական բաշխմանը և այլն:

ՀՀ նախարարությունների և կառավարությանն առընթեր մարմինների կայքերում տեղադրվում են հայտարարություններ, ճեպազրույցների նյութեր, մամուլի տեսություններ, նորություններ, վիճակագրություն և այլ մասնագիտացված տեղեկատվություն: Օրինակ, ՀՀ Ոստիկանության կայքում² կարելի է ընդհանուր տեղեկություն ստանալ Հայաստանում կատարված հանցագործությունների, ինչպես նաև որոշակի ժամանակահատվածում կատարված հանցագործությունների մասին:

Պետական գործիչների անհատական-կայքերում (օրինակ՝ ՀՀ նախագահի)³ կարելի է գտնել նրանց ելույթների տեքստերը, մամլո-ծառայությունների հաղորդագրությունները, մամլո-ասուլիսների և այլ

կայքում հրատարակված վերջին նյութերը՝ կարճ բովանդակությամբ: Դրանք ստանալու համար օգտատերը պետք է գրանցվի ազգեազտորի միջոցով, ինչը հնարավորություն կտա տեսնել վերջին բարձացումները, առանց տվյալ կայք մտնելու:

¹ Տե՛ս <http://www.drudgereport.com/> կամ <http://www.breitbart.com/>

² Տե՛ս <http://www.police.am/>

³ Տե՛ս <http://www.president.am/president/cover/arm/>

միջոցառումներ մասին հայտարարություններ, ինչպես նաև նրանց գործունեությունն արտացոլող լուսանկարներ և տեսանյութեր:

Դեղինակավոր աղբյուրներ են հանդիսանում միջօգգային հասարակական կազմակերպությունների կայքերը: Օրինակ՝ ՄԱԿ-ի¹ կայքում տեղադրվում է տեղեկատվություն Անվտանգության խորհրդի, Գլխավոր վեհաժողովի աշխատանքների մասին: Կայքում կա նաև մշտապես թարմացվող ՄԱԿ-ի լուրերի կենտրոն մուտք գործելու հնարավորություն, որը տրամադրում է հղումների մի ամբողջ շարք սկզբնադրյուրների նյութերի վերաբերյալ՝ ներառյալ մամլո-հաղորդագրությունները, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հաշվետվությունները, Անվտանգության խորհրդի որոշումները և հայտարարությունները, ինչպես նաև ՄԱԿ-ի գործունեությանը վերաբերող այլ կարևորագույն փաստաթղթերը: ՄԱԿ-ի նորությունների կենտրոնի այցելուները կարող են բաժանորդագրվել նորությունների անվճար բաշխմանը, և ՄԱԿ-ի վերջին իրադարձություններին նրանք կծանոթանան ուղղակի այցելելով իրենց էլեկտրոնային փոստ: «ՄԱԿ-ի վեբ-հեռարձակման» ծառայությունը (United National Webcast)² ամեն օր վարում է ՄԱԿ-ի բաց նիստերի, համաժողովների, ճեպազրույցների առցանց հեռարձակում մամուլի համար:

Վերջին ժամանակներում սկսեցին հայտնվել մասնագիտացված ռեսուրսներ, որոնք առաջարկում են մամլո-ասուլիսների, ճեպազրույցների, շնորհանդեսների, ֆորումների, կլոր սեղանների և այլ միջոցառումների մասին տեղեկատվություն լրագրողների համար: Այդպիսի կայքի օրինակ է անոնսների ForsMI³ գործակալությունը, որն աշխատում է ԱՊՀ երկրների մամլո-ծառայությունների հետ և համարում է իրեն նախատեսված միջոցառումների մասին ծանուցող համակարգ: Դամակարգը՝ գրանցված սպառողներին թույլ է տալիս տեղադրել մամլո-համաժողովների և կայքում նախատեսված այլ միջոցառումների մասին հայտարարություններ, ավելացնել իրենց մամլո-հաղորդագրությունները:

Լրագրողն ըստ թեմատիկայի կարող է օգտագործել տարբեր գործակալություններ և աղյուրներ: Սակայն աղյուրների լիությունը և անկանոնությունն համացանցում ունի օգտագործման զգալի թերություններ: Տեղեկատվական միջավայրի գերհագեցվածությունը, տեղեկատվության աղբյուրների ահռելի քանակությունը և պիտանի ու անախտան տեղեկատվության միջև մշտական ընտրության անհրաժեշտությունը, հաճախ նվազեցնում է համացանցում լրագրողի աշխատանքի հրատապությունը և որակը: Շատ աղյուրներ, այդ թվում նաև

¹Տես <http://www.un.org/en/>

²Տես <http://www.unmultimedia.org/tv/webcast/>

³Տես <http://www.forsmi.ru/node/1160>

համացանցային ՁԼՄ-ն, հաճախ կրկնօրինակում են տեղեկատվությունը: Տեղեկատվության վերլուծությունը և հավաքումը բարդացնում են նաև հրատապ և վերլուծական տեղեկատվության աղբյուրների համակարգի ցրվածությունը և բացակայությունը: Այս խնդիրները զգալի չափով օգնում են լուծել էլեկտրոնային տվյալների բազան և լրատվական-վերլուծական գործակալությունները, որոնք գտում և միավորում են տարբեր տեղեկատվական հոսքերը միասնական ինտերֆեյսում՝ այդպիսով թույլ տալով ժամանակ խնայել և նվազեցնել տեղեկատվական աղմուկի չափը: Իհարկե, այդպիսի համակարգերը նախատեսված են առաջին հերթին կորպորատիվ հաճախորդների համար և տրամադրում են ծառայություններ առևտորային պայմաններով:

Հաճախ լրագրողին անհրաժեշտ են վիճակագրական տեղեկատվության աղբյուրներ: Պաշտոնական վիճակագրություն կա, օրինակ, պետական մարմինների, ինչպես նաև փորձագիտական և սոցիոլոգիական կազմակերպությունների կայքերում: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության¹ կայքը ազատ մուտքի հնարավորությամբ տեղադրում է տեղեկատվություն բնակչության քանակի մասին, արտագաղթի ու ներզագրի վիճակագրության, ծնելիության և մահացության, ամուսնությունների և ամուսնալութությունների և այլնի մասին:

Վիճակագրության անգլալեզու աղբյուրների մեջ առավել կարևոր և հեղինակավոր է ՍԱԿ-ի կայքը, որի մասին արդեն նշվել է վերևում, ինչպես նաև NationMaster կայքը². որը պարունակում է աշխարհի բոլոր երկրների վիճակագրությունը և տեղեկատունները:

Համացանցով վիճակագրություն առաջարկում են տարբեր ռեսուրսներ: Առավել հայտնի է InternetWorldStats-ը³, որը պարունակում է ոչ միայն աշխարհի բոլոր երկրներում համացանցի օգտագործման վիճակագրությունը, այլ նաև հղումներ այդ տեղեկատվության հեղինակային աղբյուրների վերաբերյալ: Համացանցում գոյություն ունի փաստացի և ընդհանուր տեղեկությունների տեղեկատվության աղբյուրների ահեղելի քանակություն, սակայն հարկ է հիշել, որ դրանցից ոչ բոլորն են հուսալի:

Թվային ֆորմատ են փոխանցվել բոլոր հանրագիտարանները, այդ թվում նաև ՍԵԾ Խորհրդային հանրագիտարանը, որը մինչ այժմ համարվում է աշխարհում խոշորագույն և առավել հեղինակավոր համապարփակ հանրագիտարամներից մեկը: ՍԵԾ Խորհրդային հանրագիտարանում հավաքված շատ տեղեկություններ այսօր պահպանում են իրենց արդիականությունը, իսկ այն տեղեկությունները, որոնք «հնացել» են՝

¹Տե՛ս <http://www.armstat.am/am/>

²Տե՛ս <http://www.nationmaster.com/index.php>

³Տե՛ս <http://www.internetworldstats.com/>

պատմական հետաքրքրություն են ներկայացնում¹: Սակայն ավելի ժամանակակից տեղեկությունները հավաքված են էլեկտրոնային հանրագիտարաններում և տվյալների բազայում, ինչպիսին է «Рубрикон»-ը², որը իրեն համարում է համացանցի խոշորագույն հանրագիտարանային ռեսուրս և պարունակում է ինչպես դասական հանրագիտարանների և բառարանների էլեկտրոնային տարբերակներ, այնպես էլ գիտության բոլոր բնագավառների տվյալների բազա:

Անկասկած, ցանցում առավել տարատեսակ են ներկայացված անգլերեն լեզվով հանրագիտարանները. «Բրիտանիկա»³, World Book Encyclopedia⁴ և ուրիշներ: Օրինակ, [Encyclopedia.com](http://www.encyclopedia.com)⁵ կայքում կամ ավելի քան 100 հեղինակավոր աղբյուրներ, այդ թվում հանրագիտարաններ, բառարաններ և հավաքածուներ, որոնք պարունակում են հասկացությունների սահմանումներ, կենսագրականներ, տարբեր փաստեր և այլն:

Սպառողների շրջանում առավել հանրահայտ է «Վիքիփեդիան»⁶: Տվյալ պահին այն պարունակում է 13 մլն հոդվածներ 260 լեզուներով: Դիմնադիրները «Վիքիփեդիան» համարում են ողջ նարդկության պատմության մեջ գոյություն ունեցող ամենամբռողջական հանրագիտարանը: Ցուրաքանչյուր ամիս ավելի քան 60 մլն մարդ է մտնում «Վիքիփեդիա» կայք կարդալու, խնրագրելու կամ նոր հոդված տեղադրելու համար: Սակայն պետք է ասել, որ «Վիքիփեդիայում» տեղադրված ոչ մի հոդված չի անցնում փորձագիտական գործընթաց: Բացի այդ, նրա ողջ բովանդակությունը բաց է սպառողների խմբագրման համար: Դենց այդ պատճառով էլ «Վիքիփեդիայից» տեղեկատվություն քաղելը բավականին վտանգավոր է, հատկապես լրագրողների համար, որոնց համար կարևոր է տեղեկատվության աղբյուրի որակն ու ստույգությունը:

Համացանցը կարող է լրագրողին անմիջական օգնություն ցուցաբերել տեքստերի պատրաստման հարցում: Ցանցում բառարանների ահեղի քանակությունը՝ բացատրական, ուղղագրական, դարձվածների, հոմանիշների, հականիշների բառարաններ, օգնում է ոչ միայն ստուգել բառերի գրելածներ, այլ նաև շեշտադրման ճշտությունը, նաև օգնում է ընտրել ճիշտ բառը կամ բառակապակցությունը, թարգմանել օտար բառերը և այլն:

¹Տե՛ս <http://www.bse.sci-lib.com/>

²Տե՛ս <http://www.rubricon.com/>

³Տե՛ս <http://www.britannica.com/> կամ <http://www.eb.com/>

⁴Տե՛ս <http://www.worldbook.com/>

⁵Տե՛ս <http://www.encyclopedia.com/>

⁶Տե՛ս <http://www.hy.wikipedia.org/>

Ներկայում ցանցում գոյություն ունի թարգմանչական կայքերի մեծ ընտրություն, որոնք կարող են թարգմանել ոչ միայն բառերը, այլ նաև փոքրիկ տեքստեր տասնյակ լեզուներով և հակառակը (Google-ը վաղուց ունի «Թարգմանել» էջը ծառայությունը)¹: Այս թարգմանությունները աշխատանքում օգտագործելու մեջ գայթակղություն կա: Սակայն եթե պետք է հասկանալ ոչ միայն ընդհանուր իմաստը, պետք է հիշել վեբ-թարգմանիչը թարգմանում է մեխանիկորեն՝ հաշվի չառնելով ենթատեքստը:

Դասկանալի է, որ եթե թարգմանությունը կատարվում է սպառողի մայրենի լեզվով, ապա, վերջինս հասկանալով ընդհանուր իմաստը, հնարավորություն ունի խմբագրել տեքստը, սակայն չպետք է մոռանալ, որ թարգմանիչը կարող է խեղաթյուրել նույնիսկ հաղորդագրության ընդհանուր իմաստը: Խոսելով լրագրողի համար համացանացի կիրառական հնարավորությունների մասին, պետք է թեկուզ մակերեսորեն անդրադառնալ այնպիսի հնարավորություններին, ինչպիսիք են ինտերակտիվ քարտեզները, աշխարհագրական տեղեկատունները և այլ ուսուրսներն ու տարրերակները, որոնք թույլ են տալիս ոչ միայն ճշտել, ասենք, մոլորակի ցանկացած կետում բնակավայրի տեղը և անվանումը, այլ նաև իմանալ մի քաղաքից մյուսը հեռավորությունը աշխարհի ցանկացած կետում²: Լրագրողները օգտվելով հաշվողական կայքից՝ կարելի է արագ պարզել, օրինակ, Երևանի և Փարիզի միջև ժամային տարրերությունը, ինչպես նաև իմանալ դրամի և արտարժույթի ցուցանիշը, հաշվարկել ջերմաստիճանը Ֆարենհեյթի սանդղակից Ցելսիուսից աստիճանի, ֆունտերը՝ կիլոգրամների և կատարել այլ հաշվարկներ³:

Բլոգները՝ որպես տեղեկատվության աղբյուր: Վերջին տարիներին աներևակայելի արագությամբ զարգացող բլոգնագավառը ժամանակակից լրագրողի տեղեկատվական ռեսուրսների հավաքածուում հատուկ տեղ է գրադացնում:

Ներկայում բլոգները ըստ էության հասարակական կյանքի մի հատվածն են, հասարակական կարծիքի արտացոլում և լսարանի

¹Տե՛ս <http://www.translate.google.ru/?hl=ru&tab=wT#en|hy>

²Տե՛ս <http://www.maps.google.com/> կամ <http://www.maps.nationalgeographic.com/map-machine/>

³Տե՛ս <http://www.calculator.com/>

* Բլոգ - հիմնական բովանդակությունը պարբերաբար թարմացվող գրառումներ են, որոնք պարունակում են տեքստ, պատկերներ կամ մուլտիմեդիա: Բլոգներին բնորոշ են տվյալ ժամանակահատվածում հրատապ թեմաների վերաբերող գրառումները, որոնք դասավորվում են հակառակ ժամանակագրական դասավորությամբ (Վերջին գրառումը սկզբունք): Ավանդական օրագրերից բոլոր տարրերով են նրանով, որ հասարակական է նախատեսված է կողմնակի ընթեղողոներ, որոնք կարող են հրապարակային բանավեճի մեջ մտնել հեղինակի հետ (բլոգային գրամանն արած մեկնարանությունների կամ սփական բլոգային գրառումների միջոցով):

մեկնաբանությունների աղբյուր արդիական թեմաներով:

Իրադարձության տեղի ունենալուց անմիջապես հետո կամ այն բանից հետո, եթե հայտնվում է իրադարձության նաև առաջին տեղեկատվությունը, լրագրողը կարող է սկսել բլոգնագավառի առաջին մեկնաբանությունների հավաքումը, այդ թվում նաև խմբագրությունների սեփական ֆորումներում թողնված մեկնաբանությունները։ Առավել արժեքավոր է իրադարձության մասնակիցների և այն մարդկանց ռեակցիան, որոնց անմիջականորեն այն վերաբերում է։ Օգտագործելով բլոգնագավառը կարելի է ստանալ նաև խնդրի կամ իրավիճակի մասնագիտական գնահատական։ Որոշ պորտալներում հատուկ կարգվորումները թույլ են տալիս պատկերացում կազմել լսարանի հետաքրքրվածության մակարդակի մասին այս կամ այն թեմայի վերաբերյալ։ Բացի այդ, բլոգերը, այնպես, ինչպես միկրոբլոգները և սոցիալական ցանցերը, լրագրողների ապագա նյութերի համար տեղեկատվական և օպերատիվ առիթների, թեմաների և մտահղացումների աղբյուր են համդիսանում։ Դայտնի անհատների բլոգները (ՀՀ վարչապետի¹, քաղաքական գործիչների, հասարակական գործիչների և այլն) համարվում են բացառիկ և լիովին ստույգ տեղեկատվության աղբյուր։

Սոցիալական ցանցերը (Facebook, Twitter և այլն) նույնպես օգտակար գործիք են լրագրողի աշխատանքում։ Դրանց միջոցով կարելի է գտնել տեղեկատվության լրացուցիչ աղբյուրներ, շվման մեջ մտնել լսարանի հետ և նույնիսկ վերջինիս հետ մշտական հարաբերություններ ստեղծել։

Փորձագետները նշում են, որ համացանցը հնարավորություն է տալիս ավելացնել գիտելիքները, այդ թվում տարբեր թեմատիկ բանավեճերում, ֆորումներում լրագրողի մասնակցության միջոցով։ Վերջիններս առցանց ներկայացնում են կարծիքների, մտորումների, տրամաբանությունների տեսականին և հանացանցը համարում են կարծիքների, գնահատականների, մեկնաբանությունների աղբյուր, ինչը վկայում է և առանձին անհատների, և տարբեր հասարակական խմբերի ձևավորված աշխարհայացքի մասին²։

Դանացանցային ռեսուրսները, որոնցում քննարկվում են մարդկանց առանձին խմբերի գործունեության բնագավառին և հետաքրքրություններին վերաբերող հատուկ թեմաներ (մասնագիտական, սոցիալական և այլն), կարող են անմիջական հետաքրքրություն ներկայացնել լրագրողի համար։ Օրինակ՝ ծիասպորտի սիրահարների ֆորումներում կարելի է ստանալ պիտանի տեղեկատվության գավալի ծավալ, ինչպես

¹Տե՛ս <http://www.tigransargsyan.am/blog/> կամ <http://www.tigransargsyan.livejournal.com/>

²Распопова С., Организация работы с техническими средствами в системе профессиональной подготовки журналиста// Медиаскоп. 2007. Вып. 1. <http://www.mediascope.ru/node/167>.

Նաև օգտակար շիփումներ հաստատել կոնկրետ մարդկանց հետ:

Տեղեկատվության ստույգության խնդիրը համացանցի գործածության կարևորագույն խնդիրներից մեկն է:

«Ստույգության խնդիրն անմիջականորեն կապված է տեղեկատվություն տարածող սուբյեկտի և ընկալման պոտենցիալ օբյեկտի հետ: Եվ վերջապես, տեղեկատվության ստույգությունը և ոչ ստույգությունը կարող է լինել պատահական, կանխամտածված, սադրիչ և այլն: Տեղեկատվության ստույգության ամբողջության համար դեռ գտնված չեն բոլորի համար ընդունելի հավասարակշռված որոշումներ, որանց շուրջ սուրբ բանավեճերը շարունակվում են»:

Այնուամենայնիվ, միանշանակ կարելի է պնդել, որ համացանցում ոչ ստույգ տեղեկատվություն ստանալու ռիսկի մակարդակը զգալի է: Ընդհանրացնելով աղբյուրի հուսալիության սահմանման տարրեր միջոցները՝ կարելի է նշել հետևյալ ինք նշանները.

1. Աղբյուրը հեղինակավոր/հայտնի է (ցանկալի է, որ այն ունենարվականին մեծ վարկանիշ և/կամ մեջքերվածության ինդեքս):
2. Աղբյուրը հուսալի հեղինակություն ունեցող կազմակերպության/անհատի պաշտոնական կայքն է հանդիսանում:
3. Խմբագրությունը գրանցված է որպես ԶԼՄ/համարվում է գրանցված ԶԼՄ-ի պաշտոնական կայքը (Արմնետի կայքերի համար):
4. Կայքում կարելի է գտնել բոլոր տվյալները՝ ներառյալ խմբագրի/հիմնադրի անունը և կոնկրետ տեղեկությունը:
5. Տեղեկատվությունը հաճախ և պարբերաբար թարմացվում է:
6. Կայքը հստակ է կազմակերպված, բաժինները տարատեսակ են, տեղեկատվությունը շարադրված է հստակ և խնամքով, հասկանալի լեզվով և առանց ուղղագրական սխալների:
7. Տեղեկատվության օգտագործման պայմանները հստակ նշված են, ինչը թույլ է տալիս պաշտոնացների դիմել տվյալ աղբյուրին:
8. Կայքը ունի այլ ռեսուրսների հղումներ, որոնց դուք վստահում եք:
9. Անկողմնակալություն, կայքի բովանդակության մեջ տարրեր տեսակետների առկայություն:

Իհարկե, նույնիսկ այս բոլորի առկայությունը միանշանակ չի երաշխավորում, որ տեղեկատվությունը ստույգ կլինի: Սակայն, այս կանոնները պահպանելով, կնվազի լրագրողի ապատեղեկացված լինելու փաստը: Իսկ եթե համացանցից ստացված տեղեկությունը որևէ կասկած է առաջացնում, ցանկացած դեպքում պետք է ստուգել այլ այլ

¹ Смирнова О. В., Фролова Т. И., Достоверность информации о террористическом конфликте: грани проблемы // Журналистика и СМИ против террора. М., 2009. стр. 91.

աղբյուրների միջոցով, որոնց համեստ կա վստահություն:

Դարձակալու է ընդգծել, որ լրագրողը պետք է հստակ իմանա՝ սեփական հրապարակման մեջ օգտագործել տեղեկատվություն, մեջբերում կամ հրապարակման ամբողջական տեքստ առանց տվյալ խմբագրության, հեղինակի համաձայնության ու աղբյուրին հղում տալու. Դա լրագրողական եթիկայի խախտում է: Դայաստանյան ԶԼՍ ներկայացուցիչների կողմից 2007 թվականի մարտի 10-ին ստորագրված վարչականունի 2.4 կետում նշվում է. «Դարձել հեղինակային իրավունքը, բացառել գրագողությունը, մեջբերումներ և արտատպություններ կատարելիս նշել աղբյուրները»¹:

Որոշ համացանցային ԶԼՍ-ներ իրենց կայքերում հստակ սահմանում են տեղեկատվության օգտագործման պայմանները: Օրինակ, NEWS.am կայքում խմբագրությունը զգուշացնում է, որ «Մեջբերումներ անելիս հղումը NEWS.am-ին պարտադիր է: Կայքի հոդվածների մասնակի կամ ամբողջական հեռուստառադիրընթերցումն առանց NEWS.am-ին հղման արգելվում է: Կայքում արտահայտված կարծիքները պարտադիր չեն, որ համընկնեն կայքի խմբագրության տեսակետի հետ»²:

Այս դեպքերում որևէ տեղեկատվական արտադրանքի մեջ փոփոխություն և լրացում մտցնելը, ինչպես նաև նյութերի վերամշակումը հնարավոր է միայն աղբյուրի համաձայնությամբ:

Կայքում տեղեկատվության օգտագործման կանոնների բացակայությունը մտահոգիչ է համարվում. այդպիսի աղբյուրից ստացված տեղեկատվության հուսալիությունը չի կարող բարձր լինել: Ակզրնադրյուրին հղում կատարելը պարտադիր է նաև բլոգի նյութերի օգտագործման ժամանակ (նույնիսկ բլոգբնագավառի սահմաններում):

Դայաստանյան լրագրողական շրջանակներում նշտապես խոսվում է այն մասին, որ անտեսվում է հեղինակային իրավունքը, որն արտահայտվում է նորությունների ժապավենից քոփիփասթով, ինչը հայկական ԶԼՍ-ներում ժարծել է զանգվածային երևոյթ: Քոփիփասթը մի երևոյթ է, որն առաջին հերթին տարածված է հենց համացանցում: Ըստ որոշ վելուժարանների Արմենիստի ամեն ութերորդ նորություն քոփիփասթ է: Քոփիփասթ անողները վերցնում են տեղեկատվական հաղորդագրությունը, որն արված է մեկ այլ ԶԼՍ-ի կողմից և վերատպում է այն առանց եական փոփոխությունների: Երբեմն նրանք հղում են անում այն լրատվամիջոցին, որից ստացված է տեղեկատվությունը, երբեմն էլ նույնիսկ դա չեն անում: Սակայն այդպիսի քոփիփասթ անողներ կան նաև ցանցից դուրս. ցավոք բազմաթիվ տպագիր լրատվամիջոցներ հեղեղված են համացանցից վերատպումներով՝ առանց աղբյուրի հղման:

¹ ԶԼՍ-ների ինքնակարգավորում 2008, երևանի մամուլի ակումբ, Բաց հասարակության ինստիտուտ, Երևան, 2008, էջ 15, <http://www.ypc.am/self-regul/ln/ru>:

²Տե՛ս <http://www.news.am/arm/>:

Ելինա Սահակյան

Դայ-ռուսական (Ալավոնական) համալսարանի
լրագրության պատմության և տեսության
ամբիոնի ասպիրանտ

ԶԼՄ-ՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏԱԽԱԾԱՎՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՀՀ-ՈՒՄ

80-ական թվականների վերջերին և 90-ականների սկզբներին հետ-խորհրդային լրագրությունը կանգնած էր իր հետագա զարգացման հայեցակարգի ընտրության առաջ: Լրագրության նորագույն պատմությունը նշանավորվում է առաջին հերթին գրաքննության և ամեն տեսակ վարչական սահմանափակումների վերացմամբ, ինչի հետևանքով ԶԼՄ-ների առջև բացվել են մեծ հեռանկարներ: Ինչպես նշել է «Լրագրողների միջազգային կազմակերպության» նախագահ Ա. Ռուբենքրդը, եզակի հնարավորություն էր ստեղծվել տեղեկատվական համակարգի նոր մոդելի ստեղծման համար, որը չի վերահսկվում որևէ կառավարության, կուսակցության կամ «շուկայի» օրենքներով՝ միայն հասարակայանութեմ¹: Մակայն ներ երկրում այդ գործընթացը ընթացավ այլ ուղիով:

Դայացք զցելով ՀՀ ազատ ԶԼՄ-ների զարգացման ընթացքին՝ սկսած 1988 թ., երբ Ղարաբաղյան շարժման ալիքի վրա սկսեց ծևավորվել ազատ մամուլը Դայաստանում, վստահաբար կարելի է ասել, որ համեմատաբար կարծ ժամանակահատվածում մենք անցել ենք բավական երկար ճանապարհ: Ունեցած փորձի համակողմանի ուսումնասիրությունը և սխալների ու բացրողումների գիտակցումը շատ կարևոր է և անհրաժեշտ ՀՀ ԶԼՄ-ների հետագա զարգացման ուղեգիծը ծևավորելու համար:

Այսպիսով, 20 տարի առաջ՝ անկախության հօչակումից հետո, Դայաստանը հանձնառել է կառուցել ժողովրդավարական պետություն, որի անբաժանելի մասը մարդու հիմնարար ազատություններից մեկի խոսքի ազատության ապահովումն է: Հենց այս դրույթն էլ ամրագրված է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածում, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր որ ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և զարափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ

¹ Корконосенко С. Г., Основы журналистики. - М.: Аспект Пресс, 2002. стр. 68.

պետական սահմաններից: Լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է»¹:

Ազատ արտահայտվելու իրավունքը ոչ միայն ժողովրդավարության հիմնական սյուներից է, այլև նարդու իրավունքների և ազատությունների ապահովման նախապայման²:

ԴԵ-ում, ինչպես մնացած ժողովրդավարական պետություններում ազատության և պատասխանատվության ապահովման հիմնական գործիքը օրենսդրությունն է: Դետևաբար, ԴԵ օրենսդիր իշխանությունը լիազորված է ընդունելու օրենքներ, որոնք ոչ միայն կապահովեն ԶԼՄ-ների ազատությունը, այլև կարգավորեն այդ ազատության շրջանակը, դրանով իսկ կանխիեն ազատության չարաշահումը: Պետության կողմից ամրագրված իրավական նորմերը կոչված են տարանջատելու «բռյալատրելիի» սահմանները և կարգավորելու հասարակական հարաբերությունները, իսկ որպես ԶԼՄ-ների իրավական գործունեության հիմք հանդիսանում են ԶԼՄ-ների վերաբերյալ օրենքները:

«Լրագրության տեսության ներածություն» գրքի մեջ, Ե. Պրոխորովը խոսքի ազատության և դրա իրավական սահմանափակման հայեցակարգում առանձնացնում է ԶԼՄ-ների ազատության և իրավական սահմանափակման 3 հայեցակարգ՝ ավտորիտար, անսահման ազատության և պատասխանատու ազատության³: ԴԵ-ն ընտրել է գարգացման 3-րդ տարրերակը՝ պատասխանատու ազատության հայեցակարգը: Այստեղ գործ ունենք այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են սոցիալական և իրավական պատասխանատվությունը, որն իր դրական իմաստով նշանակում է լրագրողի պատասխանատու վարչագիծ՝ ընդունված պետական ու հասարակական չափանիշներին համապատասխան:

Ժամանակակից լրագրությունը պետք է համապատասխանի հասարակության բարոյական և երիկական պահանջներին, ինչպես նաև ԶԼՄ-ների գործունեությունը իրականացվի պատասխանատվության բարձր զգացումով և արիեստավարժությամբ:

ԴԵ-ում ազատությունը բացարձակ չէ, սակայն սահմանափակումները չեն կարող օգտագործվել կանայականորեն: Որպես Եվրոպայի խորհրդի անդամ, ԴԵ-ն վավերացրել է «Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների» եվրոպական կոնվենցիան, որով Դայաստանի Դանրապետությունում որպես խոսքի ազատության սահմանափակումների հիմք օգտագործվում են երեք չափանիշներ: Դրանք պա-

¹ ԴԵ Սահմանադրություն:

² Гомъен Д., Харрис Д., Зваак Л., Европейская Конвенция о правах человека и Европейская социальная хартия: право и практика. – М.: МНИМП, 1998, С. 352.

³ Степан Прокоров Е. П., Введение в теорию журналистики, М.: Аспект Пресс, 2009.

հանջում են, որ ցանկացած խոսքի ազատության սահմանափակում իրագործվի՝

1) օրենքով սահմանված կարգով,

2) հասարակության օրինական շահերը պաշտպանելով,

3)ժողովրդավարական հասարակությանը բնորոշ կենսաձևերի պահպանմամբ։

Վերլուծելով ՀՀ-ում ազատության և պատասխանատվության հայեցակարգը՝ հարկ է նշել, որ հարցի մյուս կողմը մեր հասարակության մեջ է, հատկապես ԶԼՄ-ների ներկայացուցիչների շրջանում՝ կապված լրագրողական երիկայի ընկալման և իրագործման հետ։

Եթե օրենքը «արտաքին» ազդող ուժ է, որը ծեավորում է մարդու վարքագիծը՝ իրավական չափանիշներին համապատասխան, ապա երիկան հանդես է գալիս որպես «ներքին» կարգավորող ուժ։ Դրանք նորությունների ամբողջականություն են, որոնք բխում են հասարակության պահանջներից, բարոյական պատկերացումներից և պատասխանատվության զացումից։

Վերջին մի քանի տարում ՀՀ-ում լրագրողական երիկայի ծեավորման ոլորտում դրական քայլեր են կատարվել։ Դարկ է նշել Երևանի Մամուլի ակումբի գործունեությունը, որի նախաձեռնությանը էլ ընդունվել է ՀՀ լրագրողների մասնագիտական երիկայի կողեքսը։ Մեր լրագրողները պետք է հետևեն այդ կողեքսի դրույթներին և խուսափեն մի շարք խնդիրներից, որոնք առկա են հայ իրականության մեջ այսօր։

Վերջին ժամանակների սոցիալական և հասարակական փոփոխությունները հանգեցնում են «Ազատության և պատասխանատվության» հայեցակարգի ուսումնասիրման նոր մեթոդաբանության մշակման անհրաժեշտությանը։ Խնդիրը, որը տեսական և գործնական բնույթ է կրում կարևոր է հատկապես ՀՀ-ի համար, քանի որ մենք գտնվում ենք անցումային շրջանում։ «Ազատություն» հասկացությունը, որպես այդպիսին, այն հիմնասյունն է, որ ընկած է իրավունքի և բարոյականության արժեքային համակարգում։

Ազատ և անկախ ԶԼՄ-ների զարգացումը կարող է ընթանալ տարբեր ուղիներով, իսկ «ազատության» և «պատասխանատվության» կատարելիաները, կախված զարգացման ուղուց։ Կարող են ունենալ տարբեր բովանդակություն և մեկնաբանություն։ Այստեղ կարևոր է հասկանալ, թե ինչպիսին պետք է լինեն ԶԼՄ-ները, որ համապատասխանեն մեր հասարակության արժեքային համակարգին և ապահովեն ժողովրդավարական երկրի կայունացման գործընթացը։

¹ Դօյդօն Ռ., Ограничения свободы слова в Республике Армения, Законодательство и практика масс-медиа. Армения, № 2, 2002 г. <http://www.medialaw.ru/publications/zip/national/new/am/2.htm>

Դայկ Նազարյան
Դայ-օռւսական (Սլավոնական) համալսարանի
լրագրության պատմության և տեսության
ամբիոնի ասպիրանտ

ԱՄՆ-Ի ԶԱՏԳԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻԶՈՑԵՐՆ ՈՒ ԴԱԿԱՒՐԱՍԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆԸ

Միջազգային հասարակական կարծիք ձևավորելու գործում ամերիկյան լրատվամիջոցները հսկայական դեր ունեն: Այնպիսի հայտնի լրատվամիջոցներ, ինչպիսիք են «Նյու Յորք Թայմս»-ը (NEW YORK TIMES), «Լոս Անջելես Թայմս»-ը (LOS ANGELES TIMES) «Վաշինգտոն Փոստ»-ը (WASHINGTON POST), ունենալով մեծ լսարան, հսկայական ֆինանսական միջոցներ և քաղաքական հենարան, կարողանում են իրենց խոսքը լսելի դարձնել աշխարհի տարբեր անկյուններում: Սակայն խոչոր լրատվամիջոցները, պետության շահերից ենթակա լրատվամիջոցներում հաճախ վարում են քարոզչական քաղաքականություն: Խոսքերիս վառ օրինակը ԱՄՆ-ի որոշ ՁԼՍ-ների կողմից հակահրանական քարոզչությունն է: Ժամանակակից լրատվության մեջ քարոզչությունը կարևոր գործուն է գերտերությունների ծեռօրում միջազգային ասպարեզում սեփական կամքը թելադրելու, հակառակորդի նկատմամբ տեղենկատվական-հոգեբանական առավելության հասնելու համար: «Քարոզչությունը տեղենկատվական պատերազմների մի մասնիկն է: Քարոզչությունն ուղղված է այն բամին, որ սեփական բոլոր հնարավորությունները և միջոցները կիրառելով՝ համոզի իր ազդեցության ոլորտի հասցեատիրոջը»¹. - Նշում է Վ. Շեյնովը:

Մեր օրերում սուր բնույթ են ստացել դեռևս Իրանի իսլամական հեղափոխության տարիներից (1978-1979 թք.) ձևավորված Վաշինգտոն-Թեհրան հակասությունները: Ստեղծված է այնպիսի մթնոլորտ, որ միջազգային լրատվամիջոցները հաճախ կարծիք են հայտնում, թե այս հակամարտությունը կվերաճի պատերազմի: Սակայն անհրաժեշտ է նշել, որ Վաշինգտոնի նման մարտավարությունը ներկա փուլում նպատակ է հետապնդում Իրանի շուրջ ստեղծել վախի, սարսափի մթնոլորտ ստիպելով վերջինիս գնալ գիջումների: Միաժամանակ, վերջին

¹ Шейнов В., Психология лидерства и власть, М., изд. Ось-89, 2008, с. 360-361.

տասնամյակների փորձը ցույց է տալիս, որ Միացյալ Նահանգները որդեգրել է ոչ թե «Կոշտ ուժի» (ռազմական), այլ «Քափուկ ուժի» (Մեղեկատվական-հոգեբանական) կիրառման քաղաքականություն¹:

Լրատվության ասպարեզում ամերիկյան արիեստավարժ լրագրողները և վերլուծաբանները կիրառում են արևմտյան չափորոշիչներ, հանդես են գալիս պետական քաղաքականության շահերից: Նման պայմաններում մատուցվող լրահոսք հաճախ միջազգային լսարանին չի ներկայացնում իրական պատկերը և ծառայում է Վաշինգտոնի նախաձեռնած քարոզչության իրականացմանը՝ ստեղծելով Խալամական Դամրապետության մասին աղավաղված կերպար: Միաժամանակ տեղեկատվությունը ներկայացվում է որպես իրադարձության վերաբերյալ վերլուծություն և կարծիք, այլ ոչ՝ փաստեր: Դրա վառ օրինակը 2009 թ. նախագահական ընտրությունների մասին լուսաբանումներն են: ամենուր խոսվում էր «խարդախությունների» մասին վերլուծությունների և մեկնարանությունների տեսքով, սակայն չին ներկայացվում հիմնավոր փաստեր:

Դակախրանական քարոզչության մեջ ակտիվ քննարկման են ենթարկվում իրանի ներքին և արտաքին քաղաքականության, հասարակական կյանքի բազմաթիվ թեմաներ, որոնցից կարևորել ենք մի քանիսը. միջուկային ծրագրերի հիմնախնդիրներ, ազգային փոքրամասնություններ, իրանի պետական կառույցներ:

Նախ նշենք, որ տեղեկատվական հոսքերի մեծ մասը ներկայացվում է բացասական երանգով՝ ահարեւէչական գործողություններ, սպանություններ, բռնություններ: Վատ լուրերը գերակշռում են այս տարածաշրջանից ստացվող լրահոսում: Դատկանշական է, որ հակամարտությունների, լարվածության, անկայունության բացասական հենքի կողքին լուսաբանվում են դրական կողմեր ևս, այն է՝ արևելյան մշակույթի, բնության գորազչությունը և առանձնահատկությունը: «Եյու Յորք Թայմսը», քննադատելով իրանի հասարակական – քաղաքական կյանքը, գովազդում է իրանի մշակութը, իրանական ճոխ կյանքը²: Ստացվում է, որ Միացյալ Նահանգներում չեն հանդուրժում հիմնականում իրանի իշխանությանը:

Դաշվի առնելով նախկին փորձը, երբ առևմտյան վերլուծությունները «հիմնավորեցին» իրաքի «քիմիական սպառնալիքները», և հետագայում պարզ դարձան Վաշինգտոնի նկրությունները, կարող ենք փաստել, որ ներկայումս միջազգային լսարանում ԱՄՆ-ի լրատվամիջոցների կողմից իրանական միջուկային «սպառնալիքների» թմբկահարումը հե-

¹ Ուսումնասիրել ենք «Եյու Յորք Թայմսի», «Լոս Անջելես Թայմսի», «Վաշինգտոն Փոստի» վերջին մի քանի տարիների նյութերը:

² New York Times, 13.02.2011.

տապնդում է որոշակի նպատակներ, այն է՝ կրոնապետական վարչակարգի քայլայում (թեև Սպիտակ տունը ժխտում է այս տեսակետը), իրանական նավթի և գազի պաշարների նկատմամբ վերահսկողության հաստատում, որոնց մասին, թերևս, ԱՄՆ-ի լրատվամիջոցները լուս են:

Ամերիկյան լրատվամիջոցները բազմից արտահայտել են իրենց կարծիքը կրոնապետական վարչակարգի մասին: «Լոս Անջելես Թայմսը» «Իսլամական Հանրապետության վերջի սկիզբը» հոդվածում անդրադառնում է Իրանի 2009-2010 թթ. իրադարձություններին: Յեղինակը կարծիք է հայտնում, որ «Իսլամական Հանրապետության վերջը եկել է»: Սակայն նա գտնում է, որ միայն ցույցերը բավարար չեն հեղափոխություն իրականացնելու համար: Ի՞նչ-ի գերագույն առաջնորդը (հոգևոր առաջնորդը) չի կարող պաշտոնանկ արվել, քանի որ շիական խլամի սկզբունքներով՝ «Նա հաշվետու է Աստծո առաջ» և «Նրան պաշտպանում է Իսլամական հեղափոխական գվարդիան»: Սա ավելի հզոր ուժ է, քան երկրի բանակը և ծառայում է միայն հոգևոր առաջնորդին: Յեղինակը գրում է, որ կրոնապետական կարգերը անկում կապրեն այն ժամանակ, երբ Յեղափոխական գվարդիան փոխի իր կողմնորոշումը¹:

Քարոզչության միջոցով ԱՄՆ-ը քայլեր է ծեռնարկում կենտրոնական իշխանություններից առանձնացնելու իրանցի քրդերին, Ատրպատականի թյուրքախոս բնակչությանը, բելուշներին, ինչպես նաև թուլացնելու ոչ իսլամադավան համայնքները: Այս նպատակի իրագործման համար զանգվածային լրատվամիջոցները հիմնականում արքանյակային հեռարձակումների, նոր մեղիայի միջոցով փոքրանասնություններին ներարկում են անկախանալու, ինքնուրույնություն ծեռք թերթու տրամադրություններ: Իրանի քրդերի օրինակը խոսքերին վառ ապացույցն է: Քրդերը հիմնականում սունի ուլությունն են դավանում, ապրում նաև թուրքիայում, Իրաքում, Սիրիայում: ԱՄՆ-ը և նրա դաշնակից Իսրայելը շատ կցանկանային բոլոր քրդերին միասին տեսնել: Այս նպատակին են ծառայում տեղեկատվական ակտիվ հոսքերի առկայությունը քրդերի շրջանում: Կան 16 հեռուստաալիքներ, որոնց հեռարձակումը հովանավորում է Արևմտաքը²: Սակայն Իրանում ազգային փոքրանասնությունների առաջնորդները նշում են, որ իրանական կառավարությունը վատ վերաբերմունք չի դրսերում իրենց փոքրանասնությունների նկատմամբ: «Զրադաշտականների, քրիստոնյաների, հուդայականների արտագաղթը Իրանից կապված է սոցիալտնտեսական հիմնահարցով, գործազրկությամբ, որը վերաբերում է նաև իրանցիներին», - նշում է ասորի քրիստոնյաների առաջնորդ և Իրանի

¹ Los Angeles Times, 19.06.2009, www.latimes.com, Matthew Duss, The Beginning of the End For the Islamic Republic.

² Յեղինակի անձնական արխիվ, ազգությամբ քուրդ մասնագետների հետ հարցազրույցից, 21.04.2011 թ.:

իսորհրդարանի անդամ Յոնաթան Բեթկոլիհանը: Խոսելով ԱՄՆ-ի մասին՝ նա ասում է. «Նրանք մեր բոլոր անդամներին տալիս են «կանաչ թղթերից»: Նրանց միակ նպատակը այն գաղափարի քարոզչությունն է, թե Իրանը վատ է վերաբերվում իր փոքրամասնություններին»¹:

Նման ծրագրերը կոորդինացվում են հատուկ կազմակերպությունների կողմից, որոնց նպատակն է աջակցել ոչ խլամադավան փոքրամասնություններին հեռանալու Իրանից: Այս խնդիրին առնչվում են նաև իրանահայերը: Դամայնքների թուլացումը շահավետ է ԱՄՆ-ին: Վերջինս օգտագործում է «կախստականների» տեղեկությունները երկրի վերաբերյալ, թուլացնում համայնքները և ներկայացնում է երկիրը վատ իմիջով:

ԱՄՆ-ի ջանքերը՝ ներկայացնելու իրանական ազգային փոքրամասնություններին որպես կառավարությունից դժգոհ խավ, հաճախ չի համապատասխանում իրականությանը: Իրանում հրեական մեծ համայնք կա, որը երկրի խորհրդարանում ներկայացուցիչ ունի, ինտեգրված է Իրանի հասարակական-քաղաքական կյանքին, ապրում է առանց խոչընդուների և չի ենթարկվում հետապնդումների:

Իրանի դեմ պատժամիջոցների կիրառումը մեծ խնդիրների առաջ է կանգնեցնում այս երկրին և հանգեցնում նրա միջազգային մեկուսացմանը: Այս մասին նշում են ԱՄՆ-ի նախագահը և փոխնախագահը: Բ. Օքանան հայտարարեց, որ «ԻԻՇ-ն ավելի մեկուսացած է» նոր վարչակազմի օրոք: Ամիսներ անց փոխնախագահ Զ. Բայդենը նշեց, «Այն բանից ի վեր, եթե մեր վարչակազմը եկել է իշխանության, ես կառանձնացնեմ, որ Իրանը դարձել է ավելի մեկուսացած ներքին և արտաքին քնագավառներում, ունի ավելի քիչ բարեկամներ աշխարհում»²: Սակայն ԻԻՇ-ի իշխանությունները գտնում են, որ այդ պատժամիջոցներից հետո էլ Իրանը շարունակում է իր որդեգրած ուղին, բազմաթիվ հանդիպումներ և անցկացնում տարբեր երկրներում, որոնք չեն կիսում ԱՄՆ-ի դեկավարների տեսակետները:

2011թ. արարական աշխարհի անցուղարձերի համատեքստում իրանական թեմաները շարունակեցին արդիական մնալ: «Եվրանյուզ» հեռուստաընկերությունը անդրադապակ արքարական աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին, այնուհետև՝ Իրանին: «Արարական աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները սերտորեն կապված են միմյանց հետ: Պարսից ծոցի երկրներում, ի տարբերություն մյուս երկրների, իրավիճակը ավելի հանգիստ է, քանի որ Պարսից ծոցի երկրներում մարդկանց նյութական ապահովածությունը ավելի բարձր

¹ Washington Post, 01.03.2008, www.washingtonpost.com, Erdbrink Th, Brulliard, K. US Zeal for Iran's Non-Muslims faulted.

² Washington Post, 11.06.2010, www.washingtonpost.com, Krauthammer Ch. The Myth of Iran's "Isolation".

Ե: Այստեղ ակտիվ են շիաները, իսկ սունիները մնում են ստվերում: Շիաների ակտիվությունը բացատրվում է իրադարձություններին իրանի միջամտությամբ¹: «Վաշինգտոն Փոստը» գրում է, որ Թունիսում, Եգիպտոսում հնարավոր եղավ վտարել իշխող վարչակարգերին, քանի որ ժողովուրդը կարողացավ արտահայտել իր բողոքը, իսկ Իրանում հեղափոխություն տեղի չունեցավ, քանի որ դրանք ուղեկցվեցին մարդու իրավունքների կոպիտ ուժնահարումներով²: «Եյու Յորք Մայմսը» ևս գրում է, «Իրանում իշխանությունները ծեռնարկեցին հարձակումներ տների, հանրակացարանների վրա, իրականացրին զանգվածային ծերբակալություններ, կրակեցին ամբոխի վրա, այդ իսկ պատճառով ցույցերն ավարտվեցին: Սակայն Եգիպտոսում այդպես չեղավ»³:

Իրանի հասարակական-քաղաքական կյանքի բացասական անցուդարձերը ամերիկյան լրատվամիջոցների կողմից կարող է պարբերաբար քննարկվել և շրջանառության մեջ դրվել՝ ստեղծելով համապատասխան կարծրատիպեր ու առասպելներ: Փաստենք, որ ԱՄՆ-ի կողմից ծեռնարկած հակաիրանական գործողությունները լայն արձագանք են ունենում: «Pew Research Center»-ի 2006-2011թթ. կատարած հարցումները ցույց են տալիս տարբեր երկրների ունեցած դրական կարծիքը Իրանի մասին (աղյուսակ 1)⁴:

Աղյուսակ 1

	Երկիր	2006 թ. քանի % -ն է դրական արտահայտվել	2011 թ. քանի % -ն է դրական արտահայտվել
1.	Պակիստան	72 %	71%
2.	Եգիպտոս	59 %	22%
3.	Ռուսաստան	43 %	42%
4.	Մեծ Բրիտանիա	34 %	23%
5.	ԱՄՆ	25 %	19%
6.	Ֆրանսիա	22 %	21%

Դետաքրքրական փաստերից մեկն այն է, որ Արևոտքի ինտենսիվ քարոզչության արդյունքում 2006 թ. "Globescan" սոցիոլոգիական

¹ Euronews TV, Արմենուզի բողարկում, News, 19.02.2011-:

² Washington Post, 06.07.2011, www.washingtonpost.com, Mark D. Wallace, Iran's Execution Bridge-

³ New York Times, 15.02.2011, www.nytimes.com, Lander M., Sanger E. David. US Follows Two Paths On Unrest in Iran and Bahrain - .

⁴ Տե՛ս Pew Research Center, Pew Global Attitude Project, Opinion of Iran, <http://pewglobal.org/database/?indicator=25>

հետազոտությունների կենտրոնի և Սերիլենդի համալսարանի միջազգային քաղաքականության բաժնի շուրջ 40 հազար մարդկանց շրջանում իրականացրած հետազոտության արդյունքներով Իրանը ամենաբացասական վարկանիշ ունեցող երկիրն է: Իսկ այդ ցուցակում Իրանին հաջորդում է ԱՄՆ-ը¹:

Ամերիկացիների քարոզչական գործումնեռությանը հակազդելու նպատակով Իրանի կառավարությունը նպատակահարմար է գտնում ուժեղացնել համագործակցությունը տարրեր երկրների, միջազգային կառույցների, Իրանի և տարածաշրջանային առաջատար տեղեկատվական կազմակերպությունների հետ, ինչպես նաև ստեղծել «ուղեղային կենտրոններ», Իրանի տարածքում խստացնել վերահսկողությունը արտասահմանյան լրահոսերի, համացանցի նկատմամբ: Կառավարությունը նաև խորհուրդ է տալիս անուշադրության մատնել Իրանի հանդեպ Վաշինգտոնի քարոզչությանը՝ որակելով այդ ամենը որպես կեղծիք: Ինարկե, Թեհրանի քայլերն ունենում են որոշակի արդյունքներ, սակայն դրանք ի վիճակի չեն պայքարելու գլորալ ԶԼՄ-ների քարոզչության դեմ, հատկապես հակառակը համոզելու միջազգային հանրությանը: Ուստի Իրանի իմիջի շուրջ կարծրատիպերի և առասպելների ծևակորումը ապագայում կարող է ավելի ամրապնդվել:

Իրանին վերագրվող վտանգավորության, սպառնալիքի պատկերը որդեգրել են նաև ՀՀ լրատվամիջոցները, քանի որ հաճախ հղում են կատարում արևմտյան աղբյուրներից: ԱՄՆ-ի կողմից հակահրամական քարոզչությունն ունի հստակ նպատակներ, սակայն նման մարտավարության որդեգրումը ՀՀ-ի շահերի արտահայտման տեսանկյունից կարող է լինել ոչ նպատակահարմար:

Ամփոփելով ամերիկյան լրատվամիջոցների կողմից իրականացվող հակահրամական քարոզչությունը՝ կարող ենք առանձնացնել.

- Վաշինգտոնի համար նպատակահարմար է փոխել կրոնապետական վարչակարգը: Այդ նպատակի իրականացմանն է ծառայում գլորալ ԶԼՄ-ների կողմից Իրանի շուրջ բացասական մթնոլորտի ստեղծումը,
- Ամերիկյան ԶԼՄ-ները չեն ներկայացնում Իրանում այնպիսի քաղաքական-տնտեսական շահեր, ինչպիսիք են իրանական բնական պաշարների վերահսկողությունը,
- արևմտյան ԶԼՄ-ների կողմից իրականացվող քարոզչությունն ընթանում է իրաքյան իրադարձություններին նման եղանակով: Այն իր զուգահեռներն ունի Իրաք ներխուժելուց առաջ լուսաբանումներին, այն տարբերությամբ, որ Իրանում չկա «քիմիա-

¹ Քալոյան Ա., Իրանի և ԱՄՆ-ը՝ ամենաբացասական իմիջով երկրներ, «Ազատություն ասղոկայան», <http://origin.azatutyun.am/content/article/1580350.html>, 06.02.2008:

- կան գենք», ինչպես Իրաքում էր, այլ կա «Իրանի միջուկային ծրագիր»,
- Իրանի 2009 թ. նախագահական ընտրությունները ներկայացվեցին որպես կեղծիք, որը հակաիրանական քարոզարշավի նոր շարժառիթներ ստեղծեց:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դայ հրապարակախոսությունը ժամանակի գուցահեռականներում.....	3
Դրաջ Բայադյան, Դրանտ Մաթևոսյանի հրապարակախոսությունը	5
Նաղաշ Մարտիրոսյան, Ապրած և չապրած տարիների կենսագիրը	10
Անահիտ Մենեմշյան, Դրապարակախոսություն հանուն ազգային շահի	15
Գոռ Արդահանյան, Անդրանիկ Ծառուկյանի հրապարակախոսությունը	23
Գայանե Դակոյրյան, Ղարաբաղյան հիմնախնդիրը Սիլվա Կապուտիկյանի հրապարակախոսության մեջ	31
Թամրազ Դովսեփինան, Սիլվա Կապուտիկյանի վերջին շոշանի հրապարակախոսական վաստակը	40
Արմենուիի Նեմիրճյան, Անդրանիկ Անդրեասյանի հրապարակախո- սությունը	47
Անահիտ Բրուտյան, Դայոց լեզվի արժենորումը Պարույր Սևակի հրապարակախոսության մեջ	55
Աստղիկ Արքահամյան, Դրապարակախոս Մարգո Ղուկասյանի ակնարկները	61
Մարիամ Կարապետյան, Քաղաքակրթական չափումը՝ անհատական ջանք. Ա. Ավազյանի «Դայություն» թերթը	71
Զարուհի Սարգսյան, Դակահայկական կարծրատիպերի բացահայտումը Զորի Բալայանի հրապարակախոսությունում	83
Քնարիկ Սիրզոյան, Դարչյա Քոչարի հրապարակախոսությունը	89
Տարեկ Դարությունյան, Գաղնիկ Անանյանի հրապարակախոսությունը	92
Դեռուստատեսությունը և հասարակությունը	97
Մուշեղ Դովսեփինան, Մայրենիի պահպանման և մատուցման առանձնահատկությունները ԴԴ հեռուստաեթերում	99
Անահիտ Մենեմշյան, Արթեքներ էկրանից	104
Նանե Վարդանյան, Դեռուստաեթերի արդի հիմնահարցերից մինչև մեղիակրթություն	109
Աստղիկ Ավետիսյան, Սիյուլուզում հեռարձակվող հեռուստաընկերությունների ժրագրային քաղաքականությունը	113
Հակիմ Միրաքյան, Դայկական հեռուստաեթերի որոշ դրսերումներ՝ ագրեսիվ սոցիալական դիրքորոշումների ձևավորման խնդրի համապատկերում	118
Զարուհի Սարգսյան, Դեռուստասերիալների ազեցությունը դեռահասի արժեհամակարգի ձևավորման վրա	127

Դոդվածներ	135
Դավիթ Պետրոսյան, Դակառակ հեռանկարի սկզբունքը ժամանակակից էսսեիստիկայում (Մ. Գալշոյան և Վ. Աստաֆել)	137
Շուշան Դոյրոյան, Ցանցային լրագրության իրավական և էթիկական մարտահրավերները	143
Վարդուիի Պետրոսյան, Դեղինակային և հարակից իրավունքների օրենսդրական կարգավորումը Դայաստանում	149
Գայանե Վարդանյան, Քաղաքական գովազդը Դայաստանում (համառոտ ուրպագիծ)	153
Աննա Մկրտիչյան, Ղարաբաղյան շարժում. իրականության հատվածային պատկերների անդրադարձը ժամանակի մամուլում	158
Լիլիթ Դակորյան, Զրուցավարի գործառույթները տեղեկատվական - ժամանցային հեռուստահաղորդումներում	169
Արևիկ Չափարյան, Ծովակներն ու ասեկուսեները մամուլում որպես տեղեկատվական – հոգեբանական ներազդման միջոց	174
Արմեն Ավետիչյան, Դամացանցային տեղեկատվական պաշարները լրագրողի մասնագիտական գործունեության մեջ	181
Ելինա Սահակյան, ԶԼՄ-ների ազատության և պատասխանատվության հայեցակարգը ՀՀ – ում	194
Դայկ Նազարյան, ԱՄՆ – ի զանգվածային լրատվամիջոցներն ու հակահրանական քարոզչությունը	197

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱ

(ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՐՑԵՐ)

ՊՐԱԿ ԺԲ

Խմբագիր՝ Ա. Գ. Յավոյան

Դամակարգչային ծնավորումը՝ Ա. Խ. Աղուգումցյանի

Պատվեր՝ 39: Տպաքանակ՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

ԵՊՀ տպագրատուն, Երևան, Աբովյան 52